

5985-5987

081  
0-79

G. D. Miller  
1910

2010

W200T

313

75

Printed in Turkey

2010

7-81

# ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ



Հրատարակիչ ՄԻԲԱՅԷՆ, ԿԱԶՄԱԲԱՐԵԱՆ

Տպարան — ԳՍՏԷՔ Սուրբան Համալ Մօլա Թառ  
Կ. ՊՈԼԻՍ — 1910

081  
0-79  
4

# ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԽՕՍՔԵՐ ՈՒ ՃԱՌԵՐ --  
ԴԱՄԲԱՆԱԿԱՆՆԵՐ ՄԱՀԵՐՈՒ  
ԱՌՅԻԻ ԳՐՈՒԱԾՆԵՐ


Հրատարակիչ ՄԻՔԱՅԷԼ ԿԱԶՄԱՐԱՐԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ  
Տպագրութիւն ԳԱՏԷՐ  
1910

9347

ՀԱՅՏՕ ԴՈՒԿԴՐ



# Խրիմեան հայրիկի նամակը

ՀԱՅՏՕ ԴՈՒԿԴՐ

Ճեա Արժւոյ թուղիւն՝ սիրելի որդւոյ մարոյ Պրն . Մի-  
քայելի Կազմարարեան .

Ուսանողութեանդ մէջ տեսնելով հանգուցեալ անզու-  
գական եւ ազգասէր մեր բարեկամին՝ սիրելի Գրիգոր Օտ-  
եանի գրական գործերու համար ձեր սէրն եւ զուրգութանք ,  
որ կարգալէ աւելի կը լափէիք , բարոյական պարտք կը  
դնեմ ձեր վրայ որ , անոր ցիրուցան գրական գործերը ի մի  
հաւաքելով՝ օսկեղէն անմահ կոթող մը բարձրացնէք փոխան  
այն շիրիմին , որ չորսուկէս միլիոն հայեր չխորհեցան կանգ-  
նել ցարդ :

Գիտեմ զուք նժդեհ եւ անձանօթ էք Պոլսոյ հայերու եւ  
բարեյիշատակ անզուգականի բարեկամներուն . բայց դօտե-  
պինդ եղէք . եթէ ձեզ չեն ճանչար , Օտեանի անունը ա-  
մենքն ալ կը յիշեն :

Գերատառիւ Սրբանձտեանց Սրբազանին ալ կը գրեմ որ  
քեզ անաջնորդէ անոնց՝ որոնք Օտեանի հետ մօտ յարաբե-  
րութիւններ ունեցած են :

Մնամ ողջունիւ եւ օրհնութեամբ

1892 Մայիս 2  
Երուսաղէմ

ՀԱՅՐԻԿ



3106  
39



ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳԻՅԱՆ ԺԱՆՆԻՊՈՒ

*[Faint, mostly illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]*

ԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տարիներ առաջ սկսած էի Օսեանի ցիրուցան խօսուածներն ու գրուածները հաւաքել՝ հասորի կամ հասորներու վերածելու :

Գործն ունեցաւ իր դժուարութիւններն ու արգելները : Եղան օրեր ուր ազգը շրջապատու քաղաքական հանգամանքները բողոքովին աննպաստ հանդիսացան՝ ո՛րեւիցէ ազնիւ մտածութիւն, կենդանութիւն ցոյց տուի խօսքեր հրատարակելու : Եղան նոյնպէս օրեր ուր Օսեանի սոսկ անունն ալ լսեցապարտութիւն մըն էր, ո՛ր կը մնար անոր խօսքերուն մերոսիկ հրատարակութիւն մը : Այդ ամէնը հարկեցուցիչ պատճառներ էին ծարելու ինչ ու՛ր ձեռք ձգած էի արդէն, եւ սպասելու զգուշութեամբ որ քուլասու ժամանակներ գային :

Օտմ. Սահմանադրութիւնը եկաւ իր ազատութիւնովը, եւ բերաւ նպաստաւոր օրեր ամէն ազնիւ ու ամէն ազատ խօսքերու :

Իմ առաջին իղծս եղաւ դառնայ նախկին դիտարկութեան՝ Օսեանի գործերու մասին, եւ անա անուն բերկրանքով լոյս կը հանեմ հասոր մը :

Հասորը կը պարունակէ Օսեանի սահմանադրական խօսքերը իր ազգային սահմանադրական կեանքին մէջ, 1861-1820 եւ քանի մը դամբանակիտներու եւ մահերու առթիւ գրուածներ եւ մտածութիւններ :

Առաջին մասը հասորին մէջ — ի՛նչ ալ ըսեն դժուարահանները — իր կարեւորութիւնը պիտի ունենայ փոքր հասուածներովն իսկ : Երբ տարբեր միջոց մը գործ դրուէր, այն ատեն հարկ պիտի ըլլար հրատարակել մեր սահմանադրական Ասեմագրութիւնները : Ես կարելին ու կարեւորը ըրի : Ուստի ընթերցող մը ինքնին պիտի ըմբռնէր քէ ամէն տղերը ընտրանքով առնուած



են եւ Ընդհ. Ժողովին հարցերը կը պարզեն առանց հակառակորդ կողմը լսուած ըլլալու : Երկրորդ մասը , իր հեռաւորութեանը մեջ , բազուն կապ մը ունի նախորդին հետ : Գամբաւնախանները խսուած են գլխաւորաբար այն անձերու վրայ որոնք սահմանադրախախտ գալափարք մտախախտ են եւ որոնք անձնակազմ մասնակցաւ են անոր գործունեութեանը : Ասոնց շարքը պիտի գալին մտնելու , բնախնայեան , այն ամէն գրուածները որոնք մահերու վրայ կը խօսին :

Առանձին պարտք կը համարիմ յիշատակել հրատարակութեան սկիզբը քի երիմեան հայրիկ (1) մտերիմ Օսեանի եւ յաւեհ ցանկացողը անոր ցիրուցան գրուածներուն հրատարակութեանը , ժամանակին յորդոր տուած էր ինծի եւ դիւրացուցաւ այն միջոցները որոնք անհրաժեշտ էին ձեռք բերելու Օսեանի պատահիկները : Գարեգին եպ. Սրուանձեանց նոյնպէս իր օժանդակութիւնը տուած էր :

Հայ ուսուցիչ մը , իր նիւթական համեստ պայմաններուն մեջ , այս հասորը լոյս հանած ասեմ , իրաւամբ կը յուսայ քի հայ հանուրքը անարբեր չպիտի ըլլայ անուշտ դէպի հրատարակուած այս գործը , որով կարելի ըլլայ բերելու յողորմական հասորներով ամբողջացնել Օսեանի գործը : Ու այդ ամբողջութիւնը պիտի ըլլայ ամենէն լաւ սրձանախանը իր մեծ յիշատակին :

20 Յուլիս 910  
Մեծ-Կղզի

Մ. Կազմարարեան

(1) Հայրիկն նամակը կը տեսնուի գործին նակար :

### ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ

Ստորեւ հրատարակելով Ազատամարտէ (Թիւ 295) առնուած գրուածքը Պ. Հրանդի (Կիրճեան) կողմէ , կը փութամ յայտնել խորին երախտագիտութիւնս որ չմերժեց զիս՝ երկրորդ գրուածք մը , նոյնպէս Օտեանի մասին , հատորին նուիրելու :

Մ. Կազմարարեան

Օտեանի հատորի մը սկիզբը քի մը բան գրել՝ եթէ ոչ պարտք , անուշտութիւն մըն է , ստիպուած ըլլալով իրեն զբաղիլ , անոր հետ ըլլալ անշտուկ լռութեան մէջ , ուր դինքը պիտի զդաս , քովդ պիտի ունենաս իր հողիին մեղմ փսփրտուքովը , իր ուրուին շուրջը քսքսուքովը :

Իր անունին հմայքին տակ բացուած մթնոլորտը որ պիտի քեզ պատէ՝ կը լցուի մաքուր սէրերով . ամենէն լաւ ու թերեւս չա՛տ լաւ հայու մը պատկերն է որ կը կանգնի առջիդ . հոյակապ գլուխ մը , բարձր ճակատ մը , վճիտ մաքրութեամբ վառուող աչքեր , լուսացնող դէմք մը :

Այդ դէմքը , իր բոլոր կեանքին մէջ , յառած է մեծ պարտականութիւններու . պարտականութիւններու՝ այն կառավարութեան նկատմամբ՝ որու ծառայելու կոչուած է , պարտականութիւններու այն Ազգին նկատմամբ՝ որուն արժանաւորը զաւակը եղած է , հայրենիքի մը՝ որ ամենէն տատաղագինը եղած է աշխարհի վրայ :

Պետական պարտականութեանցը մէջ բարձր կանգնած է Ան . խօսք , ձեռք , դիտաւորութիւն , այդ ամէնն ալ սուրբ մնացած են : Իր շրջանակին մէջ որ ընտրեալներունը եղած է , իրմէ ելած են լոյսեր , եւ ատոնք առաջնորդութիւն եղած են : Ամէն կողմէ իր առջեւը թափուած են հրացում , սքանչացում իր խօսքին , իր մտքին ու նաև այն թանկագին կեանքին համար որ երկրին մէջ նորանշան էր իր սեփական ուղղութիւնով :

Ինքը , արտաքինապէս ալ , հմայք մը եղած էր : Կըսեն թէ իր դէմը նստած կամ կեցած , կըզգայիր թէ ազդեցութեան մը ներքեւ ընկճուած եւ , կը մոռնայիր ինքզինքդ , եւ , իբրև թէ թողուած , կը տարուէիր իրմէն ցոլացումներուն ներքեւ :

Իր հատորը կարգացողներուն համար , այժմ , պատմութեան մարդն է ան , մեզմէ հեռացած 23 տարիներու անջրպետով մը : Իր խօսքերուն մէջ պիտի գտնեն բուրումներ իր հողիէն , լոյսեր՝ իր մտքէն , անուշութիւններ՝ իր սրտէն որ մինչեւ վերջը տաք մնացած է իր Ազգին համար :

Խօսքերու ներքեւ իր կենդանի դէմքը՝ իր հիւսուածքներովը , իր նայուածքները՝ իրենց կիտուածական շողերովը , իր ձայնին շեշտը , պարոյրները , մեղմ եւ ուժգին , դառն եւ դաժան , մեզմէ յաւէտ պիտի խուսափին , սակայն իր հողին պիտի կենդանագրեն անոնք , իւրաքանչիւրը պիտի շինէ նկարի մը մասը , այն պէսպէս գիծերուն պէս որոնք վրձինի մը ներքեւ կամրոջլացնեն դէմքեր : Իր սիրտն ալ կը գողգոյ ատոնց ներքեւ . ամէն ցնցում որ կրած է ան , ամէն յուզում որ վրդոված է զանի , մեղի պիտի անցնին միջնորդաբար . ու մենք , իր այդ խօսքերուն մէջ , այդ մարդը պիտի ապրինք :

Ա.

Այդ անցած մարդը իր ծննդեանը թուականը ունեցած է

1834 զեկտ . 9ը , Իւսկիւտար : Իր գայրոցը եղած է հայրենի տունը . իր դասերուն հրաւիրուած են ժամանակին ամենէն լաւ ուսուցիչները :

Մանկութիւնը ունեցած չէ փոթորիկներ , անհանդարտ աղու մը յուզումներովն ու դէպքերովը լի : Հայրենի տան միջնորդարը ուր ամէն ինչ սիրով խառն ծանրութիւն մը եղած է , իր հայրը , ժամանակին ըմբռնուած՝ ամբողջովին լրջութիւն , ատոնք ամէնը նոյապատած են մանուկին վաղահաս ծանրութեանը , եւ որ իրնէ ալ արամադիր դանուած է դէպի ան :

Իր ունեցած սէրերուն մէջ դէպի ընտանիքին անգամները՝ սէր մը աւելի գերակշռող եղած է , սէրը դէպի իր հայրը՝ Օտեան Պողոս : Իր խառնուածքը ունեցող մէկը , հաւանաբար , ա՛լ աւելի արամադրուած ըլլալու էր դէպի քնքուշ սէր — մայրենի սէր , եւ սակայն հայրենի սէրն է որու ա՛լ աւելի ենթարկուած է : Ռուսձուգէ կկած նամակներուն մէջ տեղ մը կը գրէ . « Ա՛ն , հայր իմ , այս աշխարհիս վրայ իմ միակ սէրս ու միակ պաշտամունքս » : Ու այդ սէրը տեւական եղած է . իր քոյրը՝ Եւփիմէ Օտեան կը պատմէ թէ , իր հիւանդութեան վերջին օրերուն , հօրը լուսանկարը ձեռքը բռնած , առաւան աղօթքի ատեն , կը համարտէր եղեր զայն , « հայր իմ , հայր իմ » ըսելով , ու այնքան գորովագին որ աղօթքի պէս բան մը եղած է այդ անունը իր շրթունքներուն վրայ :

Իր մօրը համար ունեցած է յարգանք՝ պարտականութեան հետ խառն զգացումներով . իր բոլոր հոգը եղած է միջոց չտալ որ մայրիկը՝ Թագուհի Օտեան , բոպէ մը խակ սրտագողեր ունենայ իրեն համար :

Պարտականութեան եւ սիրոյ զրացումին մէջ կղած տարբերութիւնը ինքնին հասկնալի է : Եթէ ատոր լուծում մը գտնել ներկիւ ըլլայ , պիտի ըսենք թէ հայրն Օտեան եղած է քնքուշ բնաւորութիւն մը , անբիծ բնաւորութիւնը անձնաւորուած՝ որուն պաշտամունքը ունեցած է որդին Օտեան : Ու ատ է որ ապրած է անոր մէջ իր հօրը անուշ

դէմքին ու անբծութիւնովը շողուն նայուածքներուն հետ :

Բ .

Խոշոր սիրտ մը, ատոր մէջ է Օտեան . քնքուշ սէք մը, ատով է որ մխացած է ան : Այդ սէքով առաջնորդուած է իր ընթերցումներուն մէջ , ամենէն աւելի սիրած է Լամարտէին , Լամարտէինի մէջ ալ՝ Ռամայիլը :

Ռամայիլը հիւանդոտ զիրք մըն է , իր զեղեցկութիւնները խառն են վերջալուսի գունազեղանքով , երազներ որոնք կը քնքշանան , զողարիկ կը գաննան , եւ , բոպէ , բոպէ , այնքան կը նրբանան , կ'անօսրին որոնք զուրս կ'ելլեն ամէն որակութիւններէ : Ժիւլիի գէմքը այդ հրապոյրներուն թանձրացեալն է , հմայիչ , վրգովիչ , ախրական : Բնութեան դաշնակութիւններն ալ հիւանդոտ են Ռամայիլի էջերուն մէջ . ձայն կամ շշուկ , մրմունջ կամ արտունջ , աղու են , գողտր , ու այնքան ատօնձանաւորուած որ ձայնական երաժշտութեան մէջ գուցէ բառ կամ անուն չունին :

Այդ զերքը պատանի Օտեանին մէջ գտած է խոր արձագանգ մը . ինքն է որ գրած է Լամարտէինի ուղղած նամակի մը մէջ . « Ձեմ ըսեր թէ քանի քաղցր արձագանգ գտան յիս որ քսան տարու էի , այն Ռաֆայէլի քսան տարեկան էջերը » :

Իր կեանքի այդ թուականի մէջ սկսած է թարգմանել Ռամայիլը . անգամ մը աւարտած ու , յետոյ , դարձեալ սկսած թարգմանելու : Թարգմանութեան գործողութիւն մը , գիտական կամ արուեստական երկի մը մէջ , գրեթէ մեքենական աշխատութիւն մըն է : Բայց Ռամայիլի մը պէս երկի մը թարգմանութեան գործողութիւնը հեշտին վայելք մըն է , վայելքը անոր համար՝ որ դիտէ հմայուիլ բնութեան դաշնակութիւններէն եւ սրտի լափող սառապանքներէն : Անոր մէջ ամէն բան կանաչի է , չափէ դուրս զգացական , ուր կ'ընկճիս հոգեկան ուժերովդ ու կըսպառիս : Եւ սակայն այդ ամէնը չեն դադրելու վայելք մը ըլլալէ :

Գրքին այդ տպաւորութիւնը , իր պատանեկան քնքուշ տրամադրութեանցը հետ խառն , տարիներով ապրած է իր վրայ . Ռուսճուգէ գրուած նամակներուն մէջ (1864-65-66) Ռամայիլի տոգոր մը կայ , այնքան խոռովք , այնքան վրդուած ունի . դանուբեան փոթորիկէն օրերով անքուն կը կենայ , տաքէն կը տառապի , ամայութենէ կը սարսափի , ու մերթալ , գտած իր հոգեկան դաշնակութիւնը , անուշաբձակ մը կը դաշնակէ . « Գեղեցիկ է այս առաւօտ , իր առաջին սրակապանէն զուրս ելած շնորհագեղ հարսի մը նման՝ դիշերուան ծոցէն անանկ զուրս ելաւ հոլանի գեղեցիկութեամբ եւ զողոթուն ուրախութեամբ — ջուրն եւ թոչունը ճըլըլտալով ու մարգուս սիրտն ալ ճխալով կողջունեն անոր ծագումը » :

Գ .

Օտեանի զարգացման գլխաւոր շրջանը եղած է 50-60 : Իր մտքովը հիմա աւեական շիտովի մէջ է Պարսիզպանեանի , Ն . Պալեանի , Ռուսինեանի , Բարուակ պէլի , Աղաթանի եւ Պէշիկիթաշլեանի հետ : Այդ շիտմներու մէջ անշուշտ մշակուեցան սանձանադրական զաղափարներ , որոնք մարմին պիտի առնէին հանդիսական փառքով , եւ որոնց աննկուն պաշտպանը պիտի ըլլար ինքը՝ Օտեան , իր խօսքերովը՝ Ազգէին մէջ , իր բարոյական ազգեցողութեամբը՝ կառավարութեան աւագանիին առջև : Այդ շրջանին մէջ լացած է Պարսիզպանեանի եւ Ն . Պալեանի մահերը , եւ այդ դագաղներուն վերեւ յայտնի եղած էր թէ սովորական մէկը չպիտի ըլլար երբ դրէ կամ խօսի :

60-70 ժամանակամիջոցը եղած է , Օտեանի համար , ազգային վարչական գործունէութեան շրջան : Սանձանադրութիւնը , մեր ազգային գործերու մէջ , կը բերէր հիմնական փոփոխութիւններ , յաղթանակած էր վերջապէս ժամանակին մտաւորականութիւնը , հին ուժեր ցնցուած են

իրենց մինչև խորքը, ու անգամ մը տեղի տուած : Իրեն սեփական գործը պիտի մնայ, ՅՅի պետական հարուածէն ետքը, Սահմանադրութեան վերադարձը երեք տարուան մտնելու թիւնովը, եւ նոյնպէս իրենը պիտի մնայ ժողովրդական Ոգիի մը պատրիարքութիւնը, կրիմեանի՝ որ կուգար ցաւերու երկրէն, եւ որ իր անսովոր խօսքովն ու խառնուածքովը՝ իր հիւանդութեամբը պիտի վարակէր ամբողջ ազգութիւն մը : Երեսէս պատրիարքը քանիցս կրկնած է թէ « Հայրիկ հիւանդ ըրաւ մեզ ամենքս ալ իրեն պէս » : Այդ « հիւանդութիւնը » որ ազգին ատողութեանը նշանը պիտի ըլլար, Հայրիկով սկսած է. Հայրիկն ալ Օտեանով կոչուած էր Վանէն՝ պատրիարքական աթոռին վրայ բազմեցնելու մեր ցաւերը :

Իր սահմանադրական գործունէութեանը կը պարտինք Օտեանի խօսքերը, երկար կամ համառօտ, յառաջիկայ հատորին մէջ, խօսքեր՝ որոնք սկզբունքներ կը բերեն մեզի, եւ այսօր ալ չեն դադար լաւ դասեր ըլլալու Ազգին պատգամաւորական ժողովականներուն : Իսկ երբ անոնք, մերթ ընդ մերթ, ատենարանութեան երեւոյթը կառնեն, ալ սովորական յօճերու տակ չեն, ատենական բեմբասացութեան կը փոխուին յանգէտս, իրենց ուղերձի, անդեկարերի, պարզ թեւադրութեանց համեստ անունին ներքեւ :

Օտեան ո՛չ մատենագրի անուանը թեկնածու եղած է եւ ոչ ճարտարախօսի փառասիրութեանը . գրիչ եւ խօսք, ատոնք երկուքն ալ պատահական բաներ են իր մատնեւուն ներքեւ ու բերնին մէջ : Բայց երբ խօսեր է կամ դրեր, կարող եղած է երկուքին ալ սալու թռիչք կամ հրապոյր . իր խօսքը, կենդանի թէ՛ գրով, գորեղապէս ներհերգործական եղած է :

Իր սրտին մէջ ունի անհուն գուրգուրանք մը դէպի մեր գրչի ու խօսքի մարդիկը . դպրոցական հանդէսներու մէջ, պատրիարքական զուխներէ աւելի, փառաշուք է իր դէմքը, ճաճանչաւոր ու հոյակապ : Իր ժամանակին պատանութիւնը, ամէն անոնք որ ընդունակութիւն մը, սէր ու զողոզանք ունեցած են դէպի իրենց Ազգն ու գրականութիւնը, իր

Քափանցող աչքերուն եւ տաքուկ թեւերուն տակ են . իրմով թեւթաքած են բոլոր հին-նորերը : Իսկ Պէշիկթաշ-լեանը . . . ան իրենը եղած է բոլորովին, շատ անգամ իրմէ մղուած, թերեւս ներշնչուած իսկ մինչև այն վերջին բուզէները ուր ողբանուագ տատարկը — ըստ նոյն անուշիկ ճանապարհին — իր յետին աղեկիզիկ վուվուն կարծակէր » եւ վայրագոյրը կիջնար կեանքի ու մահուան մէջտեղ :

Ատոնք ապացոյցներ էին տեւական ու հաստատ սիրոյ մը որ մինչև իր վերջին շունչը տաք մնայ Օտեանի սրտին մէջ, — ազգային գրականութեան մը սէրը, նոր լեզուով, Իր գրածներն ալ, — դիպուածական արտագրութիւններ, — հայերէնով գրուածները սիրցուցին : Ժամանակին ամենէն խօսուն գրիչները, Տէմիրճիպաշեան, Չերազ, պաշտամունքով մը համակուած են դէպի Օտեան . Մամուրեան հիացող մըն է պարզապէս, Միրասյոյի գլուխը կը տեսնէ անոր վրայ :

Յանցառ թիւ մը հայ ազջիկներու, եւ որ ամենէն օժտուածը պէտք է համարուէր մութէն դէպի լոյսը մղուած, թեւեր կառնէր դէպի Օտեան անունը : Օր. Մաթիւա, Բաբունակ պէյի աղջիկը, նամակներ կը գրէ անոր եւ նամակներ կառնէ : Ստեփան փաշա Ասլանեան, Մաթիւտի հայրագէրը, Բարիզէն կը զրկէ թղթի պատասիկ մը՝ Օտեանի ճակտին քսուած, երբ մահուան սատոյցը պատած էր հոյակապ Հայը : Այդ « պատառք » ապաւին այսօր ալ, մատուց մըն է ընդունողին սրտին վրայ, եւ կամ թէրեւս բժժանք մը որ պաշտամունքով մը գինքը անոր կապէ : Եւ Մաթիւան է որ անոր քարին վրայ դրած է . « Պաշտամունք » — ը :

Այդ սէրը դէպի Օտեան՝ կը ծնցնէին սէրեր դէպի այն պրիւլիութիւնը որ ունեցած էր ան դէպի անշուք հայրենիք մը, ինկած ցեղ մը, չուառական ցեղ մը իր լեզուով, իր կեանքով :

Տան մը երկց անդամի, Ազգի մը ունեցած հարազատ զաւակի պարտականութեանցը հետ, կատարած է պարտականութիւնները դէպի երկիրը, դէպի հայրենիքը : Պաշտօնի

որոշ անուն մը տալը՝ շատ փոքր բան մը պիտի ըլլար՝ Օտ-  
եանի քաղաքական գործունէութեանը համար : Ինքը , իր  
ունեցած քաղաքական ազդեցութիւնովը , մտքի բարձրու-  
թիւնովը , իրերը դատելու որոշ կարողութիւնովը՝ հատու-  
վճռականութիւն ունեցած է հարցերու մէջ : Եկող դացող  
լուսամիտ Եպարքոսները , ուրիշ ամէն նախարարներ որոնք  
ղգացած էին լոյսին պէտքը տէրութեան գործերուն մէջ ,  
իրեն եկած են : Իր մտերիմները եղած են , ինքն ալ՝ անոնց  
խորհրդականը :

Ու տեւականորէն , Ռուսճուղի մէջ Միաստ փաշայի  
հետ է : Երբ ան կարգոսութեան բարձրացաւ , Օտեան ան-  
տեսանելի կերպով կը մնար իր խորհրդականի դիրին մէջ :  
Իրիկունները , գոնէ շարաթը անգամ մը , Օտեանի հետ  
կըլլար նոյն իսկ անոր տանը մէջ . այն տեղ կը ճաշէր մեծ  
փաշան , այն տեղ կը շրջապատուէր քանի մը ուրիշ պատ-  
ուական հայերէ որոնք մուտք ունէին Օտեանի տանը մէջ ,  
— Սէրվիչէն , Տոքթ. Բեաթիպեան , Գէորգ Սամանճեան :  
Անշուշտ այդ ժամերն են որոնք ներշնչած են պետու-  
թեան այն մեծ առաջաւորը ո՛չ միայն ունենալ սահմանա-  
դրական մտածումներ , այլեւ գործադրել զասոնք՝ երկրին մէջ  
ստեղծելով նորագոյն վիճակ մը :

Պետութիւնը ամէն անգամ որ մեծ հարց մը ունեցած է  
մեծ տէրութեանց հետ , Օտեանի ձեռքով ուղած է կարգա-  
դրել զանոնք : Ֆրանս. հանրապետութեան առաջին տարին  
Բարիզ է Օտեան : Սերպերու մասին հարց մը ունի Օտե-  
կառավարութիւնը : Թիէն , հանրապետութեան նախագահը ,  
ատուները այցելութեան կուգայ Թուրքիոյ պետական մար-  
դուն իր կնոջը հետ : Հարցը , ինչպէս կը տեսնուի իր նա-  
մակներէն մէկուն մէջ , շատ հաճելի եղած չէ իր մտքին ,  
որով չուզեր յայտնապէս դիմել Թիէնի Տիկին Թիէն զգալով  
այն ներքին ճնշումը որ կունենար Օտեան , կողաչէ պատ-  
հանգիստ ըլլայ առատները , եւ ահա Տէր եւ Տիկին նախա-  
գահ կը մանեն Օտեանի հիւրանոցը : Իր այդ միեւնոյն նա-  
մակին մէջ , ուղղուած իր երէց եղբորը՝ Նշան Օտեանի , կը

գրէ . « Բարիզ դալս այս անգամ չիմացուցի քու եւ մեր  
ամենքիս սիրելի Վ. Հիւկօֆին , որովհետեւ անոր չսիրած  
հարցով մը պարսպելու պաշտօն ունիմ » : Այդ թուականին  
է որ գտնուած է Վիսպատի Չուրերը , եւ գրած վիսպաքը ,  
այնքան անուշ , այնքան շողուն Չուրի վճիտ կաթիլներով ,  
ջինջ ցօղի շիթերով , երկնքի պայծառ կապոյտով , կուսա-  
կան վառ այտերու ծիրանի գեղովը :

Դ.

1877ը բերած է նոր մտածումներու եւ նոր յոյսերու  
գեղեցիկ օրեր՝ տառապադին Ազդի մը համար որ վեց հարիւր  
տարիէ ի վեր ապրած էր հանապազօրեայ մահերով : Կենդա-  
նութեան նոր հեւք մը կը թըթօար ամբողջ միջնուորտին  
վրայ : Եւրոպական թերթեր հայերով կը գրադէին : Լոնտոնի  
բարլամէնտը կը ծափահարէր հայ զօրավարներու անունները ,  
Լօրիս Մելիքոֆ , Լաղարէֆ , Տէր Ղուկասոֆ , Երեւանի հայ  
կամաւորներ յաղթական քալած էին Արէսի դաշտին վրայ :  
Ասդին հայ վեղարաւոր մը , Ներսէս Վարժապետեան , դիւա-  
նագիտութիւնով կը գրադէր :

Օտեան , մէկ կողմէ , պատրիարքին գաղտնի խորհրդա-  
կանն է իր խօսքովը կամ գրիչովը , միւս կողմէ իր առենը  
եղած է ժամադրութեան վայր մը ուր Սերվիչէն , Բեաթիպե-  
ան , Մ. Փորթուզալ . Յով . Սաղըղ եւ Գէորգ Սա-  
մանճեան պիտի գային , դիշերուան լոյն եւ միթին ժա-  
մերու առեն , իրենց մտքին լոյսը բերելու մեծ հարցի մը  
մէջ , որ այնքան յուսալից եղած էր ի սկզբան , եւ որ , յետոյ ,  
փրկարար հիւանդութիւնով պիտի վարակէր ամբողջ Ազդ մը :  
Բաղձանքները չպսակուեցաւ . Գարեգին կախկոստոս իր  
քննական պտոյտներէն Պոլիս կը գտնար՝ յայտարարելու թէ  
հայրենի երկիրը չոր ոսկրաւոյտ մըն է : Օտեան գուշակած  
է զալիքը , արիւնի հոտեր առած է հեռուէն , եւ օր մը ,  
իբրեւ թէ մարգարէական անսխիւքի մը առջեւ սարսափած ,  
կըսէ . « Յաջողեցանք 66րդ յօդուած մը դնել Պերլինի գաշ-  
նագրին մէջ , իցիւ թէ յաջողէինք ջնջել զայն » : Գուշակու-

Թիւնը կառաւորեցաւ արդէն, արիւնները թափուեցան :  
 Համիտ զարկաւ օսմ. Սահմանադրութիւնը իր օրօրոցին  
 մէջ, երեսոյթապէս սպաննելով զայն՝ խաղաղ նստելու, իր  
 հաշիւովը, միահնծան Սուլթաններու դահի վրայ : Միտ-  
 հատ բաշան տարագիր կը բռնէ իր սահմանադրական  
 մտքին ոճիրը բաւելու համար : Հալածանք քիչ քիչ երկրին  
 մտաւորական ուժերուն դէմ :

Օտեան, որ ամբողջովին ոտքէն մինչև գլուխը թաղ-  
 ուած էր Հայրենիքի ազատագրական շարժումներուն մէջ,  
 եւ որ թերեւս միակ նպաստարարը իր մտքովը տարագիր  
 բաշային՝ երկիրը սահմանադրական վարչութիւնով օժտելու,  
 կասկածի ներքեւ կը զգայ ինքզինքը, եւ բարեկամներու  
 խորհրդով, Գէորգ Սամանճեանի առաջնորդութեամբ, գաղտ-  
 նաբար շողեցաւ կը նստի դէպի Բարիկ : Ա՛լ այնտեղ պիտի  
 ապւէր մինչև վերջին րոպէն : Օտեան անունը երկրին մէջ  
 եղաւ արգելուած բաներէն մէկը : Պետութիւնը զրկուեցաւ  
 մեծ օժանդակէ մը, Ազգն ալ զրկուեցաւ մեծ զաւկի մը գոր-  
 ծակցութենէն :

Բարիկը, Օտեանի պէս գործողի մը համար, շա՛տ ան-  
 նպատտ տեղ մըն էր. իր երկրին, իր Ազգին համար էր ան :  
 Իր միտքը ատոնցմով զբաղած էր միշտ : Օր մը, Նիսի մէջ,  
 քանի մը բարեկամներով նստած ատեն, հարցում կը լլայ թէ  
 իրենցմէ իւրաքանչիւրը ո՞ր Ազգէն եղած ըլլալ պիտի ուզէր  
 եթէ, ծնելէ առաջ, իրեն խորհուրդ հարցուէր — Մէկը —  
 Անգլիացի — կըսէր — Ուրիշ մը՝ — Ֆրանսացի — : Երրորդ  
 մը՝ — Գերմանացի — եւ այլն : Կարգը եկած է Օտեանի .  
 անհամբեր են զիստալ թէ ի՞նչ պիտի ըսէր : Ան, մեղմ ժը-  
 պիտ մը շրթունքին վրայ,

— Ո՛չ, Ֆրանսացի, ոչ գերմանացի, ո՛չ Իտալացի, ո՛չ  
 Անգլիացի — կըսէ —, այլ պիտի ուզէի Հայ ծնած ըլ-  
 լալ, եթէ հայ չծնէի, որպէս զի աւելի աշխատանք ունենամ : (1)

(1) « Եւ լաւ ուշ զրէք, հայրենիք մը որ կայ, հայրե-  
 նիք մը որ իր փառքին մէջ կը փայլի, սերելը դիրքին է .  
 իսկ Պարտիզպան այն հայրենեաց նուիրած է զինքը, որ  
 ընկած էր եւ անփառուհակ . . . »  
 (Օտեան, դամբ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆԻ)

Հիմա զրկուած էր այդ աշխատանքէն,  
 Ու երբ ա՛լ ուրիշ բան չմնաց իրեն ամբողջ եօթը տարի  
 1880-1887, այդ ատեն սկսաւ գրել Վահրամ ստորագրու-  
 թիւնով. այդ օրերուն կը պարտինք Կոիդէլի մահուան տա-  
 քեղարձին առթիւ, այդ կեղծ անուանին տակ, իր հրաշալի  
 մէկ գրուածը. այդ աննշան գործաւորին համար իր սիրտը  
 լի է անհուն խանդաղատանքով, անոր վրայ կը տեսնէ դիւ-  
 ցազն մը որ կռուի դաշտին վրայ պսակուած կամ փառքով  
 ինկած քաջերէն մեծ է :

Այդ պանդխտութիւնը, ուրիշ ընդհատական գրուածքնե-  
 բու հետ, անոր կը բանար թղթակցութեանց շարքեր՝ ըն-  
 տանիքի այլ եւ այլ անդամներուն եւ կամ իրեն սիրելի ազ-  
 գականներու հետ : Ասով՝ իրմէ ունեցած ենք էջեր որոնք  
 միշտ թանկագին արժէք մը պիտի ունենան իր ազնիւ-  
 արիւթով օժուած եւ սրբագործուած :

Համիտ, իր Բարիկի դեսպաններուն միջոցաւ, քանիցս  
 ուղած է դարձնել Օտեանը. բայց իր բարեկամները միշտ  
 կասկածոտ մնացին անոր մասին. ինքը, ա՛լ աւելի կաս-  
 կածոտ, հեռուն ապրեցաւ՝ բարեկամներու ձեռքին մէջ.  
 Մկրտիչ Էստեան, Գարբիէլ Էգնաեան, Տօքթր. Քեաթիպ-  
 եան, Գէորգ Սամանճեան, Կիւզէլ, ատոնք իրենց սիրան ու  
 քսակը միշտ բայ ունեցան աննման բարեկամի մը համար :

Ե.

1887 օգոստ. 6էն սաղին, Օտեան կը հանգչի Բարիկի  
 մէջ, Բէն-լա-Շէզլի գերեզմանոցը : Ան, այդ շարաշուք  
 թուականէն ի վեր, տեսակ մը ուխտատուի է ամէն անոնց՝  
 որ Հայ են Բարիկի մէջ, ու ամէն անոնց՝ որ հայու սրտով  
 Բարիկ կայցելեն : Օրեր կուգան անշուշտ ուր Ազգը, տո-  
 գորուած գէպի այդ մեծ ողին աւելի խոլ դգացումներով, կը  
 տեղափոխէ անոր նշխարները իր ծոցին մէջ եւ կազատէ, իր  
 կենդանութեանը առեն մեծ տարադիրը, մահուանէ հաքը եւ  
 զամ տարագրութենէն :

Կէտ մը, որով հետաքրքրուած են շատեր, սա է թէ

Օտեան , իր այդքան սէրերուն մէջ , չունեցա՞ւ արդեօք սէր մը , հուրի մը որ կարենար անկիւն մը բռնել իր մեծ սրտին վրայ , դոնէ՛ Ռաֆայելի ժիւլի մը , որ իր ընթերցողի եւ թարգմանողի սիրտը թրթռացուցած էր իր պատանեկան թարմութեան մէջ : Այդպիսի պատմութիւն մը ծրարութեամբ կը մնայ ընտանիքին մէջ , տողեր ալ կան՝ որոնք դատապարտուած են մեռնելու : Այլ ես տեսած եմ խա՛նութի սկանսկ մը , աղջկան մը սիրուն պատկերովը նկարուն , արծակ մաղեր , որոնք կիջնեն իր թիկունքներէն վար :

Ժամանակ ունեցա՞ւ Օտեան , երկուր տանն այդ բաժակով խմել խահուէն , շրթունքը քսել պատկերին եւ կամ դոնէ՛ նայիլ այդ նկարուն դէմքին ու արծակ մաղերուն : Պատմութիւն մըն է՝ որ նոյպէս մեռնելու դատապարտուած է : Բայց սա դիտեմ թէ հուրին , իր ազատ կեանքին մէջ , տեսակ մը վանքական , աւանց մարապետի պաշտօնական սեւերը հագնելու , ստէպ կերթայ բողոքական անուանի քարոզիչ մը լսելու : Սիտիա՞նք մըն է արդեօք թէ քառութիւն մը :

Իր ամենէն լաւ քառութիւնը պետի ըլլար , կարծեմ , ժամանակ ժամանակ սպորիլ Բէս-լա-Շէղի գերեզմանոցը , դտնել այն հողը ուր կը հանդէլ Օտեան , եւ , ճերմակ մաղերովը , ծաղիկ փունջ մը դնել Հայերու սիրելի այդ հողին վրայ եւ բուրումնաւէտել ամայութիւնը այդ լսին վայրին :

Ներէ՛ ինծի , սիրելի՛ հօրար , (1) հայրենակից մը որ , դուրսէն մտած ընտանիքին մէջ , գրչի ծայրով մը ժպրհութիւն կունենամ կեանքիդ վրայ գրելու սրտիդ մէկ սարձեր պատմութեանը մէջ ասեղի ծակ մը բանալու , եւ , մէկ հատորիդ սկիբբը , ըզպապօտ նշմարելու այն յիշատակ սկահակը որ քեզի եկաւ հարբի մը ձեռքէն եւ որ իր պատկերովը ուզած էր խորճենկ աչքերուդ մէջ նկարուիլ :

(1) Ընտանիքի մէջ սովորական անուն :

ՀՐԱՆԴ  
(ԿԻՒՐՃԵԱՆ)

# ՕՏԵԱՆԻ ԾԻՐԻՍԸ

Շահագրամներու եւ մայրիկոյիսիկներու ճետ խանն ի խուռն՝ կարմիր , ճերմակ եւ գեղին ծաղիկներով եզերուած ածուներու քովէն քսուելով կանցնինք կեթանք դանելու համար Օտեանի յաւիտենական բնակարանը , որուն տեղը անձանօթ էր մեզ :

Տեսակ մը ուխտագնացութիւն էր , առաջագրուած երկար ատենէ ի վեր , ու կըստպատէինք որ մեր ուսանողի օրերէն մին ներէր որ մենք ալ մեր կարգին ղետեղէինք մէկ քանի շիւղ , մէկ քանի ծաղիկ՝ մեծ հայուն շիրմին վրայ :

Թղթի կտոր մը կտր ձեռքերնիս , Օտեանի գերեզմանը պարիսպիդ մեռելատաննին՝ Բէր-Լաչէսի վարչութեան քարտուղարէն առնուած , որ անուններով ցոյց կուտար մեծ վտարանդիին թաղուած տեղը :

Մեր ամէն մէկ քայլին հանդիպող հսկիչ պաշտօնեաներուն կը հարցնենք « Ծրարդ բաժանումը , Ալլընիւ Բաքտօն , Օտեանը » : Ամենքն ալ մեզ կը ցուցնեն միեւնոյն կողմը ուր կ'ուղղուինք շարունակելով անցնիլ խնամուած պարտիզակներու առջեւէն , անսոց անուշ բուրումներուն մէջէն , հովանաւէտ ու կանանչազարդ աղւոր ծառերու ներքեւէն , երբ վերջապէս վերջին ուղեցոյցնիս կը հասնի տեղ մը եւ գլխարկը հանելով « Ահաւասիկ , պարոններ , հօս է » կըսէ եւ կը մեկնի զմեզ բարեւելով :

Օտեանի շիրմին հետ զէմ զիմաց կը գտնուէինք , ինչ յուսախարութիւն . Օտեանը այդքան անշուք եւ խղճալի գերեզմանի մը մէջ . . . :

Հաւատարնիս չէր ի դար եւ կը կարծէինք թէ գերեզ-

մանուցին պաշտօնեան մեր վրայ ծիծաղած է սխալ տեղ մը  
ցոյց տալով, այնքան հմայթափ եղած ու ապուշ կտրած  
էինք :

Բայց իրականութիւնը սթափեցուցած էր մեզ, ճիշդ էր .  
իրն էր այդ գերեզմանը եւ անունը կը նշմարուէր՝ քարին  
ճակատը՝ հայերէն Գ. տառին քով Ֆրանսերէն ODIAN գըր-  
ուած մատիտով, աւրուելու մօտ . ուրիշ ոչինչ . ոչ խակ  
թուական մը :

Եթէ Օտեանի յիշատակը տարօրինապէս վառած չըլլար  
մեր երեւակայութիւնը ու տեսակ մը պաշտում ունեցած  
չըլլայինք իր հողակոյսին համար, անշուշտ չպիտի կրնայինք  
կանգ առնել շքեղ դամբարաններու եւ հիանալի հսկայ կո-  
թողներու խառնամաղնութեան մէջ գրեթէ կորսուած այդ  
քարի կտորին առջեւ եւ գլուխնիս բաց ու կախ, արցունքը  
աչքերնուս մէջ սառած, անձրեւէն ու ձիւնէն աղտոտած գե-  
րեզմանաքարին անհարթ երեսին վրայ բան մը, չբացատ-  
րուելիք եւ խորհրդաւոր բան մը վնասուել չպիտի ուզէինք :

Արդէն ո՞վ կրնար մտքէն անցնել թէ մեր ժամանակա-  
կից պատմութեան է՞ն նշանաւոր դէմքերէն մէկը, այնպէս  
երեսէ ինկած առարկայի մը նման, նետուած ըլլար այդ  
ծերպին մէջ, անծանօթ օտարականներու շիրիմներու շուքին  
ներքեւ, եւ վրան ալ ձգուած ըլլար քար մը, գետնէն հա-  
զիւ երկու թիզ բարձրութեամբ, իբր միակ զարդ՝ գլխուն  
կողմը ունենալով մարմարէ սափոր մը միայն, ուր՝ չորցած,  
գրեթէ փտած երկու շիւղեր կը տեսնուէին . . . :

Ճշգրիտ չեմ յիշեր այսօր թէ ի՞նչ տեսնել կըսպասէինք .  
բայց սա գիտեմ որ մեր երեւակայութիւնը յազենալու սլետ-  
քը ունէր . մեծ ու փառաւոր դամբան մը մեր զիմացը ելլե-  
լու էր, այնքան անհուն կզգայինք մէջերնիս Օտեանի հա-  
մար անուցած համակրութիւնը, որ վայրկեանէ վայրկեան  
կրնար փշրուիլ, ոչնչանալ եւ մեր այցը գաղափարի խնկոտ  
նուիրականութիւնը չունենար լոկ :

Չեւքերնիս իրարու կցած, գլուխնիս երկիւղածօրէն  
բաց ու կուրծքերնուս վրայ կըրած եւ յոյսերու այդ ահուկ

պատրանքէն սրտաբեկ՝ բառ մը արտասանելու չէինք հա-  
մարձակած :

Բան մը, անորոշ եւ անկապ բան մը մրմալու վրայ  
էինք երբ մենէ մէկը ծռեցաւ գետինը՝ փոշիներու մէջէն  
վերջնելու ուլունքներու հիւսուած սեւ բայց ճերմկալու  
մօտ փոքրիկ սլակ մը, անշուշտ Օտեանի շիրմէն ինկած,  
դոր դրաւ մեր բերած ծաղիկներու փունջերուն քով, քարին  
վրայ, սափորին ստորօտը . Ով գիտէ ո՞ր զգայուն հոգին  
Օտեանի նշխարքներուն բերած էր այդ սզալից խորհրդա-  
նշանը, զոր հո՞ն ու բուքը գետին նետած էին՝ զրկելու հա-  
մար մեծ մարդուն շիրիմը իր միակ զարդէն :

Ինչո՞ւ, կը հարցնէինք ինքնին, Օտեան չունենայ իր  
տապանագիրը, որուն վրայ շատ բան պիտի գրուէր եւ գեւ  
չպիտի բաւէր՝ զայն ճանչցնելու համար լիովին :

Այն անձը որ Օտեանի սրտին, հանձարին եւ զգացում-  
ներուն հիացողներէն մին եղած էր եւ գերեզմանին սեղը ու  
շիրիմը իր ծախքովը հոգացած, չէ՞ր կրցած երկու բառ,  
գոնէ անունը եւ թուականը գրօջմելու կարող փորագրիչ մը  
գտնել այնքան մեծ Բարիզին մէջ, երբ քիչ մը հետուն Յով-  
սէփ Թնկերի շիրիմը կը գտնենք ոսկեզօծ հայերէն տառերով,  
պարզ բայց շատ սիրուն :

Մեր ցնցումը եւ մտածկոտ վիճակը մէկ քանի վայրկեան  
սեւած էին եւ արդէն շիրմին շուրջը դառնալ սկսած էինք  
ճառուղիներովնիս մեղմիւ շոյելու եւ փայփայելու անոր ամէն  
մէկ մասերը անսովոր երկիւղով մը, որպէս թէ քնքուշ եւ  
զիւրաբեկ առարկայ մը ըլլաւ ան :

Ասա անդ գրուած անծանօթ ստորագրութիւններ՝ ան-  
ընթեռնելի ըլլալու չափ սրբուած՝ մուրի հետքեր ձգած էին  
թխացած քարին վրայ . մէկ քանի ալ տողեր նուիրուած կա-  
յին գողղողուն մասներէ գրօջմուած, որոնց շուրջը Օտեանի  
հոգին ամառ ձմեռ, բուքին սւ սիւքին, ամէն օր ամէն ժամ  
կը հծծէ, աննիւթական թուչկոտումով :

Այն մէկ քանի տողերը որոնք թրթռուն զգացումներով  
ուրուադժուած էին, կը կրէին երկու հայ աղջիկներու սուտ-



բարբոթիւնները, Բարիզէն անցորդներ՝ առանց Օտեանը մտայած ըլլալու :  
Այդ տողերէն մէկը սէտք էր ըլլար Դուրեանի նմանութիւն մը .

« Բացուէ դու սեւ գերեզման ,  
Օտեան մերն է յաւիտեան » :

Միւսը շատ պարզ , հաղիւ պաշտօն մը արտայայտող՝

« Պատեմ գեղ , անմահ Օտեան »

Հայունի մը

Կար նաեւ հատ մը առնական կորովով յորինուած եւ բաւական մաքուր գիրով , թերեւս յեղատիտականի մը կողմանէ նուիրուած .

« Հեռու քո հայրենի երկրէն եւ հեռու բարեկամներուդ ու սիրելիներուդ խանդաղասանկէն՝ դժուար չէ՞ քեզ գալ , անհրաժեշտ Օտեան , ու հանգչիլ այս օտար աստիճան ու սեւ հողին ներքեւ :

« Այժմ հոգիդ կը հրեւի՞ արդեօք վերէն ամեն անոց որոնք սիրելի հայրենիքիդ ազատութեան համար կը ճգնին . ա՛յն երկրին որուն հոգի քալու համար ամբողջ կեանքդ տուիր : »

4 Oqanusu 1895

Նաև ուրիշ մը՝

« Համբոյր մը քեզ , ո՛ր պատեհիդ շիրիմ , համբոյր մը յաւիտեան արժիւ եւ արժանաւորից աչքով քո մեծ բարեկամին . . . » ( մնացածը անընթեռնելի : )

Ահա ասոնք կը կազմէին Օտեանի ամբողջ տասական գիրը մեր այցելած միջոցին . անկից ի վեր ո՞վ գիտէ որքա՛ն մամուռ կանանչուցած է իր շիրիմը ու ամէն ինչ ծածկած , եւ Բէն-Լաշէզը այցելողներէն քանիննր արդեօք անտարբեր եւ անգիտակից կանցնին կը դառնան իր քովէն , առանց մըտածելու թէ հայրենուն է՛ն մեծ մարդերէն՝ մէկն է տառկած այդ անշուք քարին ներքեւ , որուն վրայ մեղամաղձիկ եւ ցաւագին , յաւիտեանական մրմունջով մը կը թափառի հոգին իր տանջող միջնակութեան մէջ .

Ա.ԶԱԻՍ

(ԻՐ ԴԵՐԸ ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ) (\*)

Այն օրերուն ուր մեր սահմանադրական կեանքը կը գանձուի շատ սղորմելի գրութեան մէջ , այն օրերուն ուր սահմանադրական ըմբռնումները ամենէն աւելի սեղմուած են եւ կը ձգտին զէպի ամլութիւն , անպատիւ ամլութիւն , վրայ կը հասնի անոր Յիսնամեակը եւ առիթ կուտայ մեզի դառնալ Սահմանադրութեան սկզբնական օրերը , ուր ցեղը , իր ամենէ փառաւոր զաւակներովը , ամենէն ազնիւ մտածումները ընդգրկած է , — իրաւունք եւ պարտականութիւն , միացման դիմեր՝ ուր ջարդ ու փշուր ինկած է ամիրայական բռնապետութիւնը :

Այդ փառաւոր զաւակները Ազգին , որոնք երեւցած են Ռոսիոյն , Սէրվիլէն , Աղաթոն , Ապրօ , Պալեան , Իւթիւճեան եւ սակաւին ուրիշ անուններով , իրենց մէջ ունեցած են հոյակապ զէմք մըն ալ , Գրիգոր Օտեան Անշուշտ շատ հետաքրքրական պիտի ըլլար զիսնալ թէ ի՞նչպէս սահմանադրական առաջին մտածումը , իբրեւ կորիզ նոյն ժողովրդական հաստատութեան , մշակուեցաւ , եւ ի՞նչ է անոր հեղինակներուն իւրաքանչիւրին մասնական գերը , ի՞նչպէս զարգացուցին գաղափարը եւ օր մըն ալ դրին հաստատ գեպի վրայ : Այսօր որ կը պակտին այդ մանրամասնութիւնները , այսօր այնքան էական մեզի՝ ճշտելու այն մասնակցութեան բաժինը , որ ունեցած են անհատաբար Սահմանադրութեան մեծախառն հեղինակները :

Ասոնք չկան , մէջտեղը կանգուն կը կենայ իրենց հանրական գործը՝ իբրեւ արտաքին իրենց սահմանադրական , վարչական ըմբռնումներուն : Գլխաւոր պակաս մըն ալ սա է օր , սահմանադրական շրջանի մէջ , երկաթ ատեն՝ Ատենագրութիւնները ըլլալով հաղիւ անկատար ամբողջութիւն մը , կիսաստուերի մէջ ուրուագրուած կուզան այդ առաջին զէմքերը :

(\*) Ազգ. Սահմանադրութեան յիսնամեակի առթիւ :

Ինչ որ է, ատոնց մէջ ու ատոնց հետ է Օտեան, ու իր խօսքովը « իբրև մին ի հեղինակաց Սահմանադրութեան »: Երբ անոր պէս համեստ մարդը, որ ձեռքը մածին վրայ դընտղի մը պէս՝ արօրը առաջ կը քշէ ատոնց հոին դառնալ նայելու, այդպիսի վկայութիւն մը կուտայ իրեն համար, անտարակոյս չա՛տ աւելի բան մը արժած ըլլալու է ան: Այդ աւելին է որ պիտի ուզենք տեսնել:

Սահմանադրութեան առաջին տարին, 1860-61 Օտեան անուշով Ազգային գործերու մէջ կը տեսնենք Օտեանց հայրը, Պօղոս աղա, իբրև քաղաքական ժողովի անդամ: 1861, Մայիս 25ի նիստին մէջ կազմուած է լրագրական խառն Յանձնախումբ մը, եօթը անդամէ բաղկացած. ատոնց մէջ, առաջին անգամ ըլլալով, կը տեսնուի Գրիգոր Օտեան:

Ինչպէս կ'երեւի, լրագրական քննադատութիւնները, — դուցէ քիչ մըն ալ չափազանց — բողոքի ձայներ բարձրացնել առւած են. ատոր իբրև հետեւանք՝ կազմուած է այդ Յանձնախումբը որ կանոնադիր մը խմբադրէ: Այդ պաշտօնական անունը կայ, բայց յետոյ բնաւ խօսքեր չենք լսեր այդ մասին: Ինչ էին արդեօք Օտեանի կարծիքները, ինչպէ՞ս ըմբռնած էր ան լրագրական ազատութիւնն եւ փոխադարձ պարտականութիւնը:

Սահմանադրական մտածում մը, ամենէն առաջ, բաւական ճամբայ ըրած է ո՛րքան մեծանձն, նոյնքան եւ ազնիւ հայու մը հոգիին մէջ, — Նիկողոս Պալեան, — 1850ին: Այդ մասձումը մարմին առած է Օտեան շրջանակին մէջ, եւ 1860 Մայիսի 24, Ընդհանուր ժողովի մը մէջ ընդունուած իբրև վարչական, օրէնսդրական դրութիւն Ազգի համար:

Բայց որովհետև պետութիւնը, ներքին հարցերով դառաղած, ժամանակ ունեցած չէր ուշադրութեան առնելու, Սահմանադրութիւնը չէր վաւերացուած: Ատիկա առիթ մըն էր որ մութ ուժեր օտքի կանգնին, ինչպէս եղած է միշտ հինէն նոր շրջան մը անցնելու ատեն: Կառավարութիւնը Ալի փաշայի մէկ քեզեքեովը կը հրամայէ եօթը անձերու ընտրութիւն մը՝ Սահմանադրութիւնը քննելու համար: Այդ

պաշտօնաթուղթը մէջտեղ կուգայ, 1862 Փետրուար 20, Ազգային ժողովին մէջ: Ու մեծ վախ մը, որ պատած է սիրտերը Սահմանադրութեան համար, կը փարատի այդ օրը: Կ'ընտրուի Յանձնաժողովը, որուն անգամ է Գ. Օտեան: Ասկէ մէկ տարի ետքը, 23 Մարտ 1863, կուգայ պոլսուլթոն մը՝ Ազգին գարձնելով վերաքննուած Սահմանադրութիւնը եւ անոր գործադրութիւնը հրամայելով: Յանձնաժողովին մէջ Օտեանի դերը պարզ անդամակցի զերէն անհամեմատ բարձր եղած է. իր մտերմութիւնը Ալի փաշայի հետ, իր բարոյական ազդեցութիւնը, խօսքի եւ խօսելու մեծ հրապոյրը որ ունեցած է՝ ըրած են ինչ որ գուցէ Ազգը հնարաւորութիւն չունէր ընկելու:

Ազգն ալ, այնուհետեւ, հմայուած աչքով սկսած է նայիլ իր այս աննման զաւկին վրայ: 20 Ապտեմբեր 1863ին գումարուած է Ազգային ժողովի Ա. նիստը եւ վաւերացուած Սահմանադրութիւնը: Նոյն օրը Ատենազպիր կ'ընտրուի Օտեան: Ու անկէ ետք իր կեանքն ու գործերը, հետուէն թէ մօտէն, Ազգին կեանքն ու գործերն են: Նոյն թուականին՝ Ընդ. ժողովի Գ. քգ նիստին մէջ Պօղոս Պատրիարք թագապետն, որ սահմանադրական առաջին Պատրիարքը կրնայ համարուիլ, տետրակը ձեռքը՝ իր սահմանադրական ուխտը կ'ընէ, զողջալով այն կիրքերուն դէմ, որոնք ամէն բարիքի խաափնարար եղած էին: Օտեան, գիւլանին կողմէ, ողջունելով նորընտիրը իբրև արժանաւոր Պատրիարք, կըսէ, « Ազգային պառակառւմի եւ անխխնութեան ժամանակի մը կը յաջորդէք, Սրբազան հայր. եւ ձեր ալիքն ու փորձառութիւնը երաշխաւորութիւն է մեզի ապագայի համար: Ձեր Սրբազնութիւնը լաւ գիտէ, որ աւեհն ազգի ու ընկերութեան մէջ կարմակցութիւններ կան եւ պիտի ըլլան, վասն զի աւեհն ընկերութեան վիճակի մէջ երկու կակսն սկզբուցներ կան. — պահպանութեան եւ յաւազդիմութեան պիտոյնը:

« Այս կրկին պիտոյրէն ծագած կուսակցութիւնները իրենց օգտակար ու իրաւացի կողմը ունին, երկուքն ալ չափազանցութիւններ կրնան ունենալ:

« Կառավարութեան գլուխ կողմերուն » կը վերաբերի չափազանցութիւնները ամօքել, կիրքերը հանգարտեցնել եւ ճշմարտութեան ծառայել՝ չվախնալ կողմնակցութիւններէ, այլ յարգել ինչ որ իրաւացի է իրենց պահանջումներուն մէջ, եւ մերժել միայն ինչ որ նախապաշարմունք եւ կիրք է :

« Ձեր Արքայութեան հարկ չէ ըսել որ տասնեւիննէրորդ դարուս մէջ՝ Ազգ մը որ դարդանալու ընդունակութիւն ունի եւ չի գարգանոր, հրէջ ժըն է եւ իր վախճանը՝ կորուստ անխուսափելի :

« Այս վիճակին մէջ ահա ձեզի կը դիմէ Ազգը եւ անձնուիրութիւն կը խնդրէ ձեզմէ եւ խօսք կուտայ ձեզ Ազգային Ընդհ. Ժողովը, որ ըստ ամենայնի մասնակից ըլլայ ձեր անձնուիրութեան : Ուրեմն ընդհանուրին դործակցութեամբ դորանալով, առաջնորդեցի՛ք Ազգը դէպի յառաջդիմութիւն, ձեզի աջակից ունենալով Ազգային Սահմանադրութիւնը՝ որուն ուղիղ դործադրութիւնը ձեր անդուլ հսկողութեան կը յանձնէ Ընդհ. Ժողովս » :

Այն ատեն, ինչպէս կը տեսնենք, Ընդհ. Ժողովի նիստերը շատ ցանցառ են, եւ անշուշտ աւելի արդիւնաւորքան հիմնական ժողովները՝ որոնք թէեւ մերթ շարաթական եւ մարթ հնգետասանօրեայ, ոչնչեմ, աղմուկներէ գլուխ վեր առած չունին : 19 Փետրուար 1865ի նիստին մէջ եկած է Օտեանի հրաժարականը 27 Նոյեմբեր 1864 թուականով : Արդէն մեկնած էր Ռուսձուղ պետական պաշտօնով եւ կը գանուէր Միտհատ փաշայի հետ : Յաջորդ տարին 25 Փետրուար դարձեալ ներկայ է, ու այնուհետեւ ալ չերեւիր մինչեւ 1868 :

Օտեանի բացակայութեան ատեն Սահմանադրութիւնը մեծ խոչնդոտներու զարնուած է . մէկ կողմէ չհասկցողութիւնները, միւս կողմէ հին օձերու գալարումները, օրինազանցութիւն ուղղակի Խորհրդարանին մէջ, յայտնի բռնաբարութիւններ բրտջ սկզբունքներու, 71 վճռական ձայնի տեղ 51ով քմահաճ որոշումներ պատճառ կուտան որ Ալի փաշա կծու դիտողութիւններ ընէ, ու պիտական հարուստ մը իջնէ

Սահմանադրութեան գլխուն 1866ին . Ազգին դործերը վարելու համար կընտրուի Խան Ժողով մը եւ Յանձնաժողով մը, որ այլախ զբաղէր Սահմանադրութեան քննութեամբը : Միւսնայն ատեն խոստում եղած էր որ երկու ամիսէն պիտի դառնար Սահմանադրութիւնը : Երկու տարիէն աւելի կանցնի եւ տակաւին չէրդ աւնար ան :

Ժողովուրդը չափէն աւելի կը գրգռուի Պատրիարքին դէմ : Հիւանդանոցի նոր հարց մըն ալ լրուսը կըլլայ կիրքերու բռնկումին : Հանրադրութիւնով մը բողոք կը բարձուի օր օրերը, հիւանդներ, ծերուկներ եւ կիներ գուրս նետուած են հիւանդանոցէն : Ու ատոր հետ՝ վրայ կուգայ Մուշի մէջ Արքայազմութեան ծանր դէպք մըն տլ : Եւ ահա սղմուկներ, յիսուի շիտուի գոռում գոչիւն եկեղեցիներու մէջ, որ այն ատենը չէր փակէր իր դուռները նոյնիսկ այդպիսի յուզումներու առջեւ :

Ալի փաշա, Պատրիարքին անձնապէս լարեկամ, — որովհետեւ ինքը Զմիւռնիոյ կուսակալ եղած ատեն, Պողոս Արքայանն ալ տեղին առաջնորդ եղած է, — սաստիկ կը զայրանայ կատարուած ցոյցերուն դէմ եւ կը հրամայէ ձերբակալել գլխաւոր դերակատարները : Խոսքերու մէջ, գիշեր մը, եկեղեցիին զանգակները կը հնչեն, թաղը կը վրդովուի, տեղական ոստիկանութիւնը կը հասնի : Կը յայտարարեն որ ցորչափ իրենց ընկերները ձերբակալուած մնան, չպիտի դադրի ժողովրդային յուզումը : Պատրիարքարանը փակուած է, բանայինները կը մնան ժողովուրդին արամադրութեան ներքեւ, Պատրիարքն ալ դուրս նետուած է :

Այն ատեն Օտեան դարձած է Ռուսձուղէ . մէջ կը մտնէ եւ համոզելով Ալի փաշան, ինք կը կատարէ հարցաքննութիւնները Պատրիարքարանի մէջ : Ու երբ Օտեանն է հարցաքննիչ դատաւորը, մանուանդ սահմանադրուսէր ժողովուրդին պարազլուխները՝ տարակոյս չկայ որ սրբուած, մաքրուած ամեն մեղեքե, ազատ պիտի արձակուէին ի պատիւ Սահմանադրութեան : Ու ինչ չ'ընէր ժողովուրդը այդպիսի անհատի մը, որ մեծ է խօսքով ու գործքով, որ սիրտը իր ձեռքին մէջ ունի, եւ ձեռքը սրաին մէջ :

12 Ապրիլ 1868ին նոր յանձնաժողով մը կազմուած է որ պաշտօն ունի Խառն ժողովի բերած վերաքննութիւնը աչքէ անցնելու : Այդ ժողովին անդամ է Օտեան , իրեն հետ ունենալով Ռուսինեանը : Նոյն տարուան Յուլիս 31ի նիստին մէջ :

— « Կը խոստանամ , կ'ըսէ Օտեան , որ պիտի միջնորդ ըլլամ քիչ ժամանակէն հետ դարձնելու այն — իրաւունքները որ Ընդհանուր ժողովը կորուսած է երեք տարիէ ի վեր » :

1869 Սեպտ. 4ին՝ Պատրիարքի նոր ընտրութիւն պիտի կատարուի : Իգնատիոս Սրբազան մեռած է կայսերական հաստատութեան հրամանը ելլելէ մէկ օր ետքը : Աշխարհական պատգամաւորներու արամադրութիւններէն այնպէս կ'երեւի որ համակրանքի մեծ հոսանք կայ դէպի Ներսէս Վարժապետեան : Հոգեւորականներու մէջ , ընդհակառակն , չկամութիւն կայ այդ անունին դէմ . բայց այդ կիրքը պարակուած է սա առարկութեան ներքեւ՝ թէ Վարժապետեան Սիս ձեռնադրուած է , եւ որովհետեւ Պոլսի Պատրիարքը էջմիածնի Հայրապետին փոխանորդն է , Ներսէսի անունը ոչ իսկ դրուած է համազումարի ցանկին մէջ :

Օտեան թէեւ չափէն աւելի համակիր երիտասարդ եպիսկոպոսին , որ ձիրքերով օժտուած է , որ Ս. Սահակոսնոսի եկեղեցիին մէջ « հրեշտակներու լեզուով » քարոզած է , բայց բացատրութեան Յակոբ Պալեանի , բայց եւ այնպէս , միայն իբրեւ սկզբունքի հարց՝ մէջտեղը կը դնէ համազումարին այդ կամաւոր զանցատութիւնը : Իր նպատակն է ապացուցանել թէ ոչ մէկ օրինական արգելք կայ , քանի որ Վարժապետեան էջմիածին դաշած է իբրեւ պատգամաւոր եւ արձանագրուած իբրեւ միաբան էջմիածնի :

Նկեղեցականներու խաղը ատով վերջացած չէր . այլ իբրեւցմէ ուրքը եպիսկոպոս գաղտնի հեռագրած են Հայրապետին՝ Ներսէսի մասին եւ խնդրած որ հեռագրով պատասխանէ , անշուշտ ի նպաստ իրենց , « որպէս զի չուտով խեղդենք ծագած երկպառակութիւնը որ կրնար ծանրանալ » :

Այդ ծածոկ հեռագրի մասին թերթերու մէջ լուր ելած

է կանխաւ : Ընդհանուր ժողովին մէջ տեղեկութիւն կը պահանջուի , բայց ի զուր , ոչ մէկը այդ արի սրբազաններէ յանձն կ'առնէ կանգնիլ մէջտեղը եւ բացատրութիւն առաջ ձեռնութեական հով մը իրեն հետ քշած է միամիտ սրբազաններ ալ :

Օտեան , որ իր բուն յարձակումին կէտ նպատակի ունեցած է Խորէն եպիսկոպոս ,

— « Քանի անգամ , կ'ըսէ , պնդեցինք , փափաղ յայտնեցինք որ հեռագրին ինչ ըլլալը գիտնայ ժողովը , բայց չցուցին , վասն զի չէին կրնար յայտնել , վասն զի ժողովին պատիւին կը դպչի , վասն զի յայտնի ստութիւն մը կը պարունակէ » : Եւ ի՞նչ փոյթ . թող պահէին իրենց խորհրդաւոր լուծութիւնը , Օտեանի ձեռքը հասած է գաղտնիքին , որ կամայ մը ոտքի ելլելով՝ ծոցէն կը հանէ ֆրանսերէն հեռագրին օրինակը եւ թարգմանելով կը կարգայ . « Ընդհանուր ժողովի անդամներէն ոմանք Սիսի եպիսկոպոսները ընտրելի առաջարկեցին Կ. Պոլսի Պատրիարքութեան : Մենք բողոքեցինք իբրեւ հակառակ էջմիածնի Ս. Աթուրի իրաւունքներուն : Ձեր բարձր որոշումը կը խնդրենք հեռագրով , որպէս զի չուտով խեղդենք ծագած երկպառակութիւնը որ կրնայ ծանրանալ » :

Խորէն եպիսկոպոս , օրհասական տագնապներու մէջ , ալ ուրիշ ըսելիք չունենար՝ եթէ ո՛չ թէ ի՛նչպէս ձեռք անցուած էր գաղտնի հեռագիրը : Օտեանին ձեռքը հասած էր մինչ եւ գաղտնիքին բուն տեղը եւ դաւադրանքը , այդպէս նշ աւակած : Ու ատով ալ չբաւականացած կը քննադատէ հեռագիրը որ բոլորովին ինքաթիւրում մըն էր , որովհետեւ առաջարկութիւնը միաձայն եղած էր , երկպառակութիւնը գոյութիւն չունէր . բողոքող չէր եղած . եւ կեղրակացնէ թէ պարզապէս ենթիւ մըն է աս՝ սրու զո՞ գացած էին միամիտ եպիսկոպոսներ : Ու յետոյ առաջարկելով որ միաձայն բողոք մը արձանագրուի այդ դաւադրանքին դէմ ու կաթողկոսին հեռագրուի , — « Ա՛լ ժամն է , կ'ըսէ լռեցնել կիրքերը եւ Պատրիարքի ընտրութեամբ զբաղիլ . բոլոր Ազգը անհամբեր

ատոր կը սպասէ : Ազգը կուզէ որ պարզ, անխարդախ, զը-  
րազէտ եպիսկոպոս մը Պատրիարք ըլլայ : Կը փափաքէինք  
որ Ներսէս Սրբազանը ըլլար . բայց ան, ճշմարտախօս  
մարդ, օշադիրներու մէջ կը յայտարարէ թէ Սահմանադրու-  
թեան պահանջած տարիքը չունենալով, չի կրնար պնա-  
րիարքութիւնը ընդունիլ : Ես կ'առաջարկեմ ուրիշ մէկը, որ  
արդէն շատերուն սրտին համաձայն է, որ Ազգին ալ սիրե-  
լին է, եւ որ ճշմարիտ Հայսու զաւակ եւ ոչ նուազ փնոք է  
մեր Եկեղեցիին, Խրիմեան... »

Հազիւ թէ այդ անունը արտասանուած է, խուսն լազ-  
մութիւնը մոլեգնաբար կը ծափահարէ . « Կեցցէ Խրիմեան,  
Կեցցէ Օտեան » ազաղակները կ'որոտան : Խրիմեանը այդ բո-  
սկէն ազգին Պատրիարք է, աթու բերուած 12 Նոյեմբեր  
1869ին :

Թէեւ Պատրիարքը սահմանադրապէս ընտրուած, բայց  
Օտեանի ատուած խոստումը թէ քիչ ատենէն կը դարձնէ սահ-  
մանադրութիւնը, դեռ կատարուած չէր . եւ ան չի կրնար  
հաշտուիլ իր խղճին հետ : Ի՞նչ ընելու էր — աշխատիլ, ջա-  
նալ . եւ հազիւ թէ ամբս մը անցած, Պատրիարքը կ'աւետէ  
գեկտեմբեր Զի նիստին մէջ՝ թէ Սահմանադրութիւնը դար-  
ձած է, ամէն կողմէ՝ շնորհակալութիւններ կը տեղան Օտեա-  
նի, որ իբրեւ ատենապետ Սահմանադրութիւն, ամբողջ համարա-  
տուութիւն մը կ'ընէ այն ոճով, այն պերճախօսութիւնով  
որ իրեն յատուկ է . ու յետոյ ամենքը թողլով խոր սոցաւո-  
րութեան մէջ, կը համբուրէ Պատրիարքին աջը ու, իր մէկ  
բայտարութեան համեմատ, պարտականութիւնը կատարելէ  
եաքը կը սպրդի անյայտ կ'ըլլայ ամբոխին մէջ, աննշան ինչ-  
պէս էր առաջ :

Ազգը կրնա՞ր թողուլ որ հեռանար Օտեան. յաջորդ նիս-  
տին Քաղաքական Ժողովի անդամ կ'ընտրուի : Կը մերժէ,  
եւ մէկ ամիսէն ընտրուած է ատենապետ Ընդհանուր Ժողովի  
Խրիմեանի հետ ամենատաք կերպով յուզուած են Մայր-  
երկրին տառապանքի հարցերը : Յանձնաժողով մը երկա՞ր  
տեղեկագիր բերած է . իր եզրակացութեանց մէջ զլիաւորն

է զինուորագրութիւն ընդունիլ, որպէս զի Ազգը ազատուի  
պէտէլը ասքերիչէն :

Ընդհանուր Ժողովին մէջ ամենքն ալ համակարծիք չեն  
վիճարանութիւնները կը շարունակուին շատ հետաքրքրա-  
շարժական ոճով : Պատրիարքը վիճարագրութեան կուսակից  
է, նոյն գծին վրայ են Իրիստոստուր, Ս. Փափազեան,  
որ խնայ չէ ժողովրդային արիքունի մը սքիտիլ ու ոճովը  
կը խօսի : Ամենքը հետաքրքիր են սակայն լսել թէ ի՞նչ  
պիտի ըսէր ատենապետը, Օտեան : Եւ ահա դիւանէն վար  
իջնելով, ժողովականներու կողքին մէջ, ոտրի վրայ՝

— « Տեղեկագրին մէջ առաջին կարգաւ որեալ խնդիրը,  
կ'ըսէ, ոչ թէ միայն կարգաւ, այլ բարոյական պատճառա-  
առաջինն է եւ մայրն է ուրիշ ամէն դարձաններուն : Բնենք  
թէ ինչ է պահելը ասեքիքն : Պէտքը ասեքիքն մեր ակարու-  
թեան ատուքն է : Հայը, ինչպէս ուրիշ ոչ-մահմտական  
ազգեր, հայրենիքին համար արխն թափելու իրքեւ թէ  
անկարող զէնք դորձածելու, բոլոր երկրին պահպանութիւնը  
մինակ մէկ ազգ մը վրան առած է, եւ աս պաշտպանու-  
թեան փոխարէն՝ միւս ազգերը հարկ մը կը վճարեն, եւ աս  
իրաւունքն է : Եթէ մենք մեր հողը չենք պաշտպաներ, ո՞վ  
որ կը պաշտպանէ՞ առ այն պարտք մը ունինք աւելի, կարող  
ազգը՝ անրող ազգը կ'ըլլայ եւ մենք՝ հարկատու . մեր ի-  
րաւունքը մեր վճարած հարկին մէջն է : Բանի որ այս վի-  
ճակին մէջ կ'ուզենք մնալ, ինչ է մեր գանգաւը : պաշա-  
պանութեան իրաւունքը շատ մը իրաւունքներ կ'ենթադրէ,  
եւ այդպիսի դրութեան մը մէջ հուսասարութիւնը անկարելի  
է : Այդ դրութիւնէն ազատուելով, ու երբ քաղաքակցի մը  
բոլոր զգացումները արթնան ի մեզ երբ զինուորին յատուկ  
եղած պատուոյ զգացումը դարձանայ մեր մէջ ալ, այն ատեն  
հայը պիտի գտնէ իր նախկին նկարագիրը, որ պիտի վերա-  
կանգնէ զլորման ու ապականութեան վիճակէն, ուր ին-  
կած է, — դարերով գերութեան վիճակի հետեւանք :

« Յանձնաժողովը երկու բաժով բացատրեր է, ինչ որ  
կարելի է ըսել այս մասին եթէ պատուոյ եւ քաղաքացիու-

Թեան զգացում ունինք ըսեր է, յայտնենք աշխարհի թէ մինք ալ մարդ ենք եւ արիւթեան ընդունակ» . . .

Այ առիէ անդին, Օտեանի խօսքերն ու գործքերը կան ու կան Ազգին մէջ, Ամէն դժուար հարցի զուտն է ան. կը խօսիլ յստակ, պայծառ, Խրիմեանէ ետքը Ներսէսի յայտնի կամ անյայտ խորհրդականն է: Ու երբ Դանուբեան երկիրներու մէջ նոր ճակատագիրներ կը ստեղծուէին, իր սրբաին ու մտքին դասու նոր հաճելի զբաղումներ, — ջանալ որ դարերով ինկած Ազգ մը նոր կեանքի մէջ վերածնուէր: Ներսէսի բոլոր թուղթերուն վրայ Օտեանի սրբադրութիւնները, գիտողութիւնները տեսնուած են:

1879ին, Սահմանադրութեան տարեդարձին օրը, Հիւանդանոցին պարտէզին մէջ երեւցաւ թիկնեղ, խոշոր Օտեանը, գլուխը թեթեւ մը ծռած դէպ ի ձախ: Բազմու թեան մէջ զգուշաւոր մատներ կը ցցուէին՝ իրարու ցուցնելու այդ հոյակապ Հայը եւ մեղմ փսփսուքով մը, թէ Օտեանն է: Բընուած թիւնը կարծես հաճոյք ունեցած էր ամէն տեսակ շորհքներով օժտելու զինքը: Կեղրոնական վարժարանի նախկին տեսուչը՝ Յ. Ն. Մոստիշեան կ'ըսէր թէ երբ նստած ըլլայիր գիմացը, աստիճանաբար կը հմայուէիր, աչքերը անդունդներ կ'ըլլային եւ դուն կը խորասուզուէիր անոնց մէջ:

Օտեանի վերջին տարին եղաւ 80ը Պոլսոյ մէջ: Բարեկամներու խորհուրդովն ու աջակցութեամբը մեկնած է Փարիզ, ուր ապրեցաւ վշտագին, հետի սիրելիներէ, հետի սիրելի Ազգէ մը՝ որուն համար ամէն զոհողութիւն սիրով յանձն առած էր:

Ու եթէ հնար ըլլար, որ յանկարծ երևէր կենագործուած, անշուշտ շատ իրաւամբ մեր կրեւի կուտար մար ունեցած սահմանադրական ողորմելի՝ ընթանումները, եւ, գիւտնին բարձունքը կեցած, չէր թողուր որ ցած կիրքեր, գծուծ հաշիւներ, անհեռատեսութիւններ պառակտէին մեզ, — Թանկագին ժառանգութեան մը անարժան ժառանգորդներս:

ՀՐԱՆԴ

# ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ

Ա. ՄԱՍ  
ՃԱՌԵՐ ԵՒ ԽՕՍՔԵՐ

ԲԱՂՈՒՄ ԱԶԳ. ԸՆԿԷ. ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԷ

ԸՆԳՆԱՆՈՒՄ ԺՈՂՈՎ ԵՒՍՏ Գ. 7 Նայեմեր 1863

Գրիգոր ԷՖ. Օտեան՝ Առեւտրային

Ընդհանուր ժողովոյ Գիւտնին կողմէ հետեւեալ ուղերձը կարդաց Առեւտրային Գրիգոր ԷՖ. Օտեան:

«Սրբազան Հայր, (\*)

«Ձեր Սրբազնութեան կատարած հանդիսաւոր ուխտը ընդունելով, եւ Ձեր քարոզած յառաջդիմական սկզբունքները լսելով, Ընդհանուր ժողովը կ'ողջունէ ի Ձեզ Հայ ազգին արժանաւոր Պատրիարքը: Ձեր պաշտօնը թեթեւ ու միանգամայն ծանր պաշտօն մըն է. Սահմանադրութիւնը Ազգային գործոց նիւթական պատասխանատուութիւնը ժողովներուն միանգամայն եւ Ձեր վրայ բեռցուցած է. իսկ ո՞վ կրնայ խել Ձեռնէ բարոյական պատասխանատուութիւնը, Դուք որ գլուխ էք Ազգին:

(\*) Զմեւանիսյ Առաջնորդ՝ Պողոս Պատրիարք:

« Ազգային պառակտմանց ու անիշխանութեան ժամանակի մը կը յաջորդէք, Սրբազան Հայր, և Ձեր այիքնուփորձառութիւնը երաշխաւորութիւն մըն է մեզի ազգային համար: Ձեր Սրբազնութիւնը լաւ գիտէ որ ամէն ազգի և ընկերութեան մէջ կողմնակցութիւններ կան, և պիտի ըլլան, վասն զի ամէն ընկերութեան վիճակի մէջ երկու էական պիտոյք կան. — պահպանութեան պիտոյքն ու յառաջդիմութեան պիտոյքը:

« Այս կրկին պիտոյքէն ծագած կուսակցութիւնները իրենց օգտակար և իրաւացի կողմը ունին. երկուքն ալ չափազանցութիւններ կրնան ունենալ:

« Կառավարութեան գլուխ եզոզներուն կը վերաբերի չափազանցութիւնները ամօքել, կիրքերը հանդարտեցնել և ճշմարտութեան ծառայել, չվախնալ կողմնակցութիւններէն, այլ յորդել ինչ որ իրաւացի է իրենց պահանջմանցը մէջ, և մերժել միայն ինչ որ նախապաշարմունք և կիրք է:

« Ձեր Սրբազնութեան հարկ չէ բւել որ տասն և իննեւսորդ դարուս մէջ՝ ազգ մը որ զարգանալու ընդունակութիւն ունի և չի զարգանար, հրէշ մըն է և իր վախճանը կուրուստ է անխուսափելի:

« Այս վիճակին մէջ ահա՛ Ձեզի կը դիմէ Ազգը և անձնաւորութիւն կը խնդրէ Ձեռնէ, և խօսք կուտայ Ձեզի սոյն Ընդհանուր Ժողովը որ բոս ամենայնի մասնակից ըլլայ Ձեր անձնաւորմանցը: Ուրեմն ընդհանուրին գործակցութեամբը զօրանալով, առաջնորդեցէք Ազգին դէպի յառաջդիմութիւն, Ձեզի աջակից ունենալով Ազգային Սահմանադրութիւնը, որուն ուղիղ գործադրութիւնը Ձեր անդուհսկողութեան կը յանձնէ Ընդհանուր Ժողովս »:

**Ն Ի Ս Տ Վ.**

Օտեան Գրիգոր Էֆ.— Ընդհանուր դիտողութիւն մը ունիմ ներկայացնելու: Յանձնաժողովոյ տեղեկագրին մէջ երկու բան կայ, մէկ մը Ազգին ներկայ ելմտական վիճակը, մէկ մըն ալ Ազգային հասոյթից և ծախուց վիճակը, որմէ կը

ծագի Ազգային ընդհանուր սուրքի խնդիրը: Առաջինը Սահմանադրութեան նախատեսած պարագաներէն զուրս պարագայ մըն է: Տեղեկագիրը չորս միջոց կը ցուցունէ Ազգին բաց պարտքը զոցելու համար, երկուքը ինքն արդէն անկարելի կը դատէ, միւս երկուքն ալ կամ Քաղաքական Ժողովը և կամ Ընդհանուր Ժողովը կարելի է անգործադրելի դատէ և ճինգերորդ միջոց մը փնտռել հարկ ըլլայ: Անցնինք ասոնք. բուն խնդիրը ընդհանուր արոց խնդիրն է: Յանձնաժողովը մինչև հիմա եղած Ազգին տարեկան ծախքը հիմն առեր և անոր հետեւելով սուրքը որոշեր, բաշխումն ըրեր է: Ինձի կ'երեւայ որ ասի սխալ դրութիւն մըն է. հիմա Ազգին պէտքերը փոխուած են, նմանապէս զաղափարներն ալ փոխուած են. ինչ բան որ առաջ իբրև ամենակարեւոր ճանչցուած էր, հիմա երկրորդական կարգի կարեւորութիւն մը ունի. և ինչ որ առաջ խօսքն անգամ չէր ըլլար Ազգին մէջ, զոր օրինակ հասարակաց դասխարակուրիւն, անի հիմա իբրև ամենամեծ պիտոյք մը ճանչցուած է: Նոյն իսկ Ազգ. գործոց վարչութիւնը հիմա ուրիշ կերպով հասկցուած է և պէտք է հասկցուի քան թէ յառաջ: Ինչ ծախքով որ վարչութիւնը կրնար իր գործերը շարունակել մինչև դարդ, ալ այն ծախքերը բաւակաւն չեն. քիչ մը առաջ տեսաք որ ամէն տեղ քննիչներ զրկելու և, Գաւառներու մէջ Սահմանադրութիւնը գործադրելու համար, վարչութիւնը կարգէ զուրս ծախքեր ընելու պարտաւորուած է: Ինձի կուզայ որ անցեալ ժամանակին մէջ եղած ծախքերը հիմ առնելը սխալ դրութիւն մըն է: Ուստի նախ պէտք է ազգային պիտոյքները որոշել և ետքը նոյն պիտոյցը համեմատ որոշել սուրքի խնդիրը:

Նոյնը.— Գարձեալ կ'ըսեմ, նախ պէտքերը որոշելու է: Ես կ'ուզեմ որ վարչութիւնը երբ սուրք հաւաքելու ըլլայ, նախ ինքզինքը առաջ տանելու համար ծառայեցնէ այն սուրքը, ասի Ազգին գլխաւոր պէտքն է, և վարչութիւնը ասիկա ընելէն ետքը միայն պէտք է որ ուրիշ կարեւոր պիտոյքները հոգայ՝ ինչպէս դաստիարակութիւն ևւն. : Ասոնք մտածելով կ'առաջարկեմ որ արոց որոշումն Ազգին պիտոյքը

հիմ բունելով ընէ յանձնաժողովը Բաղաքական ժողովոյ նա  
մէկտեղ :

Նոյնը.— Ատենապետ էֆէնտիին երկու առաջարկութիւն-  
ները իրար կը ջրեն : Թէ որ ծախքը որոշելու հարկ կայ ,  
աուրքը որոշելու համար է . եթէ աուրքը որոշուելէն ետքը  
ծախքը պիտի որոշուի , այն ատեն անիմաստ բան մը եղած  
կ'ըլայ :

(Օտենն Գրեգոր էֆէնտին և Ազաթոն Մկրտիչ կ'առաջար-  
կեն որ պարտքերը վճարելու համար փոխառութիւն մը ըլլայ ,  
փոխ առնուած դրամը տարուէ տարի վճարելու պայմանաւ ,  
վճարելի մասը ազգային տարեկան ծախուց վրայ աւելցնելով  
մինչև պարտքը վերջանայ) :

Ն Ի Ս Տ Ս .

Օտենն Գ. ԷՖ.— (Ատենադպիր) իբրև Ատենադպիր մէկ  
քանի բացատրութիւններ պիտի ուղեմ Սէրվիչէն էֆէնտիին :  
Իր ըսածները աղէկ մը չհասկցայ , բայց թէ որ իմ հասկցա-  
ծիս պէս են , հակառութիւն մը կը դիտեմ :

Ատենապետ Ռուսինեան էֆէնտին վերաքննութեան հա-  
մար բրած առաջարկութեան վրայ ըսաւ թէ՛ որովհետև ժո-  
ղովը կարծիք տալու հրաւիրուած է , պէտք է որ վիճարանու-  
թիւն ըլլայ հիմա շատ աւելի ծանր խնդրի մը համար :  
Տուրքի խնդրին համար կ'ըսէ թէ՛ Ազգին ստիպողական վի-  
ճակը նկատելով պէտք է որոշել առանց վիճարանութեան :  
Ասկէ զատ յանձնաժողով մը կ'առաջարկէ Սրբազանին նախա-  
գահութեամբը , որ իւրաքանչիւրին կարողութեանը համեմատ  
թերհաշիւ պիտի ժողվէ այս տարուան տուրքին՝ որն որ գալ  
տարի պիտի հաստատուի :

Կարծեմ երբ իւրաքանչիւրին կարողութիւնը որոշուած  
ըլլայ , ազգային տուրքն ալ գրեթէ որոշուած կ'ըլլայ . այն  
ատեն ի՞նչ հարկ կայ կրկին գործողութեան , նախ թերհաշիւ  
առնել և ետքը լրացնել տուրքը : Այս կէտերը մտթ երեւցան  
ինծի Սէրվիչէն էֆէնտիի ըսածներուն մէջ , և որպէս զի՛սխալ

հասկցած չըլլամ և սխալ չարձանագրեմ , կը խնդրեմ որ  
բացատրէ :

Նոյնը.— Ըսել կ'ուզեմ որ առաջին կէտին համար երբ  
քուէարկութիւն եղաւ , երկու առաջարկութեանց վրայ միայն  
եղաւ . ժողովը հրաւիրուեցաւ 400,000 կամ 800,000 դրշ .ը  
ընդունելու և չփնտռուեցաւ թէ այս երկու գումարներէն  
դուքս ուրիշ գումար մը կ'ընդունի՞ արդեօք : Կը հարցնեմ թէ  
երկրորդ կէտին վրայ ալ համեմատական քուէարկութիւն  
պիտի ընէ՞ք , այսինքն ժողովը պարտաւորեալ է արդեօք եր-  
կու տեղեկագրաց մէկին կամ միւսին կարծիքն ընդունելու ,  
առանց փնտռելու թէ արդեօք երրորդ կարծիք մըն ալ կ'ա՞յ :

Նոյնը.— Սիւրէնեան էֆէնտիին ըսածը սխալ է , Երեսի .  
ժողովներու մէջ ամէն կարծիք և կողմնակցութիւն իր ներ-  
կայացուցիչն ունի և պէտք է որ ունենայ . իսկ Վարչութիւնը  
որ գործադիր իշխանութիւն է , պէտք է որ համաձայն առ-  
բիքներէ բազկացած ըլլայ . որ կարենայ գործ տեսնել : Ամէն  
տեղ Եւրոպայի մէ՞ս ասանկ է , և ա՞նա անոր համար ըսի թէ  
Սիւրէնեան Յովհաննէս ազային ըսածը սխալ է :

Ն Ի Ս Տ Տ .

Օտենն Գ. ԷՖ.— (Ատենադպիր) Կը հաստատեմ որ ատենաչ-  
քութեան մէջ ճիշտ այնպէս գրուած է , ինչպէս որ ըսած է Ազա-  
թոն էֆէնտին . թերևս կարողացած ատենս լաւ չհասկցաւ :

Նոյնը.— (Ատենադպիր) Սէրվիչէն էֆէնտիի բոլորքին ա-  
ւելի սաստիկ բողոքով մը կը պատասխանեմ , աս իմ անձիս  
և բնաւորութեանս դէմ ամբաստանութիւն մըն է , որու դէմ  
պիտի պաշտպանեմ զիս եբբոր վիճաբանութիւն բացուի . ևս  
իողճիւս կը վկայեմ որ իմ սուած ծանօթութեանցս և յիշու-  
թութեանս համաձայն արձանագրած եմ ինչ որ ըսուած է  
Ընդհանուր ժողովին մէջ , և ի հարկին պատրաստ եմ ապա-  
ցուցանելու . ատենադքութիւնը յերկրելու , այսինքն ետքէն  
բան աւելցնելու կամ պակսեցնելու դքութիւնը մերը չէ՛ .  
կ'առաջարկեմ որ եթէ ժողովը չպիտի ներէ անմիջապէս  
սոյն վիճաբանութեան բացուիլ , այս բողոքս արձանագրուի  
Սիւրվիչէն էֆէնտիի բողոքէն ետքը :



Ն Ո Ս Է :

Օտեան Գ. Էֆեզի.— (Ատենադպիր) Երուսաղէմէն եկած գրութիւններն են, մէկ մը՝ ներկայացման ցուցակը պատրաստելու համար Միաբանից համագումար ժողովոյ գործողութեանց յայտագիրը, և մէկ մըն ալ ներկայացման ցուցակը : Կրօնական և Քաղաքական ժողովները Խառն ժողով կազմելով, Միաբանութեան յայտագրին վրայ պէտք եղած քննուլով, Միաբանութեան արամագրութեանցը համաձայն գտեր են : Սահմանադրութեան արամագրութեանցը համաձայն գտեր են : Խառն ժողովը իր կողմէն երեք անձի վրայ ընտրութիւնը բեր է ըստ Սահմանադրութեան : Ահաւասիկ Խառն ժողովոյ տեղեկագիրը, (կ'ընթեանու) :

Նոյնը.— (Ատենադպիր) Գիտենք որ այս խօսքերը դուրսը կը պարտին, բայց չէի կարծեր թէ գանուի երեսփոխան մը որ համարձակի այս տեսակ արտառոց առարկութիւն մը ընել հոս, Ընդհանուր ժողովին : Գաղտնի քուէարկութիւնը օրէնք մըն է, բայց անանկ պարագաներ կան, ուր յայտնի քուէարկութիւն ալ կրնայ գործածուիլ : Անուբանալի է որ ուր որ գաղտնի քուէարկութիւնը օրինադրեալ է, հոն յայտնի քուէարկութիւնը Սահմանադրութեան դէմ և սպօքինուոր կ'ըլլայ : Իսկ ուր որ օրինադրեալ չէ, հոն գաղտնի քուէարկութիւնը միշտ օրինաւոր է : Մանաւանդ որ այս պարագային կրօնական ժողովն համար յայտնի կերպով արամագրեալ է որ նական ժողովին համար յայտնի կերպով արամագրեալ է որ «Կրօնական ժողովոյ մէջ ամեն տեսակ ընտրութիւն գաղտնի և հոս ինդիքը ընտրութեան վրայ է : Ուստի գաղտնի քուէարկութիւնն է միայն օրինաւոր, և Խառն ժողովը իրաւունք և պարտաւորութիւն ունէր գաղտնի քուէարկութիւն ընելու :

Նոյնը.— (Ատենադպիր) Յովհաննէս աղային արտունջը իրաւացի է : Խնդիրն այնքան յայտնի է ըստ իս, որ ասանկ ինդրոյ մը մէջ տարակոյս յայտնելը կամ ընդդիմութիւն ընելը ինձի արտառոց երեւցաւ : Սակայն կը խոստովանիմ թէ Երեսփոխանք իրարու ասանկ խոստովեամբ պէտք չէ պա-

տասխանեն. վիճարանութեան մէջ անդամ քաղաքավարութեան օրէնքները պէտք է յարգել : Իմ գործածած բառս հաւաքականութիւն բառն է, և որովհետեւ այս բառս խիստ կ'երեւայ Յովհաննէս աղային, կը փութամ հրատարակաւ ետ կուչել ու ներում խնդրել :

Նոյնը.— (Ատենադպիր) Պիտի ջանամ կարճ խօսքով պատասխանել Սերվիչէն Էֆէնտիին ամբաստանութեանը : Եւ նախ թող ներէ Սերվիչէն Էֆէնտիին դիտողութիւնը ընելու թէ՛ ես օր առաջ և ինքնայորդոր հաղորդեցի իրեն ատենագրութեան օրինակը, որպէս զի ժամանակ և զխրութիւն ունենայ իր ամբաստանութիւնը պատրաստելու և ինք չհաղորդեց ինձի ամբաստանութիւնը որ ես ալ իմ պաշտպանութիւնս առաջուց պատրաստելու կարող ըլլայի : Ուստի կը տեսնէք որ, ինչպէս ամէն մասամբ, այս մասին ալ անձ ալար դիրքի մը մէջ կը գտնուիմ Սերվիչէն Էֆէնտիին առջև : Անմիջապէս ձեռք կ'առնում ամբաստանութիւնը :

Երկու գլխաւոր կէտ կը պարունակէ ամբաստանութիւնը. — մէկ մը նիւթական սխալներ կը նշանակէ, մէկ մըն ալ ընդհանրապէս ատենագրութեան ոգին ամբաստանութեան ներքեւ կը ձգէ :

Նիւթական սխալ կրնայ սպրդիլ նոյն իսկ համառօտագրութեան զրութեամբ զբուսած ատենագրութեանց մէջ. հապա ս'ըջափ աւելի մեր ատենագրութեան մէջ, մանաւանդ ազմկալից նիստի մը ատենագրութեան մէջ, որ յատենի առնուած հակիրճ ծանօթութեանց և յիշողութեան ուժովը կը խմբագրուի. ասանկ նիւթական սխալները՝ Երեսփոխանք իրաւունք ունին դիտելու և Ատենադպիրք միշտ պատրաստ են ուղղելու երբ կ'ապացուցուին : Ասանկ եղած է մինչև այս օր. Սերվիչէն Էֆէնտիին ալ ցուցուցած այս տեսակ սխալները, յետ քննութեան, կրնան ուղղուիլ. բայց մի առ մը հիմա քննելու անկարող եմ, որովհետեւ և ոչ իսկ ամբողջը լսեցի կամ աղէկ մը կրցի հասկնալ իր ըսածները : Բայց ամբաստանութեան ծանր կէտը աս չէ. գանք այն կէտին որ ուղղակի իմ պատուոյս կը դպչի իբրև Ատենադպիր և իբրև մարդ, այն

կէտին՝ որ ատենագրութեան ոգին կ'ամբաստանէ : Սէրվիչէն էֆէնտին բսել կ'ուզէ թէ ես մասնաւոր զխառնորութեամբ անանկ մը յերկրած յարմարցուցած եմ ատենագրութիւնը որ Դիւանը արդարանայ և Դիւանին զէմ՝ խօսողները խայտա-  
 աւիտւին, այս նպատակաւ կամաւ և զխանարով խարդաւա-  
 նած եմ ատենագրութիւնը : Ահա՛ այս ամբաստանութեան  
 զէմ բողոքեցի անցած անգամ և այսօր ալ կը բողոքեմ բո-  
 լոր ուժովս : Եւ ասանկ ամբաստանութիւն մը անանկ  
 անձի մը կողմէն կուգայ ինծի որուն իմ վրայ ունե-  
 ցած սէրն ու համարումը իմ կենացս էն զօրաւոր մխիթա-  
 րութիւններէն մէկն է . . . : Եւ ասանկ ամբաստանութեան մը  
 մէջ ի՞նչ առաջ կը բերէ Սէրվիչէն էֆէնտին — գլխաւորապէս  
 մէկ բան մը : Կ'ըսէ թէ մինչև հիմա ատենագրութիւնները  
 կարճառօտ կ'ըլլային և իբրև միակ բացառութիւն՝ այս ատենա-  
 գրութիւնը մանրազատում ոճով գրուած է : Ասկէ կը հետևոյն  
 մասնաւոր զխառնորութիւնը, այս ենթագրութիւնը բողոքովին  
 սխալ է : Երկու տեսակ գործի համար կը գումարուի Ընդհա-  
 նուր ժողով, մէկ մը ընտրութեանց համար, մէկ մըն ալ ընդ-  
 հանրական շահուց վերաբերեալ խնդրոց համար, ընտրութիւն-  
 ները գաղտնի քուէարկութեամբ կը կատարուին՝ որ նիւթա-  
 կան գործողութիւն մըն է, և այն ատեն ատենագրութիւնը այս  
 նիւթական գործողութեան նկարագրութիւնը կ'ըլլայ միայն .  
 իսկ խնդիր մը վիճաբանութեամբ կ'որոշուի և այն ատեն ա-  
 տենագրութիւնը այն վիճաբանութեան արձանագրութիւնը  
 կ'ըլլայ : Ատենագրութիւնները կեցած են և այս բաժնի կը  
 կը հաստատեն : Ընդհանուր սուրբի խնդրոյն համար երկու  
 անգամ նիստ բրաւ Ընդհ. ժողովը, երկու նիստին ատենա-  
 գրութիւնք ալ մանրազատում ոճով գրուած են, և անտա-  
 բակոյս առաջինին մէջ եաքի գալիքը գուշակելով՝ մասնաւոր  
 Սէրվիչէն էֆէնտին յառաջ բերած միակ զօրաւոր փաստին  
 բոլոր գորութիւնը : Հիմա ձեզի կը գիմեմ, Երեսփոխան էֆէն-  
 տիներ, ձեզի՝ որ զիս ձեզ Ատենագրութիւն ընդունած էք, ձեզի՝  
 որ երբեակ ընտրութեամբ պատուեցիք զիս, ձեզի՝ որ նոյնիսկ

Սէրվիչէն էֆէնտին առաջին անգամ իր ամբաստանութիւնը  
 ընելէն կէս ժամ ետքը զիս նորէն Ատենագրութիւն ընտրելով,  
 յայտնեցիք թէ ձեր համարմունքն ու վստահութիւնը միշտ  
 նոյն է իմ վրաս, և կ'աղաչեմ որ ամէն մէկերնիդ ձեր խըղճ-  
 մըտանքին մէջ իջնելով՝ ազատութեամբ և անաչառութեամբ  
 վճիռ մը տաք այս ամբաստանութեան վրայ : Ան որ այս  
 խօսքերը ձեզի կ'ուզէ, իբրև մարդ և իբրև Ատենագրութիւն,  
 ուրիշ արժանիք մը չունի բայց սա միայն որ իրեն յանձնուած  
 պաշտօնը ամենայն ուղղութեամբ կը կատարէ և ստութիւն ու  
 խարդախութիւն իր բոլոր կեանքին մէջ ո՛չ երբեք ընդունած  
 է : Դուք արդէն ձեր քուէովը լուսեայն մերժեցիք ամբաս-  
 տանութիւնը, ձեզի կը մնայ հիմա զիս ու ձեր քուէն միան-  
 զամայն պաշտպանել :

Վ. Ի Ս Տ Ը.

Վսեմափայլ Ատենագրեա էֆէնտի,

Տէրութեան պաշտօնով այլու՛ր կոչեալ կը մեկնիմ այս  
 քաղաքէն և կը պարտաւորիմ հրաժարել Ընդհանուր ժողովոյ  
 Ատենագրութեան պաշտօնէն՝ զոր անխափան վարեցի առաջին  
 օրէն մինչև այսօր : Երջանիկ՝ եթէ կրցի դո՛ս ընել Ընդհա-  
 նուր ժողովը, երջանկագոյն պիտի համարիմ զիս եթէ ակա-  
 մայ թերութեանցս համար հանգիպեցայ ներողամտութեան :

27 Նոյեմբեր 1884

Պ. ՕՏԵԱՆ

Վ. Պոլիս

Օտեան Պ. ԷՖ. — Ատենագրութեան վրայ ուրիշ խօսք  
 ուզող ալ եղաւ, բայց Դիւանը առանց անոր ալ խօսք տա-  
 լու, ատենագրութիւնը քուէի գրաւ. ասիկա անկանոն է :

Նոյնը. — Ս. Պատրիարքը կը հարցնէ թէ իր բո-  
 ղոքը ի՞նչ ազդեցութիւն բրաւ և ինչո՛ւ իր զխառնութիւննե-  
 րը չտարուեցան : Ուրեմն պէտք է որ Դիւանը Ն. Սրբազնու-  
 թեան յայտնէ թէ Ընդհանուր ժողովը ի՞նչ ընդունելութիւն  
 բրաւ իր նաճակին և թէ Սրբազանը իբրաւունք ունի՞ իր զխ-  
 առնութեանց ազուրիլ խնդրելու :

Նոյնը. — Սրբազանը իբրաւունք ունի գարձեալ կար-  
 ձելու որ իրեն զբիանք եղած է, ուստի իրեն պատասխանե-

լու համար կը կարգամ աճաւասիկ Սահմանադրութեան 48րդ յօդուածը, որուն մէջ ըսուած է թէ՛ կրօնական և քաղաքական ժողովները, իւրաքանչիւր վանքի միաբանութեան և վանորէից Խորհրդոյն կարծիքը առնելէն ետքը, պէտք եղած կանոնադրութիւնը կը պատրաստեն և Ընդհանուր ժողովոյ հաստատել կուտան :

(Օտեան Գ. էֆէնտի կը պատասխանէ որ այս առաջարկութիւնը յայտնապէս արամադրեալ է Սահմանադրութեան մէջ, հետեւաբար կանոնադրութեան մէջ աւելցնելու հարկ չկայ) :

Նոյնը. — Սահմանադրութիւնը վանքերուն համար սուրբ չէ սահմանած, այլ առաջնորդութեանց համար, և երբ այս սուրբը որոշուի, յայնժամ Երուսաղէմ ալ՝ իբր առաջնորդութիւն մը՝ իրեն ինկած բաժինը կուտայ : Այսուամենայնիւ եթէ այսօր Ընդհանուր ժողովը վճիռ տայ որ ա՛լ սակեալքը Երուսաղէմայ վանքը սուրբէ ազատ է, Միաբանութիւնը պարտաւոր է իր անցեալ պարտքը վճարելու :

Նոյնը. — Վանքը մինչև ցարդ այս ստակը իրեն պարք ճանչցած է, և ո՛չ թէ իբր շնորհ : Միաբանութիւնը բարոյական օգուտ մը ցոյց տուած չըլլալով, իբր նիւթական օգուտ այս տարեկան դումարը կուտար, միայն թէ ասկէ ետքը ազատ է չտալու քանի որ Երուսաղիմայ մէջ դարբոց և տպարան պիտի հաստատէ, անանկ որ եթէ այսօր 420,000 զրուշի տարեկան սուրքին շարունակուելը չենք ուզեր նէ, բարոյական օգտի մը սկիսկալութեամբ է :

Նոյնը. — Կ'երեւայ որ իմ դիտողութեանս առթիւ Ազգէն հաշիւ կը պահանջէ Ս. Պատրիարքը, եթէ փոփոխակի հաշիւ ուղենք, փոփոխակի իրար կրնանք նեղել, և եթէ այս հաշիւները քննուին, Միաբանութեան շահաւէտ չըլլար : Եթէ քաղը տարին քսան տղայ խոստացիք է և չէ կատարեր իր խոստումը, ինչո՞ւ Միաբանութիւնը չէ բողոքեր : Ազգը իր իրաւունքը ճանչցիք է, բայց Միաբանութիւնը իրենը չէ ճանչցիք : Ինչեւէ, մինչև հիմա եղած պարտքը վճարելու է, իսկ ասկէ վերջը ո՛չ մենք կուղենք և ո՛չ ալ դուք վճարեցէք :

Ն Ի Ս Տ Ժ Թ .

Օտեան Գ. էֆ. — Կարծեցի որ Սրբազան Պատրիարքը հայերէնին և տաճկերէնին մէջ բաղդաստութիւն կ'ընէր. իր առաջարկածը վերաքննութեան ժամանակ միայն կրնայ ըլլալ : Սահմանադրութիւնը, ինչպէս որ է, աէրութիւն և ազգ ընդունած են. ո՛չ ոք կրնայ անիկա փոփոխել :

Նոյնը. — Երբ կանոնադրութիւնը Ընդհանուր ժողովոյ ներկայացու, Սրբազանին գրաւոր դիտողութիւններն ալ մէկտեղ էին, և Սրբազանը այս տեսակ դիտողութիւն մը չէր բրած. պէտք է գրով և ժամանակին այս դիտողութիւնը ներկայացնէր :

Գիւանին կողմէն հետեւեալ պատասխանը կուտայ

Նոյնը. — Սրբազան Պատրիարքին խօսքերուն կը պատասխանեմ ՚ի դիմաց Ընդհանուր ժողովին և հրամանաւ Գիւանին :

Ընդհանուր ժողովը բոլոր սրտով կ'ընդունի Սրբազանին առաջարկութիւնը՝ միանալու իրեն ջանքով Ս. Երուսաղէմայ վանուց մէջ կանոնադրեալ հաստատութեանց պայծառութեանը համար : Իսկ իր ըսածին երկրորդ մասին գալով, սկարութիւնը մարդկային բնութեան հանգամանքներէն մէկն է, և երբ ժարդս պարտք մը վրան կ'առնէ, ուխտ մը կ'ընէ, այն պարտքը և այն ուխտը կատարելու համար՝ զօրութիւնը Աստուծոմէ միայն կը ինդրէ առ որ բրած է արդէն իր ուխտը : Եւ ամենէս աւելի Սրբազանը պէտք է դիմէ Աստուծոյն ամենակարգութեան, որպէս զի կարենայ իր ուխտը անթերի կատարել :

Նոյնը. — Ընդհանուր ժողովով լուծուելու խնդիրներուն մէջ առաջնորդութեան կարգն ունի Ընդհանուր ժողովոյ ներքին կանոնադրութիւնը : Ընդհանուր ժողովը առաջին անգամ նիստ բրած ատեն՝ այս կանոնադրութեան վրայ պէտք է խորհէր և կանոնադրութիւնը պատրաստէր, և այն ատեն այսպէս ամէն նիստի մէջ աւելորդ խօսքերու և վէճերու տեղի չէր մնար :

Նոյնը. — Ընդհանուր ժողովը ասկէ առաջ անբաւական նիստերու մէջ կարեւոր խնդրոյ վրայ վիճած, քուէարկութիւն և որոշումն ըրած է. այս որոշումները վերջնական չեն սեպտեմբր, այլ մեծագոյն մաս ունեցող ատեննի մը կը ներկայանան և այն ժամանակ միայն վաւերականութեան կիսքը կը կրեն: Եթէ այսպէս չընենք, բնա՛ւ գործ առաջ չկրթար:

Նոյնը. — Մինչև հիմա երբ ընդհանուր ժողով հրաւիրել հարկ եղած է, միշտ Գիւտնին գրուած և կարծիքն առնուած է անոր. բսել է այս Դրդ յօդուածը միշտ գործադրուած է:

Նոյնը. — Նոյնիսկ Մուարանուձեան էֆէնտիի խօսքին նայելով, կ'երեւայ որ երբեմն Գիւտնին հետ խորհրդակցելու կարեւորութիւն կայ: Այս է. որ յօդուածը Գիւտնին իրաւանցը կը վերաբերի, ինչպէս նաև քանի մը ուրիշ յօդուածներ ալ կան, որք նոյնպէս Գիւտնին իրաւանցը վերաբերելով՝ միեւնոյն վէճերը պիտի բլլան անոնց վրայ: Ուստի կ'առաջարկեմ որ այս քանի մը յօդուածները մէկտէ մնան հիմա և ետքը անոնց վրայ ընդհանուր կերպով քննութիւն բլլայ:

Նոյնը. — Երեսօխոսաններէն ոմանք կրկնեցին թէ այս յօդուածը Սահմանադրութեան մէջ չկայ, հետեւաբար չընդունուիր. այս ճամբով բնաւ կանոն պէտք չէ. ըստ իս ինչ որ ուղղակի Սահմանադրութեան մէջ չկայ բսելով ետ ձգելը անսեղի է:

Նոյնը. — Իմ ըսածս սա էր. — Սահմանադրութեան մէջ չիշուած բան մը կանոն դնելը Սահմանադրութեան չի գրուի. ինչ որ յայտնի կերպով արդիւեայ է Սահմանադրութեան մէջ, անոր վրայ դառնալն անհնար է. բայց ինչ որ չէ արգելուած յայտնապէս, անիկա կանոն կրնայ բլլալ առանց Սահմանադրութեան դպչելու, վասն զի անանկ պարագաներ կան որք բնաւ չեն յիշուած Սահմանադրութեան մէջ:

Ն. Ի. Ս. Ի. Թ.

Օտեան Գ. ԷՖ. — Խօսք եղաւ թէ Գիւտնը արձանագրութիւն չունի և թէ ասանագրութիւնները ստորագրուած չեն.

ըստ որում ես ալ Ատենագրութեան պաշտօն վարած եմ այս ժողովին մէջ, կը յայտնեմ թէ իմ օրովս եղած ատենագրութիւնները արձանագրուած են և ես ալ ստորագրած եմ:

Նոյնը. — Խառն ժողովոյ Ատենապետ գանուելովս, նոյն ժողովին կողմէ ինծի յանձնուած է տեղեկութիւն տալ այն խնդրոց նկատմամբ որ Խառն ժողովոյ կը վերաբերին: — Յայտնի է արդէն որ նախկին Պատրիարք Պօղոս Սրբազանին հրաժարմանէն ետև Խառն ժողովոյ որոշմամբ և Բ. Դրան հրամանաւ տեղապահ կարգուեցաւ Աքիստակէս Սըրբազանը, որն որ Յ-Յ ամիս իր պաշտօնը վարելէ ետև հրաժարական տալով, Բ. Դուռը ընդունեց անոր հրաժարականը և իր պուլրուլլուն նայելով, որն որ հիմա կարգացուեցաւ, Ազգային Սահմանադրութեան համեմատ Պատրիարքի ընտրութեան պիտի ձեռնարկուի:

Խառն ժողովը այս պուլրուլլուն համեմատ ընտրական նախապարաստութիւնները ըրած է, նախ՝ եկեղեցական համագումար ժողով մը գումարել տալով, կրօնական մասին արժանաւոր եղող եպիսկոպոսաց ցուցակը պատրաստեց. յետոյ Խառն ժողով գումարուելով՝ նոյն ցուցակին մէջէն ըստ քաղաքականին արժանաւորագոյններէն Յ հոգի որոշելով՝ զսա ցուցակ մը պատրաստեց: Այս երկու ցուցակներն ալ Գիւտնին յանձնուած բլլալով, Ընդհանուր ժողովոյդ կը մնայ ըստ այնմ Պատրիարքի ընտրութիւն կատարել:

Նոյնը. — Խառն ժողովը կ'ընդունի պատասխանատուութիւր առ Ընդհ. ժողովը նոյն և նման Պատրիարքին: Ասկէց զսա՝ ես կը խօստանամ որ այս տեսակ գանդատներու առաջին առնելու համար միջնորդ պիտի բլլամ քիչ ժամանակէն ետ դարձնելու այն իրաւունքները զորս Ընդհանուր ժողովը կրեք տարիէ ի վեր կորսուած է, և վերաքննեալ Սահմանագրութիւնը չեկած՝ ամէն բան իր օրինաւորութեան մէջ վերահաստատելու, բաւական է որ այսօր Ընդհանուր ժողովը իր կատարելիք գործոյն խաղաղութեամբ վախճան տայ, և Տէրութեան ի վաղուց հետէ Ազգին վրայ ունեցած վստահութեանը նոր վայլ մը աւելցնէ:

Նոյնը . — Վարչական փոփոխութեան խնդրոյն կը պատասխանեմ որ թէև Սառն Ժողովը Ազգին ծառայելէ չի քաշուիր ընաւ, բայց խնդիրը անձանց վրայ չէ, այլ սկզբունքին վրայ, խնդիրը Ընդհանուր Ժողովին իրաւունքը ետ գարձնելուն վրայ է, և այս մասին ես իմ անձնական կարծիքս տուի արդէն :

Իսկ Ազգին առ Տէրութիւնն ունեցած հաւատարմութեան խնդրոյն գալով, որովհետեւ ես միջնորդ եղած եմ Սառն Ժողովոյ մէջ գանուած օրէս ի վեր Բ. Դրան և Ազգին յարբերութեանց մէջ, կը յայտնեմ որ բարեխնամ Տէրութիւնը և մասնաւորապէս Բարձ. Այլի փաշան մեծ համարում և խնամք կը տածէ մեր Ազգին վրայ. եթէ այս հաւատարմութեան խնդիրը ընել հարկ է Բ. Դրան, խիստ աղէկ. այս demarcheը աւելի պատճառ մը կ'ըլլայ Սառն Ժողովին, որ մտադիր է իր պարտքը կատարել :

Նոյնը . — Թէպէտեւ երեսփոխան չեմ, բայց իբրև մին ի հեղինակաց Սահմանադրութեան, կ'ուզեմ բացատրութիւն տալ այս մասին : Սահմանադրութեան արամադրութիւնը այս կէտին նկատմամբ պարզ և մեկին է :

Առաջին անգամ եղած քուէարկութեան բացակայ երեսփոխանք քուէ տալու իրաւունք չունին, իսկ երկրորդ անգամ քուէարկութիւն ընել հարկ եղած ատեն՝ բացակայք ալ քուէ տալու իրաւունք ունին . — իրաւունք մը որ անվանալի է :

Գտնք որ եթէ այսօր քուէհամարը սկսուի և ետքը բացակայոց քուէները առնուին, կարծեմ թէ ետքէն քուէ տուողները ծաղրած կ'ըլլանք, ինչու որ թերեւս այսօր քուէհամարը ընելէ ետքը՝ ընտրութիւնը վերջացած ըլլայ և ետքէն գալիք քուէներն օգուտ մը չունենան : Ուստի քանի որ բացակայք քուէ չեն տուած, քուէարկութիւնը կատարուած չէ ըսել է, և քուէարկութիւն չկատարուած՝ քուէհամար չի կրնար ըլլալ :

Ն Ի Ս Տ Ի .

Օտեան Գ. ԷՖ. — (Ատենապետ Սառն Ժողովոյ) Իգնատիոս Արքազանին ընտրութենէն ետեւ Ընդհանուր Ժողովի մահաւարը Սառն Ժողովին միջոցաւ Բ. Դրան տրուեցաւ և կայսերական հրամանը կաւ. բայց զժրախտաբար կայսերական հրամանին ելլելէն օր մը ետքը՝ նորընտիր Պատրիարքը վախճանեցաւ և Ազգը ախրութեամբ անոր յուղարկաւորութեան հանդէսին կրցաւ ներկայ գտնուիլ :

Սառն Ժողովը պէտք եղածը անօրինելու համար քազրիւր գրեց Բ. Դրան և հրամանագիր մը եկաւ նոր Պատրիարքի ընտրութեան համար, հետեւաբար ըստ Սահմանադրութեան՝ եկեղեցական Համագումար Ժողով գումարուեցաւ որ ընտրելեաց ցանկը պատրաստեց, և Սառն Ժողովն ալ նոյն Համագումար Ժողովոյ ցանկէն ըստ քաղաքականին աւելի արժանաւորաց ցանկը շինեց, և ահաւասիկ երկու ցանկերն ալ կախուած են ի տես Ընդհանուր Ժողովոյը :

Նոյնը . — Մինչև հիմա խօսուածներուն մէջ թուականի չփոթութիւն մը կը տեսնեմ և հարկ կը համարիմ ուղղել : Սահմանադրութիւնը Սարգիս Պատրիարքի ընտրութենէն ետեւ հաստատուած է : Բայց ի՞նչ է պատճառը որ կ'արգիլէ Սսեցի եպիսկոպոսները պատրիարքական ընտրելեաց ցանկին մէջ մտնելու. արդի Սահմանադրութիւնը գրած է՝ «Պատրիարքը ի վազուց անտի պատրիարքութեան յատկացեալ և պիսկոպոսաց դատէն ըլլայ» : Կը տեսնեք որ որոշ և մեկին բան մը չկայ այս խօսքին մէջ. այլ ի՞նչ է արդեօք այս ճապաղ պարբերութեան նշանակութիւնը, զայս իմանալու համար՝ քիչ մը բացատրութիւն պէտք է տալ : Ասկէ առաջ Սահմանադրութիւն մը կար, զոր Ազգը ընդունած էր և որ տէրութիւնը չէր վաւերացուցած. անոր մէջ յայտնի կերպով գրուած էր թէ՛ Պատրիարքը՝ Էջմիածնի և պիսկոպոս կամ անկէ ընդունուած պէտք է ըլլայ. այս տրամադրութիւնը երկրորդ Սահմանադրութեան մէջ ալ կար, բայց զանազան պատճառներու համար փոխուելով՝ այսպէս ճապաղ գրել հարկ եղած էր : Այս բացատրութենէն սա կը

հետեւի որ Սարգիս Պատրիարքը Սահմանադրութենէն առաջ ալ ընտրուած ըլլայ, ետքն ալ, դարձեալ քանի որ Սահմանադրութեան գրոյն պարտաւոր ենք հետեւել, Պատրիարքը կամ Էջմիածին ձեռնադրուած եպիսկոպոս մը և կամ անկէ ընդունուած եպիսկոպոս մը պէտք է ըլլայ. այս գրոյն մէջ չկայ այնպիսի իմաստ մը՝ որ բացէ ՚ի բաց դուրս վանէ Սսեցի եպիսկոպոս մը՝ եթէ ընդունուած ըլլայ Էջմիածնայ Աթոռէն: Այլ արդեօք Ներսէս Սրբազանը ինք զԷջմիածինը և Էջմիածին ալ զինքը կը ճանչնայ. ինծի համար տարակոյս չկայ որ երկուքն ալ փոխադարձաբար զիրար ընդունած են: Ես փառք կուտամ Աստուծոյ որ այնպէս է. ինչ, Ներսէս Սրբազանի նման եպիսկոպոս մը որ իր անխարդախ բնաւորութեամբը, իր սիրուն հանճարովը, իր մտքի ու սրտի այնքան գեղեցիկ յատկութիւններովը մեր ազգին մէջ փառք մըն է, ինչ, Ներսէս Սրբազանը որ ազգին մէջ առաջին պերճախօս ատենաբան և ազգին այնքան ծառայութիւն մատուցած եպիսկոպոս, այս եպիսկոպոսը որ իր թշնամիներուն ալ սիրելի եղած է, ինչ ցաւալի բան կ'ըլլայ որ Էջմիածին զինքը չընդունի և ինք զԷջմիածին չընդունի: Գոհութիւն Աստուծոյ, այսպէս չէ: Ներսէս Սրբազան ազգին կողմէն երեսօտ խան դացած է Էջմիածին և իբրև երեսօտխան—եպիսկոպոս Էջմիածնայ Գահակալին, Ամնայն Հայոց Կաթողիկոսին ընտրութեանը մասնակցած է. Կաթողիկոսն ու Ս. Սինողն ալ ոչ թէ ճանաչած են զինքը, այլ օրհնութեան կոնդակներով պատուած են: Եւ եթէ այսպէս ալ չըլլար, Ընդհանուր Ժողովը միաձայնութեամբ և բոլոր ազգը իբրև մէկ մարդ պէտք է ինդրէր Կաթողիկոսէն ընդունիլ Ներսէսը, և Ընդհանուր Ժողովը պատրաստ է ընելու, զի վստահ եմ որ իմ զարմացմանս Ներսէս Սրբազանին համար ամենքն կը մասնակցին:

Նոյնը.— Ըսածներուս մէջ սա կէտը կ'ուզեմ որ լաւ ուրշուի. ես զՆերսէս Սրբազան իբրև Պատրիարքական ընտրելի չեմ ներկայացներ. այլ ընտրելեաց ցուցակին մէջ կը փախաբիւմ որ մ'ուս Եպիսկոպոսաց հետ ան ալ իրաւունք ունենայ:

*Սարգիս Պատրիարք*

Նոյնը.— Պարզենք խնդիրը. Համագումար Ժողովը ինչպէ՞ս պիտի որոշէ եթէ զուժարուի. միայն Ներսէս Եպիսկոպոսին համար թէ ուրիշ Եպիսկոպոսաց համար ալ: Կարծեմ ընելիքն սա պիտի ըլլայ: Ո՛րչափ Սոսյ և Աղթամարայ եպիսկոպոսներ կան, ասոնց ամենքն ալ մէկիկ մէկիկ աչքէ անցընելով, պիտի քննէ թէ՛ որո՞նք են որ ցանկին մէջ կրնան դրուիլ. ասոնց կարգն է նաև Ներսէս Եպիսկոպոս. եթէ զբոսու ասոր վրայ կարեւոր եղած յատկութիւնները, պիտի անցընէ ցուցակին մէջ, այնպէս չէ՞ մի:


Ն Ի Ս Տ Ի Ա.

Օտեսն Գ. ԷՖ.— Խօսք առնելէ առաջ կը խնդրեմ Դիւանէն և Երեսօտխաններէն որ խօսքս չընդհատեն և խօսելու ատենս ուրիշները խօսք ուղեղով, խօսքիս թելը չկտրեն:

Կը տեսնեմ որ Ժողովը անհամբեր Պատրիարքի ընտրութեան կը սպասէ. այս անհամբերութեան Ազգն ալ մասնակից է և իրաւունք ունի, վասն զի այսքան ժամանակ Պատրիարքական Աթոռը թափուր մնալէն ետեւ՝ չա՛տ իսկ յարգուցաւ Պատրիարքի ընտրութիւնը. ուստի այսօր պէտք է անպատճառ կատարել ընտրութիւնը:

Սակայն այնպիսի անակնուկելի խնդիր մը ծագեցաւ, որ այս Երեսօտխանական Ժողովին պատուոյն կը վերաբերի, որու անտարբեր չի կրնար ըլլալ Ժողովը, և որուն վրայ պարտք կը համարիմ Ժողովոյն ուշադրութիւնը հրաւիրել յառաջ քան զընտրութիւն Պատրիարքի: Ատենադրութիւնը հիմա կարդացուեցաւ և Երեսօտխանները լաւ վերահասու եղան որ անցեալ նիստին մէջ խօսողներուն ամենքն ալ զատ զատ իրենց առաջարկութիւնը բացորոշ կերպիւ սա՛ իմաստով բրած են թէ արդեօք Ներսէս Սրբազանը՝ որ իբր ներկայացուցիչ Տաճկաստանի Հայոց՝ Էջմիածնայ Կաթողիկոսին ընտրութեան մասնակցած է և որ օրհնութեան կոնդակներ ընդունած է Նորին Վեհափառութենէն, կրնա՞յ իբրև Էջմիածնէ ընդունուած Եպիսկոպոս համարուիլ, զի Սահմանադրութիւնը այնպէս կը արամաղրէ որ Կաթողիկոսը Պատրիարքը կամ Էջմիած-

3106  
39



նայ Եպիսկոպոս և կամ Էջմիածնէն ընդունուած Եպիսկոպոս  
 Ըլլայ : Իւրաքանչիւր խօսող լաւ հասկցուցած է իր միտքը թէ  
 ո՛չ Սահմանադրութեան արամադրութեան դէմ և ո՛չ Էջմիածնայ  
 Աթոռոյն իրաւասութեան դէմ է իր բրած առաջարկու-  
 թիւնը քանի որ կ'ընդունի այն պայմանը թէ Էջմիածնայ չըն-  
 դունած Եպիսկոպոսը չի կրնար կ. Պոլսոյ Պատրիարքական  
 Աթոռը բաղմըլ ըստ Սահմանադրութեան :

Ընդհանուր ժողովոյ մրաձայնութեամբ սուած որոշումն  
 ալ սա՛ եղած է բացորոշ կերպիւ , և այս որոշումը յայտնի  
 բառերով գրուած է նոյն իսկ առ Համագումար ժողովն ուղ-  
 դուած ծանուցագրին մէջ : Արդ , ինչպէ՞ս կ'ըլլայ որ այն ծա-  
 նուցագրին առնող եկեղեցականները անոր մէջի եղած որո-  
 շումը կը խեղաթիւրեն , բոլորովին կը փոխեն և սա յայտագիրը  
 կուտան Ընդհանուր ժողովին : Ահա Համագումար ժողովոյ  
 յայտագիրը կ'ըսէ որ Ընդհանուր ժողովը Սոս Եպիսկոպոսները  
 առաջարկեր է Պատրիարք ընտրել : Կը տեսնե՞ք որչափ ծանր  
 փոփոխութիւն մըն է սա . բայց աւելի ծանրը կայ . — օրագրաց  
 փոփոխութիւն մըն է սա . բայց աւելի ծանրը կայ . — օրագրաց  
 մէջ կարդացինք թէ հեռագիր մը քաշուեր է Համագումար  
 ժողովին կողմէ առ Վեհափառ Կաթողիկոսն . արդեօք այն  
 հեռագիրն ալ այս մտքով քաշուած է . եթէ անանկ է , տա-  
 րակոյս չկայ որ Ընդհանուր ժողովը իբրեւ անհաւատարիմ  
 գրպարտուած և ամբաստանութեան տակ ձգուած է Վեհափառ  
 Կաթողիկոսին առջև :

Պէտք է որ Համագումար ժողովոյ Ատենապետ Խորէն  
 Նար-Պէյ Սրբազանը բացատրութիւն տայ այս մասին , և հե-  
 ռագրին իմաստը հաղորդէ ժողովին :

Նոյնը . — Ստուգիւ Համագումար ժողովոյ յայտագիրը  
 Մայր Աթոռոյ դիմելու հարկ ցցուցած է . բայց արդէն օրա-  
 գիրները գրած են թէ Համագումար ժողովէն հեռագիր ալ  
 քաշուեր է . ևս չեմ հարցներ թէ ինչո՞ւ քաշուեր է , այլ կը  
 հարցնեմ թէ ի՞նչ իմաստով քաշուեր է , զի Ընդհանուր ժողո-  
 վէն գաղտնի է այս բանը , և ասով իսկ կասկած կուտաք .  
 Ընդհանուր ժողովին բացարձակ իրաւունքն է գիտնալ զայն :

Նոյնը . — Ես կը կարծէի թէ գոնէ Սահմանադրութեան

արամադրութեանը համեմատ Համագումար ժողովին կողմէն  
 քաշուած է հեռագիրը , քանզի Սահմանադրութիւնը միայն  
 Համագումար ժողովին կուտայ իրաւունք բանակցելու Վեհա-  
 փառ Կաթողիկոսին հետ . հիմա կը հասկնամ որ Համագումար  
 ժողովը չէ հեռագիր քաշողը , այլ անկէ դուրս և Սահմա-  
 նադրութեան հակառակ ուրիշ մարմին մը :

Նոյնը . — Մի միայն հեռագրին իմաստը հասկնալու վրայ  
 է առաջարկութիւնս . արդեօք կարելի չէ՞ Խորէն Սրբազանին  
 հաղորդել ժողովին այն ութ Եպիսկոպոսաց քաշած հեռագրին  
 իմաստը :

Նոյնը . — Ը՞ր խնդիրը : Համագումար ժողովոյ յայտա-  
 գրին մէջ այնպէս ներկայացուցած է խնդիրը , որպէս թէ  
 Ընդհանուր ժողովը Սոս Եպիսկոպոսները կ'առաջարկէ Պատ-  
 րիարք ընել , մշնչեալ Ընդհ . ժողովին առաջարկութիւնը  
 ո՛չ թէ Սոս Եպիսկոպոսաց , այլ Ներսէս Սրբազանին Էջմիա-  
 ծինէն ընդունուած ըլլալուն կամ չըլլալուն վրայօք էր . չա՛ս  
 մեծ տարբերութիւն կայ այս երկու առաջարկութեանց մէջ :

Նոյնը . — Իբրեւ բարձրաստիճան եկեղեցական<sup>(\*)</sup> մը թէ  
 իբրեւ Համագումար ժողովոյ անդամ ստորագրեր էք , չենք  
 գիտեր :

Նոյնը . — Ներեցէք , խօսքս լմնցնեմ , անկէ ետքը կրնաք  
 ընտրութեան ձեռնարկել :

Քանի անգամ պնդեցինք , փափաք յայտնեցինք որ այդ  
 հեռագրին ի՛նչ ըլլալը գիտնայ Ընդհանուր ժողովը , բայց չի  
 ցցուցին , վասն զի չէին կրնար ցցունել , վասն զի ժողովին  
 պատուոյն կը դպչի և վասն զի այդ հեռագիրը յայտնի ստու-  
 թիւն մը կը պարունակէ : Կսեցիք ատենադրութիւնը , կար-  
 դացիք Համագումար ժողովին ուղղուած ծանուցագիրը , տա-  
 րակոյս չէ մնացած որ Ընդհանուր ժողովին որոշումը Սահ-  
 մանադրութեան համաձայն է : Արդ՝ այն հեռագիրը զոր ցցց  
 չտուին Ձեզի , ահա՛ ևս կարգամ զայն :

Այս ըսելով Օսեան Գրիգոր Էձ . ոսֆի կ'եղէ ևս ծոցէն գաղ-  
 դիեռէն հեռագրի մը օրինակը հանելով կը կաբդայ , և հայերէնի  
 կը քարգմանէ զայն : — Ահաւասիկ քարգմանութիւնը՝

(\*) Խօսքը Նար-Պէյին ուղղուած է :

«Ընդհանուր ժողովոյ անդամներէն տմանք Սոսյ եպիսկոպոսներն ընտրելի առաջարկեցին Կ. Պոլսոյ Պատրիարքութեան. մենք բողոքեցինք իբրև հակառակ էջմարձնոց Ս. Աթոռին իրաւանցը: Ձեր բարձր սրտչումը կը խնդրենք հեռագրով, որպէս զի շուտով խեղդենք ծագած երկպառակութիւնը որ կրնայ ծանրանայ»:

(Ստորագրութիւնը)

Յովհաննէս	Եպիսկոպոս	Սեթեան
Յովհաննէս	»	Ռշտունի
Յովհաննէս	»	Կապուտիկեան
Յարութիւն	»	Վեհապետեան
Պեարոս	»	Վեհապետեան
Կարապետ	»	Սերաստիոյ
Մեսրոպ	»	Տրապիզոնի
Խորէն	»	Նարպէյ

Նոյնը. — (Շարունակելով). — Հեռագիրն ստորագրող ութն Եպիսկոպոսունք նախ կ'ըսեն թէ՛ առաջարկութիւն ընդցնելը Ընդհանուր ժողովոյ մէկ քանի անդամներն են, որ անանկ չէ. Ընդհանուր ժողովը մրտաձայնութեամբ ըրած էր իր առաջարկութիւնը: Երկրորդ՝ կ'ըսեն թէ այս առաջարկութիւնն է Սոսյ Եպիսկոպոսները Պատրիարքական ընտրելի ընել, մինչդեռ ուրիշ քան էր եղած առաջարկութիւնը: Երրորդ՝ կ'ըսեն թէ բողոքեցինք այս բանիս դէմ իբրև հակառակ Ս. Աթոռոյն իրաւանց, մինչդեռ ասանկ բողոք մը երբեք չեղաւ և իրաւունք ալ չկար բողոք մը ընելու: Եւ վերջապէս այս զարմանալի հեռագիրը կը վերջանայ սպառնալիքով մը, բռնելով «Ձեր բարձր սրտչմանը կը սպասենք որպէս զի շուտով խեղդենք ծագած երկպառակութիւնները որք կրնան ծանրանայ»: Ո՞ւր և ե՞րբ ծագեցաւ այսպիսի երկպառակութիւն մը: Այս հեռագիրը կարգալէս ետքը չեմ կրնար զսպել խորհրդաժողովին մը որ միաքս կուգայ և զոր ներեցէք խնձի լուել: Մեր պատուական կղերը, որ էր պարզութեամբը հանդերձ աւելի կը փայլէր և աւելի նախապատուելի էր քան այլոց

գիտուն եկեղեցականներուն շատերը, սկսաւ եկրիկաններու գործիք ըլլալ. այս բանը մինչև հիմա ականուած չէր մեր Ազգին մէջ, նո՛ր է ասիկա և շո՛տ ցաւալի...:

Նոյնը. — Ես կ'առաջարկեմ որ այս բողոքը, զոր միաձայնութեամբ կ'ընէ Ընդհանուր ժողովը, Ասեռագրութեան մէջ անցնի և անմիջապէս Սրբազան Կաթողիկոսին հեռագրով մը հաղորդուի. մրանգամայն Օգոսէն էֆէնտիի առաջարկութեան համեմատ, յանձնաժողով մը կազմուի՝ հեռագրին ըրած անիրաւ ամբաստանութեան պատճառները քննելու համար: — Ա՛լ ժամ է լուեցնել կիրքերը և Պատրիարքի ընտրութեամբ զբաղիլ. բոլոր Ազգը անհամբեր անոր կը սպասէ: Ազգը կ'ուզէ որ պարզ, անխարդախ և զբաղէա եպիսկոպոս մը Պատրիարք ըլլայ. կը փափաքէինք որ Ներսէս Սրբազանը ըլլայ. բայց անիկա չպիտի կրնայ ըլլալ, որովհետև ինքն ալ չընդունիր ճշմարտախօս մարդ, որագրաց մէջ կը հրատարակէ թէ Սահմանագրութեան պահանջած 33 տարիքը չունենալով, չ'ուզեր ընդունիլ Պատրիարքութիւնը: Ես կ'առաջարկեմ ուրիշ մէկը որ արդէն շատերուն սրտին համաձայն է, որ Ազգին ալ սիրելին է և որ ճշմարիտ Հայու զաւակ և ո՛չ նուազ փառք մըն է մեր եկեղեցւոյն, ԽՐԻՄՆԱՆԸ՛...:

Նոյնը. — Բայց Ընդհանուր ժողովը ամբաստանութեան տակ ինկած է Վեհափառ Կաթողիկոսին առջև. իր պարագն է ինքզինքը արդարացնել:

Խորէն Սրբազան բացատրութիւն ինդրելէ առաջ, պէտք է որ ինքզինքը արդարացնէ իր վրայ ծանրացած ստութեան ամբաստանութեանն. Եպիսկոպոսաց հեռագիրը լի է ստութեամբ. ինդիրը բոլորովին այլափոխելով և խարդաւանելով զրուած է հեռագիրը. մեր Եպիսկոպոսունք չէին կրնար զայն գրել եթէ գաղղիբէն գիտնային: Կ'աղաչեմ, մեր կղերին ա՛նունովը մի՛ խօսիք, (\*) անոր փաստաբանութիւնը դուք մի՛ ընէք. մեր կղերը փաստաբանի կարօտ չէ, և ինքզինքը կրնայ արդարացնել:

Նոյնը. — Թէ որ իրաւունք չունենայի հեռագրին օրինակը առնելու, հեռագրատունէն ինձի չէին տար զայն. այդ

(\*) Նոր-Պէյի ուղղութեամբ:



խնդիրը այս տեղին չի վերաբերիր, Տէրութեան բողոք է: Մեզի համար խնդիրը Ձեր հեռագրին պարունակութեանը վրայ է. դուք իրաւունք ունիք եղեր թղթակցելու Վեհափառ Կաթողիկոսին հետ, բայց իրաւունք չունիք խնդիրը այլայլելու և Ընդհանուր ժողովը զրպարակու. ասիկա կերբիկա մըն է, և ես յաւիտեան բողոքարկու պիտի բլլամ Ձեր այս էսթրիկներուն համար:

Նոյնը.— (Ընդմիջելով).— Ես կերբիկան չըսի, կերբիկա ըսի, այս երկու բառերուն մէջ մեծ զանազանութիւն կայ. և ես խօսած ատենս լաւ կը կշռեմ իմ գործածած բառերս:

Նոյնը.— Կը ձայնակցիմ Օգոսէն էֆէնտիի խաղաղասիրական յայտարարութեանը. մանաւանդ՝ ընդհանուր զոհունակութեամբ նոր Պատրիարք մը ընտրուած օրը այսպիսի վէճ մը յուզելը մեծ վնաս կը պատճառէ Ազգին խաղաղութեանը: Ուստի զոհ ըլլանք միայն հեռագիր քաշելով Վեհափառ Կաթողիկոսին և այսօրուան ժողովին ատենագրութեան մէկ օրինակը զրկելով:

Ն Ի Ս Տ Լ Գ.

Օտեան Գ. ԷՖ.— Սրբազան Պատրիարքը կը ներէ կարծեմ որ այս կերպով եղած առաջարկութեան մը չկրնամ պատասխանել. Երեսփոխանութիւնը քանի տարիէ ի վեր Սահմանադրութիւնը կը գործադրէ. ես չեմ կրնար անոնցմէ ծանօթ ըլլալ, հետեւապէս իմ բացատրութեանցս կարօտ չեմ. բայց կարծեմ, վերաքննեալ Սահմանադրութեան մէջ մտնելու առաջարկութեան մը պատճառաւ, Երեսփոխանութեանէն խոստմունք մը առնել բաւական է. Սրբազանին հետ ուխտակից ըլլալու պէտքը թէպէտ կը զգամ, բայց մինչև ցարդ կանոն մը չկայ:

Նոյնը.— Սահմանադրութեան մէջ օրէնք մը չկայ, որով Երեսփոխանք ալ Ձեր Սրբազնութեան հետ ուխտակից ըլլալու պարտաւոր են:

Նոյնը.— Եթէ մէկն ուխտ մը ընէ, իր բոլոր կեանքին մէջ իր խիղճը կը կապէ. ասանկ հանդիսաւոր ուխտ մը կա-

տարած ատենը՝ մարդ գիտնալու է իր ըրածը. ուխտել այնպիսի բանի մը համար որ չպիտի կրնայ գործադրել, անկարելի է. ինչպէս կրնայ մարդու մը խիղճը հանդարտ ըլլալ. ես ալ նոյն ուխտը առաջարկողներէն եմ, բայց կը վկայեմ որ, ինչպէս նոյն իսկ Երեսփոխաններէն վկայողներ եղան որ ասանկ ուխտ մը ընել տալ անտեղի է, որովհետև ուխտը երկու բանի վրայ է, պիտի ուխտէ Տէրութեան հաւատարմութեան և միանգամայն Սահմանադրութեան անթերի գործադրութեան համար: Տէրութիւնը երեք տարիէ ի վեր դադարեցուցած է Սահմանադրութիւնը, թէև Պատրիարքական ընտրութեան համար եկած վերջին հրամանագիրը մեկնուեց օլան նիզամնամէ ըսելով գործադրութեան դբաւ. բայց ասով վերահաստատած ըլլալ չի հետեւիր. ես սակաւին վստահ չեմ որ այն հրամանագրին գորութեամբը Սահմանադրութեան համեմատ Ազգ. ժողովները ընտրուին՝ մինչև վերաքննեալ Սահմանադրութիւնը չգայ. թէև ես անձնապէս խօսք տուի այս բանիս համար աշխատիլ, սակայն ես իմ խղճիս հետ չեմ կրցեր հաշտուիլ այս մասին. ուրեմն եթէ Սրբազան Պատրիարքը ուխտէ, ուխտին մէկ կտորը պիտի եղծէ հարկաւ:

Ն Ի Ս Տ Լ Գ.

(Օտեան Գրիգոր ԷՖ.ն որ ներկայ եր, ո՛չ իբր Երեսփոխան այլ իբրեւ հրաժարեալ կառն ժողովոյ ասեկապէս՝ խնդրեց ամենեկն առաջ խօսիլն կարգը իրեն սալ եւ նետեալ ասեկաբաճակութիւնը կարգաց):

Օտեան Գ. ԷՖ.— (Գրաւոր).— Ալեկոծութեան ժամանակ երբ խեղ պիք և բուռն հոգմունք միայն կ'իշխեն նաւուն, որոյ ոչ եւս ոք կը վարէ ղեկը, էն յետին նաւաստիին և անշան ճանապարհորդին իրաւունքն է, երբ արիւթիւն կ'զգայ յինքեան, ղեկը ձեռք առնուլ ու վարել նաւը. այդպիսի յանդրգնութեան նուիրագործութիւնը նաւուն փրկութիւնն է. երանի իրեն եթէ նաւն ի խաղաղ նաւահանգիստ առաջնորդեց և աւելի երանի եթէ այդ պարտաւորութիւնը կատարելէն ետքը սպրդեցաւ անյայտ եղաւ ամփոխին մէջ, աննշան ինչպէս էր առաջ:

Այսպիսի ժամանակի մէջ՝ Ազգ. Վարչութեան ղեկն ի ձեռին առաւ Խառն Ժողովն ու, փոխորդիլը ծանուցանելու համար, իր արտասանած միակ խօսքն եղաւ «Օրինաւորութիւն»։ Օրինաւորութեան հրաւեր կարգաց ժողովրդին եղբնա իր բղձից անկարող ձգտմանցը մէջ կը յուզուէր երեքագին. օրինաւորութեան խնդիր մատոյց նաեւ Տէրութեան, որպէս զի առ Ազգը դարձնէ Ազգ. ժողովոյ ընտրութեան իրաւունքը։ Իր ջանիցը առջեւ շատ արգելքներ ունեցաւ և աւելի բարեկամաց քան թէ թշնամիաց յարուցած արգելքները յուսահատեցուցին զինքը շատ անգամ. այլ պարտութիւնը դատարարութիւն էր. սէպք էր յազմել և արդարանալ։ Յազմելու համար ի կիր արկաւ սակայն այնպիսի արտաքոյ կարգի միջոցներ որոնք իր դաւանած սկզբունքներուն սերացութիւն ըլլային։ Պատահեցան իրեն ալ և մանաւանդ իրեն պատահեցան, այն դժնդակ ժամերէն որ անբաժան են ամէն իշխանութեան հետ և ուր հղորագոյն կարծուածներն իսկ կ'երկուանան գործածելու միջոցներուն վրայ, և է՛ն անցողողը կարծուած միտքերն անգամ կը սկսին երկբայիլ թէ արդեօք խրատութեան միջոցները, ազատութեան դէմ հարուածները, միակ միջոց չէ՞ն երբեմն կիրքերը ցածուցանելու և խնդրոյ մը բաւորաբը զսպելու համար։ Խառն Ժողովը այս սկարութիւնը չունեցաւ։ Իր պաշտօնը լրացած է այժմ. Տէրութեան և Ազգին մէջ փոխադարձ վստահութիւնը վերահաստատուեցաւ և անոր հետ մէկտեղ կը վերահաստատուի նաև Ազգային Վարչութիւնն ալ։— Եւ արդ՛ զրեթէ տարուան մը միջոց Ազգին օրըստօրէական գործերը կարգադրելէն ետքը, ո՛րչափ որ կը ներէր իր առժամանակեայ բնութիւնը և Պատրիարքական Աթոռին քանիցս թափուր վիճակը, կը քաշուի ասպարէզէն, կը քաշուի այնպիսի ատեն մը որ Պատրիարքական Գահուն վրայ բազմած է Ազգին սիրելի Պատրիարք մը, Պատրիարք մը որ Տէրութեան սիրելին է այսօր, Պատրիարք մը որ զեռ այդ Աթոռին վրայ չբարձրացած, հասարակաց համարմանն ու համակրութեանը մէջ բարձրացած էր, Պատրիարք մը որ որչափ գրագէտ՝ այնչափ ալ քաղաքագէտ, որչափ եռանդուն՝ այնչափ

չափ ալ խոնուն, և որ նշանաւոր ծառայութիւններ կրնայ բնել և պիտի բնէ Ազգին, եթէ Ազգը ուզէ։ Ու հիմա ներեցէք, որովհետեւ այս վերջին անգամն է որ իմ պաշտօնական զիրքիս մէջ պատեհ կ'ըլլայ ինձի խօսելու, ներեցէք որ իմ մտածութիւնս ամբողջ ներկայացնեմ Ազգին։

Յուզմունքը կենդանութեան նշան է, բայց աննպատակ յուզմունքը ամուլ ճիգերով կը սպառէ Ազգին ոյժը. երեւակայեալ վտանգի մը դէմ խիզախելով՝ շատ անգամ իրական վտանգին դէմ անպատրաստ կը գտնուի մարդ։ Ինչ ալ ըլլան պատճառները որ ամեն տեսակ Վարչութեան համար անվրատահութեան զգացումը արթնցուցած են հասարակութեան մտքին մէջ, սէպք է զիմանայ Հասարակութիւնը թէ առանց վստահութեան գործ տեսնելն անկարելի է։ Երբ վարչութիւնը աղէկ ալ ընէ՛ զէ՛չ կ'երեւայ, երբ սոսկ զխսուածը իրբև հասարակութիւն մեկնուի, ո՛ր և է Վարչութիւն կը պարտաւորի գործելու և իր որ և է գործքը, թէև Ազգին համար է՛ն օգտակարն ըլլայ, թիւր հասկցուելով, անկատար կը մնայ։

Եւ այս վստահութիւնը որ անհրաժեարելի կը համարիմ Ազգ. գործոց լաւ ընթացքին համար, ես ո՛չ ինձի համար կը խնդրեմ զայն, զի ամենքը զիտեն թէ ինձի համար անկարելի է նորէն պաշտօն ընդունիլ Ազգ. Վարչութեան մէջ, և ոչ որ և է ուրիշ անձի համար։ Այս վստահութիւնը բարձրագոյն կը խնդրեմ, այլ կատարեալ վստահութիւն, այլ ոչ խօսքով, հասկա իրական վստահութիւն, Ս. Պատրիարքին համար որ համայն Ազգին ընտրեայն է։— Ամենքը կ'ըսեն թէ այս վստահութիւնը ունին, բայց եթէ այս վստահութիւնը իրօք ըլլայ, ոչ ես տեղի կ'ունենան այս յուզմունքները որոնց վրայ խօսեցայ քիչ մը առաջ, և որոնք երբ գոյութեան պատճառ մը չունին, եղածներուն գոյութիւնը վտանգի մէջ կը դնեն։— Եւ մէկ խօսքով ըսեմ իմ կարծիքս ամբողջ, Հասարակութեան պահանջմանցը վրայ։

Ուղեւու է, այլ ո՛չ իբրև մանուկ մը ուղեւու է, որ չգիտէ որչեղ պատեհութիւնն ու ժամանակը, որ միայն արժիւճատց հանել ու ազդակելի գիտէ, այլ իբրև կատարեալ մարդ մը ուղեւու է։

ՆՈՍ Ա. 21 Օգոստոս 1870

Գրիգոր Էֆ. Օսեան՝ Ատենայեա (խօսքը Ս. Նախագահին ուղղելով). — Քանի որ Սահմանադրութիւնն է մեզի ուղեցոյց ասանկ պարագաներու մէջ, և Ձեր Սրբազնութիւնը Գործ. Յանձնաժողովոյ Նախագահ կը գտնուի, կրնայ Սահմանադրութեան սղւսն համեմատ ընտրութեանց վերաբերեալ այս կրճիմն լուծել :

Նոյնը. — Խնդիրէն կը շեղիք :

Նոյնը. — Այո՛, կը հաստատեմ :

Նոյնը. — Երբ պահ մը առաջ երեսփոխանները հրաւիրեցի որ Գործ. Յանձնաժողովոյ տեղեկագրին վրայ իրենց զխտողութիւնը ընեն, ոչ ոք պատասխանեց ասոր. իսկ հիմա մինչդեռ տեղեկագիրը արդէն ժողովը ընդունած է, անոր վրայ զխտողութիւններ կ'ըլլան նախագղուչութեան համար, զխտողութիւններ՝ որոնք խնդրէն դուրս են բոլորովն, և զմեզ խնդրոց կարգէն դուրս կը հանեն :

Նոյնը. — Խնդրոց կարգէն կը շեղինք, և այս միջոցաւ չենք կրնար շարունակել ժողովը :

ԽՆԴԻԹ՝ ՎԵՐԱՔՆՆԵԱԼ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ատենայեա. — Խնդրոց կարգը Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրը կը ներկայացնէ, հետեւապէս ժողովը զայն նկատողութեան պիտի առնու հիմա. բայց որովհետեւ բոլոր երեսփոխանք այս մասին կատարելապէս տեղեկութիւն չունին, հարկ կը համարիմ ինչ ինչ բացատրութիւններ առնելու որ Բ. Գոնէն վերաքննեալ Սահմանադրութեան օրինակը հասաւ, Ընդհ. ժողովը մասնաժողովի մը յանձնեց որ զայն քննութեան առնու և տեղեկագրէ : Մասնաժողովը գրեթէ վերաքննեալ Սահմանադրութիւնը բոլորովին անգործադրելի համարելով իր կողմէ արժան դատած փոփոխութիւններով Սահմանադրութեան ծրագիր մը յօրինած և ներկայացուցած էր, որով այժմ Սահմանադրութիւնը երեք օրինակ կը գըտ-

նուէր, մէկը այն՝ որ այժմ ազգին օրէնքն է, երկրորդը Բ. Գրան մասնաժողովէն վերաքննեալ և երրորդը Ընդհանուր ժողովոյ մասնաժողովէն խմբագրեալ : Դիւրութիւն ըլլալու համար կ'առաջարկեմ որ վերաքննեալ Սահմանադրութեանց սպագիր օրինակները երեսփոխանաց ուղարկուին և ժողովին իւրաքանչիւր նիստին մէջ մէկ երկու ժամ յատկանայ վերաքննութեան, և միւս ժամերն ալ ուրիշ խնդրոց զբաղի :

Նոյնը. — Վերաքննեալ Սահմանադրութիւնը եթէ իր մէջ սեղմումներ ունի, ինչպէս իսկ մը անգործադրելի դատուած ժողովներ վերցուած են, պատճառը սա է որ Յանձնաժողովը Բ. Գոնէն եկած հրամանին հետեւած է, ինչպէս տեղեկագրին մէջ պիտի տեսնուի : Այս խնդրոյն վրայ որչափ վիճարանութիւն որ ըլլայ՝ կարճ է. բայց կը տեսնեմ որ երեսփոխանք ընդհանրապէս վերաքննութեան վիճարանութեանը մէջ այնչափ եռանդ չեն ցուցներ որչափ որ ուրիշ խնդրոց մէջ : Մասնաւորապէս Փոփոխեան Էֆէնտի բարեկամին կ'ըսեմ որ իր եռանդն ու բացազանչութիւնները չսպառէ անօգուտ տեղը, և զանոնք վերաքննութեան վիճարանութեանը պահէ :

ՆՈՍ Բ.

Ատենայեա. — Ատենադրութիւնները շատ երկար ըլլալով, անոնց ընկերցումը մէկ երկու ժամ կը սպառէ, զորս ուրիշ օգտակար խնդրոց կրնայինք գործածել. կ'առաջարկեմ որ Ատենադրութիւնը գրուելէ ետեւ անմիջապէս հրատարակուի սպագրութեամբ. երեսփոխանք օրագրաց մէջ կարգան զայն և զխտողութիւններն յաջորդ նիստին ընեն և արձանագրել ասան յետագայ ատենադրութեան համար, ինչպէս օրէն է :

Նոյնը. — Ատենադրութեան հեղինակ՝ Ատենարանները չեն, այլ ժողովին ղեւանադպիրները : Սկիզբէն ի վեր կանոն եղած է որ ատենարանք յաջորդ նիստին զխտողութիւն կ'ընեն, և զխտողութիւններն կ'արձանագրուի յաջորդ նիստին ատենադրութեանը մէջ :

Նոյնը. — Օրուան խնդիրներուն չանցած, սրտագին

պարտք մը կատարել կը փութամ իմ շնորհակալութիւնս յայտնելով այն մեծ պատուոյն համար զոր ժողովը բրած է զիս իրեն Ատենապետ ընտրելով : Միանգամայն պարտք կը համարիմ հասկցնել թէ ևս ինչպէ՞ս կ'իմանամ Ատենապետութեան պաշտօնը և ի՞նչ պայմաններով պիտի կատարեմ զայն : Այս պայմանաց առաջինն է երեսփոխան էֆէնտիներուն գործակցութիւնը, զի եթէ իմ անձնական արժանեացք ու կարողութեանս միայն նայելի, այսպիսի պաշտօնի մը յանձնառու չէի ըլլար : Ընդհ. ժողովին վստահութիւնն է որ զիս կը քաջադերէ : Հիմա ըսեմ թէ ինչպէ՞ս կը հասկնամ այս պաշտօնը, որ ինծի կը յանձնէ Ընդհ. ժողովը : Եւ նախ սա ըսեմ թէ այս պաշտօնը, ինչպէս ամէն իշխանութիւն՝ ազատութեան դէմ չէ, այլ ազատութեան համար հաստատուած է : Ժողովին իր իրաւունքն է իր ազատութիւնը պահել և զայն իր կողմէն կը յանձնէ մէկ անձի մը իր մէջէն : Ազգը իր երեսփոխաններն ընտրելով բացարձակ իրաւունք տուած է անոնց ազատօրէն խօսելու և իրենց կարծիքը յայտնելու և պաշտպանելու : Ամենքն ալ այս իրաւունքը ունին և պէտք է գործածեն. բայց երբ երեսփոխան մը այս իրաւունքը գործածելու կ'ելլայ ու ինչորոշ մը վրայ խօսիլ կը սկսի, անդիէն ուրիշ երեսփոխան մը միեւնոյն իրաւամբ միեւնոյն վայրկեանին ան ալ կը խօսի, ուրիշ մըն ալ ուրիշ ինչորոշ մը վրայ կը խօսի, ասանկով ամենքն ալ կը խօսին և ոչ մէկը խօսած կ'ըլլայ, ամենքն ալ կը կարծեն թէ իրաւունք մը գործածեցին, և ոչ ոք արդիւնաւոր կերպով զայն գործածած կ'ըլլայ, սա է ա՜ն խառնակութիւն, անիշխանութիւն՝ որ բռնութեանց էն գէշն է : Ատենապետը այս խառնակութեան, այս բռնութեան առջեւ կ'առնէ և ամէնուն կարգով խօսք տալով՝ ամէնուն խօսելու ազատութիւնը կ'ապահովցնէ. և ո՛վ որ իրեն դէմ անսաստէ՛ Ընդհ. ժողովին անսաստած կ'ըլլայ, զի Ընդհանուր ժողովէն կ'առնէ իր իշխանութիւնը :

Անա՛ իմ պաշտօնիս նշանակութիւնը զոր խղճի մտօք կատարելու մտադիր եմ : Երբ երեսփոխան մը առանց ինձմէ

խօսք առնելու խօսի, զայն ի լուսթիւն հրաւիրել իմ իրաւունքս է, իմ պարտքս է. երբ երեսփոխան մը խօսած ատենը՝ զայն շփոթելու չափ ձայները բարձրանան, լուսթիւնը վերահաստատել իմ պարտքս է. երբ երեսփոխան մը ինչըրէն դուրս ելլէ՛ զանի ինչորոշ հրաւիրել, երբ անձնական կամ ազգային պատուոյ դպչելիք խօսք ընէ, զանի ի կարգ հրաւիրել իմ իրաւունքս է, իմ պարտքս է : Եւ երբ շփոթութիւնը աղմուկի փոխուի ու Ատենանը խանգարի, Ատենապետին իրաւունքն է, մէկ քանի անգամ ազգարարութիւն ընելէն ետքը, ատենը առժամանակեայ կերպով դադարեցնել, կամ ըստ հարկին՝ այն օրուան համար բոլորովին գոցել :

Երեսփոխանաց ազատութեան դէմ դուրսէն ալ բռնաբարութիւն կրնայ ըլլալ. Ընդհ. ժողովին դուռները բաց են ժողովուրդին համար, և ասանկ ըլլալը Մահմանադրութեան ողբայն համաձայն է. բայց ազգին կամքը երեսփոխանաց յանձնուած ըլլալով, ներկայ ժողովուրդը իրաւունք չունի անոնց խօսքին խառնուելու և ո՛չ իսկ հաճութեան կամ դժգոհութեան ցոյցեր ընելու :

Պէտք է գիտնալ թէ երեսփոխանութիւնը երկու միլիոն Հայերը կը ներկայացնէ, և 200 կամ 2000 ժողովուրդը բան մը չէ իր բարոյական զօրութեանը առջեւ. ուստի ամենայն խստութեամբ պիտի հսկեմ որ այսպիսի բռնութիւն կամ ճնշում մը տեղի չունենայ ազգին երեսփոխանութեան վրայ : Եթէ այս պայմաններս ընդունելի են, խօսք կուտամ իմ կողմէն ամէն ջանք ընելու, որ Ընդհ. ժողովին ատենաները կանոնաւոր ու բարեկարգ ըլլան : Եթէ ոչ՝ հիմակուրէն կ'ըջնամ ատենապետութեան աթոռէն ու կ'անցնիմ ատենաբանից կարգը, ուր ատենապետին հնազանդութեան առաջին օրինակը ևս կուտամ :

Նայիր. — Չեմ ուզեր որ իմ խօսքերս նոր վստահութեան ցոյցեր ընդունելու մտօք հասկցուին, իմ առաջարկութեանս նպատակը սա է որ իմ հասկցած կերպովս պիտի վարուիմ պաշտօնիս մէջ, և եթէ առաջարկութիւնս ժողովին ընդունելի չկրնայ ըլլալ կամ անոր հակառակ վար-

մունք մը պիտի պատահի, այժմէն պատրաստ եմ ավտուէն վար իջնալ: Իսկ ներքին կանտոնագրին գալով՝ արդէն ծրագիր մը կայ ի պատրաստի, զոր թէեւ չեմ տեսած տակաւին, բայց խնդրոց կարգն անցած ըլլալով՝ այսօր պիտի ներկայանայ ժողովին:

Նոյնը. — Մէկ քանի առաջարկութիւն եղան, որոնք կրնան ի մը ձուլուիլ և Ատենական կանտոնաց ընթերցումն ու հաստատութիւնը մըւս նիստին թողուլ:

Նոյնը. — Ժողովը չի կրնար երկար ատեն առանց ատենական կանոնի մնալ. անանկ խնդիրներ կրնան երեւան գալ՝ որոնց լուծման համար նոյն կանտոնաց գոյութեան պէտք ունենանք, ուստի մինչեւ յառաջիկայ նիստին՝ ծրագիրները ամբողջ կարգալով, պէտք է այս խնդիրը լուծենք ու վերջացենք:

Նոյնը. — Այդ առաջարկութեան կարգը դեռ եկած չէ, և պէտք է որ վերաքննութեան նիստերուն աւարտմանը մնայ:

Նոյնը. — Պէտք է որ անմիջապէս սոյն հարցմանց պատասխան արուի Վարչութենէն. ատենաբանք կրնան խօսիլ ու շարունակել իրենց ղիտողութիւնները, և լմնալէն վերջը ամէնուն պատասխանը կուտայ Վարչութիւնը:

Ն Ի Ս Տ Վ

Ատենապետ. — Ուրիշ ղիտողութիւն մը ունի՞ք: — Ո՛չ:

Նոյնը. — Ժամ է արդ խնդրոց կարգին մանել, և ինչպէս յայտնի է՝ այս նիստին առաջին գործը անցեալ նիստէն անույժ մնացած Սոս Կաթողիկոսութեան խնդրոյն շարունակութիւնը պէտք է ըլլայ: Խօսքը Կապուտիկեան Սրբազանինն է:

(Ատենապետ Էֆեֆիս ժողովին հինգ վարկեան հանգիստ արի ետեւ, նորէն Ատենը բացաւ, և արողը իր փոխանորդին յանձնելով, Երեսփոխանաց շարք մտաւ և խօսք ուզեց փոխատենապետէն):

Օտեան Էֆ. — Եթէ մէկն էլլէր ըսէր, Սիս և Աղթամար

հակաթոս են, վերջնենք զանոնք, կը հասկնայի և այդ խօսքը իմաստ մը կ'ունենար: Գարձեալ եթէ մէկը ըսելու ըլլար թէ՛ չվերջնենք նէ ալ՝ գոնէ ամենեւին չխառնուինք անոնց գործերուն, մեզի համար թող չեղած ըլլան, ո՛չ փոխենք ո՛չ նորը ընտրենք, Կաթողիկոսութեան անունը կրող մարդուն ընտրութեան ո՛չ օրինաւորութիւնը ո՛չ ապօրինաւորութիւնը փնտռենք, զի այդ Կաթողիկոսութիւնն արդէն ապօրինաւոր է, գարձեալ կը հասկնայի և է՛ւսքը իմաստ մը կ'ունենար: Բայց երբ կ'ըսեն թէ՛ այդ Կաթողիկոսութիւնները պահենք, բայց իրենց ընտրութեանը մասին էջմրածնայ Կաթողիկոսին ղիմենք որ հակաթոս կը դաւանի զանոնք, այս խօսքը չեմ հասկնար: Ահա ասոր համար է որ երկու նիստ իրարու ետեւէ այս նիստին վրայ վիճուեցաւ, միեւնոյն երեսփոխան մէկ քանի անգամ խօսեցաւ, կարծեմ ո՛չ սք ինքզինքին հետ կրցաւ համաձայնիլ, և խնդիրն յօռի չըջանի մը մէջ մտաւ, ուրկէ դուրս չպիտի կրնայ ելլել և այս վիճակին մէջ օրինաւոր լուծում մը գտնել: Այս անել համբէն ազատելու է խնդիրը: Ներեցէք որ միայն Սոս Կաթողիկոսութեան վրայ խօսիմ, վասն զի Աղթամարայ Կաթողիկոսութեան ի՛նչ ըլլալը ես ալ չգիտեմ: Այս խնդիրը երեք գլխաւոր և էական կէտեր կը պարունակէ իր մէջը, որք են:

1. Թէ Սոս Կաթողիկոսին ընտրութիւնն օրինաւոր եղած է թէ ոչ:

2. Ի՞նչ են Սոս Կաթողիկոսի ընտրութեան օրինաւորութեան պայմանները:

3. Էջմրածնայ Կաթողիկոսին իրաւասութեան սահմանը մինչեւ ո՛ւր կը հասնի:

Առջի երկու կէտերը՝ որոնց վրայ միայն պիտի խօսիմ այսօր, բացառելու համար հարկ կը տեսնեմ մէկ քանի ընթերցումնք ընել ժողովոյց:

Ա.

ՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎՈՅ ՎՃԻՈՐ

« Վիճակային Եկեղեցական Ժողովս սեղեկանալով թէ Խաչատուր Եպիսկ. Աղթամարայ հանգուցեալ Պետրոս Կաթողիկոսին կենդանութեան ատեն ինքզինքը անոր սեղ Կաթողիկոս օծել տուեր է, անվաւեր վճուեց անոր կաթողիկոսութիւնը :

« Նոյնպէս անվաւեր վճուեց Սոս Երկողայոս կաթողիկոսին կաթողիկոսութիւնը, ըստ որում արժանաւորութիւն չունենալով՝ գիշեր ատեն դողն ի դողը, առանց Ազգին հաւանութեան, և կրօնափոխութեան արատով արատաւորեալ և պիսկոպոսէ մը օծուելու յանդգներ է :

« Ուստի Եկեղեցական Վիճակային Ժողովս զազանի քուէարկութեամբ Աղթամարայ Աթուոյն Կաթողիկոսութեան ընտրելի նշանակեց հետեւեալ երեք արժանաւոր եկեղեցականները :

- Յակոբ Եպիսկոպոս Թորուղեան քուէ 23
- Մկրտիչ Խրիմեան Վարդապետ « 22
- Երեմիա Վարդապետ Բաղէշու « 29

« Նոյնպէս Կիլիկիոյ Աթուոյն Կաթողիկոսութեան ընտրելի նշանակեց զարձեալ երեք արժանաւոր կաթողիկոս որք են՝

- Ներսէս Եպիսկոպոս : Վարժապետեան քուէ 20
- Արիստակէս » Ատանայի » 47
- Յովհաննէս » Եղեկեան » 45

Ի Հաստատութիւն ստորագրենք  
Ստրագրուրիւնք

Բ.

1866 ՅՈՒԼԻՍ 22Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ ՈՐՈՇՈՒՄԸ

Ասեմապետ.— Եկեղեցական Համագումար Ժողովը, ուր բայ ի վարդապետներէ և քահանաներէ՝ ներկայ գտնուած են վեց Եպիսկոպոսունք և մէկ Պատրիարք մը, անվաւեր

*Վ. Մկրտչյան*

կը վճուէ Սոս և Աղթամարայ ինքնակոչ կաթողիկոսները, կը մերժէ դանսնք, և Սոս ու Աղթամարայ աթուոսները թափուր կը հրատարակէ. այժմ կը հարցնեմ Ընդհանուր Ժողովոյ թէ այս վճիւր կ'ընդունի՞. ո՞վ որ կ'ընդունի՞՝ ձեռքը վեր առնէ :

(Ներկայ եղող Երեսփոխանք ձեռքերնին վեր վերցնելով՝ սոյն վճիւր կ'ընդունին, և յիշեալ երկու Արուները քափուր կը հրատարակուին):

Գ.

ՆՇԱՆԱՌՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ՈՄԱՆՅ ԲԵՐԱՆԱՅԻ ԿԱՍ ԳՐԱՌՈՐ ԳՍՏԱՍՏԱՆ ԵՆԵՐԸ

Ներսէս Եպիսկոպոսի խօսքը 1866 Յուլիս 22ի Ընդհանուր Ժողովի ասեմագրութեան քաղուած

« Աղթամարայ ինքնակոչ Խաչատուր Եպիսկոպոսը, Պետրոս Կաթողիկոսին կենդանութեան ատեն, ինքզինքը Կաթողիկոս օծել տուած է . . . ևն. իսկ Սոս ինքնակոչ Երկողայոս Կաթողիկոսին գալով, ասոր ալ Կաթողիկոսութիւնը անընդունելի է, վասն զի առանց Ազգին հաւանութեան և որոշմանը սպասելու, արժանաւորութիւն չունենալով գիշեր ատեն ինքզինքը օծել տուեր է գողն ի գողը՝ երբեմն հովմէակախութիւն ընդունող Յարութիւն անուն կաթողիկոսէն : Աս ալ Կաթողիկոս չի ճանչնար Եկեղեցական Վիճակային Ժողովը և անոր ըրածը Եկեղեցոյ դէմ մեղանշել է. եթէ ապաշխարէ՝ թողութիւն կը գտնէ, բայց զարձեալ Կաթողիկոս չի կրնար ճանչցուիլ, ասոր կաթողիկոսութիւնը ըստ իս ստալէս է, եթէ Տաճիկ մը Վանքը մտած ըլլար և Միւսունին չիլը գլուխը թափած ըլլար, միթէ գանի Կաթողիկոս պիտի ճանչնայինք. Նիկողայոս Եպիսկոպոսին կաթողիկոսութիւնն ալ ճիշտ այսպէս է :

Արքեան Յովնաննես Եպիսկոպոսի նամակը առ Արիսակես  
Սրբազան սեղապանն Պատրիարքական:

Դ 21 Մայիսի 1869 ՚ի Գուղկունճուք,

Պատուական Ս. Հայր

Գրոյն յետոյ՝ զոր ընկալայ յերեկոյնն, ո՛չ ըստ ձերոց  
հարցմանց տամ արդ զպատասխանն, այլ բառ իմում ՚ի սկզբ-  
բանէ անստի համոզմանց ՚ի բանի երկուց Կաթողիկոսութեանց  
Կիլիկիոյ և Ալթամարայ, զի երկօքին նոքա հակառակ կա-  
նոնաց Սուրբ Եկեղեցւոյս զհետ եղեն տեղեկանել անձանց  
զայնոսիկ վսեմական պաշտամունս, ուստի և ըստ իս չին  
նոքա ժառանգք այնց սրբազան պաշտամանց, այս էր կան-  
խաւ ՚ի Համագումար ժողովի սրոշումն իմ, և զայն հաստա-  
տեալ իմով քառադրութեամբ, ռւստի և այդմ մասնակցիլ ու-  
րոշման Եպիսկոպոսաց ժողովոյ չունիմ իրաւունս: Իսկ  
՚ի բանի ձեռնադրութեան երկուց վարդապետաց յեպիսկոպո-  
սութիւն քրդէս դրէքն, ՚ի Նիկողոս Եպիսկոպոսէ, լաւ նւս  
լինէր խորհուրդ հարցանել և սպասել որոշման և վճռոց վսե-  
մափառ և Սրբազան Հայրապետի սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի,  
քան առաջարկել Եպիսկոպոսաց ոմանց, և սպասել ՚ի նոցանէ  
օրինաւոր վճռոց:

Յաւ է ինձ, զի պարտիմ զրով յայտնել զլիմ համոզումն,  
չկարացեալ անձամբ դալ և բանիւ բերանոյ խօսիլ, և այսմ  
պառճառ է տկարութիւնս, քան զի ՚ի չորրորդ օրէ անտի  
Սրբոյ Զատիկին մինչև ՚ի չորրորդ կիւրակէն, չտեսի զերեսս  
որրոյ եկեղեցւոյն պատուիրանաւ պատուական բժշկին. իսկ  
՚ի նմին կիւրակէ աւուր առի զազատութիւն գնալ յեկեղեցի  
այլ պայմանաւ ոչ աշխատ առնելոյ և վաստակեցուցանելոյ  
զանձն. տակաւին կամ յայսմ վիճակի, ռւստի և վոխանակ  
անձամբ գալոյ, առաքեմ զգիրս, և մնամ՝

Ձեր պատուական Ս. Հայրութեան չնորհապարտ՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԷՔԵԱՆ

Խորէն Եպիսկոպոսի նամակը առ Տեղապանն Պատրիարքական  
Պէշիկթաշ, 22 Մայիս 1869

Ամենապատիւ Սրբազան Հայր

Ինչպէս որ արդէն երէկուան օրը բերանացի իմացուցեր  
էի՝ անկարելի է ինձ այսօր դալ ՚ի ժողով, Մաքրունեան  
վարժարանաց Տնօրէնութեան խորհրդոյ օրն ըլլալով, և խիստ  
կարեւոր դարձեր ունենալով յորոշել, Որոյ վասն ներումն կը  
խնդրեմ ՚ի բարձր Սրբազնութենէդ և ՚ի Գերապատիւ Սրբա-  
զան եղբարց:

Սակայն ըստ իմ իմաստովն ալ բացակայ չմնալու համար ՚ի Սրբ-  
բազումար ժողովոյդ, կը փութամ առաջակայ գրովս հազոր-  
դակից ձեզ լինել, իմ համահաճութիւնս յայտնելով վճռոյ  
ժողովոյդ, որ պիտի վերահաստատէ անշուշտ եկեղեցական  
Համագումար ժողովոյն վճիռը, մերժելով Սահցի Նիկողայոս  
Եպիսկոպոսի Կաթողիկոսութիւնը, և ապստամբ գնա համա-  
րելով ՚ի Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, ընդ Դաւիթ և  
Ստեփան վարդապետաց, որք ժպրհեցան առ սոս կոխել զա-  
մենայն կարգ և զկանոն, և ընդունիլ ձեռնադրութիւն մը՝  
զոր միշտ անվաւեր պիտի համարի մեր Սուրբ Եկեղեցին,  
այսինքն իբրև զչեղեալ:

Անստարակոյս էմ որ Սրբազումար ժողովդ պիտի արժան  
դատէ պատուհասակոծ առնել զերեսին միանգամայն, սահ-  
մանելով արտաքսել գնոսս ՚ի սահմանացն Կիլիկիոյ, և որոշե-  
լով նոցա տեղի ապաշխարութեան զմը ՚ի վանօրէից մերոց,  
զոր օրինակ զՍուրբ Յակոբայ մենաստանն Ազգիս որ յերու-  
սաղէմ, յանձնելով զերեսին միանգամայն աշարուք հակողու-  
թեան Ամենապատիւ Պատրիարքին Երուսաղիմայ:

Այս են և իմ կարծիք, որովհետեւ ոչ զԿաթողիկոսու-  
թիւն Նիկողոսին ընդունիմ և ոչ զԵպիսկոպոսութիւն Դաւիթ  
և Ստեփան վարդապետաց, և համարիմ եւս թէ առանց ար-  
աաստանման առնելոյ գնոսս, և բառնալոյ զչարն ՚ի միջոյ ըստ  
առաքելոյն, յանձնարիցն իցէ առնուլ զառաջս սպաղայ  
աղեաից և անկարգութեանց:

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

4.

Այսպիսի վճիռ մը որ ընդհանուրին գիտակցութեանը արձագանգն էր, ժամանակին Պատրիարքը 1866 Օգոստոս 3 թուականու կոնդակաւ մը պատարագեր է Սոսյ վիճակներուն մէջ որուն մէկ քանի կարեւոր մասերը ահաւաստիկ :

«Գայթակցեցի՞ն յանդգնութիւն մը և Ս. Եկեղեցւոյ իրաւանց անակնկալ և սոսկալի բռնաբարութիւն մը տեղի ունեցաւ մօտերս Հալէպի նախկին առաջնորդ Նիկողայոս Եւպիսկօի հեղինակութեամբ, այս անձը որ՝ մինչև հիմա զա- նազան պժգալի գործեր ըրած է շատերու վիպութեամբ, բարեյիշատակ Բ. Կիրակոս Կիրիկիոյ Սրբազան Կաթողիկոսի մահուան մօտ առեկնեմէն սկսեալ Սոսյ կողմերը կը գտնուէր : Ազգ. Վարչութիւնը կասկածելով անոր վրայ՝ յատուկ տեղա- պահ մը կարգեց նոյն Աթոռոյն, և Նիկողայոսը Պոլիս բերելու համար՝ փոխարքայական հրամանագիր ստացաւ : Նիկողայոս՝ հրամանագիրը կարդալէն ետքը՝ գիշեր ատեն զսոյն ՚ի գոյը կրօնափոխ եպիսկոպոսի մը ինքզինքը օծել կուտայ յունիս ամսոյ 11ին :

Բայց ահա կը ծանուցանենք ձեր բարեպաշտութեանը որ Եկեղեցական Վիճակային Համագումար ժողովով՝ ուր տասն եպիսկոպոսունք և բազմաթիւ եկեղեցականք ներկայ էին, և Ազգային Երեսի. Ընդհանուր ժողովով Սոսյ այս ԻՆՔՆԱ- ՀՐԱԻԷՐ ԻՆՔՆԱԿՈՉ ու ԻՆՔՆԸՆՏԻՐ Կաթողիկոսը անվաւեր ու սպօրինաւոր է :»

5.

Ազգին եկեղեցական և երեսփոխանական ժողովներն ի- րենց պարտքերն այս կերպով կատարելէ ետև, Ազգն ալ մասնակցեր է տեսնելով վերոյիշեալ որոշմանց անդործադրե- լի մնալը : Պոլսոյ ժողովուրդը բազմաթիւ ստորագրութեամբ հանրագիր մատուցեր է վարչութեան, ահաւաստիկ այդ հան- բազիրը .

«Ժողովուրդը գիտէ զ'իշխանութիւնը յարգել, գիտէ «վարչութիւնը պատուել, բայց զանցատուութեանց դէմ ալ

«չի կրնար լսել, և չուելէն զատ՝ գիտէ նաև չճանչել այն «վարչութիւնը, որ չի պաշտպաներ իր իրաւունքը ու ար- «դարութիւնը : Սոսյ Նիկողոս եպիսկոպոսին Պոլիս մըտնե- «լու օրէն ՚ի վեր՝ խռովայոյզ շշուկներ կը տարածուին թէ «նորնոյր Վ. Գէորգ Կաթողիկոսն պիտի պաշտպանէ զՆիկո- «ղոս եպիսկոպոսը, որպէս թէ Ազգ. Վարչութիւնը պիտի ար- «դարացնէ անոր օրինազանց արարքները, որպէս թէ Նիկո- «ղոս եպիսկոպոսը պիտի վերագաւանայ այն կաթողիկոսական «թեմը, ուր տեղիք տուած է երկպառակութեան, հաւատա- «փոխութեան և գայթակցութեան : Ժողովուրդը չ'ուզեր հա- «ւատալ այս տարածայնութեանց, վասն զի չի կրնար համոզ- «ուիլ թէ՛ Գէորգ Կաթողիկոսն իր ընտրութեան դէմ և Ազ- «գային Վարչութիւնը իր վճռոյն դէմ ցանկան մեղանչել՝ «վասն զի եթէ Նիկողոս եպիսկոպոսը վաւերանայ, Գէորգ «Կաթողիկոսին ընտրութիւնը անվաւեր պիտի զաւանայ, ու «բովնեաւ Նիկողոս եպիսկոպոսին դատակնիքն և Գէորգ «Կաթողիկոսին հաստատութիւնը միեւնոյն ժամանակ և մի- «եւնոյն համագումար և Ընդհանուր ժողովներով որոշուած և «արձանագրուած են : Ժողովուրդը չ'ուզեր հաւատալ, բայց «չուզեր միանգամայն և ասպնով ըլլալ, քանի որ շշուկներն «օր աւուր կարեւորութիւն կը ստանան, ուստի և ստիպուած «է յայտարարութիւն ընել և Ազգային Վարչութեան զգու- «չութիւնը պահանջել : Նիկողոս եպիսկոպոսը յանցաւոր է ե- «կեղեցական օրինաց առջև իր կրօնափոխութեամբ և ապօ- «րինի ու կարծիքական օժմամբ, յանցաւոր է Ազգին առջև «իր յարուցած գժտութեամբ և խռովութեամբ, յանցաւոր է «Ազգային Վարչութեան առջև՝ իր ապստամբութեամբն ու «անհնազանդութեամբը, յանցաւոր է տէրութեան առջև իր «խարեբայական հնարքներովը, և այսչափ յանցաւորութեան «համար բռնի Պատրիարքարան բերուած է պատժուելու և ոչ «թէ քննութեան ենթարկուելու : Ազգային Վարչութիւնը կըր- «նայ ներողամիտ ըլլալ և այս օրինազանցութիւնները չպատ- «ժել, բայց չի կրնար երբեք զանի արդարացնել : Այսչափ միայն «կրնայ ներել Աստուածային և մարդկային օրէնքը, այսչափ



«կրնայ հաստալ ժողովուրդը: Ուրեմն վճռուած է Նիկողոսին  
 «դատակնիքն արդարութեան ձայնով և Ազգին հաւանու-  
 «թեամբ, վճռուած է որ ան իրաւունք չունի Սիւ դառնալ  
 «և որ և իցէ եկեղեցական պաշտօն վարել: Հերիք են այս մասին  
 «տեղական ժողովրդական բողոքները, հերիք են Ազգին մէջ  
 «տարածուած տրտունջները: Այսուհետեւ Նիկողոսի արար-  
 «ները քննել եւ անոր արդարանալուն համար հնարքներ հնա-  
 «ւել՝ կը եռանակէ եկեղեցիին ծաղրել: Ազգային Վարչութեան  
 «իրաւունքները ոտնակոխ րնել, Ազգին անունը օտարներուն  
 «առջեւ խաղի խայտառակ րնել, հաւասքն ու կրօնին քրեւա-  
 «մանել եւ մեր Օսմանեան բարեխնամ կառավարութիւնը խա-  
 «ղալիք րնել, որ Ազգին հետ ինն ալ իբրեւ օրինազանց հան-  
 «չած է: Նիկողոս: Ողջամիտ հասարակութեան համոզումը  
 «սա է, ալ չկրնար Նիկողոս Սիւ դառնալ, ուրեմն և Ազգա-  
 «յին Վարչութիւնը պարտական է Սոսյ խեղճ և տառապեալ  
 «ժողովրդին համար մտածել և ոչ թէ Նիկողոսի քննութեամբը  
 «զբաղիլ, վասն զի համագումար և Ընդհանուր ժողովները  
 «մերժած են զՆիկողոս և արդէն որոշած են կաթողիկոսական  
 «ընտրելիներ Սոսյ և Ազգամարայ վիճակներուն համար: Ուս-  
 «տի և յայտարարութիւն կրնենք որ, հարկաւոր է զՆիկողոս  
 «տարամերժել, որպէս զի վտանգներուն և պառակտումնե-  
 «րուն առջեւն առնուի, որք արդէն յղացած են, և Սոսյ  
 «տառապեալ ժողովուրդը միտիթարելու համար արժանաւորի  
 «մը ընտրութիւնը փութացուի: Այս է ազգին բոլոր ողջա-  
 «միաներուն և ցառակիցներուն համոզումը, որուն կատարու-  
 «մը կը պահանջեն Ազգային Վարչութենէն և ստորագրու-  
 «թեամբ կ'ուխտեն մինչև ցկատարածը պնդել այս մասին:»

Բազմաքիւ ստորագրութիւն

«Կը տեսնէք որ ժողովուրդն իր հանրագրոյն մէջ խիստ  
 արդար և իմաստալից զիտողութիւն մը կ'ընէ, հոս ալ զայն  
 «կրկնել պէտք է» ժողովուրդը ամէն զիտողութեան առջեւը  
 կ'առնէ բսելով, «Եթէ Նիկողոսյոս Եպիսկոպոսը վաւերանայ,  
 «Գէորգ Կաթողիկոսին ընտրութիւնը անվաւեր պիտի դառ-

«նայ, որովհետեւ Նիկողոսյոս Եպիսկոպոսի դատակնիքն և  
 «Գէորգ Կաթողիկոսին հաստատութիւնը միեւնոյն ժամանակ  
 «և միեւնոյն համագումար և Ընդհանուր ժողովներով որոշ-  
 «ուած և արձանագրուած են»:

Ասանցմէ ետեւ կուգայ ուրիշ ուշադրութեան արժանի  
 գրուած մըն ալ, որ Ազգային խմբագրաց կողմէ Ս. Պատրի-  
 արքին ուղղուած է: Ազգ. խմբագիրք տեսնելով որ իրենց  
 լրագրաց մէջ հանած աղաղակներն անդսելի կը մնան, պաշ-  
 տօնապէս յատուկ բողոք մը ուղղած են, զոր Սրբազան Պատ-  
 րիարքը հանդիսաւոր կերպիւ ընդունել է 'ի ներկայութեան  
 քանի մը Եպիսկոպոսաց: Ահաւասիկ նոյն բողոքագրոյն կա-  
 րելուր կէտերը.

Յ.

«Ըստ որում եկեղեցական համագումար և Վիճակային ժո-  
 «ղովը, և Ազգ. Երեսփոխանութիւնը միմիայն որոշած և  
 «վճռած են Սոսյ և Ազգամարայ ինքնընտիր կաթողիկոսաց  
 «անվաւերութիւնն և անարժանութիւնը և երկուքին համար  
 «ալ նոր ընտրելեաց ցանկերը պատրաստուած են և միայն Ե-  
 «րեսփոխանութեան միջոցաւ ընտրութիւնը մնացած է, ըստ  
 «որում Ազգը սահմանադրական իշխանութիւն մը ըլլալով,  
 «սահմանադրապէս օրինաւոր Ընդհանուր Երեսփոխանութեան  
 «ժողովը կայ՝ մինչև ցվերահաստատութիւն Սահմանադրու-  
 «թեան ըստ Բարձրագոյն հրամանի բարեխնամ կառավարու-  
 «թեան, և ըստ որում այն կեղրոնական իշխանութեանց ու-  
 «րոշման գործադրութեան յսպաղմանէն վտանգներ կ'երեւան  
 «և մեծ կորուստներ պիտի ունենայ Ազգը, ստորագրեալ  
 «խմբագիրքս ձեզմէ, Ամենապատիւ Սրբազան հայր, իբրեւ  
 «նախագահէ նոյն ժողովոյ և հոգեւոր գլխէ բոլոր թուրքիա-  
 «քնակ Հայոցս, կը խնդրենք յանուն Ազգին և յանուն պատ-  
 «ուոյ նոյն Բարձրագոյն ժողովոյ և յօգուտ ազգին և Ս. Ա-  
 «թոռոց Սոսյ և Ազգամարայ, որ բարեհաճիք ժամ յառաջ 'ի  
 «գործ դնել եղած որոշումները և Երեսփոխանութիւնը ժո-  
 «ղովի հրաւիրել, և նոր ընտրութիւնները կատարել, որպէս

«զի արժանաւոր կաթողիկոսներ յաջորդելով նոյն պարագայ  
 «աթոռոց, ժողովրդեան միխթարութիւն ըլլան, մանաւանդ  
 «ի Սիս, ուր Ազգին կորստեան մեծ վտանգ կայ յայտ յան-  
 «դիման և որու համար հասարակութիւնը արժանաւոր  
 «արտոմութիւն մը կը կրէ, վասն զի պարզապէս ըսելով, հա-  
 «մագումար և Երեսփոխանական ժողովոյ որոշմանց դէմ և-  
 «դած ցարդ յապաղումը ոչ միայն Սահմանադրական սկզբանց  
 «դէմ և անոր եղծիչ հնարագիտութիւններուն կը վերածուի,  
 «այլ և օտար միջամտութիւններու ալ, որոնք դժբաղդաբար  
 «Ազգը երկպառակելու և փճացնելու կը ծառայեն միայն և  
 «ո՛չ բնաւ ուրիշ բանի, և ասանկ ծանր ու փափուկ, կենաց  
 «և մահու պարագայի մէջ վայրկեան մը յապաղումը և թու-  
 «լութիւնը աններելի է :

«Գոհացուցիչ պատասխան մը և անոր գործադրութիւնը  
 «տեսնելու յոյսով կը ստորագրենք» :

- |                 |   |                 |
|-----------------|---|-----------------|
| Ալանանեան Հ. Ս. | » | «Փունջ»ի        |
| Աղաբեկեան Մ.    | » | «Ծիւն Աւարայր»ի |
| Իւրիւնեան Կ. Ս. | » | «Մասիս»ի        |
| Չուխանեան Կ.    | » | «Ծիածան»ի       |
| Փանոսեան Կ. Յ.  | » | «Մանղումէ»ի     |
| Փափագեանց Ո.    | » | «Ժամանակ»ի      |

19 Դեկտ. 1866

Կը տեսնէք որ ուզուածը միայն Նիկողայոսի ապօրինա-  
 ւոր հրատարակուելուն վրայ՝ Ընդհ. ժողովոյ որոշման գոր-  
 ծադրութիւնը չէ, այլ և նոր Կաթողիկոսի ընտրութեան վրայ  
 դրուած որոշման գործադրութիւնը կ'ուզուի : Եւ ստուգիւ  
 անկարելի է նոր ընտրութեան խնդիրը դատել Նիկողայոսի  
 ապօրինաւորութեան խնդիրէն. եթէ Նիկողայոս Եպիսկոպոս  
 այն աթոռէն վերցնել կ'որոշէ Կեղրոնական Վարչութիւնը,  
 իրեն կ'իյնայ նաև որոշել ընտրութիւնը : Հիմա ինձի զար-  
 մանք մը կուգայ, ի՞նչպէս կ'ըլլայ որ այս անդառնալի դա-  
 տապարտութեան և Կոթը և այնքան բողոքոյ ձայներուն առ-  
 ջեւ որ ժողովրդեան խորերէն ու եկեղեցականաց դատուն  
 բարձրագոյն կարգերէն վեր կը բարձրանան, ինչպէ՞ս Նիկո-

ղայոս տարիներով դեռ ՚ի Սիս կը մնայ ու մինչև Եպիսկո-  
 պոս ձեռնադրելու կը յանդգնի : Ասոր պատճառը վարչու-  
 թեան մէջ արիութեան պակասութիւնը կը համարիմ, այն  
 ձախող քաղաքականութիւնը, որ վարչութիւնը կ'օճակա-  
 պէ, ժողովրդեան մէջէն ոմանց կրօնափոխութեան դիմելու  
 երկիւղը, և հոս երջանիկ կը համարեմ զիս որ կ'ունենամ յի-  
 շելու ինչ որ անցեալ տարի իմ ատենագետութեամբս Խառն  
 ժողովին մէջ տեղի ունեցաւ : Նիկողայոսի ապօրինաւոր ձեռ-  
 նագրութեանց լուրը հազիւ հասեր էք ՚ի Պօլիս, Խառն ժո-  
 ղովը յուզուեցաւ և շուտով հիմնական միջոցներ ձեռք առ-  
 նել ուղեց. մինչև նոյն երկիւղները երեւան ելան, և ըսողներ  
 եղան թէ՛ Նիկողայոսի բարձումը կրօնափոխութիւն կը բե-  
 րէ : Այսու ամենայնիւ Խառն ժողովոյն մեծագոյն մասը, և  
 կեղեցականօք և աշխարհականօք, զանի աթոռէն հեռացնե-  
 լու կարեւորութիւնը պաշտպանեց մինչև վերջը : Սա դժուա-  
 րութիւնը կար միայն որ՝ հեռացնելու համար տէրութեան  
 զիմել հարկ էք, և Տէրութիւնն ալ կը պատասխանէր թէ՛ Նի-  
 կողոսը Հայոց Կաթողիկոս չէ, դուք էջմիածնայ թեմական  
 էք, ինչո՞ւ կը միջամտէք այս խնդրոյն մէջ քանի որ իր թե-  
 մականները զինքը կ'ուզեն, և դուք դայն հակաթոռ կը ճան-  
 չէք. աւելի լաւ չէ՞ որ զանոնք թողուք ազատ իրենց գոր-  
 ծոցը մէջ, և ինչ : Եւ այժմ ես այնպէս կը կարծէի թէ երես-  
 փոխանք միածայն շնորհակալ պիտի ըլլային արդի Քաղ.  
 ժողովոյն, որ տէրութիւնը համոզելու աշխատելով յաջողե-  
 ր է, ՚ի հարկէ սա փաստերը մէջ բերելով թէ Նիկողայոս թէև  
 ընդհանուր ազգին կողմէն իբրև Լուսաւորչի յաջորդը չէ ըն-  
 դունուած, բայց միշտ եկեղեցական բարձրաստիճան պաշտօ-  
 նատար մըն է բոլոր Հայութեան համար, Թուրքիոյ մէջ բազ-  
 մամարդ վիճակի մը առաջնորդ է, եպիսկոպոսներ կը ձեռ-  
 նագրէ, կաթողիկոսութեան յատուկ եկեղեցական արարողու-  
 թիւններ կը կատարէ, այն եպիսկոպոսները՝ այն արարողու-  
 թիւնները ընդունելի չեն մեզի համար, հետեւաբար չենք  
 կրնար անտարբեր մնալ այդ եկեղեցական մեծ պաշտօնա-  
 տարին համար, չենք կրնար ըսել թէ ի՞նչ կերպով կ'ուզէ

ընտրուի՝ հող չէ՛, ո՛վ կ'ըլլայ նե՛ ըլլայ՝ հող չէ. պէտք է որ օրինաւորապէս ընտրուած ըլլայ, պէտք է որ արժանի ըլլայ այդպիսի բարձր պաշտօնի մը: Անա՛ այն պատճառաբանութիւնը որ Գաղ. ժողովը բրած ըլլալու է Բ. Գրան և որոնք համոզած են Տէրութիւնը, նոյն պատճառաբանութիւնք պէտք է ազդեն նաև այն երեսփոխանաց, որք կ'ըսեն թէ Ընդհ. ժողովը պէտք չէ խառնուի Սոս Կաթողիկոսի ընտրութեան: Ես միայն սա՛ կ'աւելցնեմ. որովհետև Հայերու հետ կը խօսիմ հոս, Կիլիկիա նշանաւոր գաւառ մըն է, պատմական անցեալ մը ունի, այդ ամբողջ վրայ երեւելի հայրապետներ նստած են, գոնէ Հայութեան Պատուոյն համար, այն հոյակապ հայրապետաց յիշատակին համար, չենք կրնար ըսել թէ ո՛վ կ'ուզէ ան ըլլայ Կաթողիկոս. թէ որ մէկն ասանկ անարբերութեան նշան մը ցոյց տայ, իր իրաւունքներն անճանաչած և իր պարտքերուն դէմ մեղանշած կ'ըլլայ: Ռւստի խնդիրն իր ելից ճամբուն մէջ բերելով, այսինքն գիտնալով թէ մենք էջմիածնի Կաթողիկոսը կը ճանչենք եկեղեցւոյ մեծ Հայրապետ, բայց որովհետև ուրիշ երկու Կաթողիկոս ալ կան Ազգին մէջ, զորոնք չափի կրնանք և պէտք չէ որ վերջնենք, և միանգամայն անկարելի է այս մեծ դայթակղութիւնը ընդունիլ որ Նիկիոյոսի պէս մարդիկ այդ Գահին վրայ բազմին, ուրիշ ճար չունինք, եթէ ոչ՝ ինչ որ Ընդհ. ժողովով կանխաւ վճռուած ու որոշուած է՝ յարգել և գործադրել: Իսկ Գաղ. ժողովը իր կողմէ թեմականաց իրաւունքը յարգելու ժառ. նախորդ որոշմանց բան մը յարեր է, այսինքն երեք ընտրելի ուզել առաջարկեր է: Ասոր չեմ հակառակիր, սկզբունքին միայն կը յարիմ և կ'առաջարկեմ որ քուէի դրուի:

Ն Ի Ս Տ Գ.

Ատենապետ Սեհան Գ. Էֆեզի.— Ռուսիոնեան էֆէնտին առաջուց յայտնած էր որ եթէ Ատենադպիր ընտրուելու ըլլայ՝ պիտի հրաժարի զանազան պատճառներով: Ընդհ. ժողովը ինչպէս արդէն իսկ յայտնեց՝ կը ցաւի այս հրաժարականին վրայ և կը փափաքի որ Ռուսիոնեան էֆէնտին չպնդէ անոր

վրայ: Գիւանին անդամները իրաւունք ունին սաստիկ զգալու այս փափաքը, զի կը հասկնան ամենքը թէ ո՛րչափ պաւիւ և օգուտ է իրենց Ռուսիոնեան էֆէնտին ներկայութիւնը իրենց մէջ: Իսկ ժամանաւորապէս Ատենապետը երջանիկ պիտի համարի զինքը եթէ ան՝ որ իր սղայ օրերէն ի վեր իր մտակից ու սրտակից բարեկամն եղած է իր առանձնական ու ազգային կեանքին մէջ, այսօր իր գործակիցն ըլլայ նաև Ընդհ. ժողովոյ Գիւանին մէջ:

Նոյնը.— Քօլօշեան էֆէնտիի առաջարկութիւնը պարտ կը դնէ Գիւանիս վրայ՝ ժողովոյ ուշադրութեանը ներկայացնել որ այս վիճարանութիւնը շարունակ երեք նիստ տեւեց և իւրաքանչիւր խօսող մէկ քանի անգամ խօսեցաւ: Երեսփոխանութիւնը եթէ վիճելու իրաւունք ունի, պարտաւորեալ է իրեն ներկայացած խնդիրներն անուշժ չթողուլ: Անցեալ նիստին երբ խնդիրը քուէի դնել առաջարկուեցաւ, խօսք ուղարչներ ալ եղան, և վիճարանութիւնը շարունակել որոշուեցաւ, Սքբազան Նախագահ Հօր յայտնած բաղձանաց համեմատ, Այժմ քուէի առաջարկութիւնը կը նորոգուի, ուստի և Գիւանը կը պարտաւորի զարձեալ ժողովոյն կարծիքն հարցնել թէ վիճարանութիւնը բաւական կը համարի՞ և կ'ուզէ՞ խնդիրը քուէի դնել:

Ատենապետ էֆէնտին Եուսուֆեան էֆէնտիի առաջարկութեան պատասխանելով յայտնեց թէ քանի որ վիճարանութեան շարունակութիւնը որոշուած է, կարելի չէ զայն սեղմել և խօսիլ ուղարչներն արգիլել, միայն եթէ ժողովը ուզէ գալ նիստին վիճարանութիւնը կը վերջացնէ:

Իսկ ատենադրութեանց հրատարակման խնդրոյն գալով, առաջարկեց տեսրակ առ տեսրակ տպագրել և Երեսփոխանաց զրկել ՚ի վերձանութիւն: Այս առաջարկութիւնը ժողովէն ընդունուեցաւ:

Նոյնը.— Այդ ձեր ըսածը տեսակ մը բունարարութիւն է ժողովին, որ կարելի չէ ընդունիլ, ինչպէ՛ս կ'ըսէք թէ եկեղեցւոյ և սահմանադրութեան խնդիրը քուէի չի դրուիր. դուք այնպէս կը կարծէք թէ ձեր խօսքը եկեղեցւոյ և Սահ-

մանադրութեան միայն համաձայն է. ձեր ընդդիմախօսն ալ այնպէս կը կարծէ իր խօսքին համար. ո՞վ պիտի որոշէ այս երկու կարծիքին մէջ. դարձեալ քուէն. անկարելի է որ խնդիր մը բացուի ու առանց լուծման մնայ, և քուէտարկութիւնէն զատ բան մը չկրնար լուծել ժողովի մէջ բացուած խնդիր մը:

Նոյնը.— Որովհետեւ Սրբազան Նախագահին առաջարկութիւնը նախապատուութիւն ունի, պէտք է զայն ամենէն առաջ քուէի դնել. սակայն ըստ որում երեսփոխանք նախապատրաստեալ չըլլալով, այդ առաջարկութեան բուն ոգին և իմաստը, կարծեմ, չկրցան ըմբռնել, ուստի պէտք է որ Սրբազան նախագահը իր առաջարկութիւնը գրով հաղորդէ երեսփոխանաց. մինչև յաջորդ նիստին երեսփոխանք ժամանակ ունենալով՝ լաւ մը կը խորհրդածեն այն առաջարկութեան վրայ, որպէս զի նոր մրմունջներ չյառնեն: Իսկ միւս առաջարկութիւններն արդէն յայտնի են. Բաղաքական ժողովին, Ռուսիսեան և Այլատեան էֆէնտիներուն առաջարկութիւնները պիտի քուէի գրուին հետզհետէ:

Նոյնը.— Սրբազան Պատրիարքին առաջարկութեանն ու Բաղ. ժողովոյ առած տեղեկութեանը մէջ անհամաձայնութիւն մը կը նշմարեմ, պէտք է նախ իրենք համաձայնին և ապա խնդիրն Ընդհ. ժողովին ներկայանայ: Իսկ գալ նիստին խնդրոց կարգն է՝ եթէ ժողովն ալ բնդունի, 1. Սոսյ խնդրոյն վրայ քուէտարկութիւն, 2. Վերաքննութիւն Սահմանադրութեան, 3. ժողովրդեան հանրագիրը, 4. Ատենական կանոնք:

Ն Ի Ս Տ Է:

Օտեան Գ. Էֆեկիսի.— Սոսյ կաթողիկոսութեան խնդրոյն վրայ մէկ քանի նիստերու մէջ տեղի ունեցած երկար վիճաբանութիւններէն ետքը, չէի համարձակիր ժողովին յոգնած ուշադրութիւնը խնդրելու իմ խօսքերուս համար, եթէ առաջուց միտքս դրած չըլլայի հոն բերել յանգեցնել խօսքս՝ որ խնդրոյն միաբան ու խաղաղական լուծում մը կարելի ըլլայ: Բայց զայդ չըրած՝ իմ իրաւունքս է, իմ պարտքս է, բացառել մեր կարծիքն ու իր պատճառները:

Երկու կարգ առարկութիւնք մէջ բերուեցան մեր կարծիքին դէմ, որուն առաջարկութիւնը մենէ ալ չէր, որ դեռ երկու ամիս առաջ բոլոր ազգին կարծիքն էր: Անսնց՝ որ իբր կրօնական մուրաւթիւն մը կը համարէին այս կարծիքը, եկան յարեցան անոնք որ իրբեւ արամբաբանական մուրաւթիւն մը համարեցան: Առաջին առարկութեան հեղինակները ըսին թէ այդ առաջարկութիւնը էջմիածնայ Աթոռին իրաւասութեանը դէմ դարան մըն է. երկրորդ առարկութեան հեղինակները ըսին թէ ժողովրդին բնարական իբաւանցը սոսնարութիւն մըն է, և այս երկու կարգ առարկութեանց յարուցած խորհրդածութիւններուն խառնուեցաւ դրսէն քան թէ ներսէն խառնաշփոթ ձայն մը թէ մէկ քանի երեսփոխան՝ իբրեւ քաղաքականութեան վերաբերեալ մարդիկ՝ այս խնդրոյն մէջ, ինչպէս ամէն ազգային խնդրոց մէջ, քաղաքականութեան մը և ազգեցութեան մը կը ծառայեն: Ո՞վ հնարեց այս անհեթեթ ամբաստանութիւնը. ո՞վ որ հնարեց նա միայն դիտէ պատճառը: Ի՞նչ վատութիւն, ի՞նչ ցած սիրտ պէտք է ենթադրել ազգային պաշտօնեայի մը քով, որ իր աօրեայ շահերուն ու սին պատիւներու զօնէ դժբախտ ազգի մը, իր ազգին, մշանջնեաւոր շահերը: Եթէ այնպիսի ազգային մը կը դանուի որ օտար քաղաքականութեան մը կը ծառայէ, անիծեալ ըլլայ, երիցս անիծեալ այնպիսին:

Բայց տեսնենք ի՞նչ արժէք ունին մեզի դէմ բերուած առարկութիւնները, այդ առարկութեանց պիտի պատասխանեմ, որպէս զի բնաւ կիրք մը չտեսնուի իմ խօսքերուս մէջ, միայն մեր կարծիքը իր պատճառներովը բացատրեմ: Եւ այս պարտքս պիտի կատարեմ ո՞րչափ կարելի է կարճ կերպով, ժողովին վայրկեաններուն խնայելով:

Ի՞նչ է այս Սոսյ կաթողիկոսութեան խնդիրը, ի՞նչ է իր նշանակութիւնը, տարածումը, հետեւանքները: Չայս իմանալու համար տեսնենք նախ թէ ի՞նչ է էջմիածնայ կաթողիկոսութիւնը: Էջմիածնայ կաթողիկոսը, համայն Ազգին, թէ ՚ի Թուրքիա, թէ ՚ի Ռուսիա, Պարսկաստան, Հնդկաստան և մինչև ՚ի ծագս աշխարհի ուր Հայ մը կայ, բոլոր Հայերուն կաթողիկոսն է ու հոգեւոր գլուխը: Այս է էջմիածնայ կա-

թողիկոսը, և ես ուղղութեան համար և ուրիշներէն եմ ու ամենքս կ'ուզենք որ այսպէս մնայ: Ոչ թէ էջմիածնայ քաղաքին յարեալ եմ, ես կը կարծեմ թէ ո՛չ երբէք քաղաքի մը պէտք է յարիլ, մեր նախնիք չյարեցան քաղաքի, և ամէն տեղ էջմիածին, Գուրն, Սնի, Սիւս, Կաթողիկոսին անկախութիւնը պաշտեցին, ուր հանգիստ գլուխ մը և ազատութիւն կրնար ունենալ՝ հոն փոխադրելով Կաթողիկոսը: Բայց մեծ և Ազգային պատճառ մը կայ էջմիածնայ յարելու համար. էջմիածնայ Կաթողիկոսը մի միայն հոգեւոր գլուխն է. Ռուսիոյ Հայերը միացուցած է և կրնայ միացնել Թուրքիոյ Հայերուն հետ: Եթէ էջմիածնայ Կաթողիկոսը մեր ալ Կաթողիկոսը չըլլայ, ազգին երկու մեծ հասուածները կը բաժնուին իրարմէ:

Հիմա տեսնենք թէ ի՞նչ է Սոյ Կաթողիկոսը — Սոյ Կաթողիկոսը ո՛չ առաջնորդ մըն է, ո՛չ Յունաց Անտիոքայ Պատրիարքաներուն պէս Պատրիարք մը. ոչ թէ մեռօն և եպիսկոպոս օծելուն համար Կաթողիկոս է, այլ մեռօնով եպիսկոպոս կ'օծէ, վասն զի Կաթողիկոս է: Սոյ Կաթողիկոսը ուրիշ բան չէ, այլ էջմիածնայ Կաթողիկոսին հակառակաթոռն է: Թող թւանայ թվ որ կ'ուզէ իր այս յատկութիւնը. պատմութիւնը բարձրաձայն կը հռչակէ զայն: Հակառակաթոռ, ուրեմն ապստամբ է, ուրեմն այդ Կաթողիկոսութիւնը կարգաւորեալ անխլիանութիւն մըն է, դայթակղութիւն մը, անպատուութիւն մը ազգին ու եկեղեցոյն, ուրեմն պէտք է վերցնել զայն: Չէ՛, պէտք է պահել Սոյ Կաթողիկոսութիւնը, եւ գիտէ՛ք ինչու համար. — էջմիածնայ Կաթողիկոսութեան համար. եթէ Սոյ Կաթողիկոսութիւնը վերցնես, մեծ վնաս կը հասցնես էջմիածնայ Կաթողիկոսութեան: Զարմանալի հակառակութիւն, և մա՞տաւանդ անոնք պէտք է զարմանան որ ազգային քաղաքականութեան վերաբերեալ խնդիր մը տրամաբանութեամբ լուծելու ելան... և այս այնքան իրաւ է որ ես վստահութեամբ կ'ըսէի թէ այսօր Սոյ Կաթողիկոսութիւնը վերցնելը՝ ապագային մէջ էջմիածնայ Կաթողիկոսութիւնը վերցնել է: Բայց աչքերնուս առջեւ եղածին վրայ խօսինք: Իմ ակնարկութիւնս վստահ եմ որ ըստ ազգին զգացմանը կը պատասխանէր: Հարկ չէ որ այս կէտին վրայ բացատրութեամբ

ու պատճառարանութեան մէջ մտնեմ: Իմ քիչ ըսածէս շատ կը խելամաղթ: Ամէնուն յայտնի է թէ էջմիածնայ Աթոք անկախ վիճակի մը մէջ չէ, և ամենքը կ'ուզեն իր անկախութիւնը վերադարձնել իրեն, այն անկախութիւնը որ անանորիննի է եկեղեցոյ ու ազգին համար. թէեւ Կաթողիկոսը ինք չուզելու ըլլայ, դարձեալ մենք պէտք է ուզենք, վասնզի Կաթողիկոսը ոչ թէ իրեն համար Կաթողիկոս է, այլ ազգին համար: Արդ այս հարկը որ ամենքը կ'ընդունին, ոմանք կ'երկուանան ու կ'ըսեն. «Ինչպէ՞ս մենք՝ տկար «ու հպատակ ազգ մը՝ պիտի կրնանք պահանջել ու ընդունել էջմիածնայ Կաթողիկոսին անկախութիւնը, Պալատէ՛ճնային բարձու մը. ի՞նչ զօրութիւն և ոյժ ունինք հզօր տէ՛րութեան մը դէմ»: — Գիտէ՛ք որն է մեր զօրութիւնը, մեր ոյժը: — Սոյ Կաթողիկոսն է: Քանի որ Սոյ Կաթողիկոսը կեցած է, երբ որ ուզենք՝ կրնանք էջմիածնայ Կաթողիկոսին անկախութիւնն ու պալատիկոսայի բարձու մն ընդունել, և երբ այս արդիւնքը ձեռք բերենք, այն ատեն պէտք է սկսինք մտածել Սոյ Կաթողիկոսութիւնը վերցնելու համար:

Մինչեւ հիմա ըսածներէս կը հետեւի թէ Սոյ Կաթողիկոսը պէտք է մնայ իբրեւ Կաթողիկոս, այլ որչափ կարելի է՝ պէտք է վերնայ իբրեւ հակառակ աթոռ: Ոչ թէ միայն վասն զի դայթակղութիւն ու անպատուութիւն մըն է, այլ վասն զի օր մը վստահաւոր կրնայ ըլլալ, եթէ էջմիածինէն ոմոն իսկ Թուրքիոյ մէջ կեդրոնական Վարչութիւնէն անկախ կերպով կատարուելով իր ընտրութիւնը, բոլորովին Ազգէն անջատ մարմին մը կազմէ: Ինչ որ կը պատահի և թերեւս քանի մը օրէն պիտի պատահի մեր հոռմէական ազգայնոց համար որ իրարու դէմ երկու Պատրիարք և երկու Կիլիկիոյ Կաթողիկոս պիտի ունենան թերեւս, մեզի համար ալ կրնայ պատահիլ:

Անա վտանգը, այս վտանգին առջեւն առնելու բնական միջոցն է էջմիածնայ Կաթողիկոսին վաւերացմանը դիմել. բայց այն օրէն որ էջմիածնայ ենթարկի Սոյ Կաթողիկոսը, այն օրէն ոչ եւս է Կաթողիկոս, և ոչ եւս մեր անկախած

արդեանցը կը ծառայէ : Այդ արդիւնքը , ինչպէս նաև իբրև  
 հակառակ ակտու վերցնելու արդիւնքը , երկուքը մէկտեղ  
 ձեռք բերելու միջոցն ըստ իս Բալ . Ժողովոյ առաջարկու-  
 թիւնն է , մեր կարծիքը այն է որ Ընդհ . Ժողովը ընտրէ  
 կամ մասնակցի Սոսյ Կաթողիկոսին ընտրութեանը : Երբ Ընդհ .  
 Ժողովը որ էջմիրածնայ թեմն է , իրեն զլուսի ունենալով Ս .  
 Պատրիարքը որ էջմիրածնայ Վեհափառ Սրբազան Կաթողիկո-  
 սին փոխանորդն է , ընտրէ Սոսյ Կաթողիկոսը , անուղղակի  
 կերպով կը միանայ նա ընդհանուր եկեղեցւոյն հետ , և ոչ  
 եւս կը կազմէ կամ կրնայ կազմել ապագային մէջ անջատ  
 մարմին մը : Ընդհ . Ժողովը կ'ընտրէ ո՛չ թէ Կիլիկիոյ առաջ-  
 նորդը , Կիլիկիա զատ իր առաջնորդները կրնայ ունենալ ,  
 կամ թէ Կաթողիկոսը միանգամայն առաջնորդ ալ կրնայ ե-  
 զած ըլլալ , ընդհանուր եկեղեցւոյ կանոնացը հետեւելով ,  
 ինչպէս Յունաց Պատրիարքը Պոլսոյ առաջնորդն է , ինչպէս  
 Պապը Հռովմայ առաջնորդն է , բայց իբրև Պատրիարք կամ  
 Պապ կ'ընտրուին և ոչ իբրև առաջնորդ , զի աւելի մեծ  
 պաշտօնին պայմաններուն առջև կ'անհրեւին փոքր պաշտօ-  
 նին պայմանները և այս ընտրութեամբ ոչ երբեք ընդհան-  
 բական կնիքը կը դրոշմէ իր ընտրելոցն , այլ ինչպէս Երու-  
 սաղիմայ Պատրիարքը կ'ընտրէ իբրև Երուսաղիմայ Պատ-  
 րիարք , և ոչ մէկուն մաքէն անցած է կամ կրնայ անցնիլ  
 թէ այդ ընտրութեամբ անի Թուրքիոյ Հայոց Պատրիարքն ե-  
 զած ըլլայ : Եւ այս կերպով կը գոյանար մեր ամենուս հա-  
 մար ցանկալի լուծումը ինդրոյն , Սոսյ Կաթողիկոսը կը մնար  
 իբրև Կաթողիկոս և կ'անհետանար իբրև հակառակ ակտու :  
 Բայց այդ լուծումը յաջողելու համար մէկ բան մը պէտք  
 էր , այն որ ամենքը միասիրտ , միախորհուրդ ըլլային և այլ  
 ընդ այլոյ մեկնութիւններ ու տարաձայնութիւններ այս լուծ-  
 ման ընտրութիւնը և նշանակութիւնը չխանգարէին , ու այս  
 կերպով ընդունուէր ամէնէն , ու մինչև անգամ էջմիրածնայ  
 Կաթողիկոսն ալ գտնէ իր լուծութեամբը հաւանէր : Այդպէս ալ  
 եղած էր , եկեղեցական համագումար ժողովը այսպէս որո-  
 շած , Երեսփոխանական Ընդհ . Ժողովը այսպէս վճռած , Ժո-

*Մեկնող Սոսյ Կաթողիկոս*

ղովուրդը այս մաքով իր ձայնը բարձրացուցած , օրագիրները  
 որ հասարակութեան բերանն են կ'ըսուի , նոյնը ազատակամ ,  
 ազգային հին ու նոր Սահմանադրութիւնները այսպէս տրա-  
 մադրած , և նոյն իսկ էջմիրածնայ Կաթողիկոսը իր մէկ կոն-  
 դակին մէջ զայն հաստատած էր : Ահա ասոր համար ըսի խօս-  
 քիս սկիզբը թէ մեր կարծիքը բոլոր ազգին կարծիքն էր եր-  
 կու ամիս առաջ : Բայց այսօր այսպէս չէ . ինչո՞ւ , պատճառը  
 չեմ փնտուեր , իբր կը հաստատեմ : Սոյն Ընդհ . Ժողովը եր-  
 կուքի բաժնուած է : Ընդհ . Ժողովէն դուրս աւելի շատ են  
 տարաձայնութիւնները , նոյնիսկ պատկառելի Միաբանութիւն  
 մը , Արժաշու վանուց Միաբանութիւնը , արժան տեսեր է պաշ-  
 տօնական կերպով և ապագրութեամբ բողոքելու մեր պաշտ-  
 պանած առաջարկութեան դէմ . տարակոյս չունիմ որ քիչ օ-  
 րէն բողոք մըն ալ էջմիրածնայ Վեհափայլ Կաթողիկոսէն պիտի  
 հասնի , զի ինչ որ գրեն իրեն ոմանք՝ պատրաստ է նա հա-  
 ւատալու : Այս տրամադրութեան մէջ , այս վիճակին մէջ կը  
 վախնամ որ մեր պաշտպանած առաջարկութիւնը ցանկացեալ  
 արդիւնքը չպիտի կրնայ տալ : Անոր համար ըսի խօսքիս  
 սկիզբը թէ նոյն պիտի բերեմ յանգեցնեմ որ ինդրոյն միաբան  
 լուծում մը կարելի ըլլայ : Ես իմ կողմէս առաջարկութիւն  
 չեմ ընեմ , որովհետեւ ըստ իս՝ իմ պաշտպանած կարծիքս էն  
 լաւ առաջարկութիւնն էր , այլ միայն սա կ'ըսեմ , — և կ'ու-  
 գեմ որ այս ըսածս մնայ Ընդհ . Ժողովոյ արձանագրութեանցը  
 մէջ , զի այսօր կիրքով կը դատեն մարդիկ , անիրաւութեամբ  
 կրնան դատել , այլ ապագային դատաստանը միշտ անաչառ  
 է : — Սա կ'ըսեմ ու սա կ'ուզեմ որ Ընդհ . Ժողովոյ որոշու-  
 մէն այնպէս արդիւնք մը հետեւի որ մինչև . հոս բացատրած  
 ազգային քաղաքականութիւնս անվթար մնայ : Եթէ այս  
 արդիւնքը ելլայ Ընդհ . Ժողովոյ ո՛ր և է որոշումէն , դո՛սու-  
 թեամբ և ցնծութեամբ կ'ընդունիմ ևս զայն :

Այս է վերջին խօսքս . լմնցուցի :  
 Նոյնը . — Ժողովը կրնայ բացուած վիճարանութիւն մը

գոցել, բայց զայն չըրած՝ չի կրնար նախորդ նիստէն խօս քու-  
զողներն արգելուլ, մանաւանդ զանոնք՝ որ ատեն չեն ունե-  
ցած խօսելու :

( աս մը անդամներ խօսք կը խնդրեն )

Նոյնը.— Ոչ մէկու մը խօսք կրնամ տալ, վերաքննեալ  
Սահմանադրութիւնը որ ամէնուդ ձեռքն է, մեծ կարեւորու-  
թեամբ նախատեսած է զայդ խնդիրը զոր կը յուզէք, ատոր  
համար յատուկ ճիւղ մը սրոշած է վարչութեան պաշտօնին  
մէջ՝ Յարաբերական Մասնախորհուրդ մակղերով որոյ պաշ-  
տօնը պիտի ըլլայ՝ Բ. Գրան, էջմիածնայ և ամէն առաջնոր-  
դաց հետ վարչութեան ունեցած յարաբերութեանց անօրէնու-  
թիւնը. այս յօդուածը վերաքննութեան մէջ իր տեղը պիտի  
գտնէք, և այժմ ՚ի դուր կը վիճիք: Արդ ամէն կարծիք յուզ-  
ուեցան և վէճը բաւականացաւ. ալ հիմա խնդիրը քուէի  
պիտի դնեմ: Ըստ կարգի նախադատութեան՝ Ս. Պատրիար-  
քինն առաջ, և յետոյ Քաղաքական ժողովին առաջարկու-  
թիւնը դնել կը հարկաւորէր, բայց Սրբազանն իրենը ևս  
առած է, և վարչութիւնը յարած ըլլալով այն առաջարկու-  
թեան, որ կ'ըսէ՝ ընտրութիւնը գաւառիկն եւ վաւերացումը  
կեդրոնիկն, ուստի զայս առաջարկութիւնը քուէի կը դնեմ:

Նոյնը.— Ես հարցուցի ժողովին, ոչ ոք զազանի պահան-  
ջեց քուէարկութիւնն որ կատարուեցաւ և օրինաւոր է, չեմ  
կրնար փոխել: Հիմա քուէի կը դնեմ Քաղ. ժողովոյ հար-  
ցումը՝ կեդրոնին վաւերացումը իստան ժողովէն ըլլայ թէ  
Ընդհանուր ժողովէն:

Նոյնը.— Խնդրոց կարգն է Սահմանադրութեան վերա-  
քննութիւնը:

Նոյնը.— Ըստ սրոշման ժողովին՝ քառորդ մը միջանկեալ  
հանգիստով երկու մասի բաժնած ենք նիստերը, մէկ մասը  
վերաքննութեան կը նուիրենք, և միւս մասը՝ ուրիշ խնդրոց:  
Գալ նիստին, Սոյ խնդիրը բոլորովին կը վերջանայ, յետոյ  
Ազգամարին կրնայ նայուիլ:

Նոյնը.— Գիւրին կ'ընթանայ դարձը, եթէ երեսփոխանք

կանխաւ կարգան ու սերտեն և սրոշեն դիտողութիւննին  
մանաւանդ եթէ խմբագրէին յօդուածը, ինչպէս որ կ'ուզէին  
սրբագրել, և հոս առաջին անգամ լսելով մտքերնին եկածը  
չխօսին, զի այն ատեն անվերջանալի կ'ըլլան խնդիրները:

Ն. Բ. Ս. Ջ. Գ.

Տերոյեցի բողոքագրիկ պատգմեր.

Ամենապատիւ Սրբազան Նախագահ Եւն.

Այս անգամ ժողովոյդ ներկայ չգտնուելիս ո՛չ տկարու-  
թեան մը համար է, և ոչ անձնական կարեւոր կամ անկարե-  
ւոր բանի մը համար, բուն պատճառը այս տեղս պիտի բա-  
ցատրեմ:

Այս երկու անգամ է կը տեսնեմ որ ժողով գումարելու  
համար տօնական օր մը կ'սրոշուի, մէկը եղաւ նոյեմբերի 24ի՝  
Ս. Աստուածածնի երկր ամաց Ընծայման օրը, միւսն ալ այս  
անգամ դեկտեմբերի 9ին, Ս. Աստուածածնի Անարատ Յղու-  
թեան օրը: Այս օրերս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ աւան-  
դութիւնը կիրակի բունել սահմանած է ուրիշ ամէն կիրակինե-  
րու նման: Եւ ևս տեսնելով որ՝ քանի որ ազգիս մէջ Սահ-  
մանադրութիւնը հաստատուած է, 1860էն ՚ի վեր, բնաւ կի-  
րակի օր մը ազգային ժողովներէն և ո՛չ մէկը նիստ ըրած է,  
զոր և ո՛չ կրօնքի հետեւող ուրիշ ազգ մը կ'ընէ, ինչպէս որ  
ուրբաթ և պայրամի օրերը մահմէտական տէրութեանց խոր-  
հրդարանները գոց կ'ըլլան, կը գուշակեմ որ մեր ժողովոյն  
մէջ շարաթամբլի կիրակիներուն մէջ տարբերութիւն մը կը  
դնեն, զոր ազգային կրօնական տաւանութիւնը չի ճանչնար,  
ուստի և ևս ալ չեմ ընդունիր, վասն զի այսպիսի աւանդու-  
թիւնները աւերելը՝ ոչ միայն եկեղեցական և կրօնական պար-  
տաւորութիւններու հակառակ է, (զոր գուցէ բանի տեղ չը  
դնողներ կան), այլ և Սահմանադրութեան հիմնական սկզբ-  
բանց վեցերորդ յօդուածին, զոր ժողովականքս անխախտ  
պահել խոստացած և վաւերացուցած ըլլալով՝ այսօրուան  
պէս շարաթամբլի կիրակի օրերը ո՛ր և իցէ ժողով գումարելու

ո՛չ Դիւանը իրաւունք ունի առաջարկելու, և ո՛չ ժողովա-  
կանք իշխանութիւն ունին որոշում տալու, հետեւաբար՝ ոչ  
ալ ես պարտաւորութիւնն ունիմ այդպիսի որոշման հա-  
մաձայնելու:

Այս պարտաւորութիւնն չունենալէս այնպէս չհետեւի որ  
ժողովականութենէ հրաժարած եմ. զիս ընտրողներուն կամքը  
կը յարգեմ որքան և մինչեւ ցերբ որ կարելի է. և ինչպէս որ  
ժողովոյդ ներկայացած առաջին անգամիս խօսեցայ և գրով  
ալ տուի, Սահմանադրութեան հիմնական սկզբունքը անխախտ  
մնալուն խօսք տուած ըլլալովս՝ անոր դէմ ամենափոքր բան  
մըն ալ նշմարած ժամանակս ընդդէմ կը բողոքեմ. Ընդհանուր  
Ժողովոյն նկատմամբ աս է պարտականութիւն մը՝ զոր ամէն  
ժողովականք ունին, տարբերութիւնը միայն ունենալնին  
ճանչնալու վրայ է:

Մնամ և այլն

Ն. Ծ. ՅՈՎԷ. ՊՐ. ՏՐ. ԿՐՊՏ. ՏԵՐՈՅԵՒՑ

9 Դեկտ. 1870 յիւսկիւտար

Ասեմապէս էՖ.Ն հրաւիրեց ժողովականներ՝ որ նախ  
Տերոյեց էՖ.իՆ բողոքագրին եւ յետոյ Ստեփան փաւայի հրա-  
ժարականին վրայ իրեցի դիտողութիւններ յառաջ բերեց:

Ասեմապէս.— Դիւանը պարտ կը համարի նախ եկեղե-  
ցական հարց կարծիքը խնդրել այս խնդրոյն վրայ:

Նոյնը.— Նամակին հեղինակը թերեւս իրաւունք մը ու-  
նեցած ըլլար եթէ ըսէր թէ՛ աղօթից նուիրուած տեղ մը չի  
կրնար ժողովոյ սրահ մ'ըլլալ, բայց երբ այսքան տարիներէ  
հետէ Ընդհ. ժողովը հոս կը գումարուի և ինք ասոր դէմ  
գիտողութիւն մը չընէր, չեմ գիտեր թէ ի՞նչ արամբանու-  
թեամբ տօնի օրեր ժողովոյ նիստ կազմելու դէմ խղճահար  
գանգատներ կ'ուղղէ: Այս պարագային մէջ ժողովոյ արժա-  
նապատուութեան վայլածն է ուրիշ խնդրոյ անցնիլ:

Նոյնը.— Սըվաճեան էՖ.ի խօսած ատենը երբ խօսք ու-  
ղեցի, ընաւ միտքէս չէր անցներ իմ Ասեմապետութենէ հրա-  
ժարականիս ըրած ակնարկութեանը պատասխանել, այլ զի  
կ'ուղղէի մէկ քանի էական մասերը քննել իր ըսածներուն: Այլ

անկէ ետքը Փափագեան էՖ. այս ակնարկութեան առթիւ  
այնպիսի պատուաբեր խօսքեր ըրաւ, որոնց անդգայ չեմ  
կրնար մնալ և որոց սրտիս յուզմունքօյն ու շնորհակալու-  
թեամբը միայն կրնամ պատասխանել: Գանք էական խնդրոյն:

Սըվաճեան էՖ. կ'ըսէ թէ՛ երեսփոխանութենէ հրաժա-  
րողները ոչ թէ անձնական պատճառներու համար կը հրաժա-  
րին, այլ վասն զի ունայն վիճաբանութիւններով ժամանակ  
կը վատնէ, Ընդհանուր ժողովին մէջ և թէ Երեսփոխանաց  
չատը աւելի խօսիլ կը սիրէ քան թէ գործել: Հրաժարող ե-  
րեսփոխաններուն ամենքն ալ այսպիսի խորհրդածութիւն մը  
ըրած են թէ ոչ, չգիտեմ, և իրաւունք ունիմ կարծելու որ  
ըրած չըլլան. սա՛ միայն կը յիշեմ որ մէջերսուն մէկը այսպիսի  
պատճառ մը ցուցած էր իր հրաժարելին մէջ: Բայց այդ խոր-  
հրդածութիւնը, զոր յառաջ կը բերեն, իրաւացի՞ բան մըն է  
արդեօք. — Չէ՛: Աստուած չընէ՛ որ մեր ազգի պիտի դատ-  
նայ դայ այնպիսի կառավարութիւն մը որ միայն գործէ,  
այսինքն չխորհի, չխօսի, չվիճաբանի ու գործէ: Խորհիլը  
գործել է, և ես ինքնին գոհ կ'ըլլամ քանի տես-  
նեմ որ Ազգը կը խորհի. հետեւաբար չեմ ընդունիր այն կար-  
ծիքը որ ունայն կը համարի Ընդհ. ժողովի վիճաբանութիւն-  
քը: Այն վիճաբանութիւնքը թերեւս հարեւանցի նայուածքով  
մը ապարդիւն կ'երեւնան քեզի. եթէ ուրիշ արդիւնք մըն ալ  
յառաջ չբերեն, շատ անգամ Ազգը սխալ քայլ մը առնելէ  
կ'արդիւնն. ասկէ զատ, վիճաբանութիւնը սերմունք մըն է  
ապագային համար, և քանի՛ խնդիր որ այսօր չի՛ լուծուիր  
կամ լաւ կերպով չի լուծուիր, օր մը չէ՛նէ օր մը՝ պիտի լու-  
սաբանի այս վիճաբանութեանց շնորհիւ: Հետեւաբար ես իմ  
մասիս կ'օրհնեմ այն ժամերը որ վիճաբանութեամբ կ'անցնին,  
հերիք է որ վիճաբանութիւնը ազգային խնդրոց վրայ դառ-  
նայ, բացուած խնդրոց մը վրայ դառնայ, և խնդիրէն դուրս  
անձնական կամ փցուն վիճաբանութեան չգառածի:

Հրաժարեալներուն մէկ մասն ալ ոչ թէ իրենք հրաժա-  
րած են, այլ Ընդհանուր ժողովը զիրենք հրաժարեցուցած է:  
Այսպիսեաց ցանկ մը տեսնուեցաւ անցեալ շաբթու օ-



բազմաբանութիւն մէջ, և այս բանս բաւական տարածայնութիւն յարոյց: Կէտ մը կայ այս խնդրոյն մէջ, զոր կ'ուզէի Լ'նդհանուր ժողովի ուշադրութեանը յանձնել, չէ թէ այն մտօք որ ժողովին որոշումը ետ դառնայ, մանաւանդ թէ ըստ ինքեան ո՞վ աւելի արժանի է այդպիսի խստութեան քան ժողովի չ'եկող և զանի անդործութեան դատապարտող ժողովականք, այլ այդ կէտը օրինաւորութեան նկատմամբ ծանրակշիռ կարեւորութիւն մը ունի, և պէտք է որ Լ'նդհանուր ժողովը դիտնայ զայն:

Ժողով մը, ինչպէս որեւէ իշխանութիւն, զո՞վ կրնայ հրաժարեցնել.— զանի՛ որ իրմէ առած է իր իշխանութիւնը: Երեսփոխան մը իր իշխանութիւնը, իր պաշտօնը Ազգէն առած է, ինչպէս՞ ուրեմն Լ'նդհանուր ժողովը կրնայ ընտրողաց դիմել և ըսել թէ ձեր դրկած երեսփոխանը իր պարտքը չի կատարել և դարմանը ընտրողներէն խնդրել. բայց ինքնին հրաժարեցնել զանի՛ իր ձեռնհասութենէն վե՛ր է: Ահա այս իմաստն ունին եղած դիտողութիւնքը սրտք ինծի ալ իրաւացի կը թուին: Եթէ ժողովին կարծիքն ալ իմինիս պէս ըլլայ, ձար մը փնտռել հարկ կ'ըլլայ այս դժուարին վիճակէն ազատելու համար: Մէկ հատիկ միջոց մը կայ, ան որ արդէն ժողովին յառաջագոյն ներկայացուած էր Ատենադպրէֆի կողմէն, այսինքն սահմանուած ժամանակին ատենն ըմնալ և ներկայից թուովը բաւականանալով որոշում ընել: Եւ թէպէտ ասով Սահմանադրութեան մէկ տրամադրութիւնը փոփոխած կ'ըլլանք, բայց գոնէ մեր ձեռնհասութենէն վեր գործ մը ըրած չենք ըլլար:

Աստիք են այն խորհրդածութիւնները զոր կ'ուզէի ժողովին ներկայացնել ՚ի պատասխան Սըվաճեան էֆ. ի ըսածներուն:

Նոյնը.— Կարծեմ իւրաքանչիւր երեսփոխան իրաւունք ունի բացուած խնդրի մը վրայ խօսելու. միեւնոյն բանը կը նշանակէ նաեւ գրաւոր ներկայացնել իր խօսքը, ուրեմն Ոսկան էֆ. ի գրածը կարդալու իրաւունքը ընտանիքն է:

Նոյնը.— Բաւական խօսք չունիմ շնորհակալութիւնս

յայտնելու այն ազնիւ զգացմանց համար, զորս ժողովականք այնքան վեհանձնաբար կը յայտնեն ինծի: Եթէ Ատենապետի պաշտօնէն հրաժեշտ տալէս ետքը մէկ քանի անգամ ժողովոյն ներկայ չգտնուեցայ, պատճառը սա է որ՝ կը վախնայի իմ արժանիքէս վեր այդպիսի զգացմանց արտայայտութեան մը հանդիպելու: Հետեւաբար մեծ էր վարանմունքս, մէկ կողմէ այնպիսի պատճառներ ունէի, որք ինծի արգելք կ'ըլլային այս պաշտօնը շարունակելու, և միւս կողմէ՝ ժողովոյն երկու անգամ հրաժարականս չընդունիլն իմանալով՝ կը խելամոտէի թէ պիտի պնդէ իր որոշման վրայ, և անոր այս որոշ կամացը զէմ յամառիլ կենալ՝ աններկի անքաղաքալարութիւն մը կ'ըլլար իմ կողմէս: Ուստի ամեն անգամ որ ժողով կը գումարուէր, կ'ուզէի ներկայ գտնուիլ, բայց անա՛ չուարեալ և չփոթեալ չէի կրնար դիտաւորութիւնս գործադրել: Այս վարանումս ժողովոյ ծանօթ ըլլալով՝ կը յուսամ որ կը խնայէ ինծի. կը յուսամ որ առանց բացատրութիւն ուղղուլ՝ հրաժարականս կ'ընդունի և զիս այս ծանր կացութենէն կ'ազատէ:

Իմ հրաժարականիս պատճառը անձնական սկարութիւն չէ, այս պատահական պատճառը չէ, և այս իմաստով խօսք մը ընաւ չեմ գրած իմ ո՛չ մէկ նամակիս մէջ: Բայց բուն պատճառին բացատրութեանը մասնել՝ նոյն իսկ ժողովին գործոց արգելք մըն է և ժամանակի ընդունայն կորուստ. եթէ օգտակար թուէր ինծի այս բացատրութիւնը, մտադիւր կը փութայի զայն ի վեր հանել. և սակայն գիտեմ թէ արդիւնք մը պիտի չունենայ, ուստի կ'աղաչեմ որ ժողովը հաճի հրաժարականս ընդունիլ, կ'աղաչեմ մանաւանդ Նախագահ Սրբազանը որ իր այն խօսքը՝ թէ ժողովը արհամարհած ըլլամ, ետ առնէ. ե՞ս Լ'նդհանուր ժողովը արհամարհեմ. որո՞ւ մտքէն կ'անցնի այդ, բոլոր Ազգը՝ Լ'նդհանուր ժողովը փորձով գիտէ թէ ո՛րքան կը պատուեմ և կը խօսնարհիմ իր որոշմանցն առջեւ: Այդ բառը իմ ազգասիրական զգացումս կը վիրաւորէ և կը տխրեցնէ:

Նոյնը (ընդամիջելով). — Կ'աղաչեմ որ խնայէք ինծի և

մանաւանդ չչուայլէք այնպիսի գովեստներ որոնց բնաւ իրաւունք չունին :

Նոյնը . — Էֆէնտիներ , կը տեսնէք որ յանցանքը իմն չէ . եթէ իմ պատճառաւ ձեր թանկագին ժամերը ընդունայն կը սպառին , դարձեալ կ'ըսեմ թէ յանցանքը իմն չէ : Իմ վրաս կարգացուած այս ներքողները որքան պատուաբեր ալ ըլլան , անիրաւ են և անտեղի . թող ներէ ատենաբանը որ այսպէս անուանեմ իր գովեստը : Անցեալ շաբթու Ատենադպիր Էֆ.ն ամենուս սիրելի և ինծի համար մասնաւորապէս կսկծալի անուն մը յիշեր է , Պայեան Նիկողոս աղային անունը : Այդ անձը՝ որուն կորուստը դեռ շատ ժամանակ պիտի ողբանք , առաջին անգամ յղացած է Սահմանադրութեան դադափարը , ինչպէս Ատենադպիր Էֆ.ն առաջին անգամ ժողովին մէջ յայտնեց է , ինչպէս ատենով ես ալ Մեղուի մէջ հրատարակած եմ : Այլ սխալ է թէ ես ալ այն միջոցին համալստտակ գտնուած եմ իրեն : Այն ժամանակ զրեթէ չէի ճանչեր Նիկողոս աղան : Անկէ քիչ մը ետքը ծանօթացայ , ու միանգամայն ծանօթացայ նաեւ Սահմանադրութեան ծրագիրին որու խորհրդակից ու վաստակակից գտնուած է մրայն Ռուսինեան Էֆ. : Այսքան այս կէտին վրայ խօսելէ ետքը՝ իմ հրատարականիս խնդրոյն կ'անցնիմ և կ'աղաչեմ որ ժողովը առանց պատճառը հարցապնդելու և կարեւորութիւն տալու՝ աւելի քան զոր կ'արժէ , ընդունի զայն :

Նոյնը . — Կ'աղաչեմ որ ժողովը քանի մը վայրկեան թոյլտուութիւն ընէ ինծի հրատեշտիս պատճառը բացատրելու , որ անկարեւոր կը թուէր ինծի և զոր սակայն ժողովը կ'ուզէ իմանալ : Որ և է պաշտօն երկու կողման հաճութիւնը կենթադրէ , տուողին և ընդունողին , իսկ ազգային պաշտօնները բարձրովին այսպէս չեն . ան որ ազգային պաշտօնի կոչուած է , կրնայ ահաճիլ զայն վարելու . սակայն որովհետեւ զոհողութիւն պարտաւոր է , պէտք է յանձն առնու , ազգային պաշտօններուն էութեան պայմանը ըստ իս սա է որ՝ պաշտօնը տուողը պէտք է վստահ ըլլայ պաշտօնը առնողին վրայ , և առնողը գիտակցութիւն ունենայ թէ պիտի

կրնայ վարել այն պաշտօնը յօգուտ անոր որ յանձնեց իրեն : Ազգը իմ մատող տարիքէս իր ակնկալութեամբը , ետքն ալ իր վստահութեամբը պատուած է զիս . տասն և ութն ամաց հետէ այլեւայլ ժողովներու կոչած է . այդ պաշտօններուն մէջ շատերը չեմ մերժած , զումանս չեմ ընդունած : Սկիզբէն՝ ինչպէս յիշուեցաւ , Սահմանադրութեան Մասնաժողովոյ անդամ եղած էի . այն ատեն հիմակուան ժամանակէս շատ տարբեր էր , ամենքն ալ չէին ուզող և սիրող Սահմանադրութեան . հին բռնապետութեան մնացորդները դեռ զօրաւոր էին , ամէն ազգեցութիւն ու հնարք ունէին գործելու համար և ամէն եղանակաւ կը գործէին . կռիւի ժամանակ էր և կռիւով ու զոհողութեամբը կրնար հաստատուիլ Սահմանադրութիւնը :

Այսպիսի պարագայի մէջ , երբեք չվարանեցայ գործունեայ պաշտօն վարելու , և յանձնաժողովներուն մէջ ինչպէս նաև ազգային պայքարին մէջ , յառաջադէմներէն մէկը գրտնուեցայ . երբ կռիւը մարեցաւ , Սահմանադրութիւնը հաստատուեցաւ , վտանգը անցաւ , ինէ աւելի փորձառուներուն թողելով միշտ՝ հրատարեցայ ազգային վարչութեան մէջ գրտնուելու պատիւէն : Միայն ասկէ երկու տարի առաջ , մեծ փոթորիկի և անիշխանութեան ժամանակ մը , ուր օրինաւորութեան հետքն անգամ չէր մնացած Ազգին մէջ , Ազգին համար օգտակար դատեցի որ օրինաւորութիւնը վերահաստատուելու հօգը ստանձնեմ : Խառն ժողովին մէջ մտայ : Թէ այս զանազան պարտաւորութիւններն ու պաշտօնները ինչպէս կատարեցի , Ազգը թող գատէ . ես երբ խղճտանքիս կը հարցընեմ , զուարթութիւն մը կը զգամ հոն և այդ զուարթութիւնը հերիք է ինծի :

Երբ օրինաւորութիւնը վերահաստատեցաւ ու Ընդհանուր ժողովը գումարեցաւ , դարձեալ հարկ համարեցայ ընդունիլ ատենապետութեան պաշտօնը , նախ՝ նոյնիսկ այն երկիւղիս համար որ՝ Ընդհանուր ժողովոյ ըրած պատիւը արհամարհած ըլլալու կասկած չտամ , երկիւղ՝ զոր երեմիա Սրբազանը իր խօսքերովը արդարացուց քիչ մը առաջ , և

երկրորդ՝ այնպէս կարծելով թէ ատենապետութեան պաշտօնին սահմանը մինչև այն օրը լաւ հասկցուած չէր, և կարծեցի թէ խօսքով ու գործքով կրնամ այս մասին ծառայութիւն մը ընել: Ժողովն ալ իմ այս կարծիքս հաստատեց, և ապացոյց սա որ այսօր կը ստիպէ զիս շարունակելու ատենապետութեան պաշտօնը: Բայց իմ կարծիքս հիմա սա է որ ասկէ ետքը ուրիշ մը աւելի օգտակար կրնայ ըլլալ այդ պաշտօնին մէջ քան թէ ես: Ինչո՞ւ: Ահաւասիկ պատճառը:

Տասը տարի կայ որ Սահմանադրութիւնը գործադրուելի սկսած է, և Ազգը Ժողովներ ունի. սկիզբէն ՚ի վեր հասարակութեան մէջ կարծիք կար թէ Դիւանը ըստ քմաց կը վարէ Ժողովը, և խնդիրները ուր որ ուզէ՝ հո՛ն կը յանգեցնէ: Ըսողներ իսկ կային թէ քուէատուփին մէջ սատանայ կայ, և Դիւանի անդամք՝ անհաւատք՝ անհաւատութեան շնչով սատանան իրենց նպատակին գործիքն ու կամակատար պաշտօնեան ըրած են. հիմա քուէատուփին մէջ սատանային էութեան հաւատացող չկայ, բայց կը կասկածին թէ Դիւանը վարպետութիւններ ի գործ կը դնէ: Իրաւցնէ ալ այս կասկածը կրնայ ըլլալ, կարելի է Ատենապետին վարպետութիւն բանեցնել. ո՛րքան ալ հեռատեսող ատենական կանոններ ունենայ Ժողովը, ուշիմ ու սրատես ժողովականներ որքան ալ հսկեն արթնութեամբ, ճարտար Ատենապետ մը կրնայ միջոց մը գտնել, և վարպետութիւն բանեցնելով՝ լուծման վրայ եղած խնդիր մը երկարաձգել, անոր վրայ ազդեցութիւն բանեցնել, զի կէս ժամ առաջ կամ ետքը խնդիր մը քուէի դնելուն մէջ իսկ տարբերութիւն կայ. Եւրոպիոյ մէջ անգամ ատենապետք այս տեսակ վարպետութիւններ բանեցնելու կարող կ'ըլլան: Հետեւաբար Ատենապետին վրայ առաջին փնտռուելիք յատկութիւնը պէտք է ըլլայ անկողմնասիրութիւն և արդարասիրութիւն: Ոչ ոք իմ անկողմնասիրութեանս վրայ կը տարակուսի, գէթ անանկ կը կարծեմ որ մէկու մը իրաւունք տուած չեմ՝ կասկածելու, և իրօք այնպէս ալ է, եթէ իմ պաշտօնական կացութիւնս չըլլայ: Խնդիրները թէ մօտէն թէ հեռուէն կրնան քաղաքական երեւոյթ մը ստանալ, և ինծի պէս մար-

դոց Դիւանին գլուխը գտնուելը առիթ մը կ'ըլլայ դուրսը Ժողովոյ որոշման պատկառանքը՝ որ էական պայման մըն է, նուազեցնելու: Պատիւը և պարտքը ճանչցող մարդը երբեք յանձնառու չըլլար գործիք ըլլալ. բայց միշտ շատ է այն մարդոց թիւը որ կրնան հաւտալ սրտի ապականութեան: Այսպէս ահա՛ երբ ես իմ խղճմտանքովս միայն կը վարուիմ և անկողմնասիրութիւնը թերեւս իմ միակ առաքինութիւնս է, երբ ոչ թէ միայն իրբեւ ատենապետ իմ կարծիքս պաշտպանելու, որով ձայն մը պակաս կ'ըլլայ իմ կարծեացս կողմը, միւս կողմէ որքան ալ անկողմնասէր ըլլամ, միշտ թէ դուրսը և թէ Ժողովոյ մէջ ըստ երեւութին իրաւունք կ'ունենան կասկածելու թէ ազդեցութիւն կը գործածեմ, ասով տեսակ մը անվստահութիւն ալ կը սկսի, որ օգուտ և պատիւ չի բերեր Ժողովին: Արդ կուգամ աղաչել ձեզի որ ազատէք զիս այս անվստահութեան ճիւղէն, ազատէք և զձեզ, և տաք ինծի իմ երեսփոխանի իրաւունքս՝ ատենաբանից կարգը իմ կարծիքներս ու իմ համոզմունքներս պաշտպանելու, և ատենապետութեան ամբողջ բազմեցնէք այնպիսի մարդ մը՝ որուն վրայ պաշտօնական պատճառ չըլլայ ոչ հոս ոչ դուրսը կասկածելու. ասով իմ իրաւունքս յարգած կ'ըլլաք, Ժողովոյ որոշմանց արժանապատուութիւնը անվթար կը մնայ, հասարակութիւնն ալ տարապարտ կասկածներով չի տանջուիր, ասոր անոր քմացը համեմատ: Արդ այս երեք նկատմամբ ալ օգտակար է իմ ատենապետութեանէ հրաժարիլս. ինչո՞ւ կ'ուզէք որ մնամ:

Նոյնը.— Ամենայն անկեղծութեամբ իմ պատճառներս յայտնեցի, ինչպէս ըսաւ Այվատեան էֆ., Ժողովոյ հրամանին չեմ կրնար դիմադրել, բայց երբ կը սնդէ որ անպատճառ ատենապետութեան պաշտօնը վարեմ, զիս հրաժարեցուցած կ'ըլլայ երեսփոխանութեանէ, զոր ես ամէն պաշտօնէ նախամեծար կը համարեմ:

ՆՈՍ ԺԷ.

Ասեմապետ.— Այվատեան էֆ. կ'ըսէ որ իր այս ինչ խօսքերը պակաս արձանագրուեր են. քանի որ ինքն է խօսքին

հեղինակը՝ իր պատասխանատուութեան տակ ինչպէս իր առջի դիտողութիւնները, այս դիտողութիւններն ալ կ'անցնին այսօրեայ նիստին ատենագրութեան մէջ, և սլակասը կը լրանայ, սակայն ուղղագրութեան մասին ըրած դիտողութիւնը հոս տեղի չունի, քանի որ, սղագրութեան եղանակ մը չըլլալուն պատճառաւ, ատենաբանից խօսքերը բառ առ բառ արձանագրել անկարելի է, և Դիւանը իմաստից հարազատութեանը միայն մտադիր՝ խօսքերը կը ստիպուի համաւճռոտել և այնպէս ատենագրել, որով ատենագրութեանց խմբագրութիւնը Ատենագրչին գրչին յատուկ ոճն ու գրական գրօշմը կը կրէ, վասն զի միեւնոյն գրչէն ելած աշխատութեան մը մէջ բոլոր ժողովականաց առանձին ոճը չի կրնար պահուիլ, և անհեթեթ է այս տեսակ պահանջում մը ընել: Եւրոպայի ժողովներու մէջ սղագրութեան միջոցով՝ խօսքերը ժողովականաց բերնէն ելածին նման կ'արձանագրուին բառ առ բառ, ասկէ զատ նաև անոնց մէկ համաւճռոտ քաղուած մը կայ, որ լրագրաց կը հաղորդուի և որ մեր գործածած արդի ձևն է, կարելի եղած կատարելութեամբ: Այս ձևը անվթար կը պահէ ատենաբանին գաղափարը և ճարտասանական ոճը. բայց բառերը և լեզուաբանական հանգամանքները կրնան փոփոխութեանց ենթարկուիլ գործին այս վիճակին մէջ:

Նոյնը. — Լեզուով բոքք, Ատենագրչին ինչ գիտնայ թէ այս բառը ու ով արտասանել ուղեցիք թէ Վ ով, ուստի ինչպէս ուղէ՛ անանկ կը գրէ, և իրաւունք ունի ըսելու թէ՛ չեմ կրնար իմ սոս, ուղղագրութիւնս փոխել. եթէ չէիք ուզեր իմ գրիչս, ատենագրչի պաշտօն չտայիք թող ինձի, վերջապէս չէիք սպասեր անշուշտ որ իր գրիչը մէկդի զընելով՝ ձեր գրիչը պիտի գործածէր:

Նոյնը. — Ընդօրինելով ատենաբանը կ'ազգարարէ թէ ինչպէն կը շեղի, և թէ Ընդհ. ժողովը ձեռարան չէ որ խօսք առնուն երեսփոխանները լեզուաբանական դիտողութիւններ ընելու քերականութեան, ուղղագրութեան կանոնաց վրայ: Այս ազգարարութենէ հաքը ատենագրեալ էֆ.ն ժ.Բ. նիստի ատենագրութիւնը ընդունուած հրատարակեց և ժ.Գ. նիստինը

դիտողութեան ենթարկեց, որն որ առանց դիտողութեան ընդունուեցաւ: Յետոյ Ատենագրեալ էֆ.ն հազորեց ժողովին հիւանդութեան պատճառով քանի մը բացակայ երեսփոխանաց անուններ և կարգաց Տէրոյնց էֆ.ի մէկ նամակը՝ որով յիշեալ էֆ.ն իր երկու բացակայութեանց պատճառ իր հիւանդութիւնը մէջ կը բերէր և երրորդին՝ հրաւիրագիր ստացած չըլլալը:

Նոյնը. — Գիտէք, էֆէնտիներ, որ ասկէ երկու ատեան առաջ Սահմանագրութեան վերաքննութիւնը դիւրացնելու յոյսով, ընդհանուր վիճարանութիւն մը առաջարկեցի՝ անոր ոգւոյն և ընդհանուր արամագրութեանց վրայ: Նոյն օրը և անկէ առաջ մէկ քանի առաջարկութիւններ երեւան եկան, որոնք իրենց ընդհանուր բնութեամբ չէին կրնար մասնաւոր վիճարանութեան ընթացքին մէջ մտնել. եթէ ժողովէն ընդունելութիւն գտնէին այդ առաջարկութիւնները, հարկ կ'ըլլար Սահմանագրութեան առաջին յօդուածէն սկսել փոփոխութիւնը, զի առաջարկութիւնը Սահմանագրութեան այս կամ այն յօդուածին այս կամ այն մասնաւոր արամագրութեան վրայ չէր, այլ սկզբան, այլ անոր ոգւոյն կը վերաբերէր, կամ այնպիսի արամագրութեանց՝ որոնք Սահմանագրութեան շատ մը յօդուածներուն վրայ կը ներգործեն: Ժողովականներէն մէկը՝ Իրէքճեան էֆ. կարծեմ, թաղական մատակարարութեան գլխին վրայ վիճարանութիւն բացուած ատեն՝ զիտել տալով որ ծրագրին մէջ «թաղերը կը ներկայանան իւրաքանչիւրն իր եկեղեցւոյ ժողովուրդէն ընտրեալ թաղական ժողովով մը» ըսուած է, առաջարկեց որ ընդհանուր կերպով «իւրաքանչիւրն իր հայագրի ժողովրդէն ընտրեալ թաղական ժողովով մը» ըսուի, որպէս զի եթէ առիթը բերէ, ամէն հայ անխտիր, թէ հոսմական ըլլայ թէ բողոքական, մեր ազգային իրաւանց հազորդ գտնուի: Անա՛ սկզբան ինչպիսի մը՝ որ եթէ արժան է ընդունիլ, թաղական մատակարարութեան սահմանին մէջ չըջափակ չպիտի մնայ, այլ ընականօրէն Ընդհ. ժողովոյ, այլ պատրիարքի ընտրութեանց եղանակն ալ անոր գրոշմով պիտի համակուի, փոփոխու-

Թիւնն ի հիմանց սկսելով : Ուրիշ առաջարկութիւն մըն ալ Փափազեան էֆ. ի կողմէ եկաւ, Սահմանադրութեան նոր ծրագիր մըն էր եկածը : Ի՞նչ կը նշանակէր ասի, եթէ ոչ ընդհանուր վիճարանութիւն ուղել, վասն զի Սահմանադրութեան ծրագիրը յօդուած առ յօդուած քննութեան ենթարկուած ատեն՝ ոչ ոք իտաւունք ունէր ամբողջ ծրագիր մը բերելու : Նոր ծրագրին հեղինակը Յանձնախումբինը անընդունելի կը գտնէր, և կ'առաջարկէր ժողովին որ անընդունելի դատէ չէ թէ ծրագրին մէկ յօդուածը, այլ զանի ամբողջագէտ, և տեղը իր ծրագրին անցնէ : Տարակոյս չկայ որ ժողովը իրաւունք ունէր քննելու թէ իրեն ներկայացեալ ծրագրին սկզբունքը, ոճն ու սկիւն արժան է ընդունելութեան թէ ոչ, և անգամ մը այս էական քննութիւնն ըլլալ պէտք էր, որ մասնաւոր յօդուածոց քննութիւնը յաջորդէր անոր, և լուծուէր ծրագրին վերաքննութեան հանգոյցը : Այս նպատակը կ'ենթադրէր իմ առաջարկութիւնս՝ ընդհանուր վիճարանութիւն բանալու մասին, զոր և ժողովը ընդունեց : Ընդհանուր վիճարանութիւն ուղղներէն միայն Փափազեան էֆ. քանի մը կէտեր, զիտողութիւններ թղթի մը վրայ նշանակեր և Դիւանին յանձներ է, որոնց առաջինը միայն ընդհանուր արամադրութեան կը վերաբերի, և է սա .

1. Երեսփոխանական ժողովը, իրբեւ օրէնագիր ժողով, Վարչութեան ամէն ժողովոց և խորհրդոց օրինական ընթացքը գծէ, և Սահմանադրութեան մէջ բարձուին այն մասերը որ Վարչութեան ընթացքին կը վերաբերին :

Ասով անա կ'երեւի որ Փափազեան էֆ. այս ծրագիրը չընդունիր, այսինքն կ'ուզէ Սահմանադրութեան մէջ սկզբունքի վերաբերեալ մասերը միայն թողուլ, իսկ Վարչութեան ընթացքը օրինադրելու Ընդհ. ժողովի հեղինակութեան վերապահել :

Փափազեան էֆ. ի միւս զիտողութիւններն են .

2. Եկեղեցական երեսփոխանաց ընտրութիւնը եկեղեցականաց միայն մասնաւորել, թէ եկեղեցական և աշխարհական խառն մասնակցիլ ընտրութեան :

3. Կրօնական և քաղաքական առանձին խորհուրդներ ունենալ թէ խառն :

4. Երեսփոխանութիւնը մասնակի, թէ ամբողջ, թէ կէտուակէս փոփոխել :

5. Ընտրելեաց ցանկ պէ՞տք է թէ ոչ :

6. Երեսփոխանաց թիւը և բաշխման ձեւը :

7. Ընտրողութեան և ընտրելութեան պայման :

8. Հսկողութիւն մը, հակադէմ իշխանութիւն մը թաղական ժողովոց ղիւաններէն երեսփոխանութեան համար : Այս կէտերուն ո՛չ մէկը ընդհանուր արամադրութեանց կը վերաբերին, և ասոնց ամէնուն մասնաւոր տեղը պիտի գայ ծրագրին գլուխներուն մէջ, և այն ատեն կրնան ուշադրութեան առնուիլ : Իսկ առաջին կէտին վրայ թէ որ Փափազեան էֆ. խօսք ուզէ, կ'ուտամ :

Նոյնը. — Երեսփոխանք եթէ ընդունայն ժամավաճառ ըլլալ չեն ուզեր, աւելի լաւ կ'ընեն որ իրենք իրենց պաշտօնովը զբաղին և թողուն Ատենապետը իր պաշտօնը կատարելու : Մեր պաշտօնն է ներկայացեալ ծրագիրը կարգալ, թէ որ երեսփոխանք ուղեն բաղատել հին Սահմանադրութիւնը նորին հետ, ոչ ոք կ'արդիլէ զիրենք որ ՚ի ձեռին ունենան զանոնք, կարգան և բազդատեն : Դիւանը իր պարտքն ու իրաւունքը կը ճանչնայ և պիտի գործադրէ :

Նոյնը. — Իփէկճեան էֆ. հիմա շատ իրաւամբ խօսեցաւ. Ազգը Սահմանադրութիւն մ'ունէր, որ սոսք մը դադարման ենթարկուեր և Բ. Գուռը Ազգին յանձներ է որ իր տասն և մէկ տարուան փորձառութեամբը քննէ զայն : Արդ ինչ որ Իփէկճեան էֆ. կը ցանկայ, նոյնը եղած է արդէն. ժողովը ուղղակի ինք չէ կատարեր Սահմանադրութեան վերաքննութիւնը, այլ Յանցնախումբի մը յանձներ է զայն, որ իր պաշտօնը կատարելով իր ծրագիրը բերած ու տեղեկագրովը մէկտեղ ժողովին զիտողութեանը մատուցած է, ինչպէս կ'ըլլայ ամէն նմանօրինակ պարագայից մէջ :

Նոյնը. — Սահմանադրութեան վրայ ընդհանուր կերպով եղած զիտողութիւնները կը ներկայացնեն ժողովին : Փափազ-

եան և Այվատեան էֆ. երբ միաձայն կ'ըսեն թէ ծրագրին մէջ աւելորդ մասեր կան, որոնք ետքը Ընդհ. Ժողովը ինքն իր մէջ կրնայ անօրինել: Ուստի կ'ուզեն այս տեսակ խել մը յօդուածները դուրս ձգել Բ. Դրան ներկայանալի ծրագրին մէջէն, որպէսզի պաշտօնական ձևերու հարկ չմնայ: Կուզեն վերջապէս որ այժմու ծրագիրը բազիանայ միայն հիմնական սկզբունքներէ, և մէկ քանի ընդհանուր տրամադրութիւններէ: Հիմա Ընդհ. Ժողովը թէև հաւանի այս դիտողութեան, կրնայ սա երկու բանին մէկը ընդունիլ, կամ ծրագիրը պահելով յօդուածոց քննութեանն առնել վերջնել աւելորդ դատուած յօդուածները, կամ ծրագիրը փոխել տալ: Ասկէ զատ ուրիշ դիտողութիւն մը չը ներկայացաւ, ասոնք Ժողովին որոշմանը կը յանձնեմ, և քուէի կը դնեմ:

Նոյնը.— Ոչ թէ իրաւունք չունիմ ձեր դիտողութեան վրայ խօսելու, այլ պէտք էր նաև արգելուլ խօսուած առնել, վասն զի Ժողովին որոշման կը հակառակէր: Պա՛ մ'առաջ բար թէ Ընդհ. Ժողովը Յանձնախումբ մը դրեր է որ Սահմանագրութիւնը վերաքննէ՛, սրբագրէ և նոր ծրագիր մը շինելով Ընդհ. Ժողովին ներկայացնէ. այս աշխատութիւնը այսօր կատարուած է, կ'ուզէ՞ք որ հիմա «Ժողովը սխալեր եմ» բռնէ, և իր որոշումը չճանչէ՞, մինչդեռ անխախտելի որոշում մը եթէ կայ՝ ա՛տ է, և զի արդէն գործադրութեան ալ սկսած է:

Նոյնը.— Դիւանը ազգային տեղեկութեանց ալբիւր չէ, և պաշտօն չունի զանոնք ընձեռելու:

Նոյնը.— Նախագահ սրբազանը առաջարկութիւն մը բերաւ Ժողովին, այն է որոշել թէ այդ պարտքը ազգինո՞ է և վճարուելու՞ է: Դիւանը՝ թէև բացուած ինչիւրէն դուրս ալ Սրբազան պատրիարքին կողմէ գալուն համար, չի կրնար այդ առաջարկութիւնը բարձի թողի ընել և Ժողովին կամքը չհարցնել:

Նոյնը.— Երբ խնդիր մը օրինաւորութեամբ չներկայանայ Ժողովին, անլուծելի կը մնայ. եթէ ազգը պարտք ունի և անմիջապէս վճարելու հարկ ըլլայ, պէտք է որ Նախագահ Սրբազանը իր գործադիր Ժողովին հետ խորհրդակցի, թէ կըր-

նայ այս սլարտուց վճարումը դեռ եւս երկարաձգել, և եթէ չիկրնար, անոր վճարման համար պէտք եղածն ի գործ դնել: Եւ այս պարագաներուն. վրայ խորհրդակցելէ ետքը՝ օրինաւոր առաջարկութիւն մը պէտք է բերէ Ընդհ. Ժողովին, որպէս զի կարելի ըլլայ խնդրոյն ամէն պարագաներուն վերահասութեամբ լուծել զայն:

Նոյնը.— Ամենքնիւ ալ կրնաք ձեր քով ունեցած Սահմանագրութիւնը, հին-նոր, տպագրեալ և ձեռագիր, մինչև իսկ եւրօպական ազգաց սահմանադրութիւնները բերելու և բաղդատութիւններ ընելով վիճաբանելու. բայց Դիւանը միակ պարտք մը ունի, այն է՝ Ազգային Ժողովին խմբագրել տուած ծրագրին վրայ վիճաբանութիւն ընել տալ: Իսկ եթէ Ժողովը բոլորովին այս ծրագիրը կը մերժէ, առ ուրիշ խընդիր, էր կամքը թող յայտնէ որոշակի: Դարձեալ եթէ Ժողովը չ'ուզեր այսօր քուէ տալ, յաջորդ նիստին կը թողունք զայն՝ վիճաբանութիւնը շարունակելու համար. բայց ցաւօք կ'ըսեմ որ վիճաբանութեան այս ընթացքով ո՛ր և է խնդիր խիստ շատ պիտի յոգնեցնէ մեզ, եւ պատճառը սա է որ տակաւին չվարժեցանք սահմանադրական գործողութեանց: Ինչո՞ւ է որ մեր մէջ որ և է խնդրոյ վրայ, նաև փոքրիկ խնդրոյ մը վրայ վիճաբանութիւնը յանձնես կ'երկարաձգի, վասն զի ամենքս ալ անպատրաստ կուգանք հոս, եւ ոչ մէկերնիս առաջուց մտածած կ'ըլլանք օրուան կարգի խնդրոց վրայ. առաջուց չգիտենք ինչ ըսելիքնիս և ոչ՝ ի՞նչ ընթացք պիտի բռնենք. լոյսը հոս կը ծագի մեր մտքին մէջ և լոյսը ծագելուն պէս անմիջապէս խօսք կ'ուզենք, քիչ մը ետքը նորէն խօսք կ'ուզենք և վերջապէս քանի անգամ որ մտքերնիս գաղափար մը ծնի, այնքան անգամ խօսք կ'ուզենք ու ասան ամենքնիս ալ զատ զատ միեւնոյն նիւթի վրայ և շատ անգամ միեւնոյն կարծիքն ունենալով կը խօսին, ասանկով հարկաւ խօսքին վերջը չիգար: Եւրօպայի Ժողովներուն մէջ այս կերպ չեն վարուիր Ժողովականք: Նոյն Ժողովականք դեռ եւս Ժողովին չեկած՝ յուզելի խնդրոյն վրայ իրենց կարծիքը և զայն պաշտպանելու եղանակը կը պատրաստեն. ամէն

խնդիր երկու կողմ կ'ունենայ անշուշտ՝ հակառակորդ և պաշտպան, այս մասերը կը դատուին իրարմէ, զատ զատ կը ժողվուին, իրենց մէջ կ'որոշեն թէ ո՞րնք պիտի խօսին իրենց կարծիքը պաշտպանելու համար, մինչև անգամ կ'որոշեն թէ առաջ ո՞վ պիտի խօսի, ետքը ո՞վ, այն կերպով ալ կը գործեն. ասանկով մէկ կարծիք մը պաշտպանելու համար մէկ քանի հոգի միայն կը խօսին և մէկ կամ երկու անգամ, միայն թէ իւրաքանչիւր ատենաբան մէկ անգամ խօսք առնելուն՝ բոլոր իր փաստերը յառաջ կը բերէ, զի առաջուց ունի պատրաստած այն փաստերը և ոչ թէ մեզի պէս առժամյն տպաւորութեան ներքեւ կը խօսին: Այս եղանակաւ պէտք է վարուինք մենք ալ, հարկ չէ որ ամենքս ալ խօսինք. իւրաքանչիւր երեսփոխանի պէտք եղածը սա է որ իր կարծիքը պաշտպանուի, իր կարծիքէն եզոյները եթէ խօսեցան, ա՛յն բաւ է, հարկ չէ որ միեւնոյն բանը ուրիշ կերպով ըսելու համար՝ ինք ալ խօսի: Ատենապետը ոչ զոք իրաւունք ունի արդիւելու խօսելէ. բայց խօսողները կրնան իրենք զիրենք արդիւել խօսելէ, երբ աւելորդ դատեն իրենց ըսելիքը:

Այս դիտողութիւնները ներկայացնելով ժողովականաց, յոյս ունիմ որ ըստ այնմ վարուելով, ատիէ ետքը վիճաբանութիւններն աւելի ամփոփ ու արդիւնաւոր ըլլան:

Ն Ի Ս Տ ԺԸ.

Է. նիստի ատենագրութիւնը՝ որ խնդրոց կարգին մէջ կը տեսնուի, դեռ տպարանէն դուրս չ'ելած ըլլալով, յաջորդ նիստին կը մնայ անոր ընդունելութիւնը):

Սահմանադրութեան վերաբերեալ խնդիր:

Ատենապետ.— Յիրաւի՝ թէ եւ խնդրոց կարգին մէջ երրորդ խնդիր նշանակուած է ատենական կանոնաց վաւերացումը, սակայն կը ցաւիմ ժողովին յայտնելու թէ, ատենական կանոնաց խմբագրութիւնը դեռ ևս աւարտած չէ, ուստի ի՛նչպէս առկէ առջինիստին մէջ Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրը յառաջ անցած է, նոյնպէս այս նիստին ալ

ատենական կանոնաց վաւերացման խնդիրը յետագայ մնաց: Եւ թէպէտ վերաքննութեան մէջ ընդհանուր տրամադրութեանց վրայ բացուած վիճաբանութիւնը սպառած ըլլալով, նախընթաց նիստին մէջ հարկ դատուած էր քուէի ձգել, և որը տարածամեալ ըլլալով, քուէարկութիւնը այս նիստին թողուած էր, սակայն կընկատեմ որ այսօր տակաւին մեծ մաս չուենք և թէ, նախընթաց վիճաբանութիւնը չարուհակելու համար, կը դիտեմ որ տակաւին խօսք ուղղուներ կան, ուստի առ այժմ կրնան խօսիլ, մինչև որ մեծագոյն մաս գոյանալով, քուէարկութեան ժամանակը գայ:

Նոյնը.— Վիճաբանութիւնը բացուած էր երբ ժողովին եկայ, այլ կարծեմ չեմ սխալիլ եթէ ըսեմ թէ ի՛նչ որ երեսփոխանաց ոմանք կ'ուզեն՝ սա է որ, վերաքննութիւնը փոխանակ Սահմանադրութեան նոր ծրագրին վրայ ընելու, ազգովին ընդունուած և արդէն գործադրութեան տակ եղած Սահմանադրութեան վրայ ըլլայ, և ասոր ալ սա պատճառը կուտան թէ այդ ծրագրին իր ծնունդն առած է այն եղելութեանէն որ ասկէ մէկ քանի տարի յառաջ կատարուեցաւ և որով Սահմանադրութեան գործադրութիւնը դադրելով բարձրագոյն հրամանաւ, պայմանեալ ժամանակէն առաջ վերաքննութեան ենթարկուեցաւ: Այդ եղելութիւնը որ չարաբաստիկ կը համարի, առ ոչինչ գրել կ'ուզուի, եւ իբրև չեղած, Սահմանադրութեան վերաքննութիւնը այսօրուէ սկսիլ:

Ասի պարզապէս բողոք մըն է անցեալ եղելութեան դէմ եւ իբր այն՝ հրապուրիչ կողմ մը ունի: Միայն թէ այդ բողոքի ժամն անցած է հիմա և արդիւնք առաջ չի բերեր: Այդ բողոքը ընողները ինչո՞ւ ժամանակին չըրին, երբ արդիւնք մը կրնար ունենալ:

Եղածը եղած է, և չատ անգամ տեսնուած է որ դէշ բանէ մը ազէկ բան մը յառաջ գայ: Ես այն կարծիքն ունիմ թէ այսպէս է սոյն Սահմանադրութեան ծրագրերը: Գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան հեղինակներէն մէկը գտնուած եմ և ես, սակ սոյն ծրագրին մասնակցութիւն չեմ ունեցած: Եթէ հեղինակի անձնասիրութեամբը խօսէի, ես ալ

պէտք էր որ սոյն ծրագիրը ի բաց մերժողներէն ըլլայի, բայց անկողմնասիրութեամբ կը խօսիմ ու կ'ըսեմ որ, այս ծրագիրը արդի Սահմանադրութեանէն նախամեծար է թէ ըստ դասակարգութեանը, թէ ըստ ամբողջութեանը, թէ ըստ սէին: Մէկդէլ՝ ուրեմն անօգուտ վիճաբանութիւնք, շիտակ նպատակին դիմենք. և ոքովհետեւ մէկ կողմէն արդի Սահմանադրութիւնը դարձեալ բարձրագոյն հրամանաւ գործադրութեան մէջ է, և միւս կողմէն ըստ ինքեան ընտիր նոր ծրագիր մը կայ ներկայացնել ըստ որոշման սոյն ընդհանուր ժողովին, սկսինք վերաքննութիւնը այդ ծրագրին վրայ:

Նոյն.— «Դիւանին դէմ կը բողոքեմ» ինչ ըսել է. խօսք տուողը դիւանը չէ, այլ Ատենապետը. կ'ազաչեմ ասկէ ետքը երբ բողոքել յարմար գատէք, ուղղակի Ատենապետին դէմ բողոքէք:

Նոյնը.— Խօսքին կարգը թէպէտ Պէկեան էֆ.ին է, բայց մէկու մը խօսք տալէ առաջ, կ'ուզեմ Ատենապետին դէմ եղած բողոքոց պատասխանել: Խնդրոց կարգէն դուրս բացուած արտաքոյ կարգի վիճաբանութեան մը վրայ ժամեր և նիստեր սպառելը պակասութիւն մըն է, ասոր դէմ բողոքողք մեծ իրաւունք ունին: Այս պարագային մէջ Ատենապետը մէկ պարտք մը Եւնի: Ես ինքնին չեմ կրնար թողուլ որ ներկայ վիճաբանութիւնը շարունակի և այդ պատասխանատուութիւնը չեմ կրնար ստանձնել. բայց թէ ժողովը կ'ուզէ որ ներկայ վիճաբանութիւնը յարատեւէ, այն ատեն կըրնայ շարունակուիլ: Նախ՝ պէտք է ժողովն իր կամքը իմացընէ և առ այժմ՝ միայն այս առաջարկութեան վրայ կրնայ խօսուիլ:

Նոյնը.— Իմ ալ ժողովին հարցնել ուղածս աս է. ժողովը կ'ուզէ՞ որ անմիջապէս Սահմանադրութեան վերաքննութեանը դադանք, թէ՛ իր առջի որոշմանը դէմ եղած դատողութիւններէն ուշաբերելով՝ կ'ուզէ որ այդ կէտին վրայ վիճաբանութիւնը շարունակուի:

Ընդհանուր ժողովոյ որոշումն էր վերաքննիչ Յանձնախումբին պատրաստած ծրագիրը կարգալ և քննել, և քննու-

թիւնը նախ ընդհանուր արամադրութեան վրայ և ապա յօդուած առ յօդուած կատարել. արդ, Դեւանին պարտքն է խնդրոց կարգին հետեւիլ և ոչ ուրիշ խնդիր ձեռք առնուլ, միայն թէ, ինչպէս ըսի, սա կրնամ ընել, որ ժողովին կը հարցնեմ թէ կ'ընդունի՞ ձեր յարուցած խնդրոյն վրայ վիճաբանութիւնը շարունակել, ժողովը թա՛ղ զայս որոշէ նախ:

Նոյնը.— Ես անկողմնակալ կերպով քուէի պիտի դնեմ խնդիրը, և ոչ ձեր և կամ միւսին ըսածը. իմ ժողովին ըսածըս սա է, խնդրոց կարգէն դուրս միջանկեալ խնդիր մը ծագած է, կը հարցնեմ ժողովին թէ խնդրոց կարգին վրայ կ'ուզէ՞ շարունակել վիճաբանութիւնը, թէ ձեր յարուցած խնդրոյն վրայ: Խնդրոց կարգն ուղղունքը ձեռուընին վեր առնեն:

Վիճաբանութեան շարունակուիլն

Նոյնը.— Փափաղեան էֆ. և իրեն համախոհ մէկ քանի երեսփոխանք կ'առաջարկեն որ Սահմանադրութեան դադարման պատճառներուն վրայ քննութիւն և դատաստան ըլլայ և Ընդհանուր ժողովը դատասպարտութեան քուէ տայ:

Այս դատաստանը կը մերժեմ ես և կը յուսամ որ Փափաղեան էֆէնտի ու իր ընկերներն ալ պիտի մերժեն ինծի հետ. ու եթէ դժբախտաբար չկրնամ համոզել զանոնք, այժմէն վստահ եմ որ ժողովը ինծի հետ պիտի մերժէ այդ դատաստանը եւ այդ քուէն զոր կ'առաջարկեն: Թերեւս ամենէն աւելի ես իրաւունք ունիմ այսպէս խօսելու. զի եթէ այդ դադարման միջոցին ես ի Պոլիս ըլլայի, չպիտի լռէի այն ատեն և պիտի բողոքէի և գուցէ ինծի հետ բողոքող խումբ մըն ալ գտնէի: Պիտի բողոքէի, և չեմ ըսեր թէ անմիջապէս պիտի յաղթող ըլլայի, զի այդ վստահութիւնը չունիմ իմ կարողութեանս վրայ, այլ, այդ դադարման պատճառ ուղղունքը պիտի տեսնէին թէ՛ օրինաւորութեան համար մարտընչելու մարդ կայ ազգին մէջ: Ներեցէք ինծի ըսելու անոնց որ, այն միջոցին հոս գտնուեցան ու կենդանութեան նշան չտուին, հիմա դիւրին եւ անօգուտ բողոքներ ընելով թող ժողովին ժամերը չսպառեն:





Ընդհանուր ժողովն իբր առջեւ երկու Սահմանադրութիւն ունի, մէկը գործադրութեան մէջ եղածն է, և միւսը քննութեան մէջ եղածը. ասոնցմէ որը կուզէ վերաքննիչ ժողովը:

Ն Ի Ս Ի.

Օտեան Գ. էֆ. Ատենապետ. — Օրուան խնդրոց չանցած կարեւոր կէտի մը վրայ ժողովին ուշադրութիւնը հրաւիրել պարտ կը համարիմ: Իրաւացի դանդառներ կը տեղան ամէն կողմէն Պիւսանին, մանաւանդ նոյն իսկ երեսփոխան խաններէն դանդառներ կ'ըլլան պակասութեանսօ մը համար. թերեւս առաջին յանցաւորը ձեր Ատենապետն է, ու չկրցաւ տակաւին ատենական կանոնադրութիւն մը ձեռքի ներկայատարելով, ինչպէս որ խոստացած էր. յանցանքս խոստովանելով հանգեալ, չկրցայ մ'նչեւ ցարգ ամբողջ ատենական կանոն մը խմբագրել, թէեւ մէկ քանի ծրագիրներ պատրաստ են արդէն. բայց անոնք ժողովին բարեկարգութեան պիտոյքը գոհնելու բաւական չեն, կարծեմ թէ մեծ օգուտ մը չպիտի բերեն անոնք, չպիտի կրնան երեսփոխանաց խօսելու ազատութիւնը օրինաւոր սահմանի մը տակ դնել: Ասկէ առաջ անգամ մը առիթ ունեցայ բացատրելու հերոսական ազգաց կանոնները թէ իրենց խօսելու ազատութիւնը ինչպէս կը գործածեն, կարգէն դուրս խօսք ուղեւով խնդիր յարուցանողները պատճառ կ'ըլլան ժողովին անպէտ վեճարանութիւններով զբաղելուն, և այս կերպով որոշում մը տրուելը խիստ կը դժուարանայ: Անտարակոյս ժողովն իր որոշմանց մէջ կըրնայ սխալիլ, բայց իր որոշմանց դէմ գործելէն աւելի մեծ նայ սխալիլ, բայց իր որոշմանց դէմ գործելէն աւելի թեւ թերի, պէտք է անդառնալի մնայ: Ատենապետին պարտքն ու իրաւունքն է բացուած խնդրոց վրայ միայն խօսք տալ և դուրսէն խնդիր մը յուղուած ատեն ժողովին կարծիքը հարցնել, այսուհետեւ չպիտի կրնամ թողուլ որ բացուած խնդրէն դուրս մէկը խօսի: Ժողովը եթէ այս առաջարկութիւնս չընդունիր, կրնայ աւելի ներողամիտ մէկուն յանձնել ատենապետութեան պաշտօնը:

Ատենապետ. — Խնդրոց կարգէն խոսորեցանք. Վարչական վրայ խօսք բացուեցաւ, դիւանատան բարեկարգութեան խնդիր ծագեցաւ. պահ մը առաջ Օգոսէն էֆ. յիշեցուց և իրաւամբ՝ որ խօսից կարգէն չ'չեղինք, ուստի պարտաւոր եմ այս միջանկեալ վիճարանութիւնը բոցելու:

Նոյնը. — Խնդրոյն կարգը նախորդ նիստէն մնացած վիճարանութեան շարունակութիւնն է, և վիճարանութեան առարկան սա է թէ՛ ժողովը արդի Սահմանադրութեան թէ՛ Յանձնախումբին բերած ծրագրին վրայ վերաքննութիւն ընէ. ինչ ու նորի խնդիր չկայ, ս'չ ալ բողոքող կայ:

Հիմա խօսք ուղղները միայն պէտք է խօսին թէ ինչ պատճառներով կ'ուզեն Յանձնախումբին ծրագրին կամ գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան վրայ վերաքննութիւն ընել, առանց անցեալ խնդիրներ մէջ բերելու կամ մարդ Զոյ պարագան յիշեցնելու, որոյ ծնունդ համարելով մերժել կ'ուզուի Յանձնախումբին բերած ծրագիրը, այս պարագան ալ իր բայ թողուլ որոշուած է արդէն և ասոր վրայ խօսք ուղղներուն խօսք չկայ այսուհետեւ, ըստ որում Ատենապետը որչափ փափաք և ջանք ունենայ՝ դուրսէն խնդիր յուղել չտալու, դարձեալ խօսողը միշտ ջրնդեղէն խօսք բանալու պատճառ մը կը գտնէ, և յանունս երկարել իր խօսքը

Ուրեմն կը հրաւիրեմ երեսփոխան էֆ.ները որ արդէն բացուած վիճարանութեան վրայ միայն իրենց խօսքը շարունակեն և համառօտիւ իրենց կարծիքը յայտնեն թէ վերաքննութիւնը ո՞ր տեսակին վրայ սկսելու է:

Նոյնը. — Ժողովը որոշում մը ըրեր է որևէ պատճառաւ, պէտք է որ յարգուի, իբրև ատենապետ իմ պատքս է յարգել տալ ժողովոյն որոշումները և չթողուլ որ ժամանակ անցնելէ ետքը մէյմէկ պատճառանօք փոփոխուին: Զեմ կրնար ներել նաև որ ըսուի թէ՛ ժողովը ճշման տակ գործած է: Ժողովը կրնար ժամանակին՝ եթէ ճշման տակ էր՝ բողոքել, և թերեւս դուք չէք գիտեր, հարկ կ'ըլլայ խնդիր յեղեցնել որ Ընդհանուր ժողովն ինք ընտրած է Վերաքննիչ Յանձնախումբը և այս ծրագիրը պատրաստել տուած է. Բ. Գուրը

տարի մը անցնելէն ետքը զրկած է իր ծրագրերը: Բողոք մը ընել կ'ուզէք և դանի՝ անագան կերպով. առի մեր երեւակայութեան, մեր մտածման մէջ անգամ կարելի չէ ընդունիլ. ինչո՞ւ կը պնդէք առոր վրայ:

(Ատենապետ էֆ. կ'ազդարարէ Գիւանին՝ նկատողութեան չ'առնուլ Գրիստոստուր էֆ.ին խօսքերը, որոնք խնդրէն գուրս են, և չ'արձանագրել զանոնք, ինչպէս նաեւ ամէն աչն երեսփոխանաց խօսքերը, որք առանց Գիւանէն խօսք առնելու կը խօսին):

Նոյնը. — Բացատրեմ անգամ մը թէ քուէի զրուելիքը ի՞նչ է. երկու Սահմանադրութիւն կայ, մէկը այն որ՝ գործադրութեան մէջ է արդէն, և միւսը՝ Յանձնախումբին ծրագրերն է. այս երկուքէն որը՞ վերաքննութեան պիտի առնուի, ահա՛ այս է քուէով որոշուելիքը:

Նոյնը. — Թերեւս չէք կարգացած եւրոպական ազգաց ատենագրութիւնները. պիտի տեսնէք հոն թէ՛ քուէարկութիւն մը՝ երբ անոր փորձը երկրայական է, կրնայ կրկնուիլ. Գիւանը կը յայտնէ որ փորձը իրեն համար երկրայական է. անոր համար փորձը նորոգել կուզեմ այսօր, սակայն ետքէն մեծագոյն մաս չըլլալուն վրայ զիտողութիւն եղաւ, ուստի ժողովին կը հարցնեմ, թէ որ գալ նիստին մնալը կ'ուզէ, քուէարկութիւնը գալ նիստին կը թողունք:

Ն Ի Ս Տ Ի Ա. 1871

Օտեան Գ. էֆ. Ատենապետ. — Յայտնի է որ ատենագրութիւնը ժողովին մէջ խօսուածներուն բառ առ բառ արձանագրութիւնը չէ: Ասկէ զատ հիմա ատենագրութեան խմբագրութեանը վրայ ընդհանուր զիտողութիւն ընելու տեղը չէ: Կ'ազաչեմ Փափագեան էֆ.ին որ իր ըրած խօսքերուն վերաբերեալ զիտողութիւն մը եթէ ունի, զայն ներկայացնէ:

Նոյնը. — Իրաւ է որ յուզելի խնդիր մը օրուան կարգին մէջ անցնելու է, բայց ատենագրութիւնն ինքնին և բնակահարար օրուան կարգի խնդրոց մէջ է. ասկէ զատ բացարձակ կերպով անկարելի է ընդունիլ որ օրուան կարգին մէջ չ'ըլ-

չատակուած խնդրոց մը վրայ բնաւ չխօսուի. ժողովական մը իրաւունք ունի հարցում ուղղելու վարչութեան, և այս իրաւունքը երբ գործածէ, ահա՛ խնդիր մը բացած կ'ըլլայ ժողովին մէջ, որ օրուան կարգին մէջ նշանակուած չէ:

Նոյնը. — Ժողովին սովորութիւնը սա է միշտ որ նախորդ նիստին ատենագրութիւնը հետեւեալ նիստին կը կարգացուէր, ետքէն և աւժամանակեայ կերպով այս ընթերցումը դադարեցաւ, ժողովին ժամանակը խնայելու մտօք, և անոր համար արագորութեամբ հրատարակուելով օրուան կարգի խնդրոց մէջ սովորութիւն եղաւ. հիմա շատ շատ մէկ իրաւունք մը ունինք, սա է՝ օրուան կարգի խնդրոց մէջ անցած չ'ըլլալուն համար, ընթերցումը պահանջել: Ահա Գիւանին կողմէն ինչպէս մրքեմն կ'ըլլար, կը կարգան ատենագրութիւնը, ա՛լ բնակիք չի մնար:

Նոյնը. — Առջի երեսին երկրորդ էջին մէջ երեսփոխանաց խօսելու ազատութեան վրայ ըրած խօսքերս այնպէս կ'երևի որ ազատութեան սահման մը վնասուած եմ, բայց այնպէս չէ. ըսի որ «ազատութեան սահման գտնել անհար է, ազատութեան սահմանը դարձեալ ազատութիւնն է»:

Ասկէ քիչ մը վար գրուած է. «որոշում մը թէեւ սխալ, թէեւ թերի, պէտք է անդառնալի մնայ»: Չըսի թէ պէտք է անդառնալի մնայ, այլ ըսի. «աւելի լաւ է գործադրուի, քան թէ շարունակ փոփոխութեան ենթարկուի»:

Նոյն խօսքիս կարգը նախ գրուած է. «Ատենապետին պարտքն ու իրաւունքն է... դուրսէն խնդիր մը յուզուած ատեն՝ ժողովին կամքը հարցնել», ահաւասիկ իմ խօսքս. «Ժողովին որոշմունքը ինչ որ է՝ պիտի յարգեմ ու յարգել տամ, և ժողովին որոշմանը հակառակ խնդիր յարուցանելու համար ժողովին կամքը պիտի հարցնեմ ասկէ ետքը, ինչպէս մէկ քանի անգամ ըրի մինչեւ հիմա»:

291 երես երկրորդ էջ, Հաճընայ երեսփոխանի ընտրութեան խնդրոց առթիւ գրուած է, «Ատենապետը այս բացատրութեան գոհացուցիչ ըլլալը յայտնելով» եւ իրաւունք չունիմ գոհացուցիչ է ըսելու, այլ պիտի ըլլայ, «Ժողովը գոհացուցիչ գտաւ զայն»:



իմ առած բացատրութիւններս թերի կը գտնէք, թո՛ղ ժողովը զանոնք իբրև չարուած համարի. ես անկողմնասիրաբար խնդիրը ներկայացուցի եւ չե՛մ ուզեր որ եւ է ազդեցութիւն գործել ժողովին վրայ :

(Զայս ըսելով Ատենապետ էֆէնտի կը հարցնէ ժողովին թէ գաղանի քուէարկութիւն ընել կ'ուզէ՞) :

Նոյնը . — Երեսփոխան էֆէնտիներ, կ'աղաչեմ ժողովին բարեկարգութիւնը պահպանելու համար ինծի հետ գործակցիք, միեւնոյն բարի կամեցողութեամբ վառեալ ամենքս ալ պէտք եղած գոհութիւնն ընենք շփոթը գաղբեցնելու եւ բարեկարգութիւնը չխանգարելու համար :

Հիմա խնդրէն դուրս խնդիր երեւան կ'ելնէ, մէկ կողմէն Պէկեան էֆ. կ'ըսէ թէ նախորդ նիստին քուէարկութեան որոշում չեղաւ, եւ ասոր պատճառ կը բերէ թէ մեծագոյն մաս չէր մնացած այն միջոցին : Պէկեան էֆ. կը սխալի այս մասին, վասն զի նախորդ նիստին՝ վիճարանութեան շարունակութիւնը կամ ոչ շարունակութիւնը քուէի դրուած առտեն՝ մեծագոյն մաս կար, եւ ատենագրութեան 302 բղ երեսին մէջ դրուած է թէ՛ մէկ քուէի դէմ ընդհանուր հաւանութեամբ վիճարանութեան դադարումը որոշուեցաւ, եւ անկէ կէս ժամ ետքը քուէարկութեան ձեռնարկուեցաւ. ըսել է որ անկէ առաջ «մեծագոյն մաս չկար» ըսելու իրաւունք չունի Պէկեան էֆէնտին :

Միւս կողմէն Օգսէն էֆ. իմ բացատրութիւնս թերի կը գտնէ եւ կ'ըսէ թէ գործադրութեան մէջ գտնուած Սահմանադրութեան վրայ վերաքննութիւն ընել ըսելը՝ վերամտնութեան նոր Յանձնաժողով մը ընտրել ըսել ըլլալը որոշ չքննութեան նոր Յանձնաժողով մը ընտրել ըսելը ըլլալը չբացատրեցի : Այդ բացատրութեանց ամենեւին պէտք չկայ. չբացատրեցի : Այդ բացատրութեանց ամենեւին պէտք չկայ, երբ գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան տրամադրութեանցը համեմատ վերաքննել կըօկսինք, հարկաւ կ'իմացուի թէ ի՞նչ են ասոր ընական հետեւութիւնները :

Օտեան Գ. էֆէնտիի նամակը առ Սրբազան Պատրիարքն .

«Ամենապատիւ Սրբազան հայր,

Ամենակարեւոր անհրաժարելի գործ մը կը ստիպէ զիս այսօր ի Պոսթոս երթալ, հետեւաբար չպիտի կրնամ գտնուիլ եւ ատենապետել Ընդհ. ժողովին :

Այս առիթով պարաք կը համարիմ ծանուցանել միանգամայն որ՝ մօտ օրերս յեւրոպա ճամբորդութիւն ընել որոշած ըլլալով եւ հրամանն ստացած՝ մէկ երկու ամիս բացակայ պիտի գտնուիմ : Ժողովին անկ է անօրէնութիւն մը ընել :

Մ'նամ եւ այն  
(Ստորգ.) ՕՏԵՄՆ

Բերս 14 մայիս 1871

Օտեան Գ. էֆէնտի Ատենապետ . — Կ'երեւի թէ երեսփոխանաց խնամակալութիւն մը կ'ուզէք հաստատել. եթէ Օգսէն էֆէնտի իր մասին համար դիտողութիւն մը ունի, թող ՚րամմէ. եթէ նա կը լուէ, չգիտեմ թէ ինչպէս ուրիշ երեսփոխան մը անոր կողմէն դիտողութիւն կ'ընէ :

Նոյնը . — Բացակայ երեսփոխաններէն ոմանք նա մակաւ ծանուցած են ժողովոյն այսօրւայ նիստին իրենց ներկայ չգտնուիլը անձնական տկարութեան պատճառաւ : Այս բացակայութիւնը ժողովոյն նախորդ մէկ որոշման համաձայն ընդունելի պատճառ մը ունի, եւ իբր այն՝ կը նշանակուի ներկայութեան տուժարին մէջ :

Հիմա որ ժողովը խնդրոց կարգին պիտի անցնի, պարտ կը համարեմ յայտնել որ անկէ դուրս երկու խնդիր եւ կայ ժողովոյ ներկայանալի, — մէկն է բացակայ երեսփոխանաց զբաւոր դիտողութիւնները յատենի ժողովոյ կարգալու կամ չի կարգալու խնդիրը, որ նախորդ նիստին սկիզբը յուղուեր է Այվատեան էֆ.ի մէկ նամակին առթիւ եւ յետոյ՝ մեծա-

գոյն մասի ներկայութեան վերադասուեր է անոր լուծումը . սակայն այդ օրինական թիւը գոյանալէ ետեւ՝ տակաւին խնդիրն անորոշ մնայեր է ի մտայում թողուելով : Այս մասին տրուելիք որոշմանը պիտի նետելիմ նաև Այվատեան էֆ.ի այսօրուան մէկ նամակին նկատմամբ : Իսկ երկրորդ խնդիրն է՝ եօթն երեսփոխանաց կողմէ առ Աղբային վարչութիւնն ուղղեալ նարցումը որ ահաւասիկ :

Հարցում

Առ Աղբային վարչութիւն

Ներկայեացեալ յատենի Ընդհ. ժողովոյ 13 Օգոստոս 1871

«Պրուսայի վիճակին առաջնորդ Բարթոլոմէոս եպիսկոպոսը իրաւ է որ, զինի նրաժարելուն, և մինչդեռ Աղբային վարչութեան առջև դատաստանի ներքեւ կը գտնուէր, առանց վարչութեան նրամանին՝ Պրուսայի վիճակը գարձած ըլլայ, ու եթէ իրաւ է, վարչական ժողովն ինչ որոշած է այս եպիսկոպոսին նշատմամբ» :

(Ստորագրութիւն)

- Յ. Հ. Մէրեմէմբուլի
- Ս. Փախազեան
- Մ. Յ. Այվատեան
- Պ. Պառնասեան

- Գ. Ս. Օտեան
- Թ. Պէկ
- Բ. Ղազարոսեան

Ատեմապետ . — Երբ Գիւանը եօթն երեսփոխանաց նարցումը հաղորդեց ժողովին, եզան ոմանք որ անսովոր ինչ կարծեցին զայն : Գիտէ՞ք ինչ կը նշանակէ այս նարցումը և ինչ կ'ենթադրէ . Ընդհ. ժողովոյ ամենէն գերագոյն և ամենէն մեծարոյ իրաւունքն է ան, և այս իրաւունքով է որ հանապազօրեայ հսկողութիւն մը կը գործադրէ նա վարչութեան վրայ, այս միակ եզանակը կայ՝ երբ հասարակաց կարծիքը խնդիրով մը յուղեալ է՝ համարատուութեան որոշեալ պայմանաժամէն առաջ համար ուղեւ վարչութեանէն :

Ամէն երեսփոխանական ժողովներու մէջ այսպէս հարցումներ կ'ըլլան ինչ ինչ պայմաններով : Նոյնիսկ մեր Երեսփոխանական ժողովն ասկէ առաջ անգամ մը այս իրաւունքը հաստատեց, երբ խնդիր յարուցին այդ մասին, միայն թէ Ատեմապետ կամոնագիր մը չըլլալուն, սահմանուած չէին հարցման պայմանները . նոր ծրագրին մէջ ատոր վերաբերեալ յօդուածներ տեսայ : Այս հարցումն ընող եօթն երեսփոխանք պարտաւորութիւն մը ունէին, այն է նախապէս վարչութեան հաղորդել իրենց հարցումը, վասն զի նա՝ որ տեղեկութիւն մը, պատասխան մը տալու հրաւէր կ'ընդունի, բնականօրէն իրաւունք ունի առաջուց գիտնալու թէ ինչ կը հարցնեն իրեն . այս եօթն երեսփոխաններն իրենց պարտաւորութիւնը կատարած են, հարցումն յառաջագոյն հաղորդելով վարչութեան, և նիմա կուգան իրենց անտնօրինելի և անհակառակելի մէկ իրաւունքն ի գործ դնելու :

Սրբ կը մնայ ժողովին որոշել թէ՛ ե՞րբ ուշադրութեան պիտի առնու այս հարցումը, վասն զի որքան և զայն ներկայացնող երեսփոխանք ստիպողականութիւն կը խնդրեն, ժողովոյ ձեռնհասութիւնը կրնայ զայն ուրիշ ատենի թուղու :

Նոյնը . — Ոչ ոք կը զլանայ վարչութեան իրաւունքը, այս տեսակ հարցման մը առջև կրնայ նա՝ «նիմա չեմ պատասխաներ» ըսելու : Սակայն ինչպէս ըսի, երբ հասարակաց կարծիքը խնդրով մը կը յուղուի և կը տագնապի, երբ երեսփոխանք կը տեսնեն թէ վարչութիւնն իր պարտաւորութիւնը չի կատարեր, կամ թէ չգիտեն թէ ո՞ր ատիճան կատարած է, այն ատեն հարցում մը կը ներկայացնեն : Ժողովն անոր ստիպողականութեան վրայ կը վիճաբանի, կ'որոշէ, հարցումը կ'ուղղուի, իսկ վարչութիւնը երբ օրինաւոր պատճառներ ունի անմիջապէս չպատասխանելու, իրեն կը վերաբերի ըստ այնմ գործել :

Նոյնը . — Կ'աղաչեմ որ թեթեւութեամբ չարտասա-

նենք մեր ընկերներուն համար այնպիսի բառեր՝ որ կրնան զանոնք վիրաւորել : Գիտենք թէ ի՛նչ հետեւութիւններ ծագեցան այնպիսի բառերէ : Ոչ ոք իրաւունք ունի անտարբէրութիւն կոչել՝ երբ երեսփոխան մը քուէի չի մասնակցելը : Հմանակցելու համար անտարբերութենէ զատ պատճառներ կրնան ըլլալ, զոր օրինակ ժողովոյս Ատենապետներէն Գաբակէօղեան էֆ. խնդիրը քուէի դրուելու միջոցին ներս մը տաւ, ինչպէ՛ս կ'ուղէք որ քուէ տար :

Նոյնը. — Ընդհ. ժողովն որոշեալ է որ սահմանաւ ժաման ատենը բացուի, ի՛նչ որ և ըլլայ զանուոյ երեսփոխանաց թիւը, վիճաբանութիւն լինի խնդրոց վրայ, սատարողականութեանը մեծագոյն մասի ներկայութեան վերապահուի : Դիւանը մինչեւ ժամը 7 սղասեց ժողովականաց և ուր ուրեմն ատանը բացաւ : Խնդիրներուն մէջ հարցում մըն ալ զանուեցաւ եթէ երեսփոխանաց կողմէ առ Բաղ. ժողովականս. վիճաբանեցան ոչ թէ բուն խնդրոյն, այլ խնդրոյն ստիպողականութեանը վրայ և ամենամեծ մասով ընդունեցան այս ստիպողականութիւնը, այսինքն խնդրոց կարգին մէջ խնդրոյն բունելու տեղն որոշեցին. — բան մը որ երեմն մինակ Դիւանն ինք ալ կրնայ ընել :

Նոյնը. — Խնդիրն այն վիճակին եկած հասած է որ ալ վիճաբանութիւնը սպառած է եւ որոշում մը տրուելու համար մեծագոյն մասի կը կարօտինք : Միայն թէ կը փափագէի որ մասնաւոր խնդիրը չ'որոշած՝ ընդհանուր խնդրոյն վրայ, սկզբունքի խնդրոյն վրայ մէկ քանի խօսք ընէի, այս փոխարէն է կեդրոնական վարչութեան իշխանութեան սահմանը, այս մասին ըստ իս ծուռ գաղափարներ մուտ գտած են Սղգին մէջ, և անոնք են որ տեղի կուտան այս տեսակ դէպքերու, որոնց դէմ ներկայ ժողովականք իրենց զգացումն յայտնեցին արդէն, սակայն մեծագոյն մաս չկայ, և օրն ալ տարաժամած է :

Նոյն իսկ Բարթողիմէոս Եպիսկոպոսի անհրաման Պոլսէն երթալը՝ որուն համար մեր պատուարժան ընկերակիցներէն մին խիստ պատշաճաբար փախչիլ բառը գործածեց՝ իմ ակնարկած գաղափարներուս մէկ արդիւնքն է, և այն վաբան-

մունքը որ այս գործին նկատմամբ Սղգ. վարչութեան ընթացքին մէջ կը տեսուի, կը ցուցնէ թէ վարչութիւնն իսկ ազատ չէ բոլորովին այդ գաղափարներու ազդեցութենէն :

Նոյնը. — ( hounfի բեյը ձեռք առնելով ) Բարեբախտ կը համարիմ զիս, եթէ վարչութիւնը այդպիսի ազդեցութիւն մը չէ ընդունած :

Բարթողիմէոս Եպիսկոպոս իմ սիրած եկեղեցականներէս մին է. եթէ իմ անձնական յարաբերութեանցս նայելի, այս հարցումը պիտի չստորագրէի, բայց ամէն բանէ վեր է Սղգին շահն ու ազգային հեղինակութիւնն ու պատիւը, միայն թէ ներքի է ինծի կարծել թէ նոյնիսկ Բարթողիմէոս Եպիսկոպոս իմ վերը յիշած գաղափարներէս մտորեցաւ, և կարծեց թէ վարչութիւնը իր ձեռնհասութեան սահմանին մէջ չէ : Սպա թէ ոչ, չէր փորձեր, չպիտի փորձէր վարչութեան հրամանին դէմ շարժելու յանդիմութիւնը, և ժպրէք փախչելու Պօլսէն, որով արժանապէս վայելեց այն բմբոս ածականը, զոր Պէկեան էֆէնտի քիչ մը առաջ կ'ընծայէր իրեն : Արդ, ժամ է որ այն ծուռ գաղափարներն ուղղուին, և այս ապակեղբոնացման խնդիրը միանգամ ընդ միշտ պարզուի և լուծուի, որչափ կարելի է չուտով : Եթէ Սահմանադրութեան վերաքննութեան պահուելը ուղուի, միեւնոյն անտեղութիւնները նորէն կը պատահին : Հոս է խնդրոյն ստիպողականութիւնը և կ'ազաչեմ որ ժողովը յաջորդ նիստին նկատողութեան առնէ այս խնդիրը :

Ն Ի Ս Տ Լ Բ .

ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ատենապետ. — Թէեւ խնդրոց մէջ առաջինը նորընտիր երեսփոխանաց վաւերացումն է, սակայն Գործադիր Յանձնաժողովոյ կողմէ Դիւանին վրայ գրութիւն մը չեմ գտներ, ուստի կ'անցնիմ այս խնդիրն, որու վրայ կը հրաւիրեմ ժողովոյ զետեղութիւնը :

Նոյնը. — Առաջարկութիւնները շատցան, սակայն ստանցմէ մէկը խիստ ստիպողական ցուցուեցաւ, այն է Գա-

ւառական հարստահարութեան Տեղեկագիրն խնդիրը, զոր Օգոսէն էֆ. այսօր յուզելու համար զօրաւոր պատճառ մը ցոյց տուաւ. միւս կողմէ հաւասար զօրաւոր պատճառ մը մէջ բերուեցաւ, որ կ'ըսեն թէ դեռ այսօր ձեռքերնին հասաւ և դեռ ուսած չեն զանի: Ժողովին կը մնայ որոշել: Որոշելու կէտը սա է. այս խնդիրն այսօր կրնա՞յ և պէտք է յուզուի, թէ ոչ. եթէ այսօր յուզուիլը որոշուի, տարակոյս չկայ որ ամէն խնդրէ առաջ պիտի անցնի:

Օտեան Գ. էֆ. (Աթոռը փոխանորդին թողուի). — Երեսփոխանական ժողովը հաստատուած օրէն այսպիսի ծանր՝ այսպիսի փափուկ և ամենուս սիրտը թրթռացնող խնդիր մը չէ ներկայացած ժողովոյս, կրնամ աւելցնել թէ՛ ոչ երբեք խնդիր մը այսպէս յարմար ժամանակի մէջ ներկայացած չէ: Բան մը կայ որ միշտ ու ամէն գործողութեան մէջ պէտք չէ մարդուս ուշադրութենէն վրիպի, այն է՝ ժամանակի յարմարութիւնը: Մարդիկ ո՛րչափ խելքով գործեն, ո՛րչափ աշխատին, պարազայից զօրութիւնը աւելի մեծ է մարդոց ջանքէն. խելացիին անոնց միտքը՝ որ Յանձնաժողովին տեղեկագիրը առաջին խնդիր ընել կ'առաջարկեն, այսինքն անմիջապէս յուզել: Ես այս առաջարկութեան բոլորովին համամիտ եմ: Ըսողներ կան թէ՛ տեղեկագիրը ուշ առած են և չեն պատրաստուած անոր վրայ, սակայն չէ՞ թէ արդեօք քանի տարիներէ ՚ի վեր ամենուս ախանջները լցուած են այդ տեղեկագիրն պարունակող թիւններովը. ի՞նչ բան կայ այդ տեղեկագիրն մէջ որ նոր ըլլայ մեզի համար. տեղեկագիրը ստուգելով հաստատած է միւսայ մեզի համար. տեղեկագիրը մէջ կարգացինք այնքան շանդամ: Ես կը կարծեմ թէ ա՛յնպիսի պատեհութիւն մը կայ այսօր առջեանիս՝ որ միւս նկատումները երկրորդական կը մնան անոր քով: Տէրութիւնը կ'ուզէ, ամէն օր կը յայտարարէ թէ՛ դաւառական վարչութեանց մէջ ի՛նչ յոռի բան մը կայ՝ ուզուի կը փափաքի, բայց նախ և առաջ լաւ մը տեղեկանալ կ'ուզէ իրաց վիճակին ամէն պարագայիւք, և այս նպատակաւ քննիչներ զրկել որոշած է դաւառները, ինչպէս կարգացինք

օրագրաց մէջ: Արդ, մեր տեղեկագիրն ալ միեւնոյն նպատակին կը ծառայէ, տէրութիւնը շնորհակալութեամբ պիտի ընդունի մեր տուած տեղեկութիւնները, որոնք մեր Առաջնորդներուն ձեռքով, եր Պատրիարքարանին ձեռքով առնուած ու յատուկ Յանձնաժողովով ստուգուած քննութիւններ են:

Կը տեսնէք թէ այս տեղեկագիրը՝ որ գուցէ ասկէ առաջ դժկամակութեամբ ընդունուէր, այսօր գոհութեամբ պիտի ընդունուի:

(Ատենապետ էֆ. իւր աթոռն դառնալով, քուէի կը դնէ այսպէս «Գաւառական հարստահարութեանց տեղեկագիրն՝ ժողովը այսօր քննութեան պ'տի առնու թէ ոչ»): Ժողովը ընդհանուր հաւանութեամբ կ'որոշէ անոր քննութիւնը):

Նոյնը. — Դեռ մէկու մը խօսք չստուած, կ'ուզեմ վիճաբանութեան կարգին և եղանակին վրայ խօսիլ: Տեղեկագիրը երկու մասերու բաժնուած է, առաջնոյն մէջ գանգատները կը պարունակեն, իսկ երկրորդը անոնց դարմանները ցոյց կուտայ: Առաջին մասը չեմ կարծեր որ վիճաբանութիւն վերցնէ. եթէ չափազանցութիւն կամ պակաս տեսնուի՝ միայն ցուցնելու է, գալով երկրորդին՝ այն է դարմաններուն՝ կ'ըսեմ, և կ'առաջարկեմ որ՝ մի առ մի պէտք է վիճաբանինք անոնց վրայ: Կը հարցնեմ արդ թէ՛ Ա. մասին վրայ դիտողութիւն ընող կա՞յ:

Նոյնը. Իրաւունք ունիք, Սրբազան Հայր, մանր մունր բաներով ժամանակ անցընելու չենք: Ընդհ. ժողովը իր մէջէն Յանձնաժողով մը կազմեր և այս գործը անոր է յանձնար: Յանձնաժողովը տարի մը ամբողջ աշխատելէն վերջը բերաւ իր աշխատութեան արդիւնքը ժողովոյն, ուստի ժողովը այդ տեղեկագիրն գլխաւոր կէտերուն վրայ խօսելով՝ ընդունելու է դայն, ինչպէս որ օրէն է ամէն ժողովոց համար:

Նոյնը. — (Ընդմիջելով). — Բ. Մասին վրայ պիտի խօսինք ուրեմն: Արդէն մէկ քանի ժողովականք խօսք կ'ուզեն, խօսելու ուղղութեան նախ այս յայտարարութիւնը պիտի ընեմ, այսպիսի ծանր խնդրոյ մը մէջ ինձի պարտք կը համարիմ աշխել իմ ընկերակիցներս, որ այն բանը խօսին, որմէ օգուտ





նը, ոչ երբեք պիտի բռնադատէ մեզ, բայց և աշխարհի առջեւ մեր պարտուց ճանաչման ապացոյցը տուած պիտի ըլլանք, որով և բարձր ի գլուխ երեւնալու իրաւունք պիտի ունենանք այն ամէն խնդրոց մէջ, որ մեր ազգին նիւթական և բարոյական վիճակին կը պատկանին:

Ասեմապէտ.— Օրը տարածամած է, խնդիրը խիստ կարեւոր խնդիր մըն է և իր ամէն պարագաներովը յուզելու համար բնական է և պէտք է որ ժողովին երկար երկար ժամերն գրաւէ: Այսպիսի խնդիր մը յուզելն անգամ գործ տեսնել է: Կ'առաջարկեմ որ՝ յառաջիկայ նիստն 8 օրէն գուժարուի, և երեսօթիսանք սոյն միջոցին մէջ՝ զանի լաւ ուսանին, և իրենց հասուն խորհրդածութիւնները առաջուց պատրաստած գան ժողովին:

Ն Ի Ս Տ Լ Կ.

Օտեան Գ. ԷՖ. Ասեմապէտ.— (Ժողովը հանդարտեցնելով) Ես մէկէն ի մէկ չկրցի հասկնալ թէ՛ Մազլըմեան էֆ. ի խօսքն ո՛ւր պիտի յանգէր, ապա թէ ոչ՝ չէի թողու: Իսկ որ խօսէր: Որոշման վրայ չի վիճուիր, զի Ընդհ. ժողովինն է, և այդ որոշմամբ Ընդհ. ժողովը իրեն վերապահած է Կաթողիկոսական ընտրութեան վաւերացումն, ուստի ամենայն խօսք աւելորդ է ասոր վրայ:

Խնդիրն սա է թէ՛ Քաղ. ժողովը՝ Կաթողիկոսն ընտրուած է կ'ըսէ, և գործը մնացած է Ընդհ. ժողովոյ կողմանէ վաւերացման, որ ստիպողական է: Արդ՝ Ընդհ. ժողովը կուզէ՞ առաջին խնդիրը ընել Քաղ. ժողովոյ առաջարկութիւնը թէ ոչ:

Ըստ որում ժողովոյ կամքէն կախում ունի միշտ խընդրոց կարգն առ հարկի յեղաշրջել, ուստի, ժողովը կ'ուզէ՞ որ Քաղ. ժողովոյ խնդրանաց համեմատ՝ Կիլիկիոյ Կաթողիկոսի ընտրութեան վաւերացման խնդիրը նախադասի քան զայլ թէ ոչ:

Նոյնը.— Փափագեալն էֆ., եթէ կ'ուզէք որ վիճա-

բանութիւնը չ'երկարի, մարմաջ մի՛ զգաք շարունակ ամէն խօսքի պատասխանելու, գիտցէ՛ք ուրեմն թէ չ'պատասխանելու աւելի պատուաւոր է:

Նոյնը.— Երբ ժողովոյ մէջ փոքրաթիւ մաս մը իսկ խնդրոյն քուէարկելն ուզէ, Ատենապետը պարտաւոր է ժողովոյ կամքը հարցնել և անոր հետեւիլ: Միայն թէ ամէն Երեսօթիսանական ժողովոց մէջ կանոն մը կայ, որ արդարութեան վրայ չ'իմնուած է, և եթէ մենք այդ կանոնը գրուած ալ չ'ունենանք, դարձեալ պէտք է անոր հետեւիլ, այն է՝ Վարչութեան ամէն առաջարկութեան վրայ՝ վերջին խօսքը հակառակորդ կողմին տալ: Ճիշտ այս պարագային մէջ կը գտնուինք. Վարչութիւնն առաջարկութիւն մը բերաւ ու չ'իմա վերջինը Սրբազան Պատրիարքը խօսեցաւ, որ Վարչութեան գլուխն է. Պէկեան էֆ. հակառակորդ կողմին ատենարանն է, պէտք է խօսի, անկէ ետքը քուէի կը դնեմ:

Նոյնը.— (Ժողովը հանդարտեցնելով և բարեկարգութիւնը վերանստատելով).— Ատենաբանն էֆ. ա՛լ չեմ կրնար ժողովոյ բուռն կամաց հակառակ ներել ձեզ որ շարունակէք: Երբ այս աստիճան զայրոյթ կը յարուցանէք, չեմ կրնար ձեր ազատութիւնը պաշտպանել, արդէն կը տեսնէք որ երեսօթիսանաց մեծագոյն մասն անդադար կ'ընդմիջէ ձեր խօսքը, զոնէ ժողովոյն դիւրազգածութեանը զբաղչել զգուշացէք:

Նոյնը.— Այս բոլոր խօսքերն, որոց մէջ անկարելի է ուրանալ թէ շատ օգտակար խորհրդածութիւնք կան, կը դառնան դարձեալ առաջարկեալ դարմանաց վիճաբանութեան, և սակայն Մէրեճմ Գուլի էֆէնտիին առաջարկութիւնն ասոր ներառին է և այդ առաջարկութեան վրայ պէտք է նախ անօրինէ ժողովը:

Այդ առաջարկութիւնը սապէս կ'ամփոփեմ, եթէ ժողովն Յանձնաժողովոյ տեղեկագիրն ընդհանուր կերպով կ'ընդունի, իրեն վերապահելով ազգովին գործադրելի դարմաններն, յանձնէ զանի Քաղ. ժողովին, ըսելով «զու որ Ազգին գործադիր իշխանութիւնն ես, ահա՛ Ազգին ցաւերն ու

ցուցուած դարմաններն. Ընդհ. Ժողովն ընդունած է Ազգին ցաւերն, որք տեղեկագրին մէջ յիշեալներն են, և Բ. Գրան առաջարկելի դարմաններն ալ, սա՛ դասակարգութեամբ կ'ըմբռնէ, ա՛ւ զանոնք, եթէ դարմանաց մէջ անգործադրելի կէտեր նշմարես, նշանակէ՛ զանոնք և ներկայանալի եղանակն որոշելով՝ վերադարձու՛ր մեզ»:

Ն Ի Ս Տ Լ Է.

Օտեան Գ. ԷՖ. — Տասներկու երեսօտիսանք հարցում մը կուղղին Ս. Պատրիարքին և Վարչութեան. նախ պէտք է որ Ժողովն ընդունի այդ հարցումը և խնդրոյ կարգն առնէ. առանց Ժողովոյ որոշման՝ նա ո՛չ ստիպողականութիւն ունի և ո՛չ իսկ յուզելի խնդրոյ կարեւորութիւնը: Երբ այդ ան լուծուի և ո՛չ իսկ յուզելի խնդրոյ կարեւորութիւնն չաւղէն չանցած՝ իբր՝ օրհարցումն՝ այս օրինաւորութեան շաւղէն չանցած՝ իբր՝ օրհարցումն ինքիս ներկայանայ, Ժողովոյ մեծագոյն մասին վրայ փոքրագոյն մասէն ներգործեալ բռնաբարութիւն մը եղած կ'ըլլայ:

Սրբազան նախագահը պայման մը դրաւ, այն ալ իրաւացի չի թուիր ինծի: Եթէ պատասխանը լսելէ ետքը Ժողովն ուզէ օրուան խնդիր ընել այդ հարցումը, Ժողովոյն բաւունքն է այն, և կարելի չէ արգելիլ:

Նոյնը. — Քիչ մը հանդարտութիւն և լռութիւն կը խնդրեմ Ժողովէդ, քիչ մը հանդարտութիւն, որ կարենամ լսելի ըլլալ, այլ ես իսկ այնքան յուզեալ եմ, որ չգիտեմ թէ պիտի կրնամ հասնիլ նպատակիս և ամբողջապէս տեսնել իմ զգացումն: Այսպիսի պարագայի մը մէջ ինծի բացատրել իմ զգացումն: Այսպիսի պարագայի մը մէջ ինծի մի միայն քաջակեր՝ Ձեր ներողամտութիւնը կրնայ ըլլալ և ես այս ներողամտութեան հետ կը խնդրեմ նաև որ այնու անկեղծութեամբ մտիկ ընէք իմ խօսքերս, որով կը բըլխին իմ սրտէս, զի վերջին պարտք մը կը նկատեմ ա՛նա Ազգին համար և այս Ժողովին համար, որոյ էութիւնը Ազգին էաւոր կան շահերէն մէկն է: Մեղքը ձեր վրայ, եթէ նորէն կաս-

կածի տակ զնէք խօսքերս, ինչպէս սովորութիւն ունին ոմանք:

Ես այսօր նոս ներկայ գտնուելուս շատ զղջացի մէկ կողմէն. պիտի չգայի, այլ միայն անոր համար եկայ, վասնզի այս երրորդը պիտի ըլլար բացակայութիւնս, և հետեւաբար հրաժարեալ պիտի համարուէի. չուզեցի Ազգին երեսօտիսան ըլլալու պատիւէն զրկուիլ:

Միւս կողմէն չպիտի զղջամ գալուս ու պիտի գոհանամ ալ, զի կը տեսնեմ որ այնպիսի ճամբու մը մէջ զնել կ'ուզեն Ժողովը, որուն ծայրը ելք չեմ տեսներ, այնպիսի պայմաններով և այն կերպով խնդիրն երեւան կուգայ, որ ինքնին անլուծելի ըլլալու բոլոր հանգամանքներն ունի, ու մէկ կողմէն ալ ամէն ջանք կ'ըլլայ կիրքերը զարթուցանելու, գրգռելու, այնպէս որ՝ ոչ ոք կրնայ հեռատեսիլ հետեւանքը: Եթէ կրցայ չարեաց առջևն առնել, այն ատեն ա՛նա չպիտի զղջամ գալուս և պիտի գոհանամ:

Անոնք որ յաւուցին նոս այս խնդիրը, վտանգ աշակեցին, այս անգամ, ես ըսեմ ձեզի, այդ վտանգը երեւակայական վտանգ մը չէ և ոչ խաբուսիկ հնարք մը, այլ իրական է վտանգը և մօտալուստ. վտանգ կայ ազգին խաղաղութեանը համար, վտանգ կայ սոյն ընդհանուր Ժողովին համար. ա՛նա անո՛ր համար է որ կը միջամտեմ այնպիսի խնդրոյ մը մէջ, ուր բնաւ յօժարութիւն չի պիտի ունենայի խօսելու:

Երեսօտիսան էֆէնտիսներ, գիտէ՞ք ինչ բան է այս խնդիրը, որ կը սպառնայ մեզի. — Ազգին մէջ իրաց վիճակին մէկ հետեւանքն է: Ազգին մէջ մէկ քանի շփոթութիւններ կան, որ քաղաքական պարագաներու արդիւնքն են: Այդ շփոթութիւնները ցաւալի են, բայց նոյնիսկ այն քաղաքական պարագաներու համար որոնց ակնարկեցի, փափագելի է, պէտք է որ աւ այժմ պահուին: Ա՛նա՛ ատոր համար ո՛չ Սրբազան կաթողիկոսը եպերելի է, որ կը դատապարտէ Վարչութեան ըրածը և Ընդհ. Ժողովոյ հաստատածը, ո՛չ Պատրիարքը եպերելի է, ո՛չ Բաղ. Ժողովը, ո՛չ Ընդհ. Ժողովը, ոչ

մինք ամենքս, որ մասնակից եղանք այս որոշման. (սխալ ըսի թէ մեկ, վասնզի ես ոչ մէկ կողմ և ոչ միւս կողմ մասնակցութիւն չունեցայ, այլ ատենապետ էի այն ատեն և միայն ատենապետութիւնս վարեցի), և ո՛չ Սորէն Սրբա-  
զանը, որ ինքնաբերաբար և այնքան եռանդեամբ ծափա-  
հարեց ընդ. ժողովոյ որոշումը: Եւ ինչո՞ւ, վասնզի ընդ. ժողովը էջմիածնայ եպիսկոպոսի մը Սոսյ Կաթողիկոսութեան  
ընտրութիւնը վաւերացնելով, և այն Կաթողիկոսին հետ հաս-  
տատուելիք յարաբերութեանց օրէնքն ընդունելու խոստով-  
նագիր, որ սկզբան ընդունելութիւնը կը նշանակէ նորըն-  
տիր Կաթողիկոսին կողմէն, մեծ քայլ մը կը կատարէր դէպի  
միութիւն:

Ընդ. ժողովոյ ըրածն աղէկ էր, այնուզի միութեան կը մօտենար, բայց Ս. Կաթողիկոսը իրաւունք ունէր զայն գէշ գտնելու, զի անի՝ միայն մօտենալը չէր կրնար ընդունիլ, այլ բացարձակապէս միութիւնը: Այս է իր պաշտօնին պա-  
հանջմունքը:

Սրբազան Կաթողիկոսին համար, ի՛նչպէս ինծի համար ալ, և զո՛ւ արդէն ըսած եմ ուրիշ անգամ սոյն ժողովին մէջ, Սոսյ Աթոռն էջմիածնայ հակառակ աթոռն է, ուրեմն Կաթողիկոսը չի կրնար հաւանիլ որ իր մէկ եպիսկոպոսն այդ աթոռին վրայ բազմի. ես ալ իր տեղն ըլլայի, չէի կրնար հաւանիլ: Բայց դուք ալ ուրիշ կերպ չէիք կրնար ընել, Սոսյ Կաթողիկոսութիւնը մինք չտանդծեցինք, և որովհետեւ չէինք կրնար բնաջինջ ընել, պէտք չէր որ բնաջինջ ընէինք. ըրինք, այսինքն ըրիք՝ ինչ որ կրցաք՝ զայն էջմիածնայ մօ-  
տեցնելու համար:

Եւ հիմա իբրեւ նշան մը այն վտանգին, որու վրայ կը խօսէի խօսքիս սկիզբը, ահա՛ Սրբազան Պատրիարքը կ'ըսէ թէ՛ որովհետեւ Սրբազան Կաթողիկոսն յուզեց այս խնդիրն և ընդ. ժողովոյ ատենը հանեցին, խնդիրը պիտի չթո-  
ղու մինչեւ որ լուծուի. և ե՞րբ պիտի լուծուի և ինչպէ՞ս պիտի լուծուի, ես չեմ կրնար հասկնալ, և ի՛նչ պիտի ընենք ուրեմն: Եւ միւս կողմէն մէկ քանի երեսփոխաններ կ'ըսեն

թէ՛ Սրբազան Կաթողիկոսն ամբաստանած ըլլալով պատրի-  
արքը, Բալ. Ժողովը ու ընդ. ժողովը, պատրիարք, Բալ. Ժողով և ընդ. ժողով դաշարեալ են մինչեւ որ դատուին:

Ոչ աս, ոչ ան, երեսփոխան էֆէնդիներ, առանց կրքի, առանց չափազանցութեան, խաղաղասիրութեան հոգեով նը-  
կատենք եղածը. Ս. Կաթողիկոսին կողմէն պաշտօնական բան մը եթէ կայ՝ առ Սրբազան Պատրիարքն ուղղած հեռա-  
գիրն է, ուրիշ գրութիւնքը պաշտօնական կերպարանք չու-  
նին մեզի համար, արդ, այդ հեռագիրը կը յանդիմանէ բայց չամբաստաներ, եղած ընտրութիւնը կը դատաւարատէ, բայց չի բեկաներ. և հեռագիրն ինք ալ կ'ըսէ թէ՛ ապագային զգու-  
շութեան համար գրուած է: Ազդարարութիւն մըն է, իրաւ-  
աստիկ ազդարարութիւն մը, այլ ոչ ամբաստանութիւն, ատենագրութեան մէջ անցընենք զայն, առձանագրենք, այլ անկէ անդին չանցնինք, ապա թէ ոչ նորէն կ'ըսեմ, ես չեմ հասկնար թէ՛ ո՛ւր երթալ կ'ուզէք. ես անպարտ եմ ասկէ ետքը իմ մասիս:

Նոյնը. — Օգտէն էֆ. ի խօսքերուն պէտք է պատասխա-  
նեմ, ո՛չ թէ ուշադրութենէս վրիպեցաւ այն կէտը՝ որու կ'ախնարկէ Օգտէն էֆ. այլ ուղեցի և ախտոցայ չչօչտիել ինչ որ գրգռական ըլլայ. իմ խօսքերուս նպատակը միմիայն խաղաղական էր, չուզեցի որ խառնեմ ինչ որ կիրք կրնար յարուցանել յիս և ուրիշներուն քով, վասն զի առանց կրքի չեմ կրնար ըլլալ ես ալ, կարելի՞ է որ, նոյն իսկ երբ ըսու-  
րովին խաղաղութեան հոգեով վառուած եմ, չզգամ սրամը-  
տութիւն այն բաներուն համար, զորոնք ես մօտեալ ալ ու-  
զեմ՝ դարձեալ միտքս կը ձգեն, երբ կը տեսնեմ որ դեռ կասկածներ կան, երբ կը տեսնեմ որ հոս ոմանց հնարած զրպարտութիւնները նոյն իսկ Ս. Կաթողիկոսին գրչին տակ արձագանգ կը գտնեն: Ս. Կաթողիկոսը իրաւունք չունի իր կոնդակին մէջ դաւ, խաբարաւանք բառերը ուրիշներէն լսե-  
լով յեղեցելու այնպիսի մարդոց համար՝ զորոնք չէ դատած ինք...

Բայց հոս կանգ կ'առնեմ, եթէ հանդարտութեան ու

անկողմնակալութեան օրինակը չեն տար անոնք, որոնց ամենէն աւելի կը պատկանի, եւ իսկ կուտամ իրենց անյիշաչարութեան օրինակը, և այս պարագային մէջ ալ անձնական խնդիր չեմ ուզեր խառնել արդէն կնճռոտ խնդրոյ մը մէջ, թէև եղած ակնարկութիւնքը ամենէն աւելի ինծի կը վերաբերին: Ղուք զիս կը գրգռէք, ևս ամենայն հանգարտութեամբ ու անկեղծութեամբ ձեր ուղած բացատրութիւնը կուտամ: Չէ՛, մեր մէջ չկայ այնպիսի քաղաքականութիւն մը, ո՛չ ևս և ո՛չ բարեկամներս, իմ գիտնալովս, չեն ունեցած այնպիսի քաղաքականութիւն մը. Սիւր բարձրացնելու և էջմիածինը նուաստացնելու քաղաքականութիւն մը կա: Ըստ մեզ այս խնդրոյն մէջ, աղբային քաղաքակա- նութիւն մը, անցեալ տարի սոյն Ընդհ. ժողովիս մէջ բացատրեցի զայն, իմ այն խոսքերուս մէջ ամփոփուած է իմ բոլոր քաղաքականութիւնս, մէկ խօսքով կը հասկցնեմ թէ ի՞նչ է չբարձրացնել Սոս ակտուր այլ և չվերցնել, հասարականել, պահել ժամանակ մը և օր մ՛ալ վերցնել, պահել, բարեկարգելով պահել, վասն զի գեւ երէկ այդ Աթոռն աշխարհի առջև գայթակղութիւն մը, խայտառակութիւն մը եղած էր Ազգին համար. ևս այդ գայթակղութիւնը, այդ խայտառակութիւնը չընդունողներէն եմ: Ո՞վ կ'ըսէ թէ մենք Սոս ակտուր ընդհանուր Հայոց կաթողիկոսութեան ակտուրն ել կ'ուզենք: Ի՞նչ որ ըսի, ա՛ն է միայն մեր քաղաքականութիւնը: Կ'ուզենք նաև որ յարաբերութիւնք հաստատուին էջմիածնայ ակտուրն հետ, բայց զիտէ՛ք ե՛րբ կրնան գործնական կերպով, Ազգին և աղբային միութեան օգտակար կերպով, գծուիլ և հաստատուիլ այդ յարաբերութիւնք. — երբ որ մեր Ս. Կաթողիկոսը, որ այնքան նախանձախնդիր է իր իրաւունքները պահանջելու մենէ, զիտնայ նաև ուրիշներէն ալ պահանջել զանոնք:

Օտեսն Գ. ԷՖ. — Վիճարանութեան գոցուած ԸԼԿԸ գիտնալով ճանդերձ, խօսք ուղեցի բուն խնդրոյն վրայ, միմիայն այն պատճառաւ որ նախորդ վիճարանութեանց չկրցայ ներկայ գտնուիլ, որուն պատճառը ներեցէ՛ք ինծի որ յայտնեմ, ասոր համար խօսք ուղեցի և դարձեալ կ'ուզեմ, ազատ ամէն տեսակ կիրքելէ, խօսելու համար, թերևս իմ ըսելիքներս օգուտ մը ընեն, եթէ ժողովն ուղէլսել, կը խօսիմ, և թէ ոչ, կը լռեմ:

Նոյնը. — Չէ՛ք ներեր Օգոսէն էՖ. որ խօսիմ, գոնէ չէ՛ք ներեր որ խօսելու կամք ունենալս քուէի դուրս:

Նոյնը. — Արդէն յայտարարութիւն ըրի որ եթէ բողոքով ԸԼԿԸ առաջարկութիւնս ետ պիտի առնէի: Ո՛չ միայն բողոքով եղաւ, այլ և զրկանք և ազդեցութիւն բաւերը արտասանուեցան: Կ'ընդունիմ որ վիճարանութիւն մը գոցուելէն ետև արգիլեալ է նորէն անոր վրայ խօսուի, թէև ուրիշ անգամներ բացառութիւն եղած է թերևս նոյն իսկ բողոքողաց կողմէ, բայց ևս չեմ պահանջեր այդ թույլտուութիւնը, միայն կը ջառիմ որ այս խնդրոյն վրայ իմ կարծիքներս չկրցի յայտնել: Ա՛լ խնդիրը սպառած է ինծի համար, և խօսք չունիմ:

Նոյնը. — Առաջարկուած քուէարկութեան ձևին վրայ պզտի բացատրութիւն մը կ'ուզեմ տալ: Ես չհասկցայ թէ վերաքննութեամբ ի՞նչ նշանակել կ'ուզուի: Սոյն Ընդհանուր ժողովը Սահմանադրութեան ինչ ինչ տրամադրութիւնները վերաքննելու և գործադրելու է, նոյնիսկ Քաղաքական ժողովոյ ընտրութեան յօդուածն ալ վերաքննած ու գործադրած է, չհասկցայ թէ Ընդհ. ժողովն իրեն կը վերապահէ ուղած ատենը փոխելու և վերաքննածը նորէն վերաքննելու. կ'ուզէ՞ որ վերադառնայ արդէն որոշուած խնդրոյն վրայ. եթէ այսպէս պիտի ԸԼԿԸ, այսօր հոս նիստ ընելու անգամ նեւելի չէ մեզ, որովհետև 66 երեսփոխան ներկայ է, մինչդեռ Սահմանադրութիւնը 71 երեսփոխանաց ներկայութիւնը կը պահանջէ:

Օսեան Գ. Էֆ. — Ուերեմն եղելութիւններն ուրանալու չափ համարձակութիւն ունիք, ով որ «ո՛չ» կ'ըսէ, եղելութիւնն ուրանալու համարձակութիւնն թող ունենայ :

Նոյնը. — Ծափահարութեան վրայ խօսք ունիմ : Ժողովուրդը երբ հոս ներկայ է, իրաւունք չունի ո՛չ հաւանութեան և ո՛չ անհաւանութեան ցոյցեր ընելու, իրաւունք չունի մեր կարծեաց և մեր քուէներուն վրայ ազդեցութիւն բանեցնելու, մենք պէտք է որ անկախ կերպով հոս շարժինք. եթէ ժողովուրդը կ'ուզէ որ իր երեսփոխաններն անկախ ու ազատ ըլլան իրենց խղճին առջեւ, պէտք չէ որ ծափահարէ և ազդեցութիւն բանեցնէ :

Նոյնը. — Կ'աւաչեմ, խօսքը չերկարենք, երկու խօսքով պիտի լինինք : Երբ ատենաբան մը այնպիսի բառ մը կ'արտասանէ որ ժողովոյն զգացումը վիրատուրէ և բողոքելու առիթ տայ, պարտաւոր է իր խօսքն ետ առնուլ. իսկ եթէ դժկամակի՛ ղիւանին պարտքն է զինքը ի կարգ հրաւիրել :

Ն Ի Ս Տ ԽԶ.

Օսեան Գ. Էֆ. — Ծնորձակալ եմ Օգոստին Էֆ.էն, որ երբ վիճաբանութիւնն իր սահմանէն դուրս ելած և մոլորած էր, բուն խնդրոյն վրայ բերաւ ամփոփեց : Ինձի համար բուն խնդիրն, որով այս ատենան զբաղած էր հինգ վեց նստերէ ի վեր, Քաղ. Ժողովոյ ընտրութեան եղանակն է : Եթէ այդ խնդիրը թեթեւ կ'երեւի ոմանց, ինձի համար շատ ծանրութիւն ունի : Զանազան առաջարկութիւն ընողներ կային, Ընդհ. Ժողովն հրաւիրեց զիրենք որ ժողով կազմեն և նախ իրենք իրենց մէջ համաձայնելու աշխատելով՝ առաջարկութիւններն, եթէ կարելի է, գոնէ երկուքի վերածեն : Ահա համաձայներ են և ասոր համար շնորձակալ եմ, բայց շնորհակալ չեմ իրենց ցուցած եղանակէն, որովհետեւ խնդիրը պարզ թուանշանի խնդրոյ վերածեր են : Քաղ. Ժողովոյ անդամաց թիւը 20էն 14ի իջուցեր են, եւ թէ լաւ հասկցայ,

այսու թուանշանի փոփոխութենէն զատ ուրիշ փոփոխութիւն մը չեն ըրած Սահմանադրութեան այս մասին տրամադրութեանց մէջ : Ես Սահմանադրութեան փոփոխութիւնը ուզողներէն չեմ մինչեւ վերաքննութեան ժամանակ. և եթէ որ արդէն ինչ ինչ փոփոխութեանց ենթարկուած չըլլար, ես փոփոխութիւն չէի առաջարկեր. սակայն թէ որ Սահմանադրութեան մէջ անդործադրելի բան մը կայ, թէ որ չփոթութեան և յուզման տեղի տուող բան մը կայ, Ազգային Վարչութեան կազմութեան եղանակն է ան :

Կ'ուզեմ այս խնդրոյն վրայ խօսել, եթէ ժողովը հաճի յօժարամիտ ունկնդրութիւն ընել ինձի, որով միայն պիտի քաջալերուիմ, առանց հիւանդ վիճակիս միտ գնելու, յատու վարել իմ պարտքս : Եւ հիւանդ ըլլալուս համար նստած խօսելուս ալ ներողութիւն կը խնդրեմ ժողովէդ, զարմանալով միանգամայն թէ ինչպէ՞ս Ատենապետ էֆէնտին զիտողութիւն չըրաւ. յուսամ թէ միւս անգամ ալ նոյն թոյլտրութիւնը կ'ընէ, մինչեւ որ փոքրիկ բեմ մը հաստատուի, ուրկէ միայն պիտի կրնամք ժողովի մը վայելուչ կերպով խօսել :

Պիտի աշխատիմ բացատրել խնդիրն եւ գործնական լուծում մը գտնել, որպէս զի այն խոչընդոտանքն՝ որ երբեմն պատահեցան վարչութեան քայլեց առջեւ՝ նորէն չպատահին. Այս խնդիրը չի լուծուիր մինչեւ որ չհասկնամք թէ ի՞նչ է Քաղ. Ժողովոյ պաշտօնը : Այս մասին թիւր կարծիքներ ունեցողներ կան. անոնց՝ որ կ'ըսեն թէ Քաղ. Ժողովը ազգին գործադիր իշխանութիւնը չէ, կ'ըսեմ, ուրեմն Քաղ. Ժողովը ոչինչ է. երբ ես ոչինչ է կ'ըսեմ՝ ձեր ամէնուրեք խղճմտանքը կը բողոքէ, գիտեմ, ու կ'աղաղակէ թէ ընդհակառակն ամենայն ինչ է : Եւ արդարեւ, Քաղ. Ժողովէն վեր Ս. Պատրիարքը կայ և անկէ վար Խորհուրդները. ըստ Սահմանադրութեան Պատրիարքը բան մը չի կրնար ընել առանց Քաղ. Ժողովին՝ որոյ նախագահն է միայն. և եթէ արտաքոյ կարգի ստիպողական պարագայի մէջ, այնպիսի պարագայի մէջ՝ ուր գործելու համար վաղուան չի

կրնար սպասել, իրաւունք ունի գործելու իր պատասխանատուութեանը ներքեւ. ան եւս հետեւեալ նիստին Քաղ. ժողովին վաւերացմանը ներկայացնելու պայմանով է: Խորհուրդները՝ Սահմանադրութիւնը բացայայտ կերպով կը արամադրէ որ՝ անոնք պիտի խորհին, այլ գործադրութիւնը դարձեալ Քաղ. ժողովին է: Այլ թէ գործադրեն իսկ, իւրենք չեն պատասխանատու լնոյ՛հ. ժողովոյ արջևե՛՛ այլ Քաղ. ժողովը, գործադիր իշխանութեան համար մի միայն Քաղ. ժողովն է. ինչպէ՛ս կը համարձակին ըսելու թէ՛ Քաղ. ժողովը գործադիր իշխանութիւնը չի ներկայացնիր: Եթէ ըսեն թէ՛ Սահմանադրութիւնը ուրիշ ակզ մըն ալ արամադրած է որ Ս. Պատրիարքն ազգին գործադիր իշխանութիւնը կը վարէ, այդ խաբէական ձեւ մըն է, մի՛ գարմանաք այսպէս ըսելուս, Բ. Դուռը գծկամակութիւն ունէ՛ք Պատրիարքէն զառ ուրիշ մէկը գործադիր իշխանութիւն ճանչելու, ինչպէ՛ս ուրիշ մէկ քանի կէտերու մէջ ալ, ուստի այսպիսի դարձուածքներու գիմած են Սահմանադրութեան խմբագիրները, զոր օրինակ՝ պատրիարքներուն էջմիածնայ եպս. գտնուելու պայմանին համար, ուր էջմիածին բոսը չէ գործածուած, բայց ամէ՛քը գիտեն թէ՛ այդ պայմանը կայ Սահմանադրութեան մէջ:

Հիմա կը մնայ քննել թէ Քաղ. ժողովը իրրեւ գործադիր իշխանութիւն, ինչպէ՛ս պէտք է ընտրել: Սահմանադրական ազգաց մէջ մէկ ընդհանուր գրութիւն մը կայ, այն է՝ կարելի եղածին չափ շատ մարդով խորնիլ էիջ մարդով գործել: Անոնց մէջ ալ երեսփոխանական ժողով մը կայ զոր Ս. Պաղը կ'ընտրէ եւ որ զԱզգը կը ներկայացնէ, երեսփոխանական ժողովոյն պաշտօնն է՝ օրէնք շինել եւ համար պանու վարչութիւնէն: Իսկ վարչութեան պաշտօնն է՝ ամէն ինչ կարգադրել եւ գործադրել: Ուրիշ ժողովներ կամ Խորհուրդներ ալ կան պաշտօնէին ենթարկեալ եւ ամէնտն վերուը Պետական էտրոնորը կայ, ասոնք միայն ծրագիր կը շինեն եւ կարծիք կուտան, կարծիք՝ զոր պաշտօնեան ուղէ՛ կ'ընդունի, ուղէ՛ չընդունիր:

Մեր մէջ Քաղ. ժողովը Ազգ. Վարչութիւնը ներկայացնելով եւ երեսփոխանութիւնն ալ այս մեր ժողովն ըլլալով, ի՛նչ պէտք է որ ընեմք: Եւրոպոյ մէջ երեսփոխանութիւնը ինք չընտրել գործադիր մարմինը, այլ վեհապետը կամ նախագահը ո՛վ որ է՝ այն կ'ընտրէ, իսկ երեսփոխանութիւնը անուղղակի կերպով ազդեցութիւն ունի այս ընտրութեան մէջ. երբ կը տեսնէ որ գործադիր պաշտօնեաներն իրեն համակարծիք չեն, զժողովութեան քուէով կը տապալէ զանոնք, այն ատեն թագաւորը կ'ամ հասարակապետութեան նախագահը կը պարտաւորի երեսփոխանութեան մածագոյն մասին կամացը համեմատ պաշտօնէութիւն մը կազմել, Մեզ առաջարկուած եղանակն ալ ուղղակի երեսփոխանութեան կը թողու Քաղ. ժողովոյն ընտրութիւնը, այս ճիշտ նախնի ձեւն է, թիւը կ'ուզէ 20 ըլլայ, կ'ուզէ 14, այդ փոքրիկ եւ աննշան պարագայ մըն է, եւ ինծի համար այդ երկու թիւերն ալ անտեղի են, աւելի բանաւոր թիւ մը գտնել կարելի էր, բայց նորէն կ'ըսեմ, ինծի համար շատ կարեւորութիւն չունի ատ, այդ խնդրոյն մէջ չեմ ուզեր մանել, ինծի համար ընտրութեան եղանակն է բուն եւ կարեւոր խնդիրը: Մասնաժողովը զայն երեսփոխանութեան ձգեր է, միայն թէ ընտրողական յանձնաժողով մը առաջարկեր է որ ընտրելուց բայց ցանկ մը տայ: Ընտրելուց ցանկ սալու իրաւունքն ունից կ'անուու այդ անոց մասնաժողովը. այս իրաւունքը կամ Ս. Պատրիարքինն է, կամ անոց կղած բանի մը եւ կամ ո՛չ մէկունն է: Հիմա զուք կ'ուզէք որ Ս. Պատրիարքն անտարրեր կենայ Քաղ. ժողովոյ ընտրութեան վրայ, կ'ուզէք որ ընտրութիւն այնպիսի մարդիկ՝ որոյ վրայ Ս. Պատրիարքը վստահութիւն չունի, ինչպէ՛ս կարելի է բմոնել թէ Ս. Պատրիարքը կրնայ այնպիսի մարդոց հետ ընթանալ, մանաւանդ երբ, ինչպէ՛ս քիչ մը առաջ ըսի, Պատրիարքին վրայ նիւթական պատասխանատուութիւն չկայ, այլ բարոյական պատասխանատուութիւն միայն կայ, որ ծանր է քան զՆիւթականն. երբ զժողովութիւնը կը սկսի, որ բարոյական պատասխանատուութեան հետեւանքն է, բարոյսպէս կը մեռնի,

ինչպէս կ'ուզէք որ զլուսն անտարրեր կենայ : Համամտութեան խնդիրն ուրիշ անգամ մըն ալ յուզուած է . գիտեմ որ աս ալ անկարելի է , բայց գոնէ միեւնոյն սկզբանց ծառայեն Քաղ . Ժողովոյ անդամները , ի բաց առնելով կարծեաց եւ սկզբանց միութիւնն . այնպիսի խնդիրներ կան՝ որ զլրենք կը վտրեն . երբ վարչութիւն մը կը կրէ գծաութեան սերմը , կը տկարանայ եւ իր ոյժը կը ջլատի . անկարող վարչութիւն մը աւելի կ'իջնայ հասարակաց կարծեաց առջեւ քան զօրաւոր վարչութիւն մը , այս ըսածս ընդհանուր փորձով հաստատուած բան մըն է : Հիմա ես ամէն անտեղութեանց առաջքն առնելու համար՝ շատ մտածելէս ետեւ թէ եւ ուրիշ յատուկ եղանակ մը չգտայ , բայց Մանամազրութեան վերաքննեալ ծրագիրը ձեռքս առի եւ տեսայ որ ան ամէն բան կը հաշտեցնէ , թէ՛ Ս . Պատրիարքին իրաւունքը , թէ՛ Լնդհ . Ժողովոյ ընտրութեան իրաւունքը եւ թէ՛ գործողութեանց ներդաշնակութիւնը միանգամայն կը յարգէ : Թէ եւ վերաքննեալ ծրագիրը ամենքդ ալ կարդացած էք , բայց դարձեալ ձեր յիշողութիւնը զարթուցանելու համար , աւասիկ կը կարգամ այն յօդուածներն՝ որ Քաղ . Ժողովոյ ընտրութեան կը վերաբերին :

«Յօդ . 22 . — Քաղ . Ժողովը պաշտօն ունի Ազգին քաղաքական գործերը հոգալու , որոնք են՝ անոր դաստիարակութիւնը , տնտեսութիւնը , համարակալութիւնն ու յարաբերութիւնը : Այս ժողովը 12 քաղաքագէտ աշխարհականներէ կը բաղկանայ , եւ իր պաշտօնին տարբեր ձեւերուն համեմատ՝ չորս տարբեր մասերու կամ յատուկ մասնախումբերու կը բաժնուի , իւրաքանչիւրը բաղկացեալ 3 «ձեռնհաս անդամներէ , որոցմէ մէկը մասնապետ է պատասխանատու եւ միւս երկուքն անոր խորհրդակից օգնականները : »

«Յօդ . 27 . — Յարաբերութեանց մասնապետը միանգամայն Քաղ . Ժողովին ատենապետն է . . . որուն ընտրութեանը համար Պատրիարքը՝ Լնդհ . Ժողովոյ զիւանին հետ խորհրդակցելով , սոյն պաշտօնին ձեռնհաս եւ յանձնառու

«անձանց եռանուն ցանկ մը կը ներկայացնէ , որոց մէջ ջշն քուէարկութեամբ կ'ընտրէ Լնդհ . Ժողովը զԱտենապետն : »

«Յօդ . 28 . — Մասնապետաց ընտրութեանը համար Պատրիարքն ու նորընտիր Ատենապետը Լնդհ . Ժողովոյ զիւանին հետ խորհրդակցելով , երեք մասնախումբերուն համար ձեռնհաս ու յանձնառու անձանց երեք ցանկ կը պատրաստեն , երեքն ալ եռանուն , եւ Լնդհ . Ժողովը երեք զատ քուէարկութեամբ կ'ընտրէ ամէն մէկ ցանկէ իւրաքանչիւր մասնապետը իր մակդրովը : »

«Յօդ . 29 . — Խորհրդակից օգնականաց ընտրութեանը համար չորս մասնապետները Պատրիարքին հետ խորհրդակցելով , մէյմէկ քառանուն ցանկ կը պատրաստեն իւրաքանչիւրը իր մասին համար , եւ Լնդհ . Ժողովը ընտրութեամբ կ'առնու ամէն մէկ ցանկէն երկու անուն , եւ ասով թէ՛ Քաղ . Ժողովոյ բաղկացումը եւ թէ՛ անոր մասնախումբերու բաժանումը միանգամայն կը լրացնէ : »

Ահա , ինչպէս կը տեսնէք , ծրագիրը չորս մասնախումբերու կը բաժնէ Քաղ . Ժողովը , ազգային գործոց չորս տեսակ տարբեր ձեւերու համեմատ , եւ անոնց իւրաքանչիւրին մէն մի ատենապետ կը սահմանէ , յարաբերութեանց մասնախումբին ատենապետը Քաղ . Ժողովոյ ընդհանուր ատենապետ զնելով : Այս ատենապետին համար Պատրիարքը ընտրելեաց ցանկ մը կուտայ , ետքն ալ մասնախումբերու ատենապետները սէկ մէկ ցանկ կը շինեն իրենց անդամակցաց համար : Ինձ համար ոյս եղանակէն աւելի բանաւոր եղանակ մը չի կրնար ըլլալ , թէ վարչութեան անցեալ դժուարութիւնքն եւ թէ՛ ապագան նկատելով կ'ըսեմ զայս . ես ալ ժամանակ մը գտնուեցայ վարչութեան մէջ , թէ եւ անկանոն վարչութեան մը մէջ , ուր ինձ ալ անհամաձայն ընկերք ընկերացած էին , ես գիտեմ թէ ի՞նչ սառապանք կրեցի մինչեւ որ ինձ համաձայն մարդիկ կրցի ընտրել : Մտածեցէ՛ք , միեւնոյն բանը , միեւնոյն վտանգը կը պատահի նաեւ Պատրիարքին :



Ես իմ կարծիքներս բացատրելով եւ ցաւելով որ չկրցի աւելի աղէկ խօսիլ, կ'աղաչեմ վերջապէս որ վերագրեալ յօդուածները նկատողութեան եւ Քաղ. Ժողովոյ ընտրութեան համար միմիայն ծրագրին ցուցած եղանակն ընդունիք, որ ամէնէն աւելի բանաւոր է եւ գործնական:

Նոյնը. — Երկու խօսքով նորէն հասկցնեմ: Իմ առաջարկութեանս նպատակը Ս. Պատրիարքին յանձնել չէր Քաղ. Ժողովոյ ընտրութիւնը, այլ Ընդհ. Ժողովով ընտրել Պատրիարքին եւ հետզհետէ ցուցուած մասնապետաց գործակցութեամբ, որպէս զի թէ՛ Ընդհ. Ժողովոյ եւ թէ՛ Ս. Պատրիարքին վստահութեան արժանաւոր անձինք ընտրուին: Իսկ երբ ասոյ հակառակ Պատրիարքին վստահութիւնը ժողովոյն վստահութեան չհանդիպել, Պատրիարքին անձը անտանելի կ'ըլլայ: Ահա աս էր իմ հասկցնելու զածս:

Նոյն. — Քուէէն առաջ խօսք ունիմ, կ'երեւի թէ իմ առաջարկութիւնս դարձեալ սխալ հասկցուեր է. առաջարկեցի որ Քաղ. Ժողովոյ բոլոր անդամներն ալ ընդհանուրէն ընտրուին, սա թէութեամբ որ՝ Ս. Պատրիարքին գործակցութիւնն ալ հետը դանուի: Այս կէտն որչափ որ կրցայ՝ բայտարեցի արդէն եւ պատճառները մէջ բերի. իմ կարծեօքս աս է ամէնէն բանաւոր եւ գործնական եղանակը: Բայց ես իմ կարծեօքս վրայ չեմ սնդեր, ետ ալ չեմ առնուր, զի կէս պատճառաբանութիւն մը անգամ չլսեցի, որ կարենար իմ համոզումս զոհել տար. թէեւ յամտուելու չափ յանձնապատանութիւն չունիմ, բայց պէտք է որ իմ առաջարկութիւնս ալ քուէի տրուի. եթէ չընդունուի եւ տարբեր կերպիւ ուրշուի, կը փափաքիմ որ այն որոշմամբ աւելի աղէկ տնօրինուին ազգին գործերը:

Ասեմապէս Օսեան Գ. ԷՖ. — Ընտրութեանց վաւերացումէն ետեւ՝ ըստ օրինի կը հարցուի թէ՛ ո՞ր գաւառակին երեսփոխանութիւնէն կ'ընդուննի:

Նոյնը. — Նախընթաց նիստի աստեղծութիւնը թէեւ խմբագրուած, սակայն տակաւին սպազրուած չըլլալուն, Դիւանը չէ կրցած երեսփոխանաց հաղորդել դայն, եւ չի կրնար ալ զիթ յատենի աստ կարգալ, վասն զի աստեղծութեանց ընթերցումը Ժողովոյ որոշման զէմ է: Արդարեւ ցանկալի էր որ մին կամ միւս կատարուէր, որպէս զի ի՞նչ որ անցեալ նիստին խօսուեցաւ Վեհ. Կաթողիկոսի կողմէն առթիւ, նորոգուէր մեր մտաց մէջ, բայց պիտի նորոգուէր ընդ նմին նաեւ ցանկալի ղէպքի մը յիշատակը:

Անցեալ անգամ երեսփոխաններէն մին՝ իր ընկերներէն միոյն զէմ վարձկան բառը գործածեր է, ասո՛վ ոչ միայն վիրաւորած է իր անդամակցին պատիւը, այլ եւ այդ բառը կը դուրս հանու Վեհ. Կաթողիկոսին ալ: Այս բառին համար բողոքոյ գիրք մը եկած է Պէկեան էՖ. ի կողմէ, որ դատաստան կը պահանջէ հոս կամ Յանձնաժողովի մը առջև:

Յայտնի է որ Ժողովոյ մէջ ըսուած այս տեսակ խօսքերուն դատաւորը Ժողովին Ատենապետն է, եւ նախորդ նիստին Ատենապետը՝ Փափազեան էՖ. ն հրաւիրեր է որ արտասանած բառը կշռէ եւ այնպէս գործածէ:

(Կը կարգայ բողոքագիրը)  
Վսեմ. Ատենապետ

Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ

Ընդհ. Ժողովոյ վերջին նիստին մէջ Ազգային երեսփոխաններէն Փափազեան Ստեփան էՖէնտին ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսին կողմանէ Ընդհ. Ժողովոյ ուղղեալ կոնդակին վրայ խօսած ասեմ, «Չեզի պէս վարձեալ երեսփոխաններ» ըսելով զիս եւ ինձ համարեալ երեսփոխանները թշնամանեց:

Ես իմ մասին չեմ հանդուրժեր այս անուանարկութեան , որ միանգամայն ծանր ամբաստանութիւն մըն է . եթէ իրօք ես վարձեալ եմ , Սահմանադրութեան 67րդ հատուածին տրամադրութեանը ոյժով՝ Ազգային երեսփոխանութեան պաշտօն վարելու իրաւունքէն զուրկ եմ : Կը բողոքեմ այդ անուանարկութեան դէմ , եւ կը պահանջեմ որ Փափազեան էֆէնտին հրաւիրուի պատկառելի ժողովոյ՝ ստեանը կամ էֆէնտին հրաւիրուի պատկառելի ժողովոյ՝ ստեանը կամ անկէ կազմեալ Յանձնաժողովոյ մը առջեւ իր ամբաստանութիւնը հաստատել :

Այս իմ իրաւացի բողոքս , Ատենապետ էֆ . , Ձեր միջնորդութեամբը կը ներկայացնեմ Լնդէ . ժողովոյ , խընդրելով որ ամէն խնդիրներէ առաջ նկատողութեան առնուի եւ ճշմարտութիւնը երեւան ելլէ , որպէս զի ըստ այնմ եւ ես , եթէ վերոյիշեալ ամբաստանութենէն արգարանամ , կարող ըլլամ ժողովոյ վիճարանութեանցը մասնակցելու , իսկ եթէ ամբաստանութիւնը հաստատուի , երեսփոխանական իրաւունքէս զրկուիմ :

Մնամ խորին յարգանք

Կ . Պոլիս

Ամենախոնարհ ծառայ Ազգ . երեսփոխան

Թ . Պէկ

24 Նոյմ . 1872

Ատենապետ էֆէնտին այս բողոքազիրը կարգալէն ետեւ՝ քուէի կը դնէ եւ ժողովը մէկ քուէի դէմ կ'ընդունի Ատենապետ էֆէնտի ըրած անօրէութիւնը եւ զործադրութիւնը :

Նոյնը . — Վեհ . Կաթողիկոսի կոնդակին վրայ բացուած վիճարանութիւնը քանի մը առաջարկութիւններ յերեւան բերած է , զորս հարկ համարեմ ժողովոյն յիշեցնել վիճարանութեան ընթացքը ուղղելու համար :

Առաջարկութիւն մը կայ , Վեհ . Կաթողիկոսի կողմէ ուղուած պատգամաւորները զրկելու , բայց ո՛չ լիազօր արտօնութեամբ . երկրորդ առաջարկութիւնն է որ ընտել պատգամաւորութիւն չզրկուի , այլ Վեհ . Կաթողիկոսին զրուիթէ Լնդէ . ժողովի ընթացքը Կիլիկիոյ Կաթողիկոսի ընտելութեան խնդրոյն մէջ բացառիկ է եւ ապագային չի կրնար օրինակ ըլլալ . երրորդ առաջարկութիւն մըն ալ եղած է որ խնդիրը նախապէս Յանձնաժողովոյ մը քննութեան յանձնուի . ուրիշ առաջարկութիւն մըն ալ եղեր է Փափազեան էֆէնտի կողմէ որ կաթողիկոսական յաւերթութեանց խնդրոյն համար Յանձնաժողով մը տրուի եւ անոր յանձնուի այս կոնդակի խնդիրն ալ :

Սահաւասիկ ստեք եւ եղած առաջարկութիւնները , որոնց վրայ կը հրաւիրեմ ժողովոյ ուշադրութիւնը :

Նոյնը . — Խնդիրը վիճարանութեան ներքեւ դրուած է , եւ եթէ զձեզ կը գրգոհն , դո՛ւք տուէք , Պէկեան էֆէնտի հանդաբաւութեան օրինակը : Բայց վայրկեան մը առաջ այնպիսի աղաղակաւ կը խօսէիք Փափազեան էֆ . ի դէմ , որ ընդ փաստ ալ մէջ բերէիք՝ չպիտի կրնայիք համոզել զիս թէ կիրքէ անմասն է :

Դուք ամենքդ ալ եթէ այս խնդիրը իրր սկզբան համոզման խնդիր մը կը նկատէք , մերկացէք ձեր կիրքերը եւ լրջօրէն եւ հանդարտութեամբ վիճարանեցէք :

Նոյն . — Խնդիրն այն աստիճանը հասաւ որ եթէ չլուծուի ալ , զէթ վերջ մը դանկ , խնչպէս կ'առաջարկեն , Վարչութեան Խան ժողովոյ կամ յատուկ Յանձնաժողովոյ մը յանձնուելով՝ որ զայն ի քննին տոնելով վերստին այս աստեանը բերէ : Բայց կը սեռեմ որ այս խնդիրը պիտի չլուծուի հեշտիւ , վասն զի եթէ մանուածոյ բան մը կայ , նոյն իսկ խնդիրն է : Կը տեսնէք թէ Լնդէ . ժողովոյ մէջ ո՛րքան անհամաձայնութիւն , եւ Ազգին մէջ ալ ո՛րքան կուսակցութիւն կայ այս խնդրոյն համար , որ քաղաքականութեան կողմեր ալ ունի իր մէջ : Այս կուսակցութիւնները զիրար կատկածանաց ներքեւ ձգած՝ ասելու թեմբ կը վարուին իրարու հետ , եւ խնդիրը կը յուզեն , կը բորբոքեն այնպէս որ Ազգին շահուց , Սուրբ Աթոսոյն օգտին եւ իրաւանց համաձայն զայն լուծելու համար ինչ պայմաններ որ պէտք են , կը պակսին մեր մէջ զժբախտաբար , եւ զմնղ աւելի զիրքէ մը մէջ կը թողուն : Փափաքուած լուծումը ձեռք բերելու

համար, մեր դադափարներն յատակել, լըջմտորէն վիճարա-  
 նիլ եւ համաձայնիլ հարկաւոր են, եւ այնուհետեւ եւ կը  
 կարծեմ թէ Վեհ. Կաթողիկոսին առաջարկած միջոցը, այն է  
 պատգամաւոր զրկել, էն լաւագոյն միջոցն է խնդրոյն եւ-  
 քին համակելու համար, վասն զի Վեհ. Կաթողիկոսն ինչ  
 աչքով որ կը նայի մեր գիրերուն վրայ, մանք ալ նոյն աչ-  
 քով նայինք իր կոնդակին վրայ, եւ այս կերպով կատարուած  
 գրակցութիւն մը հետզհետէ խնդիրը կը խրամատէ: Այո՛,  
 գրակցութիւն մը հետզհետէ խնդիրը կը խրամատէ: Այո՛,  
 երկու պատգամաւոր պէտք է զրկել, բայց նախ անհրաժեշտ  
 է դանել եւ որոշել թէ ինչ է այն սկզբունքը, զոր ժողովը  
 պատգամաւորաց պիտի յանձնարարէ: Դիւրին է մեզ այս  
 սկզբունքը որոշել մեր մէջ քանի մը ժամ խօսելով, հերիք է  
 որ կիրքերն ու հին ատելութիւնները մէկլլի նետուին, եւ  
 ուղղախօսութիւնը զմեզ առաջնորդէ:

Նս բացուած վիճարանութիւնը հասուն չեմ գտներ,  
 մտէ՛, վերլուծէ՛ զայն, եւ անա անձնականութեան վրայ  
 խօսք պիտի գտնես աւելի, քան թէ լոյս՝ խնդրոյն վրայ:  
 Որոշինք ուրեմն գումարման օր մը միայն այս կերպով զրա-  
 ղելու համար եւ ամենքնս ալ ներկայ դռնուիմք, թող ա-  
 մէն կարծիք իր ձայնը ունենայ, բայց ոչ իր կիրքը, եւ այս-  
 պէս խնդրոյն սկզբունքը որոշելով՝ յանձնարարենք նախ  
 ժողովոյ որ հիմնագիծ մը շինէ: Աս է իմ առաջարկութիւնս  
 եւ արդէն օրն ալ տարածամած է եւ ատեն չկայ հիմա վի-  
 ճարանութիւնը յառաջ տանելու:

Ն Ի Ս Տ Ծ Ե . 29 Դեկ . 1872

Օտեան Գ. ԷՖ. Ասեմապետ. — Եթէ Բաղ. Ժողովոյ ան-  
 դամներ կան հոս, կը հրաւիրեմ զիրենք որ մասնաւոր առող  
 մը նստին, որպէս զի երբ Բաղ. Ժողովոյ հետ խօսիլ հարկ  
 ըլլայ, զիտնանք թէ որո՞ւ կ'ուղղեմք մեր խօսքը:

Նոյնը. — Խնդիրն ամփոփեմք: Վեհ. Կաթողիկոսի  
 կոնդակին վրայ բացուած վիճարանութեամբ երկու առաջար-  
 կութիւն երեւան եկած է, մինն է նոյն վիճարանութիւնը

հոս յատենի Ընդհ. Ժողովոյ շարունակելով՝ պէտք եղած ու-  
 ըրողմը ալ, իսկ միւսն է, որու ես ալ յարեցայ, փոխա-  
 նակ վիճարանութիւնն՝ ուր փափուկ կէտեր ալ կը գտնուին,  
 հոս շարունակելու, յանձնել Ընդհ. Ժողովէն դուրս մարմ-  
 նոյ մը, այսինքն, կամ Աղբ. Վարչութեան նախն Ժողովոյ  
 կամ Յանձնաժողովոյ մը, որպէս զի նա պէտք եղած քննու-  
 թիւնն ընէ եւ խնդրոյն լուծման եղանակին վրայ առեկա-  
 ղիր մը ապա: Հիմա այս երկու առաջարկութիւնները քուէի  
 պիտի դնեմ եւ եթէ Ժողովը առաջին առաջարկութիւնն ըն-  
 գունելով, որսչէ այս կոնդակի խնդիրը իրմէ դուրս մարմնոյ  
 մը յանձնել, այն ատեն վիճարանութիւնը անմիջապէս գո-  
 ցելով՝ Ժողովէն բւրիջ քուէ մը պիտի խնդրեմ որոշելու հա-  
 մար թէ խնդիրը նմա՞ն Ժողովոյ պիտի յանձնուի թէ ոչ յա-  
 տուկ Յանձնաժողովոյ մը:

Նոյնը. — Հիմա խնդիրը նստն Ժողովոյ՞ պէտք է յանձ-  
 նել թէ ոչ Յանձնաժողովոյ մը, այս կէտին վրայ պիտի  
 խօսուի:

Արբ. այս խնդրոյն վրայ ո՞վ որ առեկալութիւն մը կամ  
 խորհրդածութիւն մը ունի, կրնայ Յանձնաժողովոյ անձամբ  
 կամ զրով հաղորդել, ինչպէս եւ ինքս մտադիր եմ ընել:  
 Յանձնաժողովոյ պաշտօնը պիտի ըլլայ Վեհ. Կաթողիկոսի  
 կողմէ եկած վերջին կոնդակին վրայ վիճարանիլ, եւ մտա-  
 ծել թէ այս խնդրոյն լուծման նկատմամբ ինչ ընթացք ար-  
 ժան է բռնել, եւ թէ՛ Վեհ. Կաթողիկոսին ինչ պատաս-  
 խան տալ հարկաւոր է, եւ հետեւապէս այս խնդրոյն վրայ  
 առեկալողի մը բերել Ընդհ. Ժողովոյն: Կաթողիկոսական  
 յարաբերութեանց խնդիրն ալ սոյն Յանձնաժողովոյ պաշտօ-  
 նին մէկ մասը կը համարուի, բայց այս ետքի խնդիր է:

Նոյնը. — Առաջարկուած թիւը յարմար կը գտնեմ,  
 Յանձնաժողովը կէս առ կէս եկեղեցական եւ աշխարհական  
 անդամներէ կրնայ բաղկանալ. կը հարցնեմ հիմա թէ Ժո-  
 ղովը ղրտողութիւն ունի՞ այս թուոյն դէմ, կը հարցնեմ թէ  
 ինչ կերպով կ'ուզէ ընտրութիւնը կատարել, գաղտնի՞  
 քուէարկութեամբ թէ ոչ զիւանին միջոցաւ:

Նոյնը . — Օրուան կարգին մէջ կայ նաև կաթողիկոսական եւ պատրիարքական յարաբերութեանց խնդիրը , զոր ժողովը նկատողութեան առնելու համար՝ կարծեմ քիչ մը սպասելու է որ նորընտիր Յանձնաժողովն իր գործը յառաջ տանի :

Նոյնը . — Արդէն ընդդիմախօս կողմէն իփեքճեան էֆէնտին Յանձնաժողովոյ պիտի ներկայանայ իր դիտողութիւններն յայտնելու , ինչպէս նաև ամէն անոնք որ տեղեկութիւն մը , խորհուրդ մը ունին պիտի կրնան Յանձնաժողովոյ հաղորդել , հետեւապէս Յանձնաժողովոյ համար միջոցներ չեն պահար խնդիրը պարզելու , իսկ յարաբերութեանց խնդրոյն նկատմամբ Այվաղեան էֆէնտի ըսած դիտողութեան պատասխանը՝ Դիւանը յաջորդ նիստին կրնայ տալ , վասն զի հարկ է նախ ատենադրութիւններն աչքէ անցնելով՝ տեղեկանալ թէ ինչ եղանակաւ յարաբերութեանց խնդիրն օրուան կարգն է անցեր :

Նոյն . — Երուսաղիմայ Սուրբ Յակոբայ վանոց մէջ Հատինաց պատարագելու խնդրոյն նկատմամբ՝ հարցում մը կայ եղած ինն երեսփոխանաց կողմէ , եւ անկէ ի վեր եօթն ամիս անցած է եւ դեռ հարցումը կը մնայ օրուան կարգին մէջ : Ոչ եւս այս խնդիրը կրնայ մնալ այսպէս , եւ հարկ է որ օրուան կարգէն սրբուի : Ահաւասիկ հարցումը :

Մեծ . Ատենագետ Աղղ . Ընդհ . Ժողովոյ

Ս . Երուսաղիմայ վէճի տակ եղած մեր Աղղին սեպհական սուրբ տեղեաց մէջ լատինացեոց պատարագելու խնդրոյն վրայօք ասկէց առաջ լսուած էր թէ Պատրիարքարանէն հեռագիր քաշուեր է առ Ամին . Ս . Պատրիարքն Երուսաղիմայ որպէս զի լատինացեոց թոյտուութիւն լինի պատարագելու :

Այս լուրն ստոյգ է , եւ եթէ ստոյգ է , ինչ պատճառաւ եւ որո՞յ տնօրէնութեամբ ի գործ դրուած է . կը հարցնենք հրաժարեալ Քաղ . Ժողովոյ Դիւանին , եւ գոհացուցիչ պատասխանը ստիպողաբար կը խնդրենք :

(Ստորագրութիւնք)

Ասեմապետ . — (Առ Երուսաղեան էֆ . ուղղելով խօսքը) Մահմանադրական կառավարութեանց մէջ՝ երբ վարչութիւն մը համարատուութիւն կ'ընէ առանց դատապարտութեան վճիռ ընդունելու , իր գործը վերջացած է :

Պէկեան էֆէնտի դիտողութիւնը անպատճառ նախորդ Քաղ . Ժողովին կողմէ ատանկ հեռագիր մը քաշուած ըլլալուն վրայ չէ : Եւ քանի որ յայտնի է թէ Ձեր պաշտօնատարութեան օրով այդ դէպքը չէ տեղի ունեցեր , դուք հիմա օտար էք այս գործին մէջ : Ընդհ . Ժողովը ձեզի հետ գործ չունի , այլ Սրբազան նախագահին ուղղեալ է հարցումը , ուստի մի՛ խճողէք խնդիրը :

Նոյնը . — (Հանդարտեցնելով ժողովը) Երեսփոխան էֆէնտիներ , քիչ մըն ալ ձեր ատենապետը մտիկ ըրէք :

Դո՛ւք , Սորէն Հայրսուրբ , իրաւունք չունիք բնաւ հոս իրր Երուսաղիմայ պատրիարքական փոխանորդ բացատրութիւններ տալու այնպիսի խնդրոյ վրայ , զոր նախագահ Սրբազանը գաղտնի պահել ուզելով՝ զլացաւ . դո՛սիակ նիստ չեղած՝ բացատրութիւն տալու եւ ժողովն ալ չպահանջեց այդ բացատրութիւնը : Մենք չենք ուզեր հիմա դիտնալ թէ այդ տեսակ հեռագիր մը քաշուած է թէ ոչ , եւ աւելորդ է այս մասին խօսքը աւելի երկարել :

Սրբազան Հայր , որքան ալ մեծ ըլլայ մեր ամէնուս յարգանքը ձեր անձին եւ ձեր պաշտօնին վրայ , զոր իրր Հայր հասարակաց կը վարէք , այսու ամենայնիւ Ընդհ . Ժողովը չի կրնար ընդունիլ որ իրմէ վեր իրաւունք մը դո՛սուի վարչութեան մէջ : Երեսփոխանական ժողովը իրաւունք ունի գործադիր պաշտօնէութեան այս կամ այն խնդրոյն վրայ հարցում ուղղելու եւ բացատրութիւն ստանալու , իսկ Մահմանադրութեան մէջ ուրիշ տրամադրութիւն մըն ալ կայ որ ընդհանուր կերպով իրաւունք չի տար Պատրիարքին ինքնին գործելու . եւ երբ ստիպողական պարագայի համար առանձին տնօրէնութիւն ընելու իրաւունքը կուտայ , յաջորդ նիստին մէջ Քաղ . Ժողովոյ ներկայացնելու պայմանաւ կուտայ զայն : Արդ քանի որ Քաղ . Ժողովոյ հրաժարուելէն

ետեւ՝ այդ հեռագրին անօրէնութիւնը անզի ունեցեր է, պէտք է որ արդի Քաղ. Ժողովոյ յառաջիկայ նիստին ներկայացնէք զայն, եւ այն ատեն հարկ չի մնար Ընդհ. Ժողովոյ դռնփակ նիստ գումարելու :

Երեսօրիսան էֆէնտիներ, ներկեցէք որ քիչ մըն ալ ձեզի յիշեցնեմ այն յարգանքը՝ զոր Ձեր ներսէն կը զգաք, զիտեմ, առ զուսն ազգին եւ զոր պէտք է քիչ մըն ալ դորձքով ցցնէք : Ես Ձեր կողմէն խօսեցայ քիչ մը առաջ Նախագահ Սրբազանին հետ, որու Նորին Սրբազնութիւնը պատասխան պիտի տար, կրնայի նորէն ձեր կողմէն պատասխանել : Ինչո՞ւ դուք կ'ընդմիջէք զինքը եւ ազնուի կը յարուցանէք :

Նոյնը. — Այս բոլոր յուզմունքը, այնպէս կը տեսնեմ ես, որ սխալ հասկացողութեան մը արդիւնքն է, կ'ըսէք Ս. Հայր, թէ օրինաց շքանակէն դուրս ելելու յայտարարութիւն ըրած էք : Ես ներկայ էի երբ Մայր Եկեղեցւոյ մէջ ուխտեցիք Սահմանադրութեան վրայ. ներկայ գտնուեցայ ձեր քարոզին ալ. եթէ յայտարարութիւն ըրած ըլլալէք որ Սահմանադրութեան շքանակէն դուրս պիտի ելլէք, նախ եւ առաջ ես կը բողոքեի, բայց այդպիսի խօսք չըրէք, ձեր բառն ան է որ, Սահմանադրութեան գրին չկատուիք, եւ ուխտեցիք Սահմանադրութեան սուրբ ու սկզբունքներուն վրայ : Սահմանադրութեան գիրը միշտ դորձադրելին անկարելի եղած է, եւ ինչ ինչ կէտեր վերաքննուեր են, բայց սկզբունքներն անփոփոխ մնացած են : Պատրիարքին անկախօրէն չգործելն ալ նոյն իսկ օրէնքին ողին է, հետեւաբար ձեր Սրբազնութիւնը ոչ թէ ըստ գրոյն, այլ ըստ սուրբ Սահմանադրութեան պարտաւոր է մեկնել Սղգ. վարչութեան թէ՛ այն հեռագիրը քաշուած է թէ՛ սչ, եւ թէ ի՞նչ պատճառներով, ասի ձեր պարտաւորութիւնն է ըստ Սահմանադրութեան, եւ չէք կրնար չկատարել զայն :

Ձեր անկեղծութիւնը, Սրբազան Հայր, ծանօթ է մեհուրս, ձեր բերնէն ելած խօսքը ինչ ալ ըլլայ, ձեր հողին եւ ձեր սիրտը գիտեմք որ ուղիւ է. մէկ բան մը միայն կը

մնայ ընել, այն է յառաիկայ նիստին Խառն Ժողովին բացատրել իրողութիւնը եւ խնդիրը կը վերջանայ :

Նոյն. — Երեսօրիսան էֆէնտիներ, ատեանը չպիտի վերջացնեմ առանց ամենակարեւոր խնդրոյ մը վրայ ձեր ուշադրութիւնը նորէն հրաւրելու : Գիտէք որ Սահմանադրութեան վերաքննութեան խնդրոյն համար այս ժողովը բացուած է եւ անա ԾՊ. ԲԳ նիստը հասանք ու գեռ մեր բուն պաշտօնին չձեռնարկեցինք, գրեթէ Սահմանադրութեան վերաքննութիւնը թէ հարկաւոր ըլլայ, թէ ոչ, այս երկարաձգութիւնը անպատեհ է եւ ամօթ մեզ ամէնուս : Այս մասին տասնրեօթը երեսօրիսանք առաջարկութիւն մը ըրած են ուրիշ նիստի մը մէջ, զոր պիտի կարգամ :

Ն Ի Ս Տ Ծ Է . 16 Փետր. 1873

Ասեմապիտ Օսեան Գ. ԷՖ. — Կը յիշէք անշուշտ, երեսօրիսան էֆէնտիներ, որ ժողովը նախօրոյ նիստին մէջ որոշեց Սահմանադրութեան վերաքննիչ Յանձնաժողովը կազմել ըստ Սահմանադրութեան, քսանէն տասներկու քի զեղչելով միայն անոնց անդամոց թիւը. այս որոշման համեմատ՝ Ընդհ. Ժողովոյ մէջէն չէք հողի, Կրօնական եւ Քաղաքական ժողովներէն երկերկու անդամ, եւ չորս տեսուչ խորհուրդներէն ալ մէկ մէկ անդամ պիտի ընտրուին, ընդամէնը 12 հոգի : Գիտե՞ք Կրօնական եւ Քաղաքական ժողովոյ, եւ տեսուչ խորհուրդոց անդամներուն մէկ ցուցակը պատրաստել տուաւ երեսօրիսան էֆ. ներսն քուէ առաւ զիւրութեան համար : Եւ թէպէտ ժողովը տակաւին իր մեծագոյն մասը չգտաւ, սակայն օրինական թիւն ամբողջանալու խիստ մօտ է, եւ արդեւ մը չկայ որ երեսօրիսանք այժմէն նոյն ցուցակին նայելով՝ իրենց քուէները պատրաստելու զբաղին :

Ահաւաստիկ նոյն յօդուածը.

Յօդ. 1. ԲԳ. Մեծագոյն մասի գոյացումը ներկայութեան տուժարէն կը ստուգուի, յարմէհեմէ ժողովոյն ա-

մէն որոշումն օրինաւոր է, թէև երեսփոխանաց մէկ մասն անձնապէս հեռացած ըլլայ ժողովարանէն : »

Կը հրաւիրեմ ժողովակահաները այ՛ յօգուածին վրայ իրենց ղիտողութիւնն ընելու, եթէ ունին :

Ասեցապէս. — Կանոնադրին 11րդ յօդուածը կը արամադրէ որ երբ ժողովը միանգամ մեծագոյն մաս գտնէ եւ այնուհետեւ հետզհետէ այս թիւը պակասելով մնացորդ երեսփոխանները փոքր մաս մը կը կազմեն, տակաւին օրինաւոր համարուն անոնց կողմէ արուած ամէն որոշումներն, վասն զի անգամ մը մեծագոյն մաս դոյացաւ արդէն. իսկ Պէկեան էֆէնտին մնացորդ երեսփոխանաց թիւը կրնայ մինչև 5 ի ըջնել, կըսէ, եւ անտեղի գտնելով զայս՝ սահման մը կ'առաջարկէ զնել մնացորդ երեսփոխանաց թուոյն որոշում ընելու համար :

Նոյնը. — Եւրոպա՝ Սահմանադրական ժողովներուն մէջ քուէի ատեն թիւ մը կը վնասուի եւ իմ գիտցածս՝ այն թիւը մեծագոյն մասն է, մենք եթէ այդ զրութեան ծառայենք, կը վախցուի որ Բնդ՝ ժողովը անդործութեան կը դատապարտուի :

Նոյնը. — Երեսփոխան էֆէնտիներ, նախ խնդիրը աղէկ մը բացատրեմ ձեզ, որպէս զի եթէ չհասկցող կայ՝ լուսաւորուի : Գիտէ՞ք որ որոշեալ ժամուն ատենը կը բացուի ներկայ երեսփոխաններով եւ որոշում կը արուի մեծագոյն մասով : Երբ ներկայութեան տուժարին մէջ մեծագոյն մասի ստորագրութիւնը նշանակուած կը տեսնենք, ժողովոյ ամէն որոշումներն օրինաւոր կը համարենք, նոյն իսկ եթէ ի վերջէ երեսփոխաններէն մեկնողներ ալ ըլլան եւ մեծագոյն մասի թիւը պակսի : Այսպէս կը արամադրէ նաև ատենական կանոնաց ծրագրին 11րդ յօդուածը : Բայց Պէկեան էֆէնտի նոնաց ծրագրին 11րդ յօդուածը, սահման մը նշանակուած զիտել տուաւ որ բնաւ թիւ մը, սահման մը նշանակուած է եւ կրնայ երեսփոխանաց թիւը հետզհետէ նուազելով չէ եւ կրնայ երեսփոխանաց թիւը հետզհետէ նուազելով մինչև 5 հոգի մնալ ժողովին մէջ եւ որոշում արուի. անտեղութիւն կը համարի զայս եւ սահման մը զնել կ'առաջարկէ :

Այս սահմանին մասին երկու առաջարկութիւն, մին Պէկեան էֆ. ի կողմէ, որ է՝ երբ մեծագոյն մասին կէսէն մին աւելին ներկայ գտնուի, եղած որոշումն օրինաւոր համարուի, քսկ եթէ պակաս՝ ոչ : Օրինակի համար, ըսինք թէ 54 թիւը ընտրեալ երեսփոխանաց մեծագոյն մասը կը կազմէ, եւ այս թիւը գոյացած ատեն ամէն որոշում օրինաւոր է, թէ որ այս 54 երեսփոխաններէն մինչև 26ը մեկնած լինին, եւ 28ը ներկայ գտնուի՝ այն ատեն դարձեալ ժողովը պիտի կրնայ որոշում ընել եւ իր որոշումն օրինաւոր համարուի, բայց երբ 28ը մեկնած լինի, եւ 26ը միայն ներկայ գտնուի այն ատեն օրինաւոր չպիտի համարուի ժողովոյ որոշումը : Իսկ Մարդարեան էֆ. քիչ կը գտնէ այս թիւը եւ կ'առաջարկէ որ երեք մասին երկուքը գէթ ներկայ գտնուի որոշում ընելու համար : Հիմա այս առաջարկութիւններն քուէի զնելու համար՝ կը խնդրեմ առաջարկողներէն որ գրով ներկայացնեն :

Նոյնը. — Նախագահ Սրբազանը կ'առաջարկէ ատենական կանոնադիրն ամբողջ Սահմանադրութեան վերաքննիչ յանձնաժողովին յանձնել, բայց ես եւ ուրիշներ այնպէս կարծեցինք որ միայն 11րդ յօդուածը Յանձնաժողովին զրկել կ'ուզէ, որովհետեւ նոյն յօդուածը սկզբան խնդիր մ'է, մեծագոյն մասի օրինաւորութիւնը արամադրող խնդիր մըն է զիւանական խնդիրներէ բարձր՝ եւ Սահմանադրութեան մէջ իր որոշումն առնելու կարօտ : Իսկ կանոնադրին միւս յօդուածները զիւանական պարագաներու վերաբերող մանր մունր բաներ են եւ Սահմանադրութեանը մէջ չեն կրնար անցնիլ : Մեր վրայէն բեռը նետելու համար շատ շատ անոնք ալ Յանձնաժողովոյ պիտի յանձնեմք, բայց ասով ալ դարձեալ մեր նպատակին չպիտի կրնամք հասնիլ, վասն զի Յանձնաժողովին ծրագիրը նորէն հոս պիտի գայ եւ յօդուած առ յօդուած լիճարհուութեան ենթարկուի, ուստի ես կ'առաջարկեմ միայն 11րդ յօդուածը զրկել Յանձնաժողովին, իսկ միւսներուն քննութիւնը շարունակել հոս :

Ասեցապէս. — Հիմա քանի որ ժողովն Աղթամարայ կա-

թողիկոսական խնդրոյն առաջնութիւն տուաւ , յաջորդ նիստին առ՛նական կանոններէն առաջ՝ զայն ի քնին կ'առնուէր . այլ քննութիւնը եկեղեցական բարձրատիճան պաշտօնէի մը վերաբերեալ ըլլալով՝ կ'առաջարկեմ որ յաջորդ նիստը դանփակ ըլլայ :

Ն Ի Ս Տ Ծ Ը . 2 Mars 1873

Ասեմապետ Գ . ԷՖ . Օսեան . — Ժողովը կը յիշէ որ անցեալ նիստին Սահմանադրութեան վերաբննչ Յանձնաժողովոյ ընտրութեան համար քուէարկութիւն կատարուեցաւ , եւ քուէհամարին արդիւնքը նամակաւ բոլոր երեսփոխանաց հաղորդուեցաւ , քննչաց ստորագրութեամբ դիւանին եկած տեղեկագրին նայելով , արդէն Յանձնաժողովոյ վեց անդամոց համար բացարձակ առաւելութիւն գոյացած եւ ընտրուած են :

Նոյնը . — Ժողովը արդէն ղիտէ որ այսօրուան նիստին ներկայանալի բուն խնդիրը Աղթամարայ կաթողիկոսին խնդիրն է , որոյ համար նաեւ դանփակ ընել որոշուած է այս նիստը , խնդիրը ծանր է իր ամէն պարագաներով եւ լուրջ խորհրդածութեան կարօտ , առաւել քան երբեք պէտք ունինք կանոնաւոր վիճարանութեան : Կը հրաւիրեմ խօսք ուղղները՝ որ անունին նշանակել տան զիսանին մէջ , որպէս զի կարգաւ վիճարանին :

Նոյնը . — Ըսի արդէն թէ Գիււանը կը ստանձնէ Պէկեան Էֆէնտիի հարցումը : Գործադիր իշխանութիւնը տեղեկագիր մը բերած է , այս տեղեկագրին մէջ հետեւութիւն մը , որոշում մը չտեսնուիր , միայն Ընդհանուր Ժողովոյ կամքը կը վիտտուի , բայց Ընդհ . Ժողովը իր կամքը շատոնց յայտնելու համար Ժողովոյ վերաքննութեան յանձնել է եւ խնդիրը գործադիր իշխանութիւնը իր այս տեղեկագրին խնդիրը . գործադիր իշխանութիւնը իր այս տեղեկագրին մէջ պէտք է բացատրէր Ընդհ . Ժողովոյ իշխալ որոշման անգործադրելի մնալուն պատճառները կրնան մի բարձուիլ

եւ ինչպէ՞ս . տեղեկագրին այս կէտերուն վրայ լուծիւն կը պահէ , ուստի գործադիր իշխանութիւնը պէտք է որ լուսաբանէ զանոնք :

Նոյնը . — Աղթամարցոց կողմէն Ընդհ . Ժողովոյ հանրադիր մը մատուցուել է , եւ Սահմանադր աղէկ ըսեր է թէ գործադիր իշխանութեան տեղեկագրովը պէտք է Ժողովին զայ , սակայն այս տեղեկագրը նոյն հանրագրին վրայ հիմնուած չէ , անոր խօսքը բնաւ չկայ :

Ասեմապետ . — Խնդիրն ինքնին վիճարանութեան կը մտնէ , սակայն ուղղութիւն մը պէտք է տալ : Վիճարանելի կէտը նախ եւ առաջ սա է , Ընդհանուր Ժողովը՝ 1870 Յունվար 23ի նիստին մէջ Աղթամարայ խնդիրը համազումար Ժողովին յանձնելու որոշում բրեր է , այս որոշումը պիտի գործադրուի թէ ոչ : Ահա սա է վիճարանելի բուն կէտը , եւ ասոր վրայ վիճարանութիւնը բացուած կը հրատարակեմ :

Նոյնը . — Աւելի իբր Ատեմապետ քան իբր երեսփոխան մէկ քանի խօսք կ'ուզեմ ընել : — Ընդհանուր Ժողովոյն նախորդ որոշումն այս խնդիրը Համազումար Ժողովոյ դարձնելու մասին՝ երբ սպարինաւոր կը հրատարակեն Ներսիսի օրէնքներէն օրինակ բերելով , իբրեւ Ատեմապետ իմ պարտքս է յայտնել որ Ընդհանուր Ժողովոյ այդ որոշումն սպորինաւոր չէ : Ոչ թէ օրինակ բերելու գրութիւնն անընդունելի կը դատեմ , արդարութիւնն ամէն տեղ մ'իւնենոյն է կամ անանկ պէտք է ըլլայ : Հետեւաբար ըստ իս Խորէն Սրբազան լա՛ւ ըրաւ որ Ներսիսի օրէնքները վկայութեան կոչեց , Ներսիսի քաղաքակրթութեանն աւելի կատարեալ չէ մերինը , բայց Ներսիսի օրինաց տրամադրութիւնները դէմ չեն գոր , այլ կը հաստատեն մեր բրածը , զատի մը վերաքննութիւնը միւնենոյն ատեանի մէջ ըստ օրինի կ'ըլլայ մէկ քանի պարագաներու մէջ , երբ ամբաստանելոյն բացակայութեանը տրուած է առաջին վճիռը , երբ առաջին անգամ այնպիսի սխալմունք կամ մոռացմունք տղղի ունեցած են՝ քը խնդրոյն վերաքննութիւնը կը հարկադրեն : Գալով ու-

րիչ կէտի մը որ յառաջ բերուեցաւ, իրաւ է որ Սահմանադրութիւնը կը նախաատեսէ կրօնական խնդիրները Մայր Աթոռին յանձնելու պէտքը, բայց ե՞րբ. — երբոր Համագումար ժողովն իր ձեռնհասութենէն վեր դատէ խնդիրները. ուրեմն Մայր Աթոռին չենք կրնար յանձնել Ազգամարտի խնդիրն՝ առանց Համագումար ժողովոյ որոշմանը: Ահա այս երկու կէտն էր որ կ'ուզէի ուզղիլ:

Նիստ ԿԳ. 6 Յունիս 1873 Օտեան Գրիգոր Էֆէնտի Ստեփանյեան:

Ասեմապետ. — Կը կրկնեմ եւ այս ասպարային համար որ ժողովներու մէջ սովորութիւնն եւ իրաւունքը եղած հարցումն առ Վարչութիւնն ուղղեալ հարցումն է. դիւանին հարցում չ'ուղղուիր, զի դիւանն ինչ որ կ'ընէ՝ ժողովով կ'ընէ եւ այնպէս պէտք է որ ընէ. դիւանը ժողովէն դուրս իշխանութիւն չէ եւ ժողովէն դուրս գործողութեան չըջանակ մը չունի որ հսկողութեան պէտք ըլլաւ Ընդհանուր ժողովին կողմէն: Իսկ այդ ձեր յարուցած մասնաւոր խնդրոյն գալով կը խնդրեմ որ Ա. Ստեփանյեանի Էֆէնտիին գալուն սպասէք, որն որ այսօր բացակայ է ժողովէն, զի ես անտեղեակ եմ եւ օրուան կարգի խնդիրները յառաջ քան զհրատարակութիւնն անտած չեմ գրեթէ բնաւ: Եւ այս երկու պատճառի համար, մէկը զոր ըսի արդէն, զի օրուան կարգը ժողովին մէջ կ'որոշուի ընդհանրապէս, եւ միւսը՝ զի ես ժողովին յայտնած եմ արդէն թէ ժողովէն դուրս Ստեփանյեանութեան պաշտօն չեմ վարեր, եւ ժողովին ալ ամէն անգամ ներկայ չեմ գտնուիր: Պակասութիւնն մըն է աս, բայց ես երկու տարիէ կ'ազաչեմ կը պաշտարիմ ձեզի որ այս պաշտօնն ուտարիէ կ'ազաչեմ կը պաշտարիմ ձեզի որ այս պաշտօնն ուտարիէ յանձնէք. քանի ա՛րգամ հրաժարեցայ, նորոք ընտրութիւն ալ եղաւ Ստեփանյեանի, բայց հրաժարականներս չընդունեցիք եւ զիս նորէն ընտրեցիք. հիմա որ նորէն ընտրութիւն կ'ըլլայ, նորէն իմ անունս կը տեսնեմ համեմատական ընտրութեան մէջ: Բայց այս անգամ որոշած եմ անպատճառ չընդունիլ, որպէս զի կարենամ իմ երեսփոխանի պաշտօնս վարել եւ կը յուսամ իբրեւ այն՝ մէկ քանի ծապաշտօնս վարել եւ կը յուսամ իբրեւ այն՝ մէկ քանի ծապաշտօնս վարել:

ապաւթիւն մատուցանել, Գո՛հ եմ որ ձեր հարցումն ինձի աւելի տուաւ քուէարկութենէն առաջ այս յայտարարութիւնն ընելու. իսկ հարցման պատասխանը նորէն կը մնայ Ա. Ստեփանյեանի Էֆէնտիին գալստեան:

Նոյնը. — Հրաժարող Էֆէնտիներուն առած բացարարութենէն կը հասկցուի որ ինչ ինչ խնդրոց մէջ կարծեաց սարքերութիւնն պատահելով իրենք փոքրագոյն մաս մնացեր են Քաղաքական ժողովոյ մէջ, ուստի եւ իրենց ներկայութեամբ սր եւ է բարոյական պատասխանատուութեան տակ մնալ չեն ուզեր Քաղաքական ժողովոյ աշարքներուն համար, այս պատճառաւ հրաժարել են. եթէ հոս կանգ առնենք եւ իրենց առած քարտարութիւնն այս մտօք հասկընանք, խնդիրը կը վերջանայ եւ իրենց բողոքն իբրեւ չեղեալ կը համարուի:

Նոյնը. — Ես չեմ կարծեր թէ սակէ աւելի հետեւութիւն կրնայ տալ Գիւանը կարգացուած գրոյն, եւ յարուցանել խնդիր մը՝ որ դժուարութիւններու դուս բանայ. չեմ ուզեր այսպիսի կտակ մը ձգել իմ յաջորդս: Երկու հրաժարեալ ժողովականներն իրենց սկզբանք եւ խզմին զէ՛մ կը համարեն ներկայ պարագայից մէջ եւ այժմու պայմաններով մնալ Քաղ. ժողովոյն մէջ. ազատ են հրաժարելու, վասն զի ազատ չեն եւ կարող չեն եւ պէտք չէ որ կարող ըլլան մեծագոյն մասին որոշմունքն անգործագրելի ընելու: Գիւանն սակէ աւելի չուզեր խօսիլ այս նիւթին վրայ եւ թողու որ առանց օրինաւոր կերպով դատախազ ներկայանալու, հրաժարական բացատրելու պատճառաւ, Ազգ. Վարչութիւնը, որուն ամենքս յարգութիւն կը պարտինք, դատափետոյն հոս:

Նոյնը. — Գիւանը այս խնդիրը չկարդացուած կը համարի, զի անձա՛ն եկան կարգացուեցան հոս մեզի. համար անհամաձայնութեան խնդիր մըն է. հրաժարման պատճառ եւ այն անհամաձայնութիւնը հիմա հոս գտտելու իրաւունք չունինք մենք: Ուրիշ բան է եթէ հրաժարող Էֆէնտիները Քաղ. ժողովոյ զէ՛մ իբր ամբաստանող կանգնին. եթէ աս է բաժնին եւ ուղղմանին՝ թող յառաջ անցնին:





Դիւանէն որ վիճարանութիւնն իր սահմանէն դուրս չեղել չտայ, որպէս զի պատճառ չտրուի Երեսփոխանաց մէջ գըծ-գործութիւններ յատնելու :

Նոյնը . — 17 Երեսփոխանաց գրաւոր առաջարկութեան Ս. մասը պատճառարանութեանը մէջ փոփոխութեամբ մը կ'ընդունիմ, իսկ Բ. մասը չեմ ընդունիր : Պատճառաբանութեան մէջ փոխել ուզած կտորս է Բնդ. Ժողովը դատաւոյն կերպարանք կը զգենու խօսքը : Ոչ Ս. Պատրիարքին հրաժարագիրը, և ո՛չ Քաղ. Ժողովոյ անդամոց սմանց հրաժարագիրը (սմանց կ'ըսեմ, որովհետեւ 14 անդամներէն 6ը ստորագրած են) երկուքն ալ ամբաստանութիւն չեն ըստ իս : Ս. Պատրիարքն այնպիսի խօսքերով որ իր սրտէն կը բղկնէին ևւ զորս ինծի չափ սրտայոյզ ունկնդրութեամբ մտիկ ըրիք, յայտարարեց թէ «ոչ գոթ կ'ամբաստանեմ : Ինչպէս որ խաղաղութեամբ եկայ Պատրիարքական դահը բաղմնցայ, նոյնպէս կ'ուզեմ խաղաղութեամբ ձգել այս դահը, իմ մենաստանս դառնալ ևւ իմ բանս ու գրիչս նորէն ձեռք առնուլ : »

Ըսել է որ Ս. Պատրիարքին առեւծ հրաժարականին մէջ չկայ ամբաստանութիւն մը : Իսկ Քաղաքական Ժողովոյ հրաժարականին մէջ եթէ կայ ամբաստանութեան կէտ մը, ան Սահմանադրութեան գործադրութեանը կը վերաբերի, բայց զանի Ս. Պատրիարքն ինք ալ խոստովանեցաւ, իր գահակալութեան առջի օրէն Մայր Եկեղեցւոյ մէջ օխակցել, ըսաւ, Սահմանադրութիւնը չէ թէ բառ առ բառ գործադրել, այլ անոր ողոյն ևւ սկզբանցը հաւատարիմ մնալ, ևւ ևւ մինչև հիմա իր ընթացքին մէջ այնպէս վարուած ըլլայն ալ կը յայտնէ, միայն ժամանակէ մը ի վեր Քաղաք. Ժողովն աւելի բառական գործադրութիւն պահանջելուն համար՝ անհամաձայնութիւն ծագած ըլլալը կ'երեւի : Ասոր համար Յանձնաժողով մը զնել պէտք է, բայց ոչ թէ ըստ առաջարկութեան 17 Երեսփոխանաց երկու կողմը դատելու համար, որովհետեւ ամբաստանութիւն մը չկայ, այլ միայն անհամաձայնութիւն կայ, ասոր համար ցուցուած պատճառ-

ներուն կարեւորութեան աստիճանը կնքել պէտք է : Սրբազան Պատրիարքը ոչ զօր կ'ամբաստանէ, բայց գրութիւնը կ'ամբաստանէ. ո՛ր գրութիւնը, Սահմանադրական գրութիւնը . այդ գրութեան ո՛ր մասերը : Յայտնի որ Ս. Պատրիարքին չընդունածը Սահմանադրութիւնն է, Սահմանադրութիւնը պէտք է մնայ, Պատրիարքը պէտք է ինչայ : Վերջապէս Բնդհանուր Ժողովը որոշում մը չառած՝ պէտք է այս կէտերը լաւ լուսարանուին : Ասի Յանձնաժողովն պաշտօնը պէտք է ըլլայ : Գալով 17 Երեսփոխանաց գրաւոր առաջարկութեան Բ. մասին, որ է Պատրիարքարանի գործադիր իշխանութիւնը վարելու համար, Յանձնաժողով մը զնել, այդ Յանձնաժողովն բնաւ կարօտութիւն չեմ տեսներ, վասն զի Ս. Պատրիարքը թէեւ հրաժարական տուած, բայց զեւ պաշտօնէն դողրած չէ ևւ Տէրութեան ու Աղլին առջև տակաւին Պատրիարք է, նոյնպէս է նաև Քաղաքական Ժողովը, ուստի ասանք զարձեայ կրնան ևւ պարտաւոր իսկ են շարունակել առ այժմ իրենց պաշտօնը : Ուստի եղբակացնելով կ'ըսեմ թէ 17 Երեսփոխանաց գրաւոր առաջարկութեան Ս. մասին համակարծիք եմ վերցնելով «դատաւորի կերպարանք կը զղկնու» բառերը, իսկ Բ. մասը բոլորովին աւելորդ կը դատեմ :

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

Ատենապետ Տատան Էֆէնտի կը հարցնէ Քննիչ Յանձնաժողովոյ ասեհնապետ Տ. Խորէն Սրբազանին թէ ի՞նչ ևւ զաւ Յանձնաժողովոյն աշխատանաց օրգիւնքը ևւ մէջերինն ո՛ր անձը տեղեկարեր ընտրեցին : Խորէն Սրբազանը կը պատասխանէ թէ այն օրէն ի վեր որ պատիւ ունեցաւ Յանձնաժողովը պատկանելի Բնդ. Ժողովոյ որոշմամբ այնպիսի ծանր խնդրոյ մը քննութիւնն ստանձնել, Յանձնաժողովն աշխատեցաւ խղճի մտօք իր պաշտօնը կատարել, սակայն չկրնալով դայն 8 տարուան մէջ լրացնել, այսօր կը բերէ

իր տեղեկագիրը , եւ տեղեկարեր ընտրած է իր անդամներէն Օտեան Էֆէնտին :

Ատենայեալ Էֆէնտի հիւրերանոց համաձայն Օտեան Էֆէնտի կ'ընթեանու Յանձնաժողովին տեղեկագիրը , որու աւասիկ պատճէնը :

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ս Ր Բ Ա Չ Ա Ն Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Հ Օ Ր

ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԱՅ

ՔՆՆԻՉ ԵՍՆՁՆԱԺՈՂՈՎՈՅՆ

ՆԵՐԿԱՅԱՅԵԱԼ ՅԱՏԵՆԻ ԱԶԻԱՅԻՆ ԵՐԵՍԻՈՅԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Ձ 4 Օ Գ Ո Ս Տ Ո Ս Ի 1 8 7 3

Տեա'րք Երեւոյիսանք ,

Տարւոյս Օգոստոսի Յրդ օրը գումարեալ Ազգային Երես֊  
փոխանական Ժողովը տեղեկանալով Ամենապատիւ Սրբազան  
Պատրիարք Հօր հրածարման , տեղեկանալով նաեւ Քաղաքական  
Ժողովոյ հրածարման որ նոյն օր ներկայացաւ եւ  
սոյն երկու հրածարականները պատճառարանեալ գանկով ,  
պատճառները քննելու պաշտօնով Քննիչ Յանձնաժողովս  
կազմուցեց , հրաւիրելով որ ս'ըթ օրուան մէջ իր տեղեկագիրը  
պատրաստէ :

Քննիչ Յանձնաժողովը չկրնալով լր պաշտօնը կատարել  
սրտչեալ պայմանաժամուն , պարտաւորեցաւ ինքնին երկարելու  
պայմանաժամը , յուսալով հանդպիլ , Տեա'րք Երես֊  
փոխանք , ձեր ներողամտութեանը այսպիսի փափուկ գործի  
մը մէջ :

Քննիչ Յանձնաժողովս՝ որպէս զի Ընդհանուր Ժողովէք  
առած պաշտօնը անսխալ կատարէ , ուզեց լա'ւ խելամուտ  
ըլլալ իր պաշտօնին լնութեանն ու սահմանին , եւ ահաւ

ար իր պաշտօնը չէ դատաստանի ենթարկեալ խնդրոյ մը վրայ  
պատրաստական քննութիւն կատարել . Երեսփոխանական  
Ժողովը չհաճեցաւ դատարարի կերպարանք զգնուլ այս  
խնդրոյն մէջ , զի եւ ոչ ոք դատաստան խնդրած էր : Ամբաստանութիւն  
չկար ներկայացեալ եւ ոչ խակ բողոք : Այլ երկու հրածարական  
ներկայացեալ էր Ժողովոյդ , մէկն Ազգային Վարչութեան  
Սրբազան նախագահին կողմէն , միւսը Քաղաքական  
Ժողովին կողմէն : Սրբազան Պատրիարքն իր հրածարականը  
կը պատճառարանէր ըսելով որ Ազգին վարչական  
զրութիւնը թերութիւններ ու մինչեւ անգամ անկարելիութիւններ  
ունի . Քաղաքական Ժողովը ալ իր հրածարականը կը  
պատճառարանէր ըսելով թէ Սրբազան Պատրիարքն ըստ  
ամենայնի Սահմանադրութեան հետեւին անկարելի կը  
դասի : Այս պատճառները զիրար չէին վաներ , այլ մանաւանդ  
իրար կը շօշափէին : Ուրմն Սրբազան Պատրիարքին ու  
Քաղաքական Ժողովոյ մէջ անհամաձայնութիւն գոյացած էր  
Սահմանադրութեանը նկատմամբ : Որո՞նք էին այն կէտերն  
որոնց մէջ ըստ ասարկութեան Քաղաքական Ժողովին Սահմանադրութեան  
գործադրութիւնը կը ժխտէր Պատրիարքը . որո՞նք էին անոնք  
զորս Սրբազան Պատրիարքը հասարակաց կարծեաց կը  
մտանէր իրրեւ անգործադրելի . եւ արդեօք կա՞յ բան  
մը ազգին վարչական զրութեանը մէջ որ զվարչութիւնն  
անկարելի ընէ : Ասոնք քննել եւ խմանալ Ընդհանուր  
Ժողովոյ պարտքն էր եւ այս քննութիւնը յանձնուած էր  
Քննիչ Յանձնաժողովիս : Ուստի Յանձնաժողովս նախ եւ  
աստի խնդրեց Քաղաքական Ժողովին որ գրով ճշգէտ եւ  
բերնով բացատրէ Սահմանադրութեան գործադրութեանը  
նկատմամբ Սրբազան Պատրիարքէն ունեցած գանգոսները :  
Քաղաքական Ժողովը հետեւեալ գիրը ներկայացուց Յանձնաժողովիս :

Գեր . Ատենայեալ Ս . Քննիչ Յանձնաժողովոյ

Պատուարժան Յանձնաժողովոյդ 7 Օգոստոս եւ թուահամար  
զրութիւնն ստացանք :

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր ևւ հրամարեալ Քաղաքական Ժողովոյս մէջ անհամաձայնութեան տեղի տուող խնդիրը Սահմանադրութեան գործադրութիւնն ըլլալը արդէն յայտնի է , ևւ այս ալ ոչ թէ Սահմանադրութեան քառական խնդիր է , ալ ողբոյն ևւ սկզբանց խնդիր . ահա քանի մը օրինակներ տանք , որոնց մանրամասն բացատրութիւնն ամբողջ վարչութեան արձանագրութեանց տուածնեւրուն մէջ կը գտնուի , զոր ցուցնել պարտատ ևւնք :

Ա . Վանայ խնդրոյն մէջ առանց քննութեան ևւ առանց դատաստանի Պողոս վարդապետը պաշտօնէ կը դադրեցնէ ևւ առանց կրօնական ու Քաղաքական Ժողովոյ գրտութեան կ'արտօրէ :

Բ . Ըստ որոշման Ընդհանուր Ժողովոյ՝ ի Ս . Երուսաղէմ քաղաքահեռազրին վրայ Նորին Սրբազնութեան տուած բացատրութիւնը չգտնուեցաւ գոհացուցիչ , ևւ յետոյ մինչդեռ Ս . Պատրիարք Հայրը կ'ըսէր թէ Վարչութիւնը հրամարած ըլլալուն ինք ալ չհեռազրիք դարկեր է , հաստատուեցաւ թէ կրօնական Ժողովը գոյութիւն ևւ Մայիս Կին ալ նիստ ունի եղեր , որուն գիմաձ չէ Ս . Պատրիարք Հայրը , Մայիս 3ին քաջած հեռազրին ճամար :

Գ . Կիլիկիոյ Կաթողիկոսին իրաւտութեան սահմանն առաջնորդական խնդրոց մէջ , Սահմանադրութեան հակառակ կ'առաջարկէր Սրբազան Պատրիարքը կիլիկիոյ Կաթողիկոսին յանձնել այն պաշտօնը , որ Կեդրոնական Վարչութիւնն ունի ինչպէս ամէն գաւառաց , նոյնպէս ևւ կիլիկիոյ գաւառաց վրայ :

Դ . Քաղաքական Ժողովոյ որոշման թուղթն՝ որով Ս . Պատրիարք Հօր ամականին խնդիրը կը ծանուցուէր առ Տնտեսական Խորհուրդն , ներկայութեան Տնտեսական Խորհրդոյ Ս . Պատրիարքէն կ'ընարուի :

Ե . Քաղաքական Ժողովոյ որոշման հակառակ մուգաթայ կը հաւաքէ :

Զ . Քաղ . Ժողովոյ որոշման հակառակ՝ Մշոյ Ս . Կարապետի վանուց մուգաթայի պարտուչ համար զիր գրելը կ'արդեւու , մինչդեռ 33300 զրուչ ցվերջ Ապրիլի

պարտական է Մշոյ Ս . Կարապետի վանքը , որոյ վանահայր Նորին Սրբազնութիւնն է :

Է . Բալուի առաջնորդին՝ Խառն Ժողովոյ որոշմանը հակառակ կերպով , անոր գաղարման պաշտօնագիր կը գրէ նոյն Սրբազնութիւնը :

Ը . Գատրգիւղի Թաղական խնդրոյն մէջ հակառակ որոշման Քաղ . Ժողովոյ՝ Ս . Պատրիարքը հրամարական կ'ընդունի , ևւ յետոյ ալ Քաղ . Ժողովոյ որոշումը չի գործադրեր : Գատրգիւղի Թաղականին բողոքն ալ առանց Քաղաքական Ժողովոյ ցուցնելու , պատրիարքական փոխանորդը ի քննութիւն Տնտեսական Խորհրդոյ կը յանձնէ , ևւ Տնտեսական Խորհուրդն ալ ստիպողականութիւն կուտայ այդ խնդրոյն :

Թ . Բ . Դրան նախարարոց որոշուած այցելութիւնները մեծաւ մասամբ ևւ ժամանակին չի կատարելը :

Ժ . Ս . Պատրիարք Հայրը իր գահակալութեան օրէն սկսեալ 10000 զրուչ ամական կը պահանջէ հակառակ նախորդ վարչութեան կրկին որոշմանց , որոնց մէջ Ս . Պատրիարք Հայրը համամիտ գտնուած է : Այս պատճառաւ ց' 1 Մայիս ներկայ տարուոյս 28390 զրուչ պարտական է Ս . Պատրիարքը կեդրոնական սնտուկին :

ԺԱ . Սկիզբէն մինչև վերջը Ս . Պատրիարք Հայրը նախատանօք կը վարուէր ժողովականաց ևւ Ժողովոյ ղէմ , մինչև օտարին ըրած անարգանաց իրաւունք տալէ զատ , Նորին Սրբազնութիւնն ալ սկսաւ անարգել ևւ խարդախ անուանել Քաղ . Ժողովը . ալ խարդախ անուանեալ Քաղ . Ժողով մը ժողովարանէն դուրս ալ կը վանտուի կը ձեռուի ալ :

Մնամք յարգանօք

Անդամք հրամարեալ Քաղ . Ժողովոյ

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| Սինեքերիմ Մանուկեան | Ալիքսան Խորասանեան   |
| Բարսեղ Հալաձեան     | Ս . Պ . Պ . Փափազեան |
| Ք . Ղազարոսեան      | Բարթող Բիւրքճիպաչեան |



դիւրով այս խնդրոյն մէջ մանկել, պարտաւորեր է ինքնին գործադրելու :

Սրբազան Պատրիարքը վերջացուցեր է յայտնելով թէ ինքն ուր որ այս խնդիրը հասցուցեր է, կրնայ անիկէ ետ դառնալ: Խառն ժողովն ալ որոշեր է որ Պօլոս վա. դատեսի մասին նորին Սրբազնութեան կամացն ու պատասխանատուութեանը կը յանձնէ պէտք եղածը սնորհել:

Բ. «Ըստ որոշման Ընդհանուր ժողովոյ՝ ի Ս. Երուսաղէմ քաղաքում հեռագրին վրայ նորին Սրբազնութեան տուած բացատրութիւնը չգտնուեցաւ գոնացուցիչ, եւ յետոյ մինչդեռ Սրբազան Պատրիարք Հայրը կ'ըսէր թէ վարչութիւնը հրաժարած ըլլալուն ինք այդ հեռագիրը զարկեր է, հաստատուեցաւ թէ կրօնական ժողովը գոյութիւնն եւ Մայիս 1ին ալ նիստ ունի եղեր, որուն դիմած չէ Սրբազան Պատրիարք Հայրը Մայիս 3ին քաղաք հեռագրին համար :»

Ընդհանուր ժողովն իր ԾՆ. նիստին մէջ որոշած էր որ Սրբազան Պատրիարքն ի Ս. Երուսաղէմ քաղաք հեռագրին վրայ բացատրութիւն տայ Քաղաքական ժողովին. այս որոշման համաձայն Ս. Պատրիարքը բացատրութիւն տուեր է Խառն ժողովին: Քաղաքական ժողովը մեծագոյն մասով որոշեր է որ տրուած բացատրութիւնը գոնացուցիչ չը դրանէր. կրօնական ժողովը ընտւ կարծիք յայտնել չէ ուղեր այն պատճառաւ որ եթէ հեռագիրը քաղաքում ժամանակ Քաղաքական ժողով չկար, այլ կրօնական ժողով կայ եղեր:

Սրբազան Պատրիարքը յայտնել է Խառն ժողովին մէջ եւ կրկինեց Յանձնաժողովիս ալ որ ինք այդ մասին պատասխանատուութիւնը յանձն կ'առնէ Ընդհանուր ժողովին առջեւ :

Գ. «Կիլիկիոյ Կաթողիկոսին իրաւասութեան սահմանը առաջնորդական խնդրոց մէջ, Սահմանադրութեան հակառակ, կ'առաջարկէր Սրբազան Պատրիարքը՝ Կիլիկիոյ Կաթողիկոսին յանձնել այն պաշտօնը, որ Կեդրոնական վարչութիւնն ունի ինչպէս ամէն պաւստայ նոյնպէս եւ Կիլիկիոյ պաւստայ վրայ :»

Կիլիկիոյ վիճակաց վարչական յարաբերութեանցը վրայ կրօնական եւ Քաղաքական ժողովոց Աստեղադպրները միանալով ծրագիր մը շինելու եւ զայն Խառն ժողովին ներկայացուցեր են, որուն մէջ վիճակաց վարչական յարաբերութիւններն ուղղակի կեդրոնական վարչութեան հետ հաստատուած են եղեր: Այս ծրագրին վրայ յօդուած առ յօդուած քննութիւնը չսկսած, Սրբազան Պատրիարքն ընդհանուր տեղեկութիւն մը ներկայացուցեր է սա իմաստով թէ Կիլիկիոյ Կաթողիկոսն ուղղակի յարաբերութիւն պէտք է ունենայ Կիլիկիոյ վիճակաց հետ: Այս դիտողութեան վրայ վիճաբանութենէ կտք՝ Խառն ժողովն առաջարկեր է որ Սրբազան Պատրիարքն ալ իր կողմէն ծրագիրը անկէ ի վեր, այսինքն Յունիս 11 էն ի վեր, տակաւին չէ ներկայացուցեր Սրբազան Պատրիարքը:

Իսկ Սրբազան Պատրիարքը յայտարարեց թէ ծրագիր չինելու իրեն առաջարկութիւն ըլլալը չէր յիշեր, բայց ինչ ալ ըլլայ՝ ներկայացեալ խնդրոյ մը վրայ իր կարծիքը յայտնելու իրաւունք ունէր եւ զայն իրաւունքը գործածած էր, եւ թէ խնդիրը տակաւին վիճաբանութեան ներքեւ ըլլալով, որոշում չէր տրուած որ այն որոշման գործադրութիւնը ըլլար ինք:

Ե. «Քաղաքական ժողովոյ որոշման հակառակ մուգաթայ կը հաւաքէ»:

Քաղաքական ժողովը Տնտեսական Խորհուրդին առաջարկութեամբ մուգաթայի հաւաքման համար որոշեր է իր 1872 Հոկտեմբեր 5 ի նիստին մէջ որ Տնտեսական Խորհուրդը ձեռնարկէ հաւաքման գործողութեան՝ Սրբազան Պատրիարք Հօր արդեցութիւնն ու աջակցութիւնն ալ ստանալով: Տնտեսական Խորհուրդն ալ իր կողմէն օրինաւոր տունակ պատրաստեր է մուգաթայներու հաւաքման համար, բայց Սրբազան Պատրիարքը չէ ընդունել: Սրբազան Պատրիարքին այս ընթացքին դէմ դանդատեր է Տնտեսական Խորհուրդը՝ Քաղաքական ժողովին 1873 Մարտ 29 ԾԸ. նիստին մէջ, բայց այս մասին Քաղաքական ժողովը

վին որոշման մը հետքը չտեսնուեցաւ արձանադրութեանց մէջ :

Իսկ Սրբազան Պատրիարքին զիտաւորութիւնը չէ եղած իրեն վերապահել մուգաթայի հաւաքման իրաւունքը, այլ եթէ Քաղաքական Ժողովը հաւաքման գործողութեան մէջ Պատրիարքին գործակցութեան պէտքն անհրաժեշտ դատեր է . Նորին Սրբազնութեան ալ այնպէս երեւցեր է որ շատ աւելի դիւրին կ'ըլլայ այդ հաւաքումը եթէ ՝ բոլորովին ինք ընէ զայն, զաւանդերը մինչև հիմա Պատրիարքին ստորագրութիւնը ճանչցած են այդ մասին, եւ Նորին Սրբազնութիւնը մէկ քանի զաւանուց համար պարտաւորեր է վնասը ինք տուած իր ստանալ մուգաթայի անուղղակի միջոցներով :

Զ. «Քաղաքական Ժողովոյ որոշման հակառակ Մշոյ Ս. Կարապետի վանուց մուգաթայի պարտուց համար գիր գրելը կ'արգելու, մինչդեռ 33300 զրուշ ցվերջ Ապրիլի պարտական է Մշոյ Ս. Կարապետի վանքը, որոյ վանահայր Նորին Սրբազնութիւնն է : »

Քաղաքական Ժողովը իր այս տարուան Մարտի 29րդ նիստին մէջ որոշեր է կ'ըզդոնական անտուկին պարտատէրնւրուն չըջարեալական գրել, իրենց պարտուց վճարումը պահանջելու համար. ասոնց կարգէն եղեր է նաեւ Մշոյ Ս. Կարապետի վանքը որուն մուգաթայի տուրքէն 33300 զրուշ ցվերջ Ապրիլի պարտական ըլլալը տեսնուեր է Ազգային Մատուկի համարակալին ներկայացուցած ցուցակէն : Սրբազան Պատրիարքը Մշոյ Ս. Կարապետի վանուց համար պատրաստուած չըջարեալականը չի թողուր զրկել : Ասոր պատճառը Ս. Պատրիարքը այնպէս բացատրեց թէ ինք արգէն Մշոյ մէջ իր փոխանորդին զիր գրած ըլլալուն համար՝ հարկ չէ տեսեր, մանաւանդ որ իրրեւ վանահայր պատասխանատուն ինք է այդ պարտուց :

Է. «Բալուի Առաջնորդին Խառն Ժողովոյ որոշման հակառակ կերպով՝ անոր զաղարման պաշտօնագիր կը գրէ Նորին Սրբազնութիւնը » :

Խառն Ժողովն այս տարուան Յուլիս 3 նիստին մէջ ու

որոշեր է Բալուի առաջնորդ Բագուանեան Պետրոս վարդապետը պաշտօնէն դադրեցնել, հետզհետէ իրեն զրկուած հրահանգաց հակառակ Սահմանադրութիւնը չկրնայ գործադրելու համար : Այս իմաստով ալ նամակ մը գրուեր է եւ Սրբազան Պատրիարքին ստորագրութեանը ներկայացնել տուեր է . Սրբազան Պատրիարքը նամակին խմբագրութիւնը փոխելով՝ զաղարման իրրեւ պատճառ ժողովրդեան դժգոհութիւնն ու իրեն դէմ եկած հանրագրութիւնները նշանակեր է, սրոնց մէջ կիկղեցիներ գոցելու եւ քահանայք պաշտօնէ դադրեցնելու ամբաստանութիւններ կան եղեր իր վրայ, եւ Սահմանադրութիւնը չկրնայ գործադրելն իրրեւ երկրորդական պատճառ աւելցուցեր է :

Քաղաքական Ժողովը նախապէս որոշած է եղեր իր 1872 Նոյեմբեր 23 ի նիստին մէջ զարձակ սոյն Բագուանեան վարդապետի խնդրոյն աթիւ ուր, ժողովրդեան կողմէն եկած հանրագրութեան պատճառաւ, առաջնորդ մը ասոնց քննութեան եւ դատաստանի պաշտօնէն դադրեցնելը Սահմանադրութեան հակառակ կը համարի :

Ը. «Քատրդիւզի Թաղական խնդրոյն մէջ հակառակ որոշման Քաղ. Ժողովոյ որոշումը չի գործադրեր Քատրդիւզի Թաղականին բողոքն ալ ասոնց Քաղ. Ժողովոյ ցուցնելու, պատրիարքական փոխանորդն ի քննութիւն Տնտեսական Խորհրդոյ կը յանձնէ, եւ Տնտեսական Խորհուրդն ալ ստիպողականութիւն կուտայ այդ խնդրոց » :

Քատրդիւզի Թաղական Խորհրդոյ անդամներէն Պէլլէրեան եղիւ է ֆէնտին իր հրաժարականն առ Ս. Պատրիարքը զրկեր է եւ ի միասին բողոքագիր մը ուղղեալ առ Թաղական Խորհրդոյ ատենապետը, որպէս զի եթէ Ս. Պատրիարքը կամի, զրկէ զայն ատենապետին : Քաղ. Ժողովն այս տարուան 7 Յունիս նիստին մէջ որոշեր է որ հրաժարագիրը պատճառաբանեալ ու բողոքախառն ըլլալով, չի կրնար ընդունուիլ, պէտք է որ Ատենապետէն բացատրութիւն ուղղուի : Ս. Պատրիարքը բողոքագիրը Թաղ. Խորհրդոյ ատենապետին զրկեր է՝ ասոնց բացատրութիւն ուղղելու : Այս հրաժարակա-

նաւ յիշեալ Թաղ . Խորհրդոյ հրաժարեալ անդամոց թիւը եւ ընդ ի համարելով եւ Թաղ . Խորհուրդն առկալս մնացած հաշուային խնդրոց համար չկրնալով ընտրութեամբ լինել թիւը , Ազգային Վարչութեան զիմեր է՝ զըկելով ութ անձանց անուններու ցուցակ մը , որ անոնց մէջէն Ազգային Վարչութիւնը չորս անձինք առժամանակեայ խորհրդական որոշէ : Քաղաքական Ժողովը 16 Յունիս նիստին մէջ որոշեր է թէ հարկ չկայ առժամանակեայ խորհրդականներ՝ դնել , քե մնացեալ ամբամբ պէտք է շարունակեն իրենց պատասխանատուութեան ճակ մինչեւ հրաժարականաց մասին տեղեկութիւն ըլլայ : Միանգամայն տեղեկանալով թէ Պէյլէրեան էֆէնտիին բողոքախառն հրաժարականին վրայ Թաղական Խորհրդոյ ատենապետէն բացատրութիւն չէ ուղուած , երեք հրաժարեալ անդամները ի ժողով հրաւիրեր է եւ ապա ամբողջ Թաղական Խորհուրդը հրաժարեալ իր մնացեալ անդամներով , եւ 21 Յունիսի նիստին մէջ որոշեր է հրաժարականները չընդունիլ եւ պաշտօնական զիբերով այս խնդրոյն կարգադրութեան արդիւնքը ծանուցանել : Այս նիստին Ս . Պատրիարքը ներկայ չէ եղեր եւ , իր բացակայութեանը տրուած այս որոշմանը համեմատ , գրուած զիբերուն ստորագրութիւնն ետ է ձգեր , որպէս զի յառաջիկայ նիստին իր գիտողութիւնները ներկայացնէ Քաղ . Ժողովին , եւ յառաջիկայ նիստին զխտողութիւնը ներկայացուցեր է սապէս թէ ետքէն հրաժարելոց հրաժարականը չընդունիլը հակասական կ'երեւնայ ասկէ առաջ Թաղ . Խորհրդոյ մնացեալ անդամոց իրենց պաշտօնը շարունակելու համար գրուած նամակին հետ որ վստահութեան ցոյց մըն էր Վարչութեան կողմէն առ նոյն անգամ , եւ վերջապէս թէ այս նոր տնօրէնութիւնը կրնայ խառնութեան պատճառ ըլլալ Քատըղիւղի մէջ , Քաղաքական Ժողովը հակասութիւնը Սրբազան Պատրիարքին կողմը դտեր է որ վերջընթեր նիստին՝ ուր ներկայ էր , չէր ընդգիմացած Պէյլէրեան էֆէնտիի հրաժարականին չընդունուելուն եւ վերջապէս խնդիրն ի կախ մնացեր է : Այս կը հետեւի Քաղաքական Ժողովոյ տուած բացատրութիւններէն , վերջընթեր

նիստերու ատենագրութիւններէն որ դեռ արձանագրութեանց մէջ չեն անցած եւ վերջին մէկ բանի ատենագրութեանց ծրագրերներէն որ դեռ չեն ընդունուած :

Այս բոլոր պատմութեան մէջ երկու կէտ կայ որ Սրբազան Պատրիարքին ու Քաղաքական Ժողովին իրարու հետ յարաբերութեանցը կը վերաբերին իրենց փոխադարձ սահմանադրական պարաւորութեանցը նկատմամբ : Մէկն է Քատըղիւղի Թաղական Խորհրդին ատենապետէն բացատրութիւն ուղելու որոշման անդործագրելի մնալը : Ասոր համար Ս . Պատրիարքը կ'ըսէ թէ Քաղաքական Ժողովոյ որոշումները զիւսնապետն ի զիր կ'անուու եւ իրեն կը ներկայացնէ ստորագրելու եւ գործագրելու համար , երբեք Թաղական Խորհրդոյ ատենապետէն բացատրութիւն ուղելու համար զիր չէ ներկայացած իրեն՝ զիւսնատան կողմէն : Իսկ զիւսնատան այս մասին ցուցած պատճառը սա է որ հրաժարագիրները Սրբազան Պատրիարքը զիւսնին չէր յանձնած , որ զիւսնն ալ իր պարտքը կատարէր : Երկրորդ կէտն է Թաղական Խորհրդոյ երեք հրաժարելոց հրաժարականները չընդունելու մասին Քաղաքական Ժողովոյ որոշմանը համաձայն պատրաստուած պաշտօնական զիբերուն Սրբազան Պատրիարքին չստորագրելը : Սրբազան Պատրիարքը կը յայտնէ թէ Սահմանագրութեան Զրդ յօդուածին իրեն տուած իրաւունքը գործածած է , զի այն յօդուածը կը տրամադրէ որ « Պատրիարքն իր բացակայութեան ատեն ազգային ժողովներու մէջ տրուած որոշումները պարունակող թուղթը դեռ չստորագրած կարող է անոնց վրայ իր գիտողութիւնները յանձնելով՝ խնդիրը կրկին քննութեան յանձնել » : Սրբազան Պատրիարքը կը յաւելու թէ նախապէս Քաղաքական Ժողովն որոշած էր ընդունիլ իրեք Թաղական Խորհրդականաց հրաժարականները եւ իր կողմէն նամակ մը գրուած էր առ Թաղական Խորհուրդն որ մնացեալ անգամ իրենց պաշտօնը շարունակեն , մինչեւ որ հրաժարելոց ակոյ ճոր ընտրութեան համար» պէտք եղած տնօրէնութիւնն ըլլայ ազգային վարչութեան կողմէն , թէ այս նամակը Քաղաքական Ժողովին



որոշման համաձայն զիւսնատան կողմէն իրեն ստորագրու-  
թեանը ներկայացած եւ ինք առանց բնաւ փոփոխութեան  
ստորագրած էր, եւ հիմա վերջին որոշման առաջնայն հետ  
հակասութիւնը տեսնելով պարտաւորեր էր գիտողութիւն ը-  
նելու: Կը մնայ ուրիշ կէտ մը, այն է Թաղական Խորհրդոյ  
բողոքին Տնտեսական Խորհուրդին յանձնուելին առանց Քաղ-  
ժողովոյ գիտութեան: Բայց երկու նկատողութեամբ, Ա.  
ժողովոյ գիտութեան, Բայց երկու նկատողութեամբ, Ա.  
ժողովոյ գիտութեան, Բայց երկու նկատողութեամբ, Ա.  
ժողովոյ գիտութեան, Բայց երկու նկատողութեամբ, Ա.

ժ. «Սրբազան Պատրիարք Հայրն իր գահակալութեան  
օրէն սկսեալ 10,000 զրուշ ամսական կը պահանջէ հակառակ  
նախորդ վարչութեան կողմէն որոշմանց, որոնց մէջ Սրբա-  
զան Պատրիարք Հայրը համամիտ գտնուած է: Այս պատ-  
ճառաւ զմէկ Մայիս ներկայ տարւոյս 28392 զրշ. պարտական  
է Սրբազան Պատրիարքը կեդրոնական մտուակին:»

Նախորդ Քաղաքական Ժողովը 1870 Օգոստոս 4ի նիս-  
տին մէջ ամսական 5000 զրուշ սահմաներ է Սրբահան Պատ-  
րիարքին. Պատրիարքաւանի մասակարարութեան ծախքերուն հա-  
մար եւ 1872 Ապրիլ 28ի նիստին մէջ որոշեր է այս ամսա-  
կանը 10,000ի վերածել 1871 Մայիս 1էն սկսեալ հաշուե-  
լով: Սրբազան Պատրիարքը այս տարի Տնտեսական Խոր-  
հուրդին յայտներ է թէ ինք սկիզբէն իր ամսականը 10,000  
զրուշ դիտէ եւ այնպէս կը պահանջէ: Այս տարուան Մայիս  
15ի նիստին մէջ Քաղաքական Ժողովը այս խնդրովն զրա-  
դելով Սրբազան Պատրիարքը հոն ալ միեւնոյն յայտարարու-  
թիւնն ւրեր է: Քաղաքական Ժողովը Տնտեսական Խորհուր-  
դին հրահանգ տուեր է՝ նախորդ որոշմանց համեմատ վարուել  
հաշուեկշռի դործողութեանց մէջ եւ Սրբազան Պատրիար-  
քին ամսականի խնդիրը խնդրոց կարգէն մէջ անցուցեր է:

Սրբազան Պատրիարքը յայտնեց թէ ինք երբեք 5000  
զրուշ ըմբռնած չէ իր ամսականը, եւ թէ Պատրիարքարանի  
մատակարարութեան ծախուց համար 5000 զրուշ որոշուեր  
է, այլ Պատրիարք մը Պատրիարքարանի մատակարարու-  
թեան ծախքէն ուրիշ ծախքեր ունի, որոնց մէջ գլխաւոր  
տեղ մը կը բռնեն ամէն օր իբրեւ «հասարակաց հայր» իր  
գլխութեանը զիմող խղճայի ազգայնոց մատուցեալ նուէր  
ու օգնութիւնները: Պատրիարքը ստակ աւելցնելու համար  
ամսական պէտք չէ որ անէ, այլ միւս կողմէն ալ առած  
ամսականը պէտք է որ իր բոլոր ծախուց բաւէ: Ահա ասոր  
համար եւ ոչ խսկ որոշեալ չափով կրնայ ամսական յատկա-  
նալ Պատրիարքին: Իսկ Քաղաքական Ժողովն այս սկզբունքը  
չէ կրնար ընդունիլ, զի Սահմանադրութեան 12րդ յօդուածը  
կը արամագրէ որ «Պատրիարքը ազգային մտուակէն իրեն  
յատկացեալ ամսական պիտի ունենայ:»

Ահա՛, Տեարք Երեսփոխանք, ասոնք են լուսաբանու-  
թիւնը որ կը հետեւի Քաղաքական Ժողովոյ ներկայացու-  
ցած կ'տեքունութիւն քննութեանէն: Այս կէտերէն առաջին  
երկուքը, այսինքն Պօղոս վարդապետին խնդիրն ու Երու-  
սազէմ քաշուած հեռագրի խնդիրը, Պատրիարքին ինքնին  
անօրէնութեանը կը վերաբերին, Սահմանադրութեան Տրդ  
յօդուածին արամագրութեանը ներքեւ կ'իյնան, եւ Պատ-  
րիարքին ու վարչութեան Ժողովոյ իրաւասութեան սահ-  
մանին մեծ խնդիրը կը յարուցանեն, որ միշտ քար գայ-  
թակղութեան եղած է Պատրիարքներու ու Ժողովներու հա-  
մաձայնութեանը եւ զոր Սահմանադրութիւնը մեծ խնամով  
կարգադրած է: Այս երկու ծանրակշիւ իրողութեանց մէջ  
Սահմանադրութեան դործողութեանը նկատմամբ Սրբազան  
Պատրիարքին պատասխանատուութիւնը ազատեր է, առաջ-  
նայն մէջ Խառն Ժողովոյ որոշման չնորհիւ որ ընդունիւր է  
խնդիրը Սրբազան Պատրիարքին կամացն ու պատասխա-  
նատուութեանը թողուլ, եւ երկրորդին մէջ Ընդհանուր Ժո-  
ղովոյ որոշման չնորհիւ որ Սրբազան Պատրիարքն հրաւիրեր  
է բացատրութիւն տալ Քաղաքական Ժողովին, որով Սրբա-



թիւնը , զի օրինաց յարգութենէն զատ ուրիշ բարոյական ոյժ  
չէ մնացած մեր Ազգային Վարչութեան համար , որոյ հիմն  
ու գործողութեան լուրջ միջոցը բարոյական զօրու-  
թիւնն է :

Այս խօսքերը ընկելով Յանձնաժողովս վայրկեան մը  
կասկածանաց չենթարկեր Սրբազան Պատրիարք Հօր անկեղ-  
ծութիւն : Իր գահակալութեան օր ըրած երդմամբ՝ որով  
Սահմանադրութեան ոգոյն ու սկզբանցը միայն յարեցաւ ,  
ատաջին օրէն յայտնեց իր համոզումը , եւ այս վերջին օրն  
ալ ուր է տարի գահակալութենէն ետքն իր արձակումը կը  
խնդրէ ազգէն , այնպիսի խաղաղասիրական ոգւով որ մեր  
ամէնուս վրայ ալ պարտք կը դնէ լուսնելու կողմնակցու-  
թիւնն ու կիրքերը , յայտնեց թէ որոնք էին ըստ իւր կարծ-  
եաց Վարչութիւնն անկարելի ընող կէտերը Սահմա-  
նադրութեան :

Ազգին մէջ գործերը շատ են ու բազմազան : Ժողով-  
ները բիչ են ու ծանրաբեռնած : Ձեռնհասութիւնն ու աշ-  
խատութեան բաժանումը , երկու մեծ սկզբունքներ , կամ  
բնաւ կամ բաւական նկատողութեան առնուած չեն ազգին  
վարչական գրութեանը մէջ , եւ ամենէն աւելի ծանրաբեռն-  
եալ ժողովը , Բաղաքական ժողովը , ազգին ամէն տեսակ  
ու ամէն օրուան գործերը տեսնելու համար , դատական  
գործերէն բռնէ մինչեւ ազգին կենաց վերաբերեալ խնդիր-  
ները , անվարժ ու անթոշակ ժողովականներէ բաղկացեալ ,  
պարտաւորեալ է շարաթը անգամ մը միայն նիստ ընելու , եւ  
երբ վարչական մեքենային գործիքները՝ կամ անկատար են  
կամ յամբաշարժ , միւս կողմէն ալ Սահմանադրութեան բառ  
առ բառ գործադրութիւնը կը պահանջուի , որով վարչական  
մեքենայն բոլորովին կը խճողի ու կը կայնի :

Ահա՛ Սրբազան Պատրիարքին գանգատը , ազադակը , եւ  
Յանձնաժողովս կը կարծէ թէ իրաց այս վիճակին մէջ բան  
մը կայ որ պարտք կը դնէ օրէնսդիր ժողովոյդ վրայ ծանր  
նկատողութեան առնուլ զայն : Սահմանադրութեան գոր-  
ծադրութեանը մէջ այս կէտերուն յարուցած դիտողութիւն-

ները չեն վրիպած փորձառու ազգայնոց ուշադրութենէն ,  
ազգային օրագիրք քանի քանի առաջարկութիւններ հրատա-  
րակութիւններ հրատարակած են այս մասին , նաեւ յառաջ  
քան զպարտիարքութիւն Խրիմեանի , նոյն իսկ առ Բնդհա-  
նուր ժողովդ մատուցեալ վերաքնեալ Սահմանադրութեան  
գոր ոչ թէ պարունակութեանն այլ ծագմանը նկատմամբ  
միայն մերժեց ժողովդ , արդի վարչական գրութիւնը փոխած  
սրբազրած էր վարչութեան թէ կազմութեան եղանակին եւ  
թէ ձեւին մէջ , եւ արդարեւ արդի գրութեան այս կէտերը  
Սահմանադրական ձեւով կառավարութեան սկզբանցը չեն  
յարմարիր , եւ մեր Սահմանադրութիւնն ալ ինք չէ հաստա-  
տած զանոնք , այլ գտածը նուիրագործած է :

Վարչութեան կազմութեան ու ձեւին վերաբերեալ այս  
կէտը , զոր ըստ հիմանց ծրագրին սրբազրել նախամեծար կը  
գտտէ Յանձնաժողովս , ինչպէս նաեւ Վարչութիւնը թաղա-  
կան գործոց ու կրճիմներուն հոգէն ըստ մեծի մասին ազա-  
տելու համար , թաղական ժողովոց հաստատութիւնը եւ  
Երեսփոխանական անվերջանալի ընտրութեանց յարուցած  
անտեղութեանց առջեւն առնելու եւ ժողովոց ընթացքին  
աւելի ժրութիւն ու գործունէութիւն տալու համար՝ ներկայ  
ժողովականօք ատեան բանալու եւ որոշում ընելու իմաստով  
Սահմանադրական արամադրութեանց սրբազրութիւնը , Յանձ-  
նաժողովս կը կարծէ թէ Բնդհանուր ժողովդ իր օրէնսդրա-  
կան գերագոյն իշխանութեամբ պէտք է անմիջապէս անօ-  
րէնութիւն մը ընէ այս կէտերուն վրայ , թէ՛ ընդունի Ս .  
Պատրիարք Հօր հրաժարականը եւ թէ՛ չընդունի :

Այլ ինչ պիտի ընէ Բնդհանուր ժողովդ այս հրաժա-  
րականի մասին , ինչպէս նաեւ Բաղաքական ժողովոյ հրա-  
ժարականի մասին :

Յանձնաժողովս փափաքելով առանց եզրակացութեան  
չթողուլ այս հրաժարականի խնդիրը եւ որպէս զի ամէն  
յուզմանց առջեւն առնուի , խաղաղասիրական ոգւով՝ նախ  
ուզեց փորձ մը ընել ազաչելով Սրբազան Պատրիարքին որ  
ետ առնէ իր հրաժարականը , մտադիր ըլլալով միեւնոյն

ինդիւնն ընել Բաղաքական Ժողովոյ եթէ Սրբազան Պատ-  
 րիարքը հաճէր իրեն եղած առաջարկութեան : Այս փորձե-  
 անյաջող ելլելով եւ Յանձնաժողովս համոզուելով անկա-  
 ըելութեանը , տեսնելով երկու կողման ալ հրաժարականին  
 անկեղծութիւնը , տեսնելով որ թէեւ պատճառաբանեալ այլ  
 բացարձակապէս տրուած հրաժարականներ են առանց պայ-  
 մանի , յետ ծանր խորհրդածութեան կը համարձակի առաջար-  
 կել Երեսփոխանական Ժողովոյդ որ յարդէք այդ հրաժարա-  
 կանները : Կացութիւն մը երբ այսքան կը ձգտի՝ պէտք է  
 խզի եւ այս չէ՛ երբեք ի դատապարտութիւն անձանց : Ան-  
 ձինք անձնուրացութեան ապացոյց առին հրաժարելով ,  
 Ընդհանուր Ժողովդ իմաստութեամբ գործած կ'ըլլայ հրա-  
 ժարականներն ընդունելով : Եթէ Յանձնաժողովս այս ա-  
 ռաջարկութիւնն ընդունի Երեսփոխանական Ժողովդ , յետ-  
 քէ , Իրան ալ հաղորդուելու հրաժարականները եւ ի . Գուռ-  
 նէն ալ ընդունուելէն ետքը , անմիջապէս Ընդհանուր Ժո-  
 ղովդ նորէն զուժարուելով պէտք է ընտրէ տեղապահ մը եւ  
 անոր հետ առժամանակեայ Բաղաք . Ժողով մը :

Անդամք Քննիչ Յանձնաժողովոյ

Ասեմապիւր

Ասեմապետ

Ղեւոնդ Մ . Վրդ . Փիլիպպիսեան

Խորէն Արք . Նարպէթ

Գէորգ քհ . Արծրունի

Առաքել Սիսակ Տատեան

**Տ Ե Ղ Ե Կ Ա Բ Ե Ր**

Գ . Ս . ՕՏԵԱՆ

Վասն Աղաբէկեան Սարգիս Էփեմի Գորիս արժանութեամբ :

Գ . Ս . ՕՏԵԱՆ

Օտեան Գ . էֆ . — Երեսփոխան էֆէնտիներ , խօսող-  
 ներուն վերջինը , Աղաբէկեան էֆէնտի , հարցում մը ուղ-  
 ղեց ուղղակի առ իս , բայց ես միայն անոր պատասխա-  
 նելու համար չէ որ ռաք հլայ , այլ անկէ առաջ խօսողնե-  
 րուն ալ միանգամայն պիտի պատասխանեմ : Երբ ի սկզբանե

Ատեմապետ էֆէնտին Քննիչ Յանձնաժողովոյ տեղեկագրին  
 եղբակցացութիւնը քուէի զնել առաջարկեց , ամենէն առաջ  
 Մէրեմ Գուլի էֆ . դէմ ելաւ այս առաջարկութեան , ըսելով  
 թէ Յանձնաժողովոյ քննութեամբը Սրբազան Պատրիարք Հօր  
 յանցանք մը գործած չըլլալը հաստատուած է , եւ իբր ապ-  
 ցոյց մէջ բերու թէ Յանձնաժողովը աղաչէր է Նորին Սրբազ-  
 նութիւնն իր հրաժարականը յետս կոչելու : Այս խօսքը բա-  
 ցատրութիւն պահանջեց , եւ տալիք բացատրութիւնս միւս  
 խօսքերուն ալ թերեւս իբր պատասխան պիտի ծագայէ .  
 Յանձնաժողովը պաշտօն չունէր քննելու թէ Սրբազան Պատ-  
 րիարքը յանցաւոր էր թէ ոչ : Ամբաստանութիւն չկար , եւ  
 Յանձնաժողովը չէր կարգեալ իբր քննիչ դատաւոր , այլ  
 քննիչ միայն անհամաձայնութեան պատճառաց :

Ուստի իրաւունք չունէր , ոչ յանցանք գործած է Պատ-  
 րիարքին ըսելու համար , ո՛չ գործած՝ չէ ըսելու : Յանձնա-  
 ժողովը իր տեղեկագրին մէջ տեսած է արդէն՝ թէ այս  
 կերպ քննութիւն եւ դատաստան մը այն ատեն կրնայ ըլլալ ,  
 երբ օրինաւոր ամբաստանութիւն մը երեւան գայ : Բայց  
 ինչո՞ւ Յանձնաժողովը աղաչեց Սրբազան Պատրիարքին ետ  
 առնել իւր հրաժարականը , եւ ինչո՞ւ հիմա Ընդհանուր Ժո-  
 ղովին ալ կ'առաջարկէ որ ընդունի հրաժարականը : Յանձ-  
 նաժողովս երկու կողմէ մէջ բերուած պատճառներու վրայ  
 յիշելով եւ տեսնելով որ եթէ մէկ կողմէն Սահմանադրու-  
 թեան գործադրութիւնը կը պահանջուի , միւս կողմն ալ  
 հետս չէ Սահմանադրութեան դէմ : Որովհետեւ անհամաձայ-  
 նութիւնը Սահմանադրութեան գործադրութեանը նկատմամբ  
 գոյացած էր , Յանձնաժողովը կրցաւ հաւտալ թէ երբ այս  
 պատճառը վերնայ , կրնան միաբանիլ Սրբազան Պատրիարքն  
 ու Բաղաքական Ժողովը : Ուստի նախ փորձ մը ըրաւ Սրբա-  
 զան Պատրիարքին քով իր հրաժարականն ետ առնել տալու  
 համար . չյաջողեցա՛ւ , հիմա ալ երեսփոխանաց քով փորձ  
 կ'ընէ հրաժարականն ընդունել տալու համար , պատճառը  
 մէկ խօսքով բացատրած է Յանձնաժողովը , եւ այդ մէկ  
 խօսքը շատ աւելի կ'ըսէ , քան իմ շատ խօսքերս . «Կացու-

թիւն մը երբ այսքան կը ձգտի՝ պէտք է խզի» : Մեր պաշտօնէն դուրս ըլլալով դատել կրկու կողմն ալ . թէ Սրբազան Պատրիարք եւ թէ՛ Քաղաքական Ժողով անպաշտ կը մնային ազդին անջեւ : Անհամաձայնութեան պատճառն երեւան եկած եւ որոշուած ըլլալով , պատճառին հետ , որուն ինչ կզանակաւ կարգադրուելուն համար Յանձնաժողովին ըրած առաջարկութիւնները լսեցինք . կրնար վերնալ անհամաձայնութիւնն ալ , Յանձնաժողովս տեսաւ թէ այդ բնական վիճակին մէջ չէր մնացած խնդիրը , տեսաւ որ Սրբազան Պատրիարքին համար անկարելի էր իր հրաժարականը ետ առնել ,եթէ նոյն իսկ Քաղաքական Ժողովը պաշտօնէ քաշուելու ալ ըլլայ , կը պնդեմ ասոր վրայ , վասն զի Սրբազան Պատրիարք Հօր անկեղծութեանը վրայ կտակածելու պատճառ մը չունիմ :

Նորին Սրբազնութիւնը Սահմանադրութեան անգործադրելի կէտերը նշանակած էր . Յանձնաժողովս մէկ քանի կէտերուն սրբազնութիւնը անհրաժեշտ կը դատի եւ կ'առաջարկէ Ընդհ . Ժողովոյդ , այլ մեր առաջարկութիւնները կը տարբերին քիչ մը Ս . Պատրիարքին առաջարկութիւններէն , ի մի բան , այս եւ ուրիշ պատճառներով Ս . Պատրիարքը իր հրաժարականը ետ չուզեր առնել , հաւատացէք ինձի , մի՛ երկարէք այս վիճարանութիւնը ի սէր խաղաղութեան , ի սէր Սահմանադրութեան եւ ի սէր անձանց , ի սէր Ս . Պատրիարքին , ընդունեցէք իր հրաժարականը : Այսպիսի պարագայի մէջ որչափ շուտ գործենք՝ այնչափ ազէկ գործած կ'ըլլանք : Ս . Պատրիարքը իմ վաղեմի բարեկամն է , իմ զգացումներս չեն այլայլած իր վրայ , եւ կը յուսամ որ անայլայլելի կը մնան մինչեւ ի մահ : Աս է Ս . Պատրիարքին օգուտը , աս է ազդին խաղաղութեան օգուտը :

Ինչ որ մինչեւ հիմա ըսի , կրնայ միանգամայն իբր պատասխան ծառայել Օգոստէն էֆէնտիի ըրած դիտողութեանցը մեր տեղեկագրին վրայ : Նա յաւելցուց թէ մեր տեղեկագրին մէջ կան կէտեր՝ որ գովեստից եւ ծափահարութեան արժանի են , եւ թէ կան այնպիսի կէտեր ալ որ գովեստի արժանի

չեն ու անընդունելի են , կը վախաբէի դիտնալ թէ որո՞նք են այդ կէտերը , որպէս զի իր դիտողութեանցը պատասխանէիս Գովեստ չեմ փնտռեր տեղեկագրին համար . եթէ արժանիք մը ունի նա , իւր կատարեալ անկողմնասիրութիւնն է : Իսկ թէպէտ անընդունելի դատած կէտերը կ'ուզէի դիտնալ որ պատասխանեմ , բայց որովհետեւ այսօր պատրաստ չըլլալը յայտնեց , միւս կողմէն ես ալ չեմ ուզեր որ երկարի վիճարանութիւնը , անոր համար կը վախաբիմ որ կրկակողմանի հաւանութեամբ հոս թողունք կնքենք այս վիճարանութիւնը եւ անմիջապէս մեր կղրակացութիւնը քուէ զնենք :

Այժմ կուզամ Աղաբէկեան էֆէնտիի հարցման պատասխանել . նա ըսաւ թէ Ս . Պատրիարքը դատեցէք , վասն զի ամբաստանուած էր , ինչո՞ւ Քաղաքական Ժողովէն ալ չգատեցիք :

Թէ Սրբազան Պատրիարք Հայրը եւ թէ Քաղաքական Ժողովը կրկուքն ալ հրաժարական մատուցած են , Ժողովը պարտ մը ունի ընդունելու կամ մերժելու . բայց եթէ Ժողովը հրաժարականները չընդունի , պէտք որ տուողներն ալ ետ առնեն : Քննիչ Յանձնաժողովը ոչ ձեր վստահութեամբը պատուեցիք եւ կարծեմ ձեր վստահութեանն արժանապէս պատասխանեց , տեղեկացաւ այդ կէտին ալ , Ս . Պատրիարքին հետ խօսեցաւ , եւ բան մը որ՝ տեղեկագրին մէջ չկայ , հոս կրնամ յայտարարել , Քաղաքական Ժողովոյ անդամոց ոմանց հետ ալ կէս պաշտօնական կերպով բանակցեցաւ , եւ համոզուեցաւ որ կրկու կողմէն հրաժարականները բացարձակ են : Եթէ մեր վրայ վստահութիւն ունիք , ահա մենք ենք որ կը յայտնենք զայս , իսկ եթէ չէք վստահիր մեր այս ըսածին պատգամաւորութիւն մը կը զրկէք ձեր կողմէն , որ կ'երթայ բուն իրենցմէ կը տեղահայ : Այս ըսածն նաեւ Այվատեան էֆէնտիի հարցմանը կրնայ ծառայել : Վերջապէս կղրակացընելով կը յայտնեմ որ մէկ տեղեկագրի մը բերնք հոս . իրաւ է թէ տպագրութեամբ հաղորդուած չէ երեսփոխանաց , բայց քննութեան առարկայ կղած կէտերն ամենուն ալ ծա-

նօթ էին ժամանակէ մը ի վեր, եւ Յանձնաժողովին քննութիւնը կրցաւ դատել ժողովը որ անկողմնապահութեամբ ու անհառութեամբ եղած է. տեղեկագիրը չսող հասկցող մը չեղաւ, կարծեմ թէ Ընդհ. ժողովը օրինաւորապէս շարժած կ'ըլլայ, եւ այս օրինաւորութեան դէմ չգիտեմ ինչ առարկութիւն կրնամ յարուցանել, անմիջապէս քուէի դնելով: Ես զայս կ'առաջարկեմ:

Նոյնը. — Պայմանաւոր հրաւեր մը ընելէ առաջ՝ պէտք է գիտնալ նախ թէ, նոյն իսկ առանց պայմանի հրաւեր մը ընդունելի կ'ըլլայ: Եթէ Պատրիարքը ըսէ. «Ռուք առանց պայմանի ալ գալու ըլլայիք, ես չպիտի առնէի հրաժարականս, հապա ինչ կն այդ պայմանները», ինչ պիտի ըսէք:

Նոյնը. — Ինչնչ Յանձնաժողովս իր տեղեկագրին մէջ յայտնեց թէ Սրբազան Պատրիարքին քով փորձ մը ըրած էր հրաժարականը եւ առնելու համար եւ չէր յաջողած, հիմա կարծիք յայտնողներ եղան թէ Ս. Պատրիարքը զխնալով որ Յանձնաժողովը պաշտօն չունէր իր հրաժարականն եւ առնել ապու, անոր համար թերեւս եւ առնել չէ ուղած: Միւս կողմէ Մազլումեան ԼՖ. առաջարկեց որ Սրբազան Պատրիարքը Հօր Սահմանադրութեան ինչ ինչ կէտերու մասին ըրած գիտողութիւնը խնդրոյ կարգն անցնի: Յանձնաժողովս ալ արդէն զայդ առաջարկած է իր տեղեկագրին մէջ: Ուրեմն եթէ այդ իմաստով, այսինքն ոչ թէ Յանձնաժողովս ըրած յայտարարութեան անվստահութեամբ, այլ յանուն Ընդհանուր ժողովին ալ փորձ մը ընելու նպատակաւ, պատգամաւորութիւն մը զրկել առ Սրբազան Պատրիարքն, այդ պատիւ մը ընել է նորին Սրբազնութեան, որու Յանձնաժողովս չի հակառակիր:

Ն Ի Ս Տ Կ Է . 16 Նոյմ. 1873

Օտեան Գ. ԷՖ. — Ես չեմ կարծեր որ հրաժարեալ Քաղ. ժողովոյ անդամոց վերընտրութիւնը Սահմանադրութեան տառին կամ ոգւոյն դէմ ըլլայ: Սահմանադրութիւնը օրինական պայմանաժամը լրացնող Քաղ. ժողովոյ անդամոց համար տրամադրած է որ անմիջապէս վերընտրելի չըլլան, եւ այս մէկ պատճառով, սահմանադրական կարեւոր սկզբունք մը յարգելու համար, իշխանութեանց մշտնջենաւորութիւնն արգիլելու համար: Պահ մը առաջ Մատթէոս վարդապետ հարցուց թէ նոր ընտրուելիք Քաղաքական ժողովը նախորդին շարունակութիւնը պիտի ըլլայ թէ ոչ նորէն երկու տարւոյ չըջան պիտի կատարէ: Այս հարցման պատասխանին մէջ է ներկայ խնդրոյն ալ լուծումը: Քաղաքական ժողովը երկու տարւոյ չըջանը լինոց՝ ու ըստ Սահմանադրութեան լուծուեցա՞ւ, — չէ՛, Սրբազան Պատրիարքը հրաժարեցաւ, անոր համար եւ նոյն օրը Քաղաքական ժողովն ալ հրաժարեցաւ: Ընդհանուր ժողովը յանձնաժողով մը կարգեց այս հրաժարականաց պատճառները քննելու համար: Յանձնաժողովին տեղեկագիրը կարգացուեցաւ, բայց քուէարկուեցա՞ւ մի Ընդհ. ժողովին մէջ, — չէ՛, ոչ Սրբազան Պատրիարքին հրաժարականն ընդունուեցաւ Ընդհ. ժողովին մէջ, ո՛չ Քաղ. ժողովինը, միւսնոյն բանը արտաքին գործոց վսեմափայլ պաշտօնէին ալ ըսի, երբ այս խնդրոյն համար խորհրդակցութեան հրաւիրեր էր ազգայիններէն ոմանք, բայց քանի որ Սրբազան Պատրիարքին հրաժարականը կատարուած իրողութիւն մը համարելով նաեւ Քաղ. ժողովին հրաժարականը եւ անշուշտ այս քաղաքականութեան եթէ պիտի հետեւինք, կատակերգութիւն չպիտի խաղանք ու միւս կողմէն նորէն միւսնոյն անձինքը Քաղաքական ժողովականութեան ընտրենք: Մէջերնիդ կարծողներ կ'ըլլան թէ ես սամակ կը խօսեմ, վասն զի հրաժարեալ Քաղաքական ժողովոյ անդամոց մէջէն երկուքը միայն կ'առնեմ, որոնք ամէնէն

աւելի ենթակայ եղած են յարձակմանց , Գրիստոստուր է-  
 ֆէնտին եւ Փափազեան էֆէնտին , եւ երկուքն ալ կը սի-  
 բեմ , մէկը իբրև անձնուէր ընկերութեան հիմնադիր ու ա-  
 նընդհատ անդամ այսքան տարիներէ ի վեր , այնպիսի ծա-  
 ոայութիւններ մատուցած է ու կը մատուցանէ ազգին , ու-  
 ըրոց յարգն ամենէն աւելի կը ճանչնամ , եւ կը փափաքէի  
 որ իր բոլոր գործունէութիւնն այդ նպատակին նուիրէր :  
 Միւսը , Փափազեան էֆէնտին , եւ անոր չափ գործունեաց  
 մարդ քիչ կը ճանչնամ : Ուրեմն անձանց դէմ բան մը չու-  
 նիմ : Բայց Սրբազան Պատրիարքին աւել Տեղապահ մը պիտի  
 ընտրուի , ու մենք լուռօքեամք կ'ընդունինք կոր այս անօ-  
 րէնութիւնը , ընտրենք նոր Բաղ . Ժողով մըն ալ սր հրա-  
 ժարեալ Բաղ . Ժողովին տեղը պահէ մինչեւ վերանորոգման  
 Սահմանադրական պայմանաժամը : Բաղաքական Ժողովոյ  
 անդամք իրենք ալ յայտարարեցին որ եթէ վերստին ընտ-  
 րուին չպիտի ընդունին : Ուստի այս խնդիրը գոցուած է :  
 Կը մնայ տեղեկագիրն խնդիրը բաց , եւ ես միայն անոր հա-  
 մար եկայ ժողովին , բայց կը նայիմ որ այսօր օրը չէ այդ  
 խնդրոյն , նորէն պիտի դամ երբ այդ խնդիրը վիճարանու-  
 թեան զրկուի եւ իբրև տեղեկաբեր պիտի պաշտպանեմ մեր  
 տեղեկագիրն այնքան յարձակմանց ու այնքան զրպարտու-  
 թեանց դէմ , որոնց նշաւակ ըրին ոմանք թէ՛ զՅանձնաժո-  
 զովն եւ թէ՛ զՏեղեկագիրն , տեղեկագիրն՝ որ աներկիւղ  
 կ'ըսեմ ձեզի այսօրուրնէ կատարեալ անաչառութեան ու ան-  
 կողմնակալ ճշմարտասիրութեան գործ մըն է :

Ն Ի Ս Տ Գ . 5 Յունիս 1874

Հրատարականք եւ բացակայութիւնք երեսփոխանաց

Դիւանը հրատարեալ եւ բացակայ երեսփոխանաց  
 կողմէն հասած նամակները ներկայացնելով կը կարգայ , որ  
 ահաւասիկ :

Բերա , 27 Յունիս 1874

Ամենապատիւ Ս . Հայր ,

Ընդունեցոյ Ձեր Սրբազնութեան նամակը որով կը բա-  
 բեհածիք ինձ թէ Ազգային Ընդհանուր Ժողովը իւր զիւանին  
 նորոգութեան պայմանաժամը լրացած ըլլալուն իր վերջին  
 նիստին մէջ նոր ընտրութիւն կատարելով , քուէից առաւե-  
 լութեամբ երկրորդ աստիճանէ ընտրած է զիս , եւ կը հրա-  
 վիրէք սոյն կարեւոր պաշտօնը կատարելու Ընդհ . Ժողովոյ  
 նիստերուն ներկայ գանուելով :

Կը ցաւիմ որ անկարելի ինձ կատարել Ձեր Սրբազնու-  
 թեան այս հրամանը : Ընդհանուր Ժողովը պէտք է որ ու-  
 ըրիչ մէկը ընտրէ իրեն երկրորդ աստիճանէ , եւ արդէն ե-  
 ընտրութեան լինէ ալ շատնց հրատարեալ եմ :

Մնամ Ամենապատիւ Սրբազան Հօրդ  
 Ամենախոնարհ ծառայ եւ որդի  
 Գ . Ս . Օսեան

Ն Ի Ս Տ Բ . 1879

Օտեան Գ . էֆ . Մայր Դիւանի աստիճանէ կ'ընտրուի ,  
 որու հրատարակիրն է հետեւեալը .

Բարեկամք եւ օրագիրն Մասիս աւետեցին ինձ զանուա-  
 նումն իմ յատենապետութեան Ընդհ . Ժողովոյ : Յետ բազ-  
 մամեայ բացակայութեան ի ծոցոյ Ազգ . Երեսփոխանութեան ,  
 ինչ մեծ միտիթարութիւն ինձ համար որ հազիւ ամղամ ընտ-  
 րուած՝ ընտրուիմ նաեւ նորէն զլուխ իր զիւանին . Երբ ազ-  
 գային երեսփոխանութիւնը եւ ինձ ազգը այնպիսի պատիւ  
 մը կ'ընէ ինձի , կը մտմտքի սիրտս մտածելով թէ բացար-  
 ձակ անձնուիրութենէս զատ ուրիշ արժանիք մը ունեցած  
 չեմ եւ չունիմ :

Բանի առաւել ցաւ է ինձ որ յետ վայելելու զայս պա-  
 տիւ պարտաւորեալ եմ հրատարելու պաշտօնէն : Այլ եթէ

ազգային երեսփոխանութիւնը կը հաւտայ թէ մինչեւ հիմա իմ անձնաւորութիւնս չի ստեց . կ'ընդունի նաեւ հրաժարականս հաւատալով , առանց վիճարանութեան որ անկարելի է , թէ պարս է ինձ հրաժարիլ : Շատ է եթէ յաջողիմ ոչ սուղ ժամանակ իբր երեսփոխան ազգին :

Եւ արդ զի կը հաճի Ընդհ . ժողովը որ մնամ երեսփոխան , կը ներէ՞ արդեօք որ իբր այն՝ յայտնեմ իմ ցաւ տեսնելով Ատենապետի աթոռ որ կը զրկուի այն անձէն , որ այնքան սարկներ վարեց ատենապետութեան պաշտօնը , այնքան տաղանդով ու այնքան իմաստութեամբ , որ իր անկապտելի առաջին պարտաւորութիւնն է : Որչափ սիրելի եւ փափաքելի ինձ համար եւ յուսամ բոլոր երեսփոխանաց համար , իրմէ միայն առաջնորդուիլ մեր վիճարանութեանցը մէջ , վիճարանութիւնք որ աներկմիտ եմ թէ խաղաղական եւ միայն օգտակար պիտի ըլլան Ազգին համար :

Մնամ Ամեն . Սրբազնութեանդ եւ Ամենասիրելի Հօրդ  
Ամենախոնարհ ծառայ եւ խանդակաթ որդի  
Գ . Ս . Օսեան

Ն Ի Ս Տ Գ . 1879

Բ . հրաժարագիր Օսեան Գ . Էֆէնտի

21 Մայիս 1879 , Բերս

Գերապատիւ Սրբազան Հա՛յր ,

Կարդացի Ազգ . Երեսփոխանական ժողովոյ որոշումը իմ հրաժարականիս համար : Անարժան նախատանաց կրնամ հանգուրժել , անարժան չափադանց պատուոյ չեմ կրնար ըմբերել , առաջին պարագային մէջ զիտակցութիւնս հանդարտ է , երկրորդ պարագային մէջ զիտակցութիւնս կը բողբէ ինձի գէմ : Խնայեցէ՛ք , ուրիմն իեծի Ս . Հայր , անկարելի է որ

ընդունիմ այն մեծ պատգամաւորութիւնը , զոր կը զրկէ ինձի Ընդհանուր ժողովը : Առաջիկայ նիստին կը ներկայանամ պատկառելի ժողովին եւ իմ խնդիրս անձամբ կը ներկայացնեմ :

Մնամ Գեր . Սրբազան Հօրդ  
Խ . Մ .  
Գ . Ս . Օսեան

Օսեան Գ . ԷՖ . — Այն նամակը , զոր պահ մը առաջ ընթերցաք , անձնական նամակ է Սրբազանին ուղղուած , եւ դրուած չէր բնաւ ժողովոյդ հաղորդուելու համար : Իսկ Նախագահ Սրբազանին եւ Մայր Դիւանին հետ մեր վերջին տեսակցութեան արդիւնքն այն եղած էր որ Ատենապետի ընտրութիւնը պիտի անցնէր այսօրեայ նիստին օրակարգը , բայց զարմացմամբ տեսայ ի վերջէ որ այնպէս չէ եղած , այլ դարձեալ Ատենապետի հրաժարումն՝ իբր խնդիր՝ նշանակուեք է օրակարգին մէջ , Ձեր ընտրութիւնն եւ կրկին կրկին հրաւէրը մեծ պատիւ մըն է ինձ , եւ անհուն երախտապարտ կ'ընէ զիս , սակայն կը տեսնեմ որ միայն պատիւ մը չէ որ կ'ուզէք ընել ինձի , այլ անպատճառ պաշտօնը յանձնել կ'ուզէք : Եթէ կարելի լինէր ընդունիլ զայն , իմ ազգային կեանքս զիտցողները կրնան վկայել թէ չպիտի դերեւէի , բնաւ մատուցանելու ծառայութիւնն , զոր կը պահանջէր ինձմէ , բայց քանի որ կը մերժեմ , ըսել է չեմ կրնար , եւ երբ կը պնդէք , կասկածի ետեւ թողած կ'ըլլաք անկեղծութիւնս : Եւ ի՞նչ բանի համար այսքան ստիպում ձեր կողմէ , ի՞նչ օգուտ կը կարծէք թէ պիտի կարենամ մատուցանել իբր Ատենապետ բազմելով ժողովիդ միջ . Ընդհանակառկն՝ ես կը կարծեմ որ եթէ կրնամ օգտակար ըլլալ , աւելի իբր երեսփոխան կրնամ : Ատենապետի պաշտօնը ոչ այլ ինչ է , եթէ ոչ՝ ժողովին բարեկարգութեանը հակել : Եթէ երեսփոխանք նախանձխնդիր լինին ատենանին բարեկարգութիւնն անկեղծ պահելու , Ատենապետի պաշտօնը



ինքնին կը կատարուի իսկ եթէ ընդհակառակն՝ երեսփոխանք շարունակ ատենական կանոնաց դէմ վարուին, առանց կարգի խօսիլ ուզեն, ինդրէն զարդուղին, եւ վերջապէս ժողովին բարեկարգութեան պայմանները չյարգեն, Ատենապետն՝ ո՛վ որ ալ է՝ շատ դժուար կ'ըլլայ իր պաշտօնը: Եւ ու ինծի հետ շատեր երեսփոխան մնալով՝ բարեկարգութեան ինդրոյն, իսկ եթէ այս կանոնակարգ պաշտօնէն զատ արտաքոյ կարգի ծառայութիւն մըն ալ մատուցանելու կոչուի Ատենապետը, ես այդ ծառայութիւնը մատուցանելու յարմար անձը չեն: Եւ ի՞նչ մեծ անտեղութիւն, շարունակ այս հրատարականի խնդիրներով զբաղիլ, այս որչա՛փ ընտրութիւն, ո՛րչափ հրատարում է ամէն օր: Ամէն օր ընտրեալ մը կայ, որ կը հրատարի, ընտրող մարմինը կը սնդէ: հրատարակալը կը պնդէ, երկու կողմէն շատ մը քաղաքավարական ցոյցերով ի նամակներ կը դրուին, օրագիրք զանոնք կը հրատարակեն: Աղբն ի՞նչ կը մտածէ երբ տեսնէ իր դսրծերը տեսնելու կարգեալ ժողովները շարունակ հրատարականի խնդիրներով զբաղեալ:

Իմ ազգային կենացս մէջ՝ երբ կարծեր եմ թէ կրնամ օգտակար լինիլ, Ազգը զիս չկոխած՝ ինքնին դործ եւ պաշտօն ստանձներ եւ յօժարափոյթ ծառայեր եմ, արդ երբ ազգը զիս ի պաշտօն կոչէ, եւ կարելի ըլլայ ընդունիլ, ինչո՞ւ մերժեմ: Եւ արդ՝ ինչո՞ւ չէք զիջանիր, Տեա՛րք երեսփոխանք, ընդունելու հրատարականս: Թերեւս ուրիշ հրատարական մը որ կայ, զայն չընդունելու ձեր պարտաւորութիւնը զձեզ կը մղէ ամենայն հրատարման դէմ գնելու, այսպէս անա իմ հրատարականս որ ինքնին կարեւորութիւն մը չունի, նշանակութիւն փոխ կ'անու մեծ հրատարականէ մը: Այլ ի՞նչ տարբերութիւն երկու հրատարականաց մէջ, եւ եթէ այն մեծ հրատարողին տեղն ըլլայի ու իմ պաշտօնավարութիւնս ազգային պէտք մը ըլլար՝ ինչպէս է իրենը, մեզք պիտի համարէի ինծի հրատարիլ կամ պնդել հրատարականիս վրայ: Իսկ որովհետեւ այնպէս չէ եւ որովհետեւ ըստ իս՝ հրատարելս ու երեսփոխան մնալս աւելի օգտակար է, իմ

չնորհակալութիւնքս նորէն յայտնելով պատկանելի ժողովոյդ, կ'ազգչեմ. կը թախանձիմ որ առանց այլ եւս երկարելու խնդիրը, ընդունիք հրատարականս եւ անմիջապէս ձեռնարկէք Ատենապետի ընտրութեան:

Ն Ի Ս Տ Ի .

Օտեան Գ. ԿՅ. — Մեր երեսփոխան ընկերներէն Իւթիւճեան էֆէնտին հարցման երկու կէտերուն համար դիտողութիւն ըրաւ թէ կրնան շարաթ մը ետեւ ընդունիլ իրենց պատասխանը, սակայն առաջին կէտին համար անմիջական պատասխան պահանջեց: Կուգամ եւ ես ձայնակցիլ իրեն: Ինական է որ երեսփոխան էֆէնտիներն եւ այս երեսփոխան տաճարէն դուրս գանուող ամեն ազգայինք յուզուած ըլլան տեսնելով որ իրենց ազգին ու երկրին անունը փոխելու եւ զայն Բիւրտիսթան անուանելու են, իրենց հարստահարչաց անունով: Որքան բնական է այս յուզումը, նոյնքան իրաւացի է որ անմիջական պատասխան մը տրուի այս մասին:

Եւ չեմ կարծեր որ Անգղիական կառավարութիւնը Հայաստան անունին տեղ Բիւրտիսթան բառը գործածած ըլլայ եւ ի՞նչ տեսակ քաղաքականութեան համար պիտի ընէ զայդ: Անկարելի է ազգի կամ երկրի մը անունը փոխել. ատերութիւն մը որքան ալ հզօր ըլլայ՝ անհատի մը անուն անգամ չէ կարող փոխել. Անգղիական կառավարութիւնն ի՞նչ պատճառ կրնայ գնեցած կրնայ ըլլալ որ այսպիսի անկարելի բանի մը ձեռնարկէ. Եթէ ստուգիլ կայ այս տեսակ իրողութիւն մը, շատ շատ աշխարհագրութեան անհմուտ երկրորդական պաշտօնակալի մը սխալն ըլլալու է, եւ այս տեսակ պարագայի մէջ՝ Աղբն իրաւունք կրնայ ունենալ դիտողութիւն ընելու: Յանձնախումբը ի՞նչ տեղեկութիւն ունի այս մասին:

Օտեան Գ. ԿՅ. — Որովհետեւ Յանձնախումբն իրեն

ստուգութիւնը կը հաստատէ , հարկ կ'ըլլայ մեզ զայս եւ  
զիտնալ թէ այս պարագային մէջ ինչ ըրած է վարչութիւնը  
կը հաճի՞ արդեօք Յանձնախումբն այս մասին եւս տեղեկու-  
թիւն տալ ժողովին :

Ն Ր Ս Տ Ը :

Օսեան Գ . ԷՖ . — Կարծեմ Սրբազան Պատրիարքը հա-  
ճութիւն յայտնեց անձնութեամբ բազմելու իր աթոռը  
եթէ այսպէս , հարկ չկայ այլեւս խօսիլ այս նիւթին վրայ ,  
եթէ ոչ՝ կը խօսիմ :

Օսեան Գ . ԷՖ . Սրբազան Պատրիարք Հօր հրաժարակա-  
նին ինչ պատճառներու համար ալ եղած ըլլայ , զո՞ն մը ա-  
ռաջ բերած է , եւ այն զոնը Տ . Մատթէոս Եպիսկոպոսն  
եղած է : Գո՞հ եմ որ ինք բայաւ այս խնդիրն որ ես ալ  
կարենամ այս վկայութիւնն ընել իրեն համար : Շատ տարի-  
ներ առաջ ճանչցայ զինքը դարձեալ այս ժողովին մէջ , այն  
ատեն աւելի եռանդ ունէր , իսկ երբ անկէ հետեւ կրկին  
հանդիպեցայ իրեն ազգային գործոց մէջ , տեսայ որ իր  
եռանդեան հետ լծորդած էր նաեւ փորձառութիւն՝ լի հայրե-  
նասիրութեամբ : Բայց դժբախտաբար իր այս պաշտօնավա-  
րութեան մէջ չորս ամիս շարունակ ոտնակապեալ մնաց ,  
որովհետեւ Բ . Դուսը չէր ճանչցած զինքը , եւ ինք՝ ժո-  
ղովրդեան վիշտերը լսելու դատապարտեալ՝ չէր կրնար ոչ  
Բ . Դրան թ ա գ բ ի ը գրել , ոչ անոնց ցառոց դարման մա-  
տուցանել , եւ այսպէս կատարեալ զո՞ն մը վիճակին մէջ  
զրուած էր : Արդ երախտապարտ մնալով Սրբազան Պատ-  
րիարք Հօր , որ անձնութեամբ հաճեցաւ բազմիլ իր աթոռը  
կարծեմ մեր պարտքն է նաեւ՝ Տ . Մատթէոս Եպիսկոպոսին  
չնորհակալութեան քուէ մը տալ :

Օսեան Գ . ԷՖ . — Ես պարզապէս կ'առաջարկեմ որ  
ազերսազրին այս կէտը քուէով մը մերժուի անմիջապէս :  
Խնդրոյն օրինական կէտին մէջ չեմ ուզեր մտնել , վասն զի

բայցայայտ ճշմարտութիւն մըն է որ ոչ ոք իրաւունք ունի ,  
մինչեւ իսկ հազար , երկու հազար , երկու հարիւր հազար  
հոգի , այս տեղ դալու եւ այսպէս բռնի այս կամ այն երես-  
փոխանին պաշտօնակութիւնը եւ ազգային գործերէ հեռա-  
ցումը պահանջելու , զի ազգն է դայն ընտրողը եւ մարդ չի  
կրնար ազգին ընտրածը չուզել : Աս՝ խնդրոյն օրինական  
կէտն է : Ասկէ դատ՝ կարելի է որ այս պահանջումը մեր եր-  
կու ընկերներն վիրաւորելու նպատակաւ եղած ըլլայ , ես  
ասոր դէմ ալ կը բողոքեմ : Ազգային զանազան խնդրոց մէջ՝  
չատ անգամ ես ալ անոց հետ համամիտ չեմ գտնուած , եւ  
երբեմն ինծի հակառակ եղած են , բայց կը հաւատամ որ  
միշտ ազգին օգտակար եղած են իրենց ծառայութեամբը :  
Գաղափարաց եւ կարծիքներու անհամաձայնութիւն՝ այս  
աստիճան յատաջ մղել , եւ մինչեւ անհաշտ ատելութեան  
հասցնել , մանաւանդ Ազգին ներկայ վիճակին մէջ , ուր  
միութիւն եւ զոհողութիւն հարկաւոր է : Մարդիկ կան , եւ  
կը լսեմ նաեւ թերթեր , զորս ես չեմ կարգացած , որ Սրբա-  
զան Պատրիարք Հօր էն աղէկ գործերը , եւ այս ժողովին  
էն օգտակար անօրինութիւնները շարաշար դատափետել եւ  
պախարակել , եւ այս ու ու այն պաշտօնակալը վատահամ-  
բաւել իրենց պաշտօն ընտրած են , բայց նոյն իսկ այդ ընող-  
ներն որովհետեւ Հայ են , կը հաւատամ որ ամէն անգամ  
երբ այդպէս կ'ընեն , շատ չանցնիր կը զզջան իրենց ըսածին  
վրայ : Գրածնին Սրբազան Պատրիարքին դէմ է , իսկ խիզ-  
ճերնին անոր հետ : Մենք այս ատելութիւնը սնուցանողնե-  
րուն պէտք է սիրով պատասխանենք , եւ հաշտ կամար նա-  
յինք անոնց : Թէ որ այսպէս ընենք եւ կատարեալ անշա-  
հախնդրութեամբ վարուինք , անշահախնդրութիւն ոչ միայն  
դրամոյ այլ եւ փառաց , այլ եւ համբաւոց , այլ եւ ժողովրդ-  
դականութեան , կը հաւատամ որ կարենանք այն ատեն ճշ-  
մարիտ ծառայութիւն մը մատուցանել ազգին : Արդ՝ կը կրկ-  
նեմ դարձեալ , ազերսազրին այն կէտը՝ որ ինքնին նշանա-  
կութիւն չունի օրինաց առջեւ , այլ ատելութիւն կ'արտա-  
յայտէ միայն մեր երկու պատուական ընկերաց դէմ , պէտք  
է մերժենք մեր միաձայն քուէովը :

Նոյնը. — Կ'առաջարկեմ որ եթէ կարելի է՝ առանց վիճարանութեան ընդունուի այս հրաժարականն եւ Յանձնախումբին գործը Ա. Պատրիարք Հօր յանձնուի :

Ն Ի Ս Տ Ժ Բ .

Օտեան Գ. ԷՅ. -- Շատոնց է որ Ժողովոյ նիստերուն ներկայ դատուելով ազէկ մը չդիտեմ թէ՛ ի՞նչ ըսել է նախալճուով Վարչութեան յղել երեսփոխանի մը կողմէ՛ն ներկայացրեալ առաջարկ մը : Կարծեմ թէ այս յղումը գործադրութեան բարբառակ հրաման մը ըսել չէ, այլ սլարդապէս կը նշանակէ՛ առաջարկութիւնը Վարչութեան ուշադրութեան յանձնել, որ ազատ պիտի մնայ զայն ընդունելու կամ մերժելու, ինչպէս որ ինք հարկ դատի : Այսպէ՛ս է արդեօք, կը փափաքեմ զիսնալ որ ըստ այնմ քուէ տամ :

Նոյնը. — Եթէ նախալճուով Վարչութեան յղուի խնդիրն, ի՞նչ իմաստ եւ գործնական հետեւութիւն պիտի ունենայ :

Նոյնը. — Եթէ իւրաքանչիւր երեսփոխան առաջարկութիւն ընելու իրաւունքը այս կերպով գործադրելու ելնէ, եւ մենք որ հարիւր երեսփոխան ենք, ամէն անգամ եւրեքական առաջարկութիւն բերենք, որ իբր հրաման Վարչութեան յղուին ի գործադրութիւն, այնպէս ըմբռնելու է թէ Վարչութիւն չկայ այլեւս, այլ անոր ակ Ազգ. Ժողովը անցած է, որ վարչական գործերը կը անօրինէ եւ կը վարէ : Այս տեսակ կառավարութեան ձեւ մը գործադրել, անկարելի է ըստ իսկ իսկ եթէ առաջարկութիւնը յղուի Վարչութեան, միմիայն անոր ուշադրութեանը յանձնուելու համար, այնպէս որ Վարչութիւնն ազատ մնայ իր ուղած կերպովը գործելու, եւ Ազգ. Ժողովը իրեն վերապահէ միայն զայն դատելու իրաւունքը, այն ատեն Վարչութիւնն Ազգին մէջ իր գերը, իր պաշտօնը կատարած, իսկ Ազգ. Ժողովը գործադրած կ'ըլլայ

Քր վերատեսչութեան իրաւունքը, որով եւ կարելի կ'ըլլայ պահել պէտք եղած ներդաշնակութիւնը Վարչութեան եւ Ազգային Ժողովոյ մէջ : Արդ եթէ իմ ըսած կերպովս չէ յղումը, պէտք է անոր դէմ քուէ տամ, թէ ոչ կրնամ համաձայնիլ Վարչութեան յանձնարարելու համար :

Գ Ա Մ Բ Ա Ն Ա Կ Ա Ն

ՊԱՐՈՆ ԽԱԶՍՏՐՈՅ ՊԱՐՏԶՊԱՆԵԱՆԻ

Վանի մը օր կայ, բարեկամներու շատօր խումբ մը լսիկ մընջիկ ի գերեզման կ'ուղարկէր դազազ մը . . . սեւաթոյ՛ թողով : Հրճկուլաութիւնք ու հառաչանքներ կ'ընդհատէին մերթ ընդ մերթ բաղմութեան խոր լսութիւնն ու կը խտոնվէին քահանայից ու երգիցիկ մանկտոյն դամբանական տխուր եղանակներուն :

Ո՞վ էր անի որ դազազին մէջ պառկած՝ իր շուրջը կը ժողվէր իր բարեկամներէն անոնք որ կրցած էին իմանալ իր մահին սեւ լուրը : Ոչ ոք այն յուղարկաւորութեան ատեն սրտասանել կ'իշխէր զայն անուշը, մանաւանդ որ այն յանկարծահաս սարսափելի հարուածին տակ ճնշված՝ սրտապաւասա կային ամենքն, իբր անշունչ : Եւ ո՞վ արդեօք կ'իշխէ հարցնել առջի բերան, երբ ճամբան յուղարկաւորութեան մը հանդիպի, թէ ո՞վ է այն մարդն որ դազազին մէջ կը պառկի : Ով կ'ըլլայ ըլլայ . ամէն մարդ, ծանօթ ու անծանօթ, պատկառանք կանկ կ'անեն այն դազազին ս. ոչ եւ եւ յարգալիան կեցուածքով կը բարեւեն այն մեռելն՝ որ մարդ ան ալ մեզի պէս՝ այս աշխարհէս անցաւ, օրեր տեսաւ՝ է՛ որ զուարթ է՛ որ դժբախտ, կենցաղ մ'ունեցաւ քիչ-շատ մեքիւնին նման, եւ որ ա՛լ այժմիկ մէկ աշխարհէն ի միւսն անցած է : Սակայն այս հանապազօր պատահած մահերուն մէջ, այն անհասնում մարդերուն մէջ որոնք ուշ կամ կանուխ իրենց օրը կը վճարեն, երբեմն ալ անանկներ կը պա-

տահին , որոնց կեանքը՝ գրեթէ ուրիշ շատերու ալ կեանքն էր եղած , որոնց արեւը վերջապէս՝ ուրիշներու վրայ ալ կը ցոլանար , եւ երբեմն իսկ բովանդակ ազգի մը վրայ :

Ասանկներէն մէկն էր անա՛ Պարոն իմաչատուր Պարտիզպան , որի վերջին մնացորդաց յետին պատիւն ու մեծաբանքը կ'ընծայուէր , այս տարի յուլիսի 20երորդ օրը :

Ի՞նչ որ գուցէ արհամարոտ քրմիծաղ մը կը ձգէք այս անունը լսելով , ազայական չափազանցութեան մը տալով մեր այս խօսքերը . դո՛ւք՝ որ ձեր անթառամները մարմարիոն մաւսոյներու համար կը պահէք . դո՛ւք, որ ձեր բանաստեղծական յանգերը ոսկի դափնիներու միայն սեպնակահանած էք , գուք չէք կրնար զգալ ինչ որ զգացին անոնք որ զՊարտիզպան կը ճանչէին . որ անոր ըրած ազգային բարիքները գիտէին , եւ որ անոր գրչի ու սրբաի ազնուական կիւրքերը փառքերէ , պատիւներէ ու ոսկի պսակներէ վեր կը համարէին : Անի որ սոյն տողերս կը գրէ՝ ան այժմիկ , ցաւագին սրբտով , անոր կեանքին վերջին մասին վկայ ըլլալով կը գրէ . բարեբաստիկ անձերէն է ինք ալ որ Պարտիզպանին պատուական բարեկամութեան բարիքները վայելած են , անոր սրբտին է՛ն խորին ծայքերը բացված են իր աչքին առջեւ ու քանի մը տարի անոր հետ գրեթէ մի կեանք անցուցած է մաքուր ու զաղափարներով : Ափսո՛ս , ինքզինքն արդէն շատ ակար կը զգայ՝ տարիներով իր աչքին առջեւ ալ գծագրելու համար :

Պարոն Պարտիզպանին ծնունդն է 1809 , Նոյեմբեր 14 , Պոսֆորի Իւսկիւտար քաղքին մէջ : Թուականը կը ցուցնէ թէ մեր ազգին համար խաւարի եւ յետին ազիտութեան ժամանակի մը մէջ ծնած , երբ ո՛չ դպրոց , ո՛չ գիրք , ո՛չ դասատու եւ ո՛չ իսկ բնաւ ուսման սէր ու յարգ կար ազգին մէջ : Իր խոնարհ ու աղքատիկ ծնունդն ալ կը զրկէր զինքը անտարակոյս դաստիարակութեան այն ցանցառ միջոցներէն որ կային ալ նէ՝ հարուսաներուն էին պահուած : Ի՞նչպէս կրցաւ իր ուսումնասիրութեանն ու մանաւանդ իր բնական կոչումէն յառաջ մղեալ , այն ազիտութեան թանձ

քամած խաւարներու միջեւէն եւ իր նուաստ վիճակէն , լեզուաց եւ գիտութեանց լուսաւոր թեւերու վրայ բարձրանալ , եւ մինչեւ մեր օրերն իսկ , գիտցած լեզուներովը , գիտութիւններովը , գրական հմտութիւններովը , պէս պէս ներհուն անգեկուցութիւններովը եւ մանաւանդ խոհական գըլխովը ու ազնուական սրտովը , հաղագիւտ անձերէն մէկն հանդիսանալ ազգիս մէջ : Ասի միշտ նշանաւոր անձերու մենաշնորհն է եղած , եւ միայն Աստուած գիտէ յետին նսեմութեան մէջէն ազգի մը լուսաւորութեան թեւարկուներ յարուցանելու գաղանիքը :

Պարոն Պարտիզպան՝ ազգային գրականութեան ունեցած հմտութիւններէն դատ , երոպական քանի մը լեզուներու ալ քաջածանօթ , անոնց մէջ ստացած էր բնական գիտութեանց հմտութիւն եւ քանակազիտութիւնն (մաթէմատիք) իր ամէնչն եւեւ սիրած ուսումն էր , որի մէջ քաջ եւ երեւելիներէն մէկն եղաւ : Ափսո՛ս որ գիտութեանց այս դասազան մասերուն վրայ իր երկարատիրութիւնները թագուն մնացած են , ո՛ր մէկն ալ բարեկամներու քով ցիրուցան (\*) : Սակայն կան անանկ գործեր ալ , որոնք թէպէտ յատկապէս իր անուշովը չեն հրատարակուած , բայց իր ներշնչովը , քաջալերելովը , տուած լոյսերովը եւ իրմէ քաղուած անգեկութիւններով կամ իր սրբագրութեամբը գլուխ կլած են : Իսկ իր արդիւնքը սալո՛ւլ աւելի մեծ է , որ ազգին մէջ անանկներ յարուցած է ինք իր աշխատութեամբն ու խրախուսանօքը , որ կամայ կամաց կարող ըլլան՝ օր մը ազգին այդ պիտոյքները լցնելու :

Ազգին տգիտութեան ու թշուառութեան ատենը , ինք ուսման ճաշակն առած՝ ինք նաեւ պարագլուխ կեցած է այն քարերար մարդոց որոնք ազգին թմրած վիճակին մէջ անոր

(\*) Կը յուսանք թէ մօտերս ի լոյս ընծայուի իր յօրինած Թըւագիտութեան (առիթմէթիք) մէկ պատուական ու ընդարձակ գասաղիւրքը , ինչպէս ապահովցուցին մեզ իր աշակերտներէն մէկ քանին :

չարժուժ մը տալու, ուսման սէրը ազգայնոց սրտին մէջ արծարծելու, դպրոցներու հիմնարկութիւն ընելու, դաստիարակութեան նոր նոր դիւրին մէթոտներ պատրաստելու, պարզ եւ ընտել ոճով դասագիրքներ խըմբադրելէլու. եւ ճշմարիտ դաստիարակութեան լարիքները ազդին վայելել տալու առաջին պատճառ ու շարժառիթ եղած են: Ի՞նչ կորովի ու հեռատես միտք պէտք է, անանկ ատեն մը ազգին բարդաւածման միակ ճարը դաստիարակութեան մէջ տեսնելու համար. ի՞նչ եռանդ եւ հաստատամտութիւն պէտք է ասի ազգին հասկնելու համար. սր աստիճան անձնուրացութիւն եւ ի՞նչ անհրկեւան սիրտ պէտք է ամէն տեսակ արգելքներու դիմադրաւ ըլլալու համար. ի՞նչ հայրենասիրութիւն եւ անյողդող պիտութիւն պէտք է ամէն տեսակ հալածմանց համըրելու համար: Մ'հ եթէ մարդս ներկային մէջ միայն ընկերմած ըլլար, եթէ անհուն ապագային հաւատ չունենար իր ներսէն, եթէ վերջապէս սահմանաւոր եւ ժամանակաւոր ըլլային մարդու ակնկալութիւնները, ի՞նչու առաքինի մարդը այս աստիճան նահատակութեան յանձնառու ըլլար, մինչեւ զո՛ւ ընկու չափ իր անձը հայրէնեաց սիրոյն եւ աշխի ապագային համար, զոր եւ ոչ խեղ աչքովը տեսնելու եւ մխիթարուելու յոյսն ունի: Եւ լաւ ու շորէ՛ք. հայրենիք մը որ կայ, հայրենիք մը որ իր փառքին մէջ կը փայլի, սիրելը դիւրին է. խեղ Պարտիզպան՝ այն հայրենեաց նըրրած էր զինքը, որ ընկած էր եւ անփառունակ . . . :

Պարոն Պարտիզպանեան՝ իր ասպարէզ մտած օրէն իրեն խոչընդոտ ունեցաւ, գլխաւորապէս՝ ասովութեան այն անձոտնի գաղափարները, որ իր ատենին արօղ գաղափարներն էին: «Ուղղակեան ու Սեռականը փոր չի կրօսացներ,» եւ «Շատ կարգալը անհաւատքիւն կը բերէ,» այս առածները հասարակութեան ոսկորներուն ծուծին մէջ անցած էին. ուսմիկն ասանկ միտքերու հետ ի մի մարմին կղած էր: Այս եւ ասոնց նման նախապաշարունակները խել հանել անոնց մըտքին մէջէն եւ փոխանակ նոր գաղափարներ տընկել, բոլոր հա-

սարակութիւնը յայր այլ փոխել, ուսումնաստեաց ազգ մը ուսումնասէր ընել . . . այս ի՞նչ երազ. եւ աս երազ Պարտիզպանին եւ իր այն ատենի համարողներուն արդիւնքը: Գարձեալ ուսումնականաց անպատիւ վիճակը, Վարժապետի նուաստացեալ անունը, այն կոյր տգիտութեան ատեն ոչ սակաւ արդիւր էին իր ուսումնասէր փախաքներուն կատարմանը. զի այնպիսի նուաստ կարծուած վիճակի մը մէջ՝ մարդուս խօսքը ազդեցութիւն չունենալով՝ արձագանգ ալ չունենար. եւ անանկով միս մինակ մնացած բոլոր ազգին մէջ, կը նայիս բարեկամներդ անգամ կը խղճան վրագ, որոնք ալ կը խընտան վրագ ու կը մեղադրէն քեզ: Եւ ի՞նչ անտանելի բան է հալածանքներու մէջ սա տեսակ մը հալածանքը, որ երբ դու օգտակար գործ մը գործելու սաստիկ համազումն ու գլխակցութիւնն ունիս, եւ նոյն համոզմամբ աշխատած, աքնած, միտքը շարչարած, ըզկող նեղը լծած թանկագին ժամկուրդ եւ մինչեւ անգամ առողջութիւնդ անխնայ զո՛ւած ես այն բանին համար, կը նայիս բրածիլ յարզը չը ճանչելով. կ'եղնեն ծաղր կ'ընեն քեզ անչին, չպիտու մարդիկ . . . :

Երբ ազգը ուսման պիտանութեանը վրայ քիչ շատ համոզուած էր եւ փորձ մը ընելու ետեւէ կ'ըլլար, բացուած դպրոցները մէկէն տեսին զՊարտիզպան, դասնատուութեան բեմին վրայ կամ ներքին հողարարծութեան պաշտօնով: Առաջներն՝ Մայր Եկեղեցոյ ուսումնարանին մէջ, յետոյ Իւսկիւտարի ձեւարան անունով համբաւեալ զըպրոցին մէջ, ետքերը Պէշիքթաշի եւ Իւսկիւտարի դպրոցներուն մէջ, թէ՛ անօրէնութեամբ եւ թէ՛ Իտալէրէն կամ Ֆրանկերէն լեզուաց եւ քանակագիտութեան ու աշխարհադրական ուսմանց դասատուութեամբ, մեծ եւ անձանձիր աշխատութիւն ունեցաւ, եւ որ մեծ եւս է՝ շատ անգամ ալ ճրի: Արդիւնքն ալ իր աշխատութիւնը պսակեց: Լեզուաղէտ ու բարեկիրթ պատանիներ դուրս ելան այն դպրոցներէն եւ մինչեւ հիմա պատիւ կ'ընեն ազգին:

Ասանկով Պարոն Պարտիզպան քիչ շատ իր փախաքին

հասած կրնար սեպուղիլ . ազգին մէջ որ եւ է շարժում մը կար եւ ուսումնասիրութիւնը երթալով կը զարգանար : Իր սկսած գործն ալ առաջ տանելու եւ նոյն եռանդով աշխատելու կարող անձեր կլամ էին ազգին մէջ : Այն միջոցին սկսաւ իր ճամբորդութիւնները յՆւերոպա , ուր ազգային պատանինէր կը տանէր իրենց ծնողաց ծախքովը , Բարիզի դպրոցներուն մէջ զանազան արհեստ եւ գիտութիւն ուսնելու : Հոն ալ դարձեալ՝ առ հասարակ ամէն ազգային պատանիներուն վրայ ունեցած անձնուէր խնամներովը , անխոնջ հսկողութեամբը ու հայրարար պաշտպանութեամբը , ոչ միայն այն պատանեաց ծնողացը , այլ եւ Եւրոպացոց ալ սէրն ու համակրութիւնը կըրցաւ դրակել իր վրայ :

Բարիզէն դառնալուն՝ ա՛լ կարծես թէ յողնած , ուժաթափ եւ ուրիշներու ցաւովը կշտանայով , իր գիւրադրած սիրտը հալած մաշած , ձեռնթափ աշխըրհի գործերէն , առանձնութեան մէջ կ'ուզէր թաղուիլ : «Պոլիս դառնալուս բուսական կեանք սլտի վարեմ» կը գրէր Բարիզէն , դեռ չը մեկնած : Երբ եկաւ ի Պոլիս , շատ բան կերպարանափոխ եղած էր , ազգային շարժումը յետ ընկըրկում ըրած էր . ազգին վիճակը հիմնական բարելաւութիւններ կը պահանջէր : Ուստի ազգին հարկեցուցիչ գործերը շատ խլեցին գարձեալ գինքն իր հանդիստէն . Ազգային Ուսումնական Խորհուրդին եւ Ազգային Սահմանադրական յանձնաժողովին է՛ն գործունեայ անդամներէն մէկն եղաւ , եւ իր բազմաժամանակեայ փորձառութեամբը , սուր դատողութիւններովը եւ լուսաւոր խորհուրդներովը , մեծ մասնակցութիւն ունեցաւ երկու ժողովներուն ալ աշխատութեանցը մէջ :

Ասանկ ահա՝ Պարոն Պարտիզպան , իր մարդու հասակ ունեցած օրէն մինչեւ իր վերջին ժամը , ամէն տեսակ գաղտնի թէ յայտնի յարձակմանց ու հալածմանց ենթակայ ըլլալով եւ զամբնն արհամարհելով , մտադիւր տարաւ ամէնն ալ , առանց բնաւ իր բընտըռելու , ազգին համար ու ազգին համար միայն աշխատելով՝ իրենը ոգեպահիկը միայն խընդրելով Աստուծմէ , եւ ուրիշ իր անձնական հոգերը հովին

տալով . . . Յիրաւի՝ մեծամեծ օգուտներ ալ ունեցան իր ազգասէր ջանքերը եւ իր սկսած օրէն մինչեւ այսօր ազգը քանի մը քայլ առած կրնայ սեպուղիլ յառաջգիմութեան ճամբուն մէջ :

Ասոնք ըսելով անտարակոյս ըսել չենք ուզեր թէ Պարտիզպան ինք մինակ էր այս դժուարին գործն ի վրուխ հանող , ինք մինակ էր ազգին այս շարժումը հաղորդող : Չէ . մարդու մը արժանիքին ու յիշատակին դէմ անիրաւիլ չէ մեր միաքը . գիտնք ու կը վկայենք անաչառ որ իր հոգովը վառուած ուրիշներ ալ կային որ իր ջանքերուն կ'ընկերանային եւ համաքայլ կ'ընթանային իր մտած ասպարէզին մէջ . բայց անոնցմէ որոնք վաղ ընկան ամէնակեր մահին ճիրանը , որոնք յուսահատ ազգին վիճակին վրայ շուտ պաղեցան իրենց եռանդէն եւ կամ Ղուլտի կնոջ նման ետեւնին դարձան , աւաղելով դեռ մօտաւոր անցեալը : Պարոն Պարտիզպան չլքաւ , չվհատեցաւ , եւ միշտ ազգային շարժման գլուխն անցած , երբեք կանկ չտուաւ : Լուսաւորեալ ազգասէր եւ ճշմարիտ յառաջադէմ , երբեք լոյսին ածիւն իրեն նեղութիւն չպատճառեց , եւ երբեք անցեալն աւաղելու եւ ասպազային երես դարձնելու տկարութիւնը չունեցաւ : Նոր նոր սերունդներ , նոր նոր պատանիներ , նոր գաղափարներով միշտ՝ զինքն իրենց համամիտ ու գործակից գտին , ուր որ պատանէկութեան չափազանց եռանդը եւ անփորձ հասակին տնտութիւնը՝ անկարելի կամ արտառոց բաներու ձեռնարկել չտային զիրենք :

Այդ աստիճան անձնուիրում ազգային յառաջգիմութեան եւ այսքան աշխատութիւն եւ այսքան արդիւնք , հերիք էին արդեօք Պարտիզպանին յիշատակին համար : Սակայն հոս չեն լմննար իր առաքինութիւնները : Իր մեծ հոգին շատ ընդարձակ էր . ազգի մը սէրը միայն չէր կրնար զանի լեցընել : Կը սիրէր անի բոլոր մարդկութիւնը եւ զմարդիկ ուրոյն ուրոյն : Վերջին տարիները ամէն բանէ եւել պատմութիւն կարգալու ետեւէ ընկած եւ պատմութեան իմաստասիրութեան մէջէն իր հասուն խելքովը առողջ գաղափար-

հեր քաղերով, մարդկային ազգին վիճակին բարելաութեան  
 ու բարոյական եւ նիւթական բարգաւաճման հոգը՝ զիր  
 գլուխն ալ կ'ըղբադեցնէր այս դարին տիեզերական եւ  
 ազնււամիտ գլուխներուն: Կետ: Սակայն մարդկութեան վրայ  
 իր ունեցած վափաքներուն ու յոյսերուն մէջ չափաւո՛ր  
 երբեք պատրանաց ըմպանակէն չէր տրտած, եւ յանդուգն  
 երազներով ու ծայրայեղ միտքերով՝ երեւակայութեան  
 թռիչներուն վրայ անկարելոյն ըսփեւոնները երբեք չէր խոյս-  
 ցած . . . : Ասանկ ընտիր եւ առողջ՝ զազափարներու աէր  
 ապրելովը՝ մեծ պատիւ ըրաւ անշուշտ իր դատողութեանն  
 ու մտքին . իսկ մեռնք՝ միշտ աւելի սիրած ու պատուած ենք,  
 իրեն քով, իր սրտին ձիրքերը, իր անկեղծութիւնը, ան-  
 շահասիրութիւնը եւ անձնուէր լարեկամութիւնը: Այնչափ  
 էր իր անկեղծութիւնն ու անշահասիրութիւն՝ որ մեծամեծ  
 շահերու եւ պատիւներու առջեւ անգամ երբեք իր վեհանձն  
 սիրտը չը զիջաւ, եւ մարդ մը կամ կարծիք մը շողոքոր-  
 թելու չափ չնրւատտացաւ: Բարձր վիճակի մարդոց հետ  
 միշտ յարաբերութիւն ունենալով, այն յարաբերութիւնները՝  
 ուրիշներու աղէկութիւն ընելու եւ բարի խորհուրդներով  
 ազդօգուտ հիմնարկութեանց ձեռնարկել տալու շահ ածեց:  
 Աշխարհի վայելքները չկըրցան երբեք զինքը փորձել, ոչ  
 ալ ոսկոյն փալը կրցաւ զանոր աչքը շլացնել կամ սիրտը  
 հլածուրել: Ոչ միայն իր շահին չզոհեց բնաւ ազգին կամ  
 ընկերին բարիքը, այլ կարծես թէ այնքան ուրիշներու հոգը  
 կը հոգար, որ իրենը բարձի թողի ըրած էր: Իր է՛ն նեղ  
 օրերուն անգամ անարտունջ իր վիճակին վրայ եւ մոռնա-  
 լով ինքզինքը, բարեկամաց կարօտութիւնը լըցնելու, անոնց  
 ցաւին ցաւակից ըլլալու եւ վիշտերը մեղմացնելու կ'ըն-  
 թանար: Շատերը՝ մեր մէջէն, եւ այլազգիներէն ալ, իր  
 բարեբարութիւններովը ծածկած է: Կրնայ ըսուիլ Պարոն  
 Պարտիզպանեանին համար, թէ իր ճակատը գրուած էր  
 «ամեհուս աղեկութիւնը ուզել, եւ ինք աղեկութեան երեսը չը  
 տեսնել:» Թը բոլոր կեանքը այս ճակատագրին լրումն  
 եղաւ . . . :

Այս ամէն գեղեցիկ ձիրքերուն հետ՝ մեղադրանք մը  
 կայ որ շատ անգամ լսուած է Պարոն Պարտիզպանեանին  
 վրայ եւ որմէ՛ զատ այլ մեղադրանք ոչ ոք ձգած է վրան: Իր  
 բարկասիրտ բնաւորութիւնը: Եւ ո՛վ արդեօք այս աշխար-  
 հէն անցած ասունը՝ երկրէս փոխ առած կաւին հետ՝ մարդ-  
 կային բնութեան յարակից ակարութիւններէն դոնէ մէկ եր-  
 կուքը չէ ունեցած: Սակայն՝ սա ալ զիտնալ պէտք է որ  
 բարկութիւնը միշտ եպերելի կիրք մը չէ: Կոխ ընելն ալ,  
 ինչպէս կ'ըսուի հասարակօրէն նաեւ վիճաբանութեանց հա-  
 մար, ան ալ ունի իր օգուտները. եւ վէճ մը՝ օրինաւոր է,  
 վիճաբանը մեղաւոր չէ: Թո՛ղ ուրիշներ ատի իրեն իբր մեծ  
 պակասութիւն մը մեղադրեն, մենք մանաւանդ արժանիք մը  
 կը սեպենք իրեն այն սրտմտութիւնը, թէ՛ իր պատիւը  
 պաշտպանելու ատեն եղած ըլլայ, զի նախանձայոյզ էր իր  
 պատիւն, եւ թէ՛ երբ առանց մարդկային որ եւ է նկատ-  
 ման, առանց բնաւ անառութեան, մեծամեծներու իսկ առ-  
 ջեւ՝ արդարին ու ճշմարտին ջատագով կը կենար: Ասոնցմէ  
 զատ, թո՛ղ որ միշտ նախապաշարմանց դէմ պատերազմելու  
 հարկադրեալ էր: Ինք միշտ ազգային կրօնին եւ ազգային  
 յասալը իմութեան միօրինակ նախաձախընդիր ըլլալով, այն  
 հասուն միտքերէն էր որ ոչ կրօնը յառաջդիմութեան վնա-  
 ստկար կը կարծեր, ոչ յառաջդիմութիւնը կրօնին . ստով  
 երկու հակառակ կարծիքներու մէջ, երկուքին ալ դէմ մա-  
 քաւելու պարտաւորուած էր: Մենք ալ կը վկայենք, իր  
 փառքին համար արիաբար կոտեցցաւ մինչեւ վերջին կէտը,  
 խաւարի տգիտութեան եւ յետադէմ կարծիքներու դէմ. եւ  
 դո՛ս սրտով ըսենք, ի պատիւ յառաջդիմութեան փաստին,  
 յաղթանակով դուրս ելաւ մտած սաժանիկի պայքարէն, եւ  
 որ աւելի մեծն է՝ ամբիժ էր անդառապարտ . . . :

Ահա՛ առաքինի կեանք մը. երբ մարդ մը ասանկ ապ-  
 բեցաւ այս աշխարհիս վրայ, երբ հայրենեաց սէրը այնչափ  
 հեռին տարաւ, երբ այնքան ծառայութիւններ մատուց իր  
 ազգին, երբ ուրիշին օգտակար ըլլալու առիթը երբեք  
 ձեռքէ չը փախցնելով՝ դանի՛ միայն ունեցաւ ճշմարիտ

բերկրութիւնն իր տառապեալ կենցաղին մէջ, եւ երբ ասանկ առաքինի վարքովը բարի օրինակ եղաւ ամէնուն, ան ի՛ իր առ մարդկութիւնն ու առ Աստուած ունեցած պարտքերը եւել եւելօք հատուց. պաշտօն մը ունէր աշխարհիս վրայ, այն պաշտօնը արժանապէս վարեց. մարդոց յիշատակութեանն ու Աստուծու վարձատրութեանը արժանի է անկէ ետքը: Ուստի Աստուած ալ ուզեց կընքել տարածամ իր կեանքը եւ ի հանդիստ կոչել զինքը. . . . Ա՛լ չէ անի մեր մէջ: Ճշմարիտ քրիստոնէի մանովը մեռաւ: Հող ծածկեց թէպէտ՝ զանոր սիրտն անկեղծ, բայց սլացաւ հողին յ'երկին՝ առնել Քրիստոսէ արդարներու պատրաստեալ պսակն անթառամ. . . . Մեզի ուրիշ բան չ'մտար հիմա ընելու, բայց եթէ աշխատիլ անոր առաքինութեանցը հետեւելու՝ անոր պէս ընկերասէր, ազգասէր ու մարդասէր ըլլալու. զի ասոնցմով կ'ըլլայ ճշմարիտ ու կատարեալ աստուածսիրութիւն, որ է միակ իսկական արժանիք յ'այս ստորինս եւ փառք անկասկած:

**Գ. Ս. ՕՏԵԱՆ**

1 Օգոստոս 1856, Իւսկիւսար

**Գ Ս Մ Բ Ա Ն Ա Կ Ա Ն**  
**Ա Ր Ք ՈՒ Ն Ի Ճ Ա Ր Տ Ա Ր Ա Պ Ե Տ**  
**Ն Ի Կ Ո Ղ Ո Ս Ա Գ Ա Պ Ա Լ Ե Ս Ն Ի**

Մահն ի՛նչ առատ կը հնձէ եւ քանի՛ հասկ ոսկեպսակ իր մանդաղին հարուածներուն տակ կ'ընին նորհասակ. . . .

Որմէ հետէ աչքերնիս բացուեցան ի լոյս եւ մարդկանց անհուն խառնիճադանձին մէջ կրցին զօրել անանկ հազուադիւր անձինք որոնք աւելի իրաւունք ունենային մեր ուշադրութիւնն ու սէրն իրենց գրաւելու, այս քանի՛ եղաւ

որ մահը խլեց մեր աչքերէն, մեր սրտէն ու մեր ակընկալութիւններէն. . . .

Մայր-քաղքիս եւ շըրջակայից ազգային եւ այլազգի օրագիրները հասարակութեան ու մասնաւորապէս հայ ազգին զգացմանցը թարգմանն ըլլալով՝ խօսեցան այն աղետալի հարուածին վրայ որով կայծակնահար ըրաւ երկինք ոչ թէ ընտանիք մը միայն՝ այլ ա՛զգ մը համայն: Վեց եօթ հազար հոգի միահաղոյն լացին փետրվարի 28րդ օրը՝ դագաղի մը ետեւէն որ հողին կը ասնէր յանձել Պալեսան Նիկողոս աղային մնացորդները:

Լացա՛ւ Մասիս, լացին Արշալոյսն ու Միւսմա՛տի Հալատիս, լացաւ Ֆոնանկերէն օրագիրն ալ Բոնէս ա՛Սթիան: Մենք ամէնէն ետքը կուգանք գլխիկոր ու մինաւորիկ, երբ արդէն յուզարկաւորութիւնն անցած լինցած ու բազմութիւնը ցրուած է, երբ ամէն մարդ կսկիծն ի լաց փարատած ու աչուըններուն արտասուքն ալ սրբած է վերջապէս, կուգանք երկու կաթիլ աղի արտասուք ալ մենք թախիլու, նա անիծած արտասուքներէն որ երբեք չեն չորնար մարդուս կեանքին մէջ, իբր հարկ մը երախտագիտութեան սիրոյ եւ մեծաբանաց առ վսեմախորհուրդ բարեկամն մեր որ ատենով այնքան սիրեց, քաջալերեց ու պաշտպանեց մեզ. . . .

Կըսկիծը յ'ուշ կ'ածէ, սրելիին մահը լացօղը անոր գործքերը կը պատմէ. . . .

Նիկողոս աղային գործքերուն առաջին աղբիւրը, ինչպէս ընդհանրապէս ամէն մարդու, այն առաջին կրթութեանը մէջ պէտք է բնտուել որ իր ընտանեաց ծոցը, իր ծնօղոցն աչքին տակ կատարուեցաւ:

Մեծցաւ աստուածպաշտութեան օրինակներու մէջ. մնացածը իր ետքէն առած կըրթութիւնն եւ ուսմունքն ըրաւ: Բարի մայր մը իր թարմ սըրտին մէջ կը գրէր բնութեան ձեռքովը բարոյականին պարզ եւ համեմատաբար ըսկըգրուողները, քնքուշ ձեռքով կը խնամէ՛ր այն նորածին տունիլը որ պտղատու ծառ մը պիտի ըլլար ատենէ մը ետքը



եւ կը զուարճանար տեսնելով իր որդոյն կաթողին փոխադարձ սէրը իր վրայ :

Աւելի եւս զուարճութիւն էր անտարակոյս տեսնել այն մատաղ տարիքին մէջ՝ իր լուրջ ու զգօն կենցաղն որ գողցնէս պայծառ ու գեղեցիկ օրի մը ծիծաղերես արշալոյսն էր : Չ'ուհէր հրապոյր խաղն ու հաճոյքն անոր համար իր մանկութեան հասակին մէջ անգամ, ուր ամենայն ինչ խաղ եւ հաճոյք է . իր մէկ հատիկ զուարճութիւնը՝ իր մայրն էր որի զգուանայն ու խնամոցը յարեալ կը զօրանար ու կ'աճէր հանապազօր, անանկ որ երբ իր մայրը կորուստ՝ իր առողջութիւնն ալ վտանգի մէջ ընկաւ, մինչև պարտաւորեցան ծնողքն ի Բարիլ զրկելու զինքը, յանձնելով զանի այն անձին որի պաշտօնն էր կարծես հայ պատանին ի քաղաքակրթութեան վառարանն առաջնորդել եւ զոր շատ չընէր որ կորուսինք, Պն. Խաչատուր Պարտիզպան : Բարիլ նախակրթական ուսմունքն առնելէն զկնի Սէնթ-Պատպըստած դպրոցին մէջ, հետեւեցաւ ճարտարապետական արուեստին : Իր ազնիւ բարքն ու փութաջան աշխատութիւնը ուսուցիչներէն իր վրայ վարպետներուն սէրը : Պն. Լապչուտ գրաւեցին իր վրայ վարպետներուն սէրը : Պն. Լապչուտսթ, զպրօցին վերատեսուչը, պարծենալով կը յիշէ մինչև այսօր իր ամենասիրելի աշկերտը, որ եւ իր բոլոր կեանքին մէջ անկորուստ պահեց այն փոխադարձ սէրն ու յարգանքը՝ զոր Լապչուտսթին ընծայելով, առաքինութեան ընծայել կը թուէր իրեն : Մինչ ասանկ պատանին կը զարգանար ու իր ծնողաց եւ սիրելեաց սիրտը յոյսերով կը լըցնէր, ծանր ու տախանելի հիւանդութիւն մը ելաւ վրան եւ քիչ մ'այլ եւս եւ ահա՛ իր հայրենիքէն ու ընտանիքէն հեռի տար աշխարհի մէջ պիտի կնքէր այն կեանքն որ այնքան բեղմնաւոր պիտի ըլլար եւ որ զարձեալ խիստ կանուխ պիտի վերջանար . . . . Ազատեցաւ Նիկողոս ազան, Պուլիս մեծահամբաւ բժշկին անձնուէր ջանքովը . այլ ընտանիքը պարտաւորեցաւ զինքն ի Պուլիս բերելու ուր իր հանապազօրեայ ու անխոնջ աշխատութեամբը սկսաւ յոռաջ երթալ ու բարգաւաճիլ ամէն կերպով . . . . .

Հոս իր կենաց էն գեղեցիկ մասը կ'սկսի այլ եւ է'ն ծածուկ . զի ոչ միայն իր վիճակը՝ այլ եւ իր բնական բերմունքներն ալ՝ զինքը կը պարտաւորէին կերպով մը այն ծածկութեան :

Նիկողոս ազան իբր արհեստի մարդ, ճարտարապետն արքունի, իր գործերը անկարելի էր որ դատապարտուէին այն նսեմութեան՝ որի մէջ դեռ չմտած թաղուիլ ուղած էր միշտ : Պոսֆորի շքեղ ախանջը վրայ բնութեան գեղեցիկութեանցը հետ մրցելով իր հանճարը՝ սողին անդին մէյ մէկ անտուտ եւ անփութ վկայ ձգած է իր արուեստական գեղեցիկ սաղանդին, իր վառվառն ու բեղմնաւոր երեւակայութեանը : Գարը մարմին տուած է իր մրաքերուն ու ախորժակին եւ անմահացած է զանոնք դարէ ի դար :

Որչափ ալ անտեղեակ ըլլայ մարդ արհեստի, անկարելի է որ զարմացմամբ իմն եւ զժայլմամբ երբեմն կանկ չ'առնէ Տօլմա-Պաղչէյի պալատին արքունի սրահին ու երկու դուռերուն առջեւ, Օրթագիւղի մըղկիթին, Օխլամուրի քէօշկերուն առջեւ եւ չհամողուի Թօրհանէյի ժամացոյցի աշտարակին ճարտարապետական կատարելութեանը . . . այլ իր ամէնէն ընտիր գործքը ուր իր ծայրագոյն հմտութիւն ու կիրթ ախորժակը յայանի կը տեսնուին, նոր շինուելիք Չրազանի պալատին յատակագիծն է . . . աւաղ որ չհասաւ ի զլուխ հանելու :

Վերածնութեան ըստած ճարտարապետական դպրոցին աշկերտ գտնուած ըլլալով շարեւախտաբար, թօթուած էր աւելորդ կանոններու եւ արուեստական նախապաշարունակէրու լուծը եւ ընդարձակ ու անազօտ հօրիզօն մ'ունէր առջեւ որի մէջ իր գեղեցիկ երեւակայութիւնը ազատօրէն կրնար թռչիլ . . . այն ազատութիւնը, բանաւորութեան վրայ հիմնած, զոր իմաստասիրութեան մէջ մուծեց Տէքաթ, որով զգրականութիւնն օժտեց Հիւկօ եւ՝ զոր մեր գրականութեան մէջ մուծնելու համար քաջալիք էր հանդիսացած ինք . . . . .

Հոս կ'աներեւի արհեստի մարդը ու տեղի կուտայ մտքի ու գրի մարդուն, . . . — Չ'ենք ուզեր պատուել այն վարագոյրն որ միշտ քաշուած պահել ուղից ինք, իր համեստ եւ ուսումնասիրական սենեկին մէջ անցուցած կեանքին վրայ, ուր աշխարհիս է'ն նշանաւոր եւ է'ն արդիւնաւոր միտքերուն հետ հաղորդակցութիւն էր հաստատած եւ որի դուռը սակաւաթիւ բարեկամաց միայն կը բացուէր . . . Այս բարեկամները երբեք չպիտի մոռնան այն թանկազին եւ անդառնալի ժամերը որ մէկ տեղ սահնցուցած էն ազատ մըթնուորտի մը մէջ, հեղնելով իրենց սիրտն ու հոգին մտերիմ խօսակցութեանց մէջ, ուր ամէնէն էվէլ իր պայծառ ու սիրուն միտքը սուրբ յախըշտակութեամբ մը վերացած՝ կարծես թէ ուրիշ աշխարհէ մը լուր կուտար մեզի . . . եւ այն ձմռան երկար երեկոյթներն ուր այնքան անուշիկ յոյսեր կը գլտորցնէին լուսթեան ու միայնութեան մէջ եւ որոնց վրայ աչքերնին, ափսոս, խիտ կանուխ բացուէցաւ . . . այն վառաբանն որ իր հարուստ գրքատանը երկու թեւերուն մէջ տեղէն իր նստ սենեկին մէջ լոյս ու ջերմութիւն կը սփռէր . այն սեղանն որի վրայ կ'աշխատէին մերթ՝ ազգին օգտին համար եւ մերթ գրիչն ու թուղթը վերցնելով ձերմակ լաթը կը փռէին կերակուրնին ուտելու համար, այն գինիի բաժակներն որմէ մէկ քանի կաթիլ այնքան հզօր է սիրոյն բոցը արծարծելու անկեղծ սիրտերու մէջ, մինչեւ այն սիրելի ծառան որ իր ախոջը պէս կը խնամէր՝ զիրենք ալ եւ որ իրենց հետ արբուսւմ ի այսօր : Ասոնք ամէնն իրենց համար մէյ մէկ անդին յիշատակներ են որ կարծեաց եւ զրից զանազանութեան միջեւ էն ողջ ազատած ու միշտ կենդանի պիտի մնան . . . :

Մարդ երբ այս սենեկէն դուրս կ'ելնէր, սիրաբ ցնծութեամբ կը խայտար ու փառք կուտար Աստուծու որ այս անիծապարտ աշխարհին վրայ այնքան անխրաւութիւններ կան, այնքան անխղճութիւններ եւ այնքան ամպարիչաւ կարծիք, անանկ մարդիկ ալ կը զտնուին դոնէ որոնց էութեանը

թիւնը հաւասար մը ընծայէ նոյն ինքն ամենաբարի էակին գոյութեանը . . . :

Խիստ ընտանի էին Նիկողոս աղային Պրանսայի ընտիր ընտիր իմաստասէրներուն, բանաստեղծներուն ու պատմագիրներուն զիրքերը, որոնց բարձր ու առողջ խորհրդածութիւնները աղէկ ուղղութիւն մը տուած էին իր մտածութեանցը, որով եւ իր սկզբունքները հաստատ կէտի մը վրայ համեալ էին, այն հաստատ կէտը որ ամէն մտածող գլուխներ շատ վնասուածներէ ետք գտած են վերջապէս, նման ճամբորդ նաւի մը որ ալեկոծեալ ծովի մը վրայ երկար ատեն ծփալէն երկրալէն ետք կուզայ նաւահանդատի մը հանդարտ ջուրին մէջ երկաթ կը նետէ : Մարդկային մտածութեանց ալեկոծութեանը մէջ հանդարտ նաւահանդիստը աշխարհիս նպատակին եւ մարդու ճշմարիտ Աստուծապատութիւնն ու քրիստոնէութիւնն է : «Նիկողոս աղան վաղուց գտած էր իր նաւահանգիստը :

Այս սկզբունքները անբերրի չեղան եւ իր ընդհանուր վարքին վրայ ունեցած երջանիկ ազդեցութիւննին նախանձելի ըրին դանի : Աստուած զինքն օժտած էր անանկ բնական ձիրքերով եւ բախտն անանկ յաջողութեամբ մը որ շատ չի պիտի տեսնէին մարդիկ իրեն այն հպարտութիւնն որով հասարակ մարդոց սիրաբ այնքան հակամէտ է ուռեւ նալու : Եւ ասկէ աւելի ինչ փառք կրնայ ըլլալ որ դեռ մանուկ հասակէն մարդս իրմէ կախուած անանէ հարիւրաւոր մարդերու բախտը, որ իր գերդաստանին նեցուկն ու փառքն ըլլայ, որ իր աղքն իրմով կարենայ՝ պարծիլ, որ պսակեալ գլխի մը հանապազօրեայ ընկերակիցն ըլլայ, որ իր ախորժակին ու տաղանդին վրայ ամենուն զարմանքը գրաւէ, որ իր արժանաւոր գովեստները Եւրոպայի օրագիրներուն մէջ կարդայ, եւ այս ամէն բարեմասնութեանց համար իր ձակափն քրաանցը ու մտքին յատկութեանցը միայն պարտաւոր զգայ ինքզինքը եւ որոնց մէջ մեղքին ձեռքն իր յաւիտեանական հետքը ձգած չըլլայ . . . : Եւ սակայն ուր երջանկու-

կութիւն կը գտնեն հասարակօրէն մարդիկ , ինք ունայնու-  
թիւն էր գտած . . . չունէր աչք իր ունեցածին վրայ , չու-  
նէր աչք աւելիին . իր ակնկալութիւններն ի հանդերձեալն  
էր հաստատած . . . Թո՛ղ գան ըսեն հիմա նորէն իր դերեզ-  
մանին վրայ , թէ մարդուս ճակտի-գիրը հոս կը սկսի եւ  
հոս կը լմննա՛յ . արգարին մահը , եթէ ուրիշ փաստ ալ  
չըլլար ապագայ կենաց ճշմարտութեան , հերիք էր է՛ն ապա-  
ռում միտքերն անգամ համոզելու :

Ահա՛ մարդը իր սենեկին մէջ , իր մտածութեանցը , իր  
սկզբունքներուն , իր գիրքերուն , իր բարեկամներուն հետ :  
Այլ ոչ նուազ գովելի էր ընտանեացը մէջ , իր հօրը հետ ,  
իր եղբարցը հետ , իր ամուսնոյն հետ , իր որդեցը հետ : Իր  
մեռած օրը իր դերգաստանն իրմով միանգամայն կորուս  
բարի զաւակ մը , բարի եղբայր մը , բարի ամուսին մը ,  
բարի հայր մը : Բնաւ պակասութիւն մը չըրաւ իր որդիա-  
կան պարտաւորութեանցը մէջ եւ յարգանաց ու հնազան-  
դութեան հարկը անթերի վճարեց առ այն որ խորխտալով  
իմն կը գուրդուրար իր սիրելի որդւոյն վրայ եւ որու կսկիծն  
այսօր մխիթարութիւն չունի ընտանին . . . : Պատկառելի իրմէ  
կրտսեր եղբարցը եւ ակնածու անդրանկին , սիրելի էր հա-  
ւասարապէս ամենուն . իր սէրն ալ անոնց վրայ ոչ սակաւ  
արդիւնք ունեցաւ եւ ազդեցութիւն բարեբաստիկ . . . : Խան-  
թակաթ սիրով սիրեց նաեւ միշտ իր ամուսինն ու որդիքն  
որոնց վրայ այնքան գեղեցիկ իղձեր կը տածէր սրտին մէջ ,  
որոնց ապագան ինք իր ձեռքովն յարգարել իր մէկ հատիկ  
փոռասիրութիւնը պիտի ըլլար այս աշխարհիս վրա՛յ :

Սիրտ մը որ այսքան ազնուական զգացումներով լեց-  
ուած էր , չէր կրնար ցամաք մնալ բարի գործքերու : Աստ-  
ուած միայն գիտէ քանի՛ արտառք չորցուցած է իր կար-  
ճատեւ ընթացքին մէջ մարդկային աչաց . քանի՛ մարդիկ  
յուսահատութեան վիճին բերնէն աղատած է , քանի՛ ընտա-  
նիք՝ թշուառութեան դատարտուած՝ իր ձեռքէն իրենց եր-  
ջանկութիւն ընդունած են , ոչ թէ իբր որդրմութիւն որ  
նուաստացուցիչ կը թուէր իր փափուկ սրտին , այլ իբր

պարտաւորութիւն՝ զոր առ ընկերն կը հատուցանէր . . . :  
Այս մեծ , այս գեղեցիկ , այս միակ պարտաւորութիւնը ան-  
թերի կատարեց : Հաւատարիմ թարգմանն եղաւ իր գործ-  
քովը Քրիստոսի մարդկութեան տուած սա միակ պատուէրին  
թէ . « Սիրեցէք ամենքդ ալ իրար » : Այս պատուէրը  
ինք աղէկ հասկցաւ եւ աղէկ ալ զործադրեց . ա՛լ ինչ պէտք  
է իր յիշատակին համար . . . . .

Իր վերջին օրերն իր վարած կեանքին արժանի կերպով  
անցան . . . Տակաւին այն դժնդակ հիւընդութիւնը չեկած  
վրան , երբ թիթեւ նշանները միայն գինքն անկողին ձգած  
էին եւ ծանրանալու երեւոյթներն անտեսանելի էին գիտութեան  
աչքերուն , ինք իր հոգւոյ աչքովը նախատեսած էր իր մտա-  
լուտ վախճանը : Իր մտածմունքներն եզան անդէն՝ իր ըն-  
տանեաց , իր սիրելիաց ապագան եւ իր հոգւոյն յաւիտեան  
կա՛ն ապագան .

« Անդիլի կեանքը , ո՛հ , ի՛նչ գեղեցիկ է անդիլի կեանքը .  
եւ ես հաստատ զիտեմ որ պիտի վայելեմ զանի . . . մարդու  
մը գէշութիւն չեմ ըրած այս կեանքիս մէջ . . . » կ'ըսէր  
եօթ օր առաջ իր մեռնելէն , խղճմտանքի զուարթութեամբ  
մը , որ ապագայ երանութեան գուշակն ու ճաշակն է . իսկ  
անոնց որ կարօտ էին իրեն , որոնց իր ողջութիւնը իրենց  
երջանկութիւնն էր , չուզեց որ զգացնել տայ իր պակասու-  
թիւնը եւ անոնց հոգը կտակ ըրաւ որոնց յաջորդ պիտի ըլ-  
լային իրեն :

Իր վերջին կամքերն անթերի պիտի կատարուին . անոնք  
որ իր վստահութեանն ու սիրոյն արժանի եզան ու իրմէ իր  
այն վերջին կամացը սրբազան աւանդն ընդունեցին , իրենց  
մէկ հատիկ մխիթարութիւն անի՛ պիտի ըլլայ , որ այն  
աւանդին հաւատարիմ գտնուին մինչեւ վերջը , իր եղբարքը ,  
իւր սիրելիքը , իր բարեկամները . որով եւ իր սքրտն ու բա-  
րեգործութիւնքը իրմէ ետեւ ապրին անոնց վրայ :

Երբ ասանկ կեանքի մը վրայ գերեզմանը կը փակուի , մարդ այն կեանքը չի մեղքնար որ չի՛ջաւ , զի անի կ'երկարածա՞լի հոս մարդոց յիշողութեանը մէջ եւ գերեզմանէն անդին աւելի եւս կը փայլի յաւիտենականութեան մէջ , այլ ինքզինքը կը մեղքնայ , զի մէկիկ մէկիկ իր կենաց ու իր սրտին հատորներն են որ կը խլին իրմէ՛ ի մէն մի հարուած մահին՝ երբ իր շուրջը կուգայ զայնէ . զի մարդս ինքզինքը միշտ աւելի որբ կը զգայ այս աշխարհիս վրայ , քանի որ բարեկամ մը ու սիրելի մը կ'առնէ իրմէ՛ ձեռքն անմահին . . . :

«Ասեմ զմեռեալն երանի՛  
«Վա՛յ որ մնայն կենդանի» :

1858 Փետր . 27

**Դ Ա Մ Բ Ա Ն Ա Կ Ա Ն**

**Ի ՄԱՀ ՎՍԵՄՍՓՍՅՈՒՅՈՒ ԳՐԻԳՈՐ ԷՖ . ԱՂԱԹՕՆԻ**

Այս մարդը որուն այս բաղմութիւնը՝ մարդկութեան եւ բարեկամութեան յետին մեծարանքը մատուցանելու եկած է , ընդհանուր համակրութիւն փառաւոր ցոյցերով շրջապատեալ կուգայ մեր մէջ , փառաց բարձունքէն իր ընտրած համեստ զիւղին համեստ գերեզմանատանը մէջ իջնալու համար : Փառաց կոչեալ ի ծննդենէ Աղաթօն էֆէնտին , աշխատութիւնն ուսուցիչութեան պաշտօններու մէջ մինչեւ հիմա քրիստոնէից անբութեան պաշտօններու մէջ մինչեւ հասաւ . իր բնաւորութեամբը մատչելի բարձրութեան մը հասաւ . իր բնաւորութեամբը ընդհանուր հասարակութեան սիրելի անձն կղաւ եւ սկզբունքներով իր ազգին յառաջդիմութեանը ծառայեց :

Թող ուրիշները յակճիւոս մնան իր փառքին առջեւ եւ իր տաղանդն ու բնաւորութիւնը զրուատեն . իսկ ես որ շարունակ տանեւ շորս տարի իրեն հետ գաղափարաց հաղորդակցութեան մէջ ապրեցայ , իր գերեզմանին վրայ՝ կուզեմ

միայն հռչակել՝ ինչ որ իր կեանքին մէջ մասնաւոր սիրով տեսնեցի . իր սկզբունքները : Ծատեր կան որ սկզբունք ունինք կ'ըսեն , այլ քանինե՛ր կան որ կը դեղուին : Աղաթօն էֆէնտին ամէն պարագայի եւ ամէն վիճակի մէջ հաստատարիմ մնաց իր սկզբունքներուն , եւ միայն ի պահանջել հարկին արտաքին ձեւը միայն զոնկուլ՝ անսասան կեցաւ իր ներքին համոզմանցը մէջ : Ոչ ոք աւելի դրական կերպով կ'ըմբռնէ ազատութեան յարգն եւ արժէքը՝ քան անտեսագէտ մը : Աղաթօն էֆէնտին այս դիտութեան ուսմանը մէջ՝ որ իր կեանքին մեծ մասը դադարեցած է՝ քաշեց իւր բոլոր ոյժեր ազատութեան հաւատալու համար :

Ինք այն մարդոցմէն է՛ր որ վերայեալ բանի մը համար կը վառուին , չունէր իր ներսիղին այն անդիմադրելի խանդը որ խորհրդածութենէ առաջ կ'անցնի եւ որ ապացոյց չի փնտեր հաւատալու ու յարելու համար . իրեն համար ազատութիւնը թուաբանական ճշմարտութիւն մըն էր : Աղաթօն էֆէնտին պատմութեան իմաստասիրութենէն քաղած էր , ոչ նուազ նուիրական սկզբունք մը՝ այն է յառաջդիմութեան սկզբունքը , մարդկութեան ընթացքը պատմութեան մէջ անյարիր եւ աղխազուրկ դիպուածոց շարք մը չէ : Մարդկութիւնը վայրենութեան վիճակէն սկսելով միշտ լաւագոյն վիճակի մը դիմած է եւ իւրաքանչիւր դար մարդկային յառաջդիմութեան այս մեծ գործողութեան մէջ իր քաժինն ունեցած է : Այս ճշմարտութենէն կը ծագի իւրաքանչիւր մարդու համար պարտաւորութիւն՝ մարդկութեան յառաջդիմութեանն աշխատելու , առանց հայրենիքի ու ազգի խտրութեան : Սոյն սկզբունքները՝ որոնց երեք չստեց Աղաթօն էֆէնտին կեանքը , դիտեցաւ նա վերածել նաեւ ազգային վարչութեան վերաբերեալ խնդրոց , եւ այս մասին մատուցած ծառայութիւնը չպիտի մոռցուին : Ուրիշ ծառայութիւն մը՝ որ մասնաւոր իր նոր բնութեամբ պաշտօնէն ետք պիտի կրնար մատուցանել , այն է որ ինք մեծապէս պիտի նպաստէր հայերը օր օրի աւելի սիրելի ու յարգելի ընելու Տէրութեան առջեւ . . . : Բայց իր պաշտօնական ըն-

Թացքին ելբ նոր բարձունքն էր թեւակոխած , երբ այնքան աշխատութեան լիուրի վարձքը կ'ընդունէր ճշմարտապէս ազատամիտ վեհապետէ մը , անոր խորհրդոցը մէջ բազմելու մեծ պատուոյն արժանանալով , եւ երբ ընդհանուր հասարակութիւնն իսկ ու եւրոպայ եռանդագին ծափահարութեամբ կ'ողջունէր իր ընտրութիւնը , եւ իր սիրելի ազգն ու բազմաթիւ բարեկամները ինչպէս նաեւ Տէրութիւնն անհամբեր կը սպասէին իր փառաւոր դարձին , եւ ա՜նա՛ անողորմելի անգութ հիւանդութիւն մը երեք ամիս չարաշար տանջելէն ետեւ զինքը , խլեց կորզեց բոլորովին եւ այնքան մեծութեանէն աճիւնը միայն թողուց աշխարհի վրայ : Աղաթօն էֆէնտին ոչ եւս է . . . :

Առանկ ա՜նա աշխարհիս սկիզբէն ի վեր ընդհանուր անվերջանալի հոսանք մը կը քշէ կը տանի ինչ որ կը ծնի , փա՛ռք , մեծութիւն , տաղանդ , ինչ բանի որ կը յարի մարդս , ամէն բան կ'ոչնչանայ . աւերակք աւերակաց վրայ կը զիգուին եւ ընդհանուր հեծութեան ձայն մը շուրջ կը պահէ մեռելոց ու կենդանեաց բոլորաթիւը , եւ փոքր մի եւս եւ ա՜նա Տիեզերք անդամ , այնքան էից ու էութեանց բնակարանն իր անթիւ լուսաւոր աշխարհներով եւ անսահման հիանալիօքը , այն եւս անհետանայ թերեւս . . . : Ի՞նչ պիտի ըլլայ մարդս , այն որ իր ապրելուն գիտակցութեամբը ապրեցաւ , ներքին մարդը որ իր իղձերուն սահման չճանչցաւ այս աշխարհիս վրայ : Ո՛վ իմ բարեկա՛մս որ հոս անշունչ գիականացեալ կը կենաս մեր աչաց առջեւ , ես զքեզ չեմ նկատեր , չեմ կրնար նկատել իրրեւ մեռեալ բոլորովին : Աննիւթական մաս մը կայ ի քեզ որ կենդանութեանդ կը լուսաւորէր քու զգացմունքդ ու մտածութիւններդ եւ որ միայն կարող էր գեղեցկացնելու քու մտքի ու սրտի յատկութիւններդ , անի ձաճանչ մըն է ի քեզ անսպառելի յաւիտենական լուսոյն , որուն կ'երթայ անտարակոյս խառնուիլ հողին՝ յետ մահուան մարդուն :

Ու մենք քու բարեկամներդ , եւ անոնց մէջ զոր խառնութեամբ սիրով սիրեցիր տասնհւշորս ամաց հետէ եւ որուն

պահուած է եղեր այս դա՛ռն փորձն ալ քու զերեզմանիդ վրայ անզոր բերնովը արտասանելու այս դունդ խօսքերը , մենք զորս որը ձեցցիր ի քո սիրոյդ , մեր վերջին մնաս բարովը ըսելով քեզի , այս միակ մխիթարութիւնը կը տանինք մեր հետ եւ քու յիշատակդ մեր կենաց մնացեալ օրերուն ընկեր :

1868 Ապրիլ 22

## ԲԱՐՈՒՆԱԿ ՊԷՅ

Այն յանկարծա՜ն անկածելի հարուածն որ անցեալ շաբաթ օր իր ընտանեաց եւ բազմաթիւ բարեկամաց զրկէն խլեց կորզեց զՎարուճակ պէյ՝ մտքին ու մարմնոյն արթնութեան հասակին մէջ , կրնանք ըսել որ ոչ միայն իրեն սրտակից եւ մտակիր բարեկամակաց համար ճշմարիտ կաթուած մը եղաւ , այլ եւ հեռաւորաց եւ անձանոթից խսկ ցաւ տուաւ : Այս մարդը՝ որ իր մահուանէն ետքը արժանի կ'ըլլայ այսպիսի ընդհանուր համակրութեան ցոյցերու , ըսել է որ նա աշխարհիս վրայ ինքզինքին համար միայն չէ ապրած , եւ իր կեանքը հասարակաց կենաց վրայ ալ ճառագայթած է : Ուստի կ'արժէ որ անգամ մըն ալ դառնանք իր կենաց պարագաներուն վրայ եւ տեսնենք թէ ի՞նչ ազդեցութիւն ունեցած են անոնք , իր եւ ընկերի եւ ազգին նկատմամբ :

Մեր ազգային վիճակին յատուկ եղած պարագաներէն մէկն ալ այն է , որ յոյժ սակաւաթիւ են անոնք որք ազգատոհմի մը շարունակութիւն ըլլան . կամ առաւել պարզ խօսելով՝ կենաց մէջ մահելու ժամանակ ամէն բան գիւրիս եւ պատրաստ գտնեն իրենց առջեւ : Թէ՛ մտքերնին կրթելու համար եւ թէ՛ առ յապայն ընկերութեան մէջ պատուաւոր վիճակ իր ձեռք բերելու համար՝ քանինն'ը կան որք իրենց աշխատութեանէն զատ ուրիշ բան չունին : Այլ եթէ յաջոր-

գութիւնն ու աւանդութիւնը խզեալ է իրենց համար, ըստ այնմ աւելի եւս կը փայլի իրենց անհատականութիւնը : Ասանկներէն էր Բարունակ պէյ :

Աստուած զինքը օժտած էր բնական հանճարով՝ զոր գիտցաւ մշակել ու զարգացնել իր աշխատութեամբը :

Իւսկիւտարի Ազգ. ձեմարանին մէջ դաստիարակեալ, հոն սկսաւ եւ կիսով չափ աւարտեց երկրորդական կարգի ուսումը : Այս ազգային դաստիարակութեան տունը՝ զոր բարերար ձեռքեր կառուցած էին, ուրեմն նախանձու եւ թշնամութեան հարուածներու տակ պարտաւորեցաւ Իւսկիւտար ուսմամբը զուրս հանել իր ծոցէն այն ժրջան եւ ուշիմ պատանիները որ քիչ ժամանակի մէջ այնքան գեղեցիկ յոյսեր զարթուցած էին իրենց վրայ, եւ որոնցմէ մէկ քանին այն յոյսերն իսկացուցին ալ իրենք ըրենց ջանքովը կամ Տէրութեան դպրոցներու մէջ կատարելագործելով իրենց ուսմունքը :

Բարունակ պէյ ալ իր մէկ երկու ընկերակցած հետ ձեմարանէն ելնելով արքունի բժշկութեան ուսումնարանը մտաւ, ուրկէ փառաւոր վկայականով ելաւ իբրեւ զինուորական բժիշկ կայսերական բանակին : Այս պաշտօնով Եւրոպական եւ Ասիական Տաճկաստանի զանազան դաւառները ճանապարհորդեց, եւ իր անձնուէր ծառայութիւններով անուն ու յարգ ստացաւ Տէրութեան առջեւ. եւ ընդհուպ զինուորական դասակարգութեան զանազան աստիճանները թաւալելով առաջին հայ պաշտօնատարն եղաւ միջազգայութեան աստիճանը բարձրացած :

Կ'ըսեն թէ իր յԱսիա ճանապարհորդութիւնը գրած եւ տպագրութեան համար պատրաստած էր : Այս ճանապարհորդութիւնը Հայաստանի զանազան կողմերուն վրայ խիստ հետաքրքրական տեղեկութիւններ կը պարունակէ կ'ըսեն, եւ հեղինակին վառվռուն եւ զգայուն ոճին մէկ յիշատակաբանը կրնայ ըլլալ ազգին մէջ :

Բարունակ պէյին ամէնէն գործունեայ ժամանակը՝ իր բժշկական պաշտօնին նկատմամբ այս միջոցն է : Ասկէ ետքը

Ալ սկսի իր գործունեայ կեանքը ազգային գործոց նկատմամբ : Գրեթէ տասը տարիէ ի վեր արքունի բժշկական ժողովին անդամ եւ մէկ քանի թագուհեաց մասնաւոր բժիշկի ըլլալով, իր մնացած բոլոր ժամանակը կ'անցնէր կամ աղքատ հիւանդներ ձրիապէս խնամելով եւ կամ ազգին գործելուն աշխատելով : Զանազան ազգային ժողովոց եւ յանձնաժողովոց անդամ եղաւ եւ մէկ քանի անգամ ալ անխլասնութեան ժամանականներ ազգային վարչութեան ղեկն իր ձեռքին մէջ ունեցաւ :

Այս վերջին ժամանակներս եւ մինչեւ իր մահը ազգային երեսփոխանական ժողովոց ատենապետ էր : Ահագժար եւ փափուկ պաշտօններ, որոնց մէջ ալ ինչպէս առանձնական կենաց մէջ՝ փայլեցաւ Բարունակ պէյ անկեղծութեամբ բարեարտութեամբ ու անձնութեամբ, եւ ահա ասոր համար է որ թէպէտ իր ընթացքին մէջ ոմանց զգոհութիւն պատճառեց. այլ ընդհանրապէս ամենէն սիրուեցաւ : Ուր որ իրմէ աւելի հանճարեղները գիեցան, ինք անսայթաք յառաջ քալեց, եւ շատ անգամ վայելեց այն ճշմարիտ փառքը զոր վարչութեան զլուխ եղողներն ընդհանուրին համարմանն ու համակրութեանը մէջ միայն կրնան քաղել, եւ որ բազմաց եւ թերեւս արժանաւորագոյն կարծեցելոց չլիճակեցաւ մեր մէջ : Բարունակ պէյին հանճարն իր գլխին մէջ, եւ առաւել եւս իր սրտին մէջն էր :

Այսպիսի սիրտ մը շատ հազուադիւտ է, եւ որչափ որ զգալի ըլլայ անոր կորուստը ազգին համար, ոչ երբեք այնքան դառնապէս զգալի կրնայ ըլլալ՝ որչափ այն անոք եւ անօգնական հիւանդներուն բաղմութեանը համար՝ զորս կը խնամէր, եւ մասնաւոր իր բարեկամացը համար՝ որոնց համար այդ սիրտը անշէջ վառարան մըն էր սիրոյ եւ կարեկցութեան, եւ այն բարեկամաց մէջ այնպիսին եւս կար՝ որուն համար այդ սիրտը դանձ մըն էր : Իրենց յոյսերն իր յոյսերուն խառնուած էին, իրենց փառասիրութիւնները իր փառասիրութիւններուն, իրենց մտածութիւնները իր մտածութիւններուն եւ իրենց կեանքը իր կեանքին, եւ ահա հիմա ալ այնչափ որը կը զգան ինքզինքնին, ս'ըջափ իր անմիջիկէն արմուտինն ու ազգիկն անտեսական . . . :

(ՏԱՊԱՆԱԳԻՐ Մ. ՊԵՇԻԿՈՒԱՇԷԱՆԻ

Գ. Ս. ՕՏԵԱՆԷ ԳՐՈՒԱԾ)

Յրատարուս մառախլապատ ի վիճեղ  
Թող շող արփի ցոլայ սիրի ընդհանուրս .  
Աւիւն հոգւոյդ՝ նանանչ հասեալ յարփեւնոյն ,  
Յար ցոլացիկ ի քրքուկանդ յերգս աղու :  
Բնարաց ի քնարս իբր զնոյլ յալեաց յալիս  
Աւանդեացեալ ապագային զանուն քո ,  
Պեհիկբաւեան , այս քո բաժին յես մահուդ  
Եւ այս քաղցունք խառնեալ յարտուր մեքուրիդ :

26 Սեպտ. 1871 Վ. Պոլիս

Ազնիւ Հայ երիտասարդներ ,

Օրագրին մէջ ձեր հրաւերը կարդացի . Պէշիկթաշիւանի շիրիմը փառաւորելու համար իր մահուան տարեգարձին օրը : Օրհնեալ ըլլայ , ով որ այդ մտածութիւնն յղացաւ , օրհնեալ ըլլաք դուք , հայ երիտասարդներ , որ այդ միշտ երիտասարդ բանաստեղծին յիշատակը կը մեծարէք , անոր՝ որ ամենէն զեզեցիկ տիպարն եղաւ հայրենասիրութեան եւ հանձարոյ :

Աւս՛ղ , եւ երբ դուք իր գերեզմանին շուրջը կը բոլորիք , ձեր սիրոյն հաւաստիքը նորոգելու համար առ այն՝ որ իր հոգւովը միշտ ներկայ է մեր մէջ , իր մտերիմ բարեկամաց եւ թերեւս մտերմագոյնը , պիտի չկրնայ թանալ իր արատաւքներովն այդ սուրբ գերեզմանը : Այլ ուր եւ կոչէ զինքն այլուր անողքելի հարկը , իր սիրան ու մտածութիւնը հոն կը թառի , հոն կը թափառի եւ հոն կ'արատաւէ ձեզի հետ , ո՛վ բարեկամք իմ բարեկամիս :

Միայն թէ այդ օրն՝ որ ընտրեցիք իբրեւ հայ զգայուն երիտասարդութեան վայելուչ հանգէսի օր , չմոռուէ՛ք ասկէ ետքն ալ , եւ ամէն տարի նոյն օրին հոն հաւաքուէք հայ երիտասարդութիւնը խմբովին՝ ընդունելու համար այն ներշնչ-

մունքը՝ զոր ես ինքս միշտ գտած եմ այդ գերեզմանին քով , ամէն անգամ որ իմ բարեկամիս այդ յետին բնակարանին այց եմ ելած մտածելով այն յոյսերուն զոր ի միասին կը սնուցանէինք եւ որոնց քանին՝ , արտա , մարեցան անկէ ի վեր , եւ միշտ լսած եմ , իբրեւ թէ դեռ լսուէր իր գերեզմանին խորունկէն այն աղաղակը՝ զոր ամենէն առաջ հընչեցուց եւ որ չախտի մարի անի :

«Եղբայր եմք մենք» :

Թող այս աղաղակը միացնէ մեզ Հայերս ողջոյն եւ ամբաստնողէ մեր սէրն իրարու հետ , մինչեւ որ գայ օր մը՝ ուր հայ ժողովուրդն ամբողջ կարող ըլլայ կրկնել Արեւելքի բոլոր ժողովրդոց . «Եղբայր եմք մենք» :

(Արեւելք 15 Հոկտ. 1887)

Բոյգ  
ՕՏԵԱՆ

Ո Ղ Բ (\*)

Ի ՎԵՐԱՅ ԲԱՐԵԿԱՄԻՆ

Ոհ , ինձ բարեկամ , ո՛վ ինձ մտերիմ , ո՛վ ետ պիտի տայ ինձ իմ մտերիմ բարեկամ :

Ոհ առնն :

Քան զպատմական անձինս աւելի կ'արժէր նա . իրեն նմանը բիւրաւոր մարդոց մէջ մէկ հասիկ կը ծնի . շատ մը վատերու փոխարէն Աստուած երբեմն այսպիսի ոմն կը ստեղծէ որ միտքարուն մարդիկ :

Արի արանց էր նա , բնաւորութեամբն արի , արի հանձարով , սրտովն ալ արի :

Մեծ եւս էր , բարութիւնն էր արձանաւորեալ , աղքատին ու հիւանդին բարեկամ , բարեկամ մեծատանց ու ամենուն բարերար :

Պարտաւորութեան ձայնը իր պատգամն էր եւ ուրիշ

(\*) Այս ողբն գրուած է անմոռաց Տօքթ. Բեաթիպեանի մահուան առթիւ :

ձայն չուզեց լսել . առաքինութիւնը իր բնութիւնն էր եւ օր մը չթուլացաւ իր սիրոյն :

Այլ թէ թուլացաւ , աւա՛ղ , այն իր վերջին օրն եղաւ :

Ո՛հ , ամպեր , սե՛ւ ամպեր , եկան մթազնել քու պայծառ միտքդ ու առողջ դատողութիւնդ , ո՛վ իմ բարեկամս :

Ձքեղ սիրեցին Պօսիօրի կրկին փոռնք , ծերն ու ալքատքեղ օրհնեցին , երկտասարդք սիրեցան ի քեզ ու մեծամեծք եւ մեծատունք պատուեցին քեզ , ամեն ազգէ մարդիկ ու ամեն աստիճանի մարդիկ քեզի դիմեցին :

Ամենուն հասար , ամենուն օղնեցիր , անմահ արհեստովդ , անմահ խելքովդ , անմահ ձեռքովդ :

Ուր որ գացիր՝ շաա անգամ յուսահատութեան լացը դադրեցուցիր , յուսոյ ժպիտը փայլեցուցիր . սրտիդ բարութեանն ու բնաւորութեանդ կորովն միշտ բան մը կը հաղորդուէր ամենուն :

Միայն սիրեցիր , ոչ զոք ատեցիր , ու միայն կեանքդ ատեցիր :

Անյուշ եւ անյոյս դք՝ ուղիդ ընթացար մինչեւ որ յոգնեցար :

Ինչո՞ւ արգեօք :

Աստուած է՛ն զօրաւոր իմացականութեանց կայծ մը միայն տուած է յաւիտենական ճշմարտութիւնը թափանցելու համար . դու զայն կայծն առ ոչինչ զրեցիր :

Աշխարհի բաներն ուրիշ մարդոցմէ աւելի պայծառ կը տեսնէիր . ինչ որ պայծառ չտեսար՝ մերժեցիր :

Իրերն իրենց հետեւանքներէն դատելու վարժած էր միտքդ . երկնից ներքեւ շատ անիրաւութիւն ու անգթութիւն տեսար , յաւիտենական արդարութիւնն ու գթութիւնը չըմբռնեցիր , եւ ուր որ շօշափելի հետեւանք չի տեսար՝ հոն իմացականութիւնն ու զօրութիւնն ուրացար : Ա՛հ , զի չճանչցար քու հայրդ որ յուշ անէր քեզի ու անոր անաբին չբազմեցար որ իր վերջին վայրկեանին սրտասպնդե-

լով դեղձ՝ Երկինքն ու Երկնքին մէջ ամենուս Հայրը ցուցնէ՛ր :

Ձը ճանչցար նաեւ ինչ որ Երկնից երանութեան գուշակն ու ճաշակն է յաստիս ու բանի տեղ չի գրիր այն բաներն որ գեղեցկին զգացումը կը զարգացնեն ի մարդ :

Եւ ըսիր . «Որովհետեւ կենաց մէջ իրական բան մը եթէ կայ , այն ալ տառապանքն է , սւրբին պէտք չկար որ ծնէինք» . իրբեւ թէ յաւիտենական խորհուրդք պիտէին սահմանափակիլ այս անցաւոր աշխարհին ու աղցաւոր կեանքին մէջ :

Ու երբ տեսար որ կամոց կամաց օրն ալ իրիկուն պիտի ըլլար , յատա՞ջ քան զժամն քաշել ուզեցիր՝ վարագոյրը՝ չնայելով բարեկամացդ որ շուրջդ էին ու բարեկամիդ(\*) որ հետո՞ն էր :

Ու առ խորխորի գնացիր կարծր ու պաղ աւազին վրայ՝ խիճերուն վրայ , ժայտերուն վրայ , ջուրերուն մէջ՝ ոչնչութիւն գտնելու :

Գարձի՛ր , ետ դարձիր . տակաւին պէտք ունինք այդ աղնուական զլուխդ տեսնելու որ երբեք վատ խորհուրդ մը չէր յղացած . դարձի՛ր , տակաւին շատ վիշտեր կան սիրովելու , շատ նիւռն սրտեր կան զօրացնելու , ու նայէ ո՛րչափ ձեռքեր երկնցած են քեզի . դարձի՛ր : չըլլայ թէ Աստուած որ քու կեանքդ պարզեւ մը ըրաւ ամենուս՝ զքո մահդ պատուհաս մը ընէ շատերուն :

Այլ չէ՛ , աւանիկ աներկմիտ կ'ընթանաս ու չես լսեր անհուն աղաղակը որ կը բարձրանայ հտեւէդ ժողովրդեան ամէն կարգերէն . ալիքներուն աղաղակն ալ չես լսեր :

Լսէի՛ր գոնէ վերջին վայրկեանիդ Աստուծոյ ձայնը սրախդ մէջ :

Ո՞ր դիտէ :

Կ'ըսեն թէ այն դժնէ ծովածոցին մէջ դեռ ծովամոյն չեղած , երկար ժամերով չըջեցար , ժամեր ի բուն նայելով

(\*) Օտեանի՛ որ Բարիզէն գրեց այս Ողբը նոյն ժամանակ Մատիս Օրագրին մէջ :



անշուշտ ծովուն , նայելով նաեւ երկնքին : Կործուրդ արդ-  
եօք նորանորք չթաւալեցին քու միտքդ այն միջոցին եւ  
արդեօք Երկինք չիջեցո՞ւց արդէն հողոյդ մէջ , ի վարձատ-  
րութիւն անստգիւտ եւ ատաքինի կենցաղիդ , իր յաւիտե-  
նական գթութեան ցօղն անմահարար :

1882 Հոկտ . 21

Պ. Ս. ՕՏԵՍՆ.

### Կ Ռ Ի Զ Է Լ

Կռիզէլ երկաթուղիի մը մեքենագործն է :

Օրին մէկը կառաչարի մը վրայ էր , կայնեցաւ յանկարծ  
ճամբուն վրայ : — «Յառա՛ջ գնա» , կը պողար կառաչուին  
մեծը : — Մերժեց Կռիզէլ , մերժեց՝ եւ աչքն առաւ ի կո-  
րուտ մասնել իւր պաշտօնը , իր ծառայութիւններն , իր  
բոլոր կեանքն :

Այն վայրկենին որ նա այսպէս ի վրաս անձին կը մերժէր  
յառաջ երթալ , դիմացի կամուրջը կը փլէ յորդանոտան  
գետի վրայ , կամուրջն որմէ վար յանդունդ պիտի դահավի-  
ժէր կառաչարն ամբողջ՝ եթէ Կռիզէլ առաջ գացած ըլլար :

Այս մարդը կը տօնէին անցած իրիկուն 1800 անձինք՝  
երկաթուղեաց գործաւորք՝ իրենց նախագահ ունենալով  
Յրանսայի մեծ բանաստեղը՝ Վ. Հիւկօ՝ եւ կոչնականաց մէջ  
մեծ ատենարան մը , Կամպէթթա (\*):

Երբ Կամպէթթա նախարար էր ապէ քանի մը ամս  
առաջ , միտքը բերած էր այս խոնարհ գործաւորը՝ որ կորովի  
բազկին հետ հանճարեղ ուղեղ մը ունի՝ ինչպէս ըսաւ Վ.  
Հիւկօ , եւ որ հարիւրաւոր մարդոց կեանքն էր ազատած ,  
անսաստելով իւր մեծին , զի նախատեսած էր վտանգը : Կամ-  
պէթթա պատուոյ Լէգէոնի խաչն էր կախած այդ արի կուրծ-  
քին վրայ :

Մարդիկ հասարակօրէն արի կ'ըսեն զինուորին , նա՛ որ  
պատերազմի դաշտին վրայ կ'իյնայ , որ երբ յաղթանակ մը

(\*) Գաղղիացի մեծանուն քաղաքագէտ եւ ճարտարախօս :

Մանգնէ՛ դիւցազուն կ'ըսուի՝ եւ որոյ շահատակութեանց  
վրայ միշտ կը փայլի փառքն իրբեւ պսակ , ինչպէս ըսաւ  
Կամպէթթա : Այլ քանիներ նաեւ աննշան՝ որ մարտի դաշտին  
վրայ չեն իյնար , որք զինուց արդիւնք չեն , այլ որ՝ հա-  
մետ գործաւորք՝ հաղաբաւոր մարդոց կեանքն ի ձեռին  
ունենալով , ինչպէս է երկաթուղեոյ մեքենագործ մը , ինչ-  
պէս էր Կռիզէլ՝ իրենց պատուոյ զո՛ւ կ'երթան եւ անունին  
ոչ ոք դիտէ եւ կը կրկնէ : Ոչ ոք կը զգայ եւ ոչ ոք դիտէ  
ի՛նչ կը քաշէ կրակին դիմաց , երբ ձեռն երեսը կը ծեծէ ,  
երբ փուքն զուռնչն կը կարէ . զիչեր ցերեկ ծխանին եւ  
անագին գործիքին առջեւ կանգնած , մեքենագործ երկա-  
թուղեոյն , եւ որ պէտք է անդադար հսկէ , եւ ոչ մէկ ան-  
գամ վրիպին ձեռքը կամ վայրկեան մը գթի ուշադրութիւնը  
կամ թէ միտքը ճապաղի : Կ'աշխատին տարիներով , կը ծե-  
քանան այս հնոցի աշխատութեանց մէջ , եւ օրին մէկը յոչ  
կամաց յանդգաստից երբ սխալ մը գործեն՝ որ չար հետե-  
ւանք մը ունենայ . զի շատ անգամ յոչ կամաց եւ յանդգ-  
գաստից կը գործեն մարդիկ մեծամեծ սխալներ , — անա  
այնքան տարուան աշխատութիւնը՝ որ ի դերեւ ելաւ , անա  
այնքան ծառայութիւնը , անձնուիրութիւնը՝ որ կորսուե-  
ցաւ , անա կեանք մը որ ոչնչացաւ : Կռիզէլ իր աչալըր-  
ջութեամբը կառաչար մը փրկեր էր եւ հարիւրաւոր մարդոց  
կեանքն :

Սակայն ո՛վ լսեր էր անունը եւ ո՛վ պիտի լսէր՝ եթէ  
չըլլար Կամպէթթա : Կարծես թէ տտոր համար միայն նա-  
խարար եղաւ : «Սեղճ մեծ մարդը» ինչպէս կ'ըսեն դեռ այ-  
սօր հեգնելով զինքն . սկիւ ունէին ամենքը թէ մեծամեծս  
պիտի գործէր : Աննշան փաստաբան մըն էր 18 տարի առաջ ,  
եւ օրին մէկը նաբոլէոն Գ. ի օրով՝ մարդու մը յիշատակը  
պաշտպանեց եղեռնադատ ատենին առջեւ . այս մարդն էր  
Պօտէն , ազգային երեսփոխան , որ դեկտեմբեր 2ի պետա-  
կան հարուածին առջեւ ապստամբներ եւ Վ. Հիւկօի եւ  
Ժիւլ Պավրի առաջնորդութեամբ փողոցն էր իջեր , սալայա-  
տակներու քարերով պատնէչ էր կանգնեց , եւ պատնիչի

ետեւէն կը կոուէր : Յանկարծ ձայն մը լսեց զիմացէն՝ պաշարող եւ յարձակող գնդերէն . — Օրը քսան եւ հինգ ֆրանքը չկորսնցնելու համար է որ կը պատերազմիք . — Աղգային երեսփոխաններն օրը քսան եւ հինգ ֆրանք կ'առնեն , եւ կուրծքը զինուորներուն հրացանի հարուածին ընծայելով՝ անդադակեց . « Ահա այսպէս կը մեռնի ազգային երեսփոխան մը՝ 25 ֆրանքի համար » . գնդակը անմիջապէս եկաւ զարկաւ եւ զիտապաստ ինկաւ : Այս մարդուն՝ ահա արձան մը կանգնելու համար փաստաբանեց Կամպէթթա : Տասն ու չորս տարի ետքը դեռ կը յիշեմ՝ թէ ինչպէս սիրտս թնգալով կարգացի Կամպէթթայի ասեմբլեան թիւնը :

Կամպէթթայի քաղաքական բախար անկէ ծագում առաւ , եւ այն օրէն ի վեր երթալով գնայ եւ մեծցաւ , եւ քիչ մնաց որ Օրլէանի յաղթութեան հետեւեալ օրը Բարիզի պաշարումը մէկզի ձգելով կծիկը գնէին Գերմանացիք . վկայ Կիյօմ կայսեր խոստովանութիւնը : Չկրցաւ փրկել Ֆրանսա՝ այլ Ֆրանսայի պատիւը փրկեց : Այն բաւական էր որ ետքէն Ֆրանսա ինքիւնքը փրկէր : Ասկէ մինչեւ տարի մը առաջ ամենայն ինչ էր Կամպէթթա Ֆրանսայի մէջ , ասկէ ամիս մը առաջ գրեթէ ոչինչ էր : Առանկ ահա , քաղաքական մարդոց կեանքը լի է զանազան , անակնուսնելի դէպքերով : Հասարակ դարձած խօսք մըն է այս կարգի մարդոց համար թէ Տարպեան ժայռը շատ մօտ է Կապիտոլինի :<sup>(\*)</sup> Սակայն Կամպէթթայի ճակատգիրը դեռ չաւարտեցաւ . թերեւս այս ճակատադրին վերջին բառը սոսկալի իմն է , այլ տակաւին գեղեցիկ օրեր ունի նա իր առջեւ :

Երեք ամիս է որ զաղտնի կամ յայտնի կառավարութեան մէջ չէ Կամպէթթա , եւ ահա ամենքը սկսան իրարու հարցնել՝ կառավարութիւն մը կա՞յ արդեօք Ֆրանսայի մէջ : Կամպէթթա շատ իսկ խառնուեցաւ անցից եւ եղելութեանց 12 տարի է ի վեր . ընդհանուր քուէարկութիւնը նա վարդապետեց , խորհրդարանը նա յանձանձեց , հանրապետութիւնը նա գլխեցուց ու մեծցուց , եւ 12 տարուան միջոցին կրնաց

(\*) Հոովմայ եօթն բլուրներէն մին :

ըսուիլ թէ քաղաքականապէս բնաւ սխալ մը չգործեց : Ըսին թէ նախարար ըլլալէ ետեւ սխալներ միայն գործեց . ըստ իս կառավարել ուզեց — կառավարել՝ այսինքն առաջնորդել , կառավարել՝ այսինքն նախատեսել — եւ գործելու համար միտքն ու հորիզոնն ընդլայնել անոնց որ Ֆրանսայի բախան ունին ի ձեռին եւ որ կը շարժին միշտ անձուկ շրջանի մէջ ուր հարկաւ կը փակէ զիրենք իրենց ծագումն ու մտքի կարողութիւնը . « չյաջողեցաւ » . ի՞նչ անիծեալ բառ է աս , չյաջողիլ : Այնքան ուրիշներն իրենց համարումները կը վերցընեն մարդուս վրայէն՝ որ մարդս կը սկսի ինքն ալ համարմունք չունենալ իր վրայ : Կամպէթթայի անյաջողութիւնը առօրեայ է . նախարարութիւնէ ինկաւ՝ այլ կանգուն կը մնայ . ինչալէն ետքը գործեց սխալներ : Կրնար , հետեւէն ու բարձրէն նայիլ ու սպասել՝ առանց անհամբերութեան . իրեն կը վայելէր որ վեհանձն ըլլար . ինք ամէն իրաւունք ունէր անհամբեր չըլլալու : Սակայն իր արբանեակներն շատ պատճառներ ունէին անհամբեր ըլլալու : Անոնց հետեւեցաւ , փոքրիկ կիրքերու ծառայեց , իր մեծութիւնը վերստին ձեռք ձգելու համար բաւական է որ իր սրտին ներշնչմանց հետեւի : Մեծն Նաբօլէոն ըսեր է եղեր , եւ շատ զրական խելքեր կը կրկնեն իրեն հետ՝ թէ Պետական մարդու մը սիրտը զլիսուն մէջ պէտք է ըլլայ . . . : Ես չեմ կարծեր : Առանց մեծ սրտի՝ մեծ մարդ չկայ : Վօլլընարկ իրաւունք ունի . — Մեծ մտածութիւններ սրտէն կը բղխին : Ես դեռ կը հաւատամ Կամպէթթայի սրտին եւ չեմ կրնար հաւատալ թէ սեւցուցած ըլլայ նա իր հոգին : Ապա ո՞ւրկէ գտած պիտի ըլլար այն հուրը՝ որ կը վառէ զինքն երբ կը խօսի . ո՞ւրկէ առաւ մարդն՝ որ գետնի վրայ կը սողայ ի վեր համբառնալ եւ հոգեւորել իւր ունկնդիրները . ո՞վ իրեն տուաւ այն մարդու մեծ կիրքեր արթնցնելու փափաքը կամ խորին զգացումները : Ո՛չ ապագէն իր ամենամեծ զօրութիւնը պերճախօսութիւնն է : Ահա անցած օր Կոնգլէլի խընջոյթին խօսած ճառը . ի՞նչպէս ուծացած սիրտեր սկսան նուրէն յարիլ ու հաւատալ իրեն : Կ'ուզէի թարգմանել այս

ճառը . սակայն ի՛նչ է տպուած ատենաբանութիւն մը կարգալը : Կամ պէթթիւն . պերճախօսութիւնը լաւ դատելու համար պէտք է լսել եւ տեսնել խորհրդարանի մէջ : Պերճախօսութիւն մը ունի ձայնին մէջ : Ձայն մը որ խուլ մանչիւններով կը սկսի , ովկիանոսի խորունկէն լսուելու ձայնի պէս , եւ աստիճանաբար բարձրանալով՝ կ'աճի ու կը սարածուի . որոտընդոտ հնչիւններով խմաստները կը գոռացընէ , եւ հուսկ ուրեմն անհուն աղաղակ մը կը դառնայ՝ որ ոչ միայն մրմուռնջ՝ այլ եւ շնչատութիւն անգամ կ'ընդհատէ քաղմականաց կտորձքին մէջ , ու մինչեւ մարդկային սրտին ներքին ալուցը մէջ անձայն շշող նախանձու կրից եւ վրիժու խանդերն ալ խղզելով՝ այն հոծ լուսթեան մէջ ինք միայն կը հնչէ . . . եւ այն միջոցին բոլոր անձը կը բոցավառի . հերք ի դիտուն հուր կ'ըլլան՝ ըստ գեղեցիկ բացասութեան մեր Գողթան երգերուն , մօրուքին մաղերն կը սկսին ծածանիլ , բեմը եռոտանի մը կը ձեւանայ , ու ինք՝ երբեմն հարցուկ , երբեմն պատգամ , երբեմն ալ ցուլ մըն է՝ կ'ըսես՝ կամ առիւծ կը դառնայ , եւ մէկ ծայրէն միւս ծայրը կրթալ դալով բեմին , բազկատարած՝ ահազին , վերջին աղաղակ մըն ալ կ'արձակէ եւ ահա ծայրայեղ ձախակողմը եւ մինչեւ վերնատուններէն՝ այր եւ կին հանդիսականք ալ բռնաբարեալ եւ իբր թէ տեղափոխեալ , կը սկսին ծափահարել դիւահարներու պէս :

Գ. Ս. Օսեյան

Մ Ա Շ Վ . Շ Ի Ի Կ Ո Յ Ի

Վ. Հիւկօն մեռաւ :

Ուղեկորոյս մարդկութեան աղէտքը կատարեալ եղաւ , վերջին նաւահանգստին լապտերն ալ մարեցաւ : Ո՞վ Աստուծոյ վրայ պիտի խօսի մեզի այսուհետեւ , ո՞վ մեր հոգիները պիտի արթնցնէ : Ո՞ւր առիւծ որ գիսախորեւ անտառաց մէջ պտտցնէ իր բաշն ահագին ու երբ երկինքը գոռայ՝ ինք

ալ վարէն որոտայ երկրի բոլոր արձագանքներն արթնցնելով : Էին , էին ի մարդկութեան՝ մեծերու մէջ մեծ բանաստեղծ , Հովերոս , Տանթէ , Շէքսպիր , այլ մարդարէ բանաստեղծներ եղան մանաւանդ Լամաթիւն ու Հիւկօ :

Շատեր հիացան իր հանճարին վրայ . . . ի խոր թափանցելով այն մեծ հոգին , թշուառներու սքանչելի վէպը կարգալով , ուսումնասիրելով եւ մտաց ու հոգեոյ մէջ ընդունելով այն բոլոր Աստուածաբանութիւնը , այն բոլոր ընկերաբանութիւնը , այն ձայնն հոգեմուտք , այն բոլոր սարսուռը , այն բոլոր յոյզքն ու խայտանք , բանն ու ճշմարտութիւն , յոյս եւ սէր , հուրն ու խանդ , սուրբ սրտմտութիւն ու սուրբ զթութիւն , ու սուրբ Լուս ներողամտութիւնն , որով միայն մարդկային արգարութիւնը Աստուածային արդարութեան կը մօտենայ եւ որ Հիւկօի հանճարին մասն է սխրալի :

Այս վէպը իր նմանը չունի ազգաց լեզուներուն մէջ , եւ Հիւկօյի հանճարը հազիւ կը բաւէր զայն գրելու : Այսպէս են մէն մի հրաշակերտ որ ելած են իւր գրչէն :

Բանաստեղծութեան ամեն ճիւղերուն մէջ արտաքոյ կարգի փայլով փայլեցաւ : Ամեն մեծ քերթողի հետ , Հովերոսէն ի Տանթ ու Շէքսպիր՝ մինչեւ ի Պայրն ու Շիլլէս , իր մասնաւոր ճիւղին մէջ պայքարեցաւ եւ հաւասար եկաւ : Լուսոյ ցումունքներով դրեց , ամէն բառէ ճառագայթ մը հանեց , շատ անգամ ալ ըստ կամայ՝ շանթը լոնցուց կամ շանթ արձակեց , մնչեց եւ մենչեց , աստ ցօղն երկնքին , անդ տարափք ու սահանք . տողեր կան որ երբ կը կարդաս , կը զգաս զեփեւոյն թեւերն ու մէյ մըն ալ յանկարծ կը լսես արծիւներու թռիչներուն բախիւնը որ գայերս կը խօսեցնեն : Անձողպարելի կ'իջնաս իրեն հետ ի միջին յատակս անդնդոյ , մէյ մըն ալ կ'ելլաս յանմտոչելի կատարս լուսոյ մաքրութեան :

Եւ այս բոլոր այլակերպ բանաստեղծութիւնը ի՛նչպէս կը գիւթէ , կը զմայլեցնէ , կը խռովէ , կ'ալեկոծէ , կը հան-

դարտեցնէ , կ'ամօքէ , կը հրդեհէ միտքդ ու հոգիդ : Մը հանճարը անհեթեթ բան մը ունի որ կը հրասուրէ ու կ'ընկրկէ միանգամայն :

Ձի ինք մեծ էր , մեծ կը տեսնէր ամէն բան : Ահա ընդհանուր կնիքը իր բանաստեղծութեան :

Եւ զի հեռուն կը տեսնէր , ներկայէն դուրս մղուած էր : Ահա ընդհանուր կնիքը իր քաղաքականութեան :

Եւ զի մարգարէ էր , Աստուծոյ եւ հանդերձեալ կենաց կը հաւտար : Ահա ընդհանուր կնիքը իր իմաստասիրութեան :

Իր աստուածապաշտութիւնը քրիստոնէութեան դողար ու հրաշալի ձևն ունէր : Վերջին տարիներուն՝ զայն ձեւը մերկացած էր : Այլ եթէ քահանային չէր հաւտար , առաւել եւս կը հաւտար Աստուծոյ : Հանդերձեալ կեանքը՝ կրօնական վարդապետութիւն մը չէր իրեն համար , այլ ասուկոթութիւն : Աչօք բացօք կը տեսնէր զայն : Միայն թէ Աստուծոյ եւ իր մէջ միջնորդ չէր ընդուներ . եւ ո՞վ կրնար միջնորդ ըլլալ Աստուծոյ եւ մարդուն մէջ , բայց եթէ նա ինքն բանաստեղծը : Անոր համար չուզեց որ քահանան գանուի ոչ իր անարին գլուխը եւ ոչ դապաղին առջեւ : Այլ սա տողերը գրեց իբրև կտակ .

«Ով որ հողի մը ունի , թող աղօթէ ինծի համար» :

Եւ ես աղօթեցի ու իր յիշատակն ալ օրհնեցի : Առ ի՞նչ պէտք էր որ ծնած ըլլայինք այսպիսի ժամանակի մէջ , եթէ Լամառթիւնն ու Վ. Հիւկօն ալ չըլլային :

Գ. Ս. ՕՏԵԱՆ



Լ Ա Մ Ա Ռ Թ Ի Ն (\*)

Լամառթիւն , ամենէն աւելի նա է բանաստեղծ , զի հողոյ բանաստեղծն է նա : Երբ իր քնարին առաջին ձայնը լսելի ըրաւ , այնպէս եղաւ իբրև թէ առաջին անգամ կը հնչէր բանաստեղծական քնարին ձայնը Յրանաայի մէջ . երբ հաշիւ թէ գրուած էին քաղաքաւեր եւ աշխարհաւեր պատերազմաց ծուխերը , երբ սանձարձակ աղատութիւնն ու ապա երկաթէ դանդախաւանդն հնդձամղձուկ ըրեր էին այն մեծ աղղին հանճարը , երբ մարեր էր աւիւնն եւ ընդարմաշեր էին հողիններն ամենուն , երբ երկիւղն՝ երկիւղածութեան տեղն էր բուներ , երբ երկրաքարչ մատենագրութիւն մը ամբարտաւան հանճարի մը խոթոռ նայուածքներէն ալ չախնածելով՝ բոլորովին նուաստացուցեր էր բանաւորութիւններն ու սիրտերն եւ ապականութեան հոսանքը արդժուտ դետի մը պէս կը հոսէր կ'անցնէր այն մեծ հանճարին ստեղծուն առջեւ : Ինչ որ Շաթօպոսիան չկրցաւ ընել , Լամառթիւն ըրաւ զայն : Անհունին մեծ հորիզոնը բացաւ ընդլայնեց այն վայրահակ հողիններուն առջեւ որք իրենց այլակերպութեանը վրայ իրենք ալ զարմացան : Իր բոլոր տաղերուն մէջ որք երաժշտութեան մը պէս կը հնչէին , երկնից կարօտովն անձկայրեաց հողին՝ վեր կը սլանար միշտ երկրէ : Սէրն որ կ'երգէր՝ աստուածային պաշտամամբ խառնուած էր . սէրն ու ամէն բան կ'առնէր իրեն հետ յեթեր կը քարձրացնէր : Մշտմունչ աղօթք մըն էր նա , եւ ուրիշ ի՞նչ կրնար ըլլալ բնութենէ ներշնչեալ այն բանաստեղծը . ո՞չ ապաքէն ամենայն ինչ կ'աղօթէ յաստիս , ո՞չ ապաքէն ժամեր կան , այնպիսի խորհրդաւոր ժամեր ուր ամենայն ինչ արարչութեան մէջ կը տեսնես որ աղօթքի դողով բռնուած է , թռչունը , ծաղիկը , առուկը , աւազի հատիկը , ո՞չ ապաքէն յամենայն ինչ կը սարսոսայ , կարտատուէ ու կը

(\*) Մեծանուն բանաստեղծ գաղղխացի :

պաղատի : Եւ միայն մարդս պիտի չաղօթէ՛, մարդս որոյ վրայ կը խուժեն աղէտք, որ բոլոր բնութեան մէջ անժամ-  
ոսանգեալ՝ ինքն է միայն որոյ մխիթարութիւնը, յոյսն ու  
մեծութիւնն է՝ խօսիլ ընդ Աստուծոյ : Բոլոր ներշնչմունք էր  
կամասթին, ներշնչմունք ըսելով պէտք չէ իմանալ յախուճն  
եւ յանդուգն երեւակայութեան մը արշաւանքը բանին եւ  
իմաստութեան սահմանին մէջ : այլ հոգւոյն ցոլացմունքը  
իմացականութեան վրայ : Բանաստեղծը անտեսանելին կը  
նշմարէ եւ ինչ որ դերիչները կը նշմարեն՝ նա կը տեսնէ :  
բարոյական մարդը կը նախազգայ, բանաստեղծը կը մար-  
դարէանայ, իրաւունք ունէին կատինք որ մարդարէ ու բա-  
նաստեղծ միեւնոյն բառով կը բացատրէին :

«Բանաստեղծին օրհնեալ է անունը, անիծեալ է կեանքը» : Այն մարդը որուն անունը բոլոր աշխարհ յուշի կը  
կապէր, իր քաղաքական ձախորդութեանց մէջ տեսաւ զինքը  
լքեալ ամենէն, լքեալ իր բարեկամներէն իսկ, բան մը ու-  
րուն համար ժիւղ-Ֆալոը մեծ հողիներու ամենամեծ տա-  
ռապանքն է կ'ըսէ : Մեկուսի ազրեցաւ աշխարհէ, պարտ-  
քերու եւ մոռացութեան տակ ճնշեալ, եւ ան որ զելվիրն էր  
երգեր եւ ժօսէինն կը գրեր, Դաշնակներու ու կորստա-  
ծութեանց զբքին հեղինակը, տեսաւ իր վերջին օրերուն,  
ի նախնեաց մնացած իր կալուածները, տունն ու այգիները  
որոնց իր հողին կը խառնէր, տեսաւ որ մէկիկ մէկիկ ու-  
րիչներուն ձեռքն անցան ամենքն ալ : եւ ինք որ արդէն չէր  
սիրեր զաշխարհ, զզուեցաւ աշխարհէ եւ մեկնեցաւ անտըր-  
սունջ, ինչպէս անարտունջ կը մեկնի ով որ ալ բաժակիէ  
մրուրը քամած է եւ որ արմատ չէ ձգած յաշխարհի, ինչ-

պէս կ'ըսէր ինք ալ հեռուեալ սողերուն մէջ :  
«Ա՛հ, լայ թո՛ղ, լայ՛ն այն մարդն որոյ ձեռք մոխիսանձ  
Յարեալ իբր ըզբաղեղ ամացն իւր բեկորաց  
Վաղուան հետ կը տեսնէ իր յոյսն ալ որ կ'անցնի :  
Իսկ ես որ՝ արմատ ոչ ձըգեցի յաշխարհի  
Ես կերթամ անաշխատ պէս թեթեւ տերեւին՝  
Վերբերեալ շնչոյն երեկին» :

Օր մը նորէն պիտի կրկնէ աշխարհ իր անունը . մարդս  
երկրաքարչ իրականութեամբ գո՛հ չի կրնար ըլլալ եւ ոչ  
ապականութեան եւ իննէչ ղեղխութեանց մէջ ապրիլ երկար  
ժամանակ . պէտք է մաքուր օդ ծծէ : Ու երբ գիտութեանց  
ամէն զիւտերէն հաքը եւ իմաստասիրութեան ամեն ձեւերէն  
հաքը՝ մարդիկ նորէն սկսին վնասել մեր հորիզոններէն ան-  
գին ու մեր բոլոր միջնադարներէն վեր՝ անապական ճշմարիտ  
լոյսն որ անմատչելի հեռաւորութիւններէ կ'անդրաձգի ի մեզ  
մեր աշխարհին ստուերներուն մէջեւէն . երբ զգան պէտքը  
իրենք իրենցմէ վեր բարձրանալու, նորէն պիտի կարգան  
զկամասթին որ զիրենք փոխադրէ միշտ մաքուր ըսիւիւտե-  
րու մէջ, սքանչացնելով իրենց սկանջներն ու սիրտը երկ-  
նային դաշնակութիւններով որոնց արձագանգը դեռ չէ մա-  
րած ու չպիտի մարի :

Գ. Ս. ՕՏԵԱՆ

Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Բ Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ա Հ Ո Ւ Ա Ն

27 Յուլիս 1887 Բարիք

Ազնիւ բարեկամ,

Երանի որք կը մեռնին ու կրնան ըսել մնացողաց «փըն-  
տընեցէք հիմա ու գտէք ի՛նչն ու ինչուն այս կեանքին,  
այս աշխարհին», ահա իմ փիլիսոփայութիւնս, զի փիլիսո-  
փայ կ'ուզես կոչել զիս դու, ես որ փիլիսոփայութենէ կը  
խորշիմ : Փիլիսոփայ չեմ, աշխարհատեսաց եմ . ասոր համար

Ասեմ զմեռեալն երանի,

Վայ որ մնայ կենդանի . . .

Կը հասկնամ, կը հասկնամ ցաւը, կսկիծը, յուսահա-  
տութիւնդ, մէկ քանի անուշ եւ սիրելի բան որ կայ կենաց  
մէջ, զոյրն է անոնց մէկը : Չը զխտեմ ինչ անուշ բան մը  
կայ քրոջ սիրոյ մէջ որ կ'որոշուի անով ուրիշ սէրերէ որք  
աւելի բուռն կրնան ըլլալ, աւելի ալ մեծ . բայց աս փա-

փուկ է եւ այնու անփոխարինելի , քու քրոջդ սէրը պատ-  
կառոտ բան մըն ալ ունէր ի սկզբանէ որ աւելի եւս սիրալի  
կ'ընէր զայն : Գիտեմ ի՞նչ խանդաղատանք կար քու սիրոյդ  
մէջ ալ առ նա : Այդ սէրը , այդ քոյրը , ոչ ամենայն ինչ էր  
քեզի համար , այլ մեծ ինչ էր : Վա՛յ քեզի : Երանի՛ անոր  
որ նա միշտ կը տեսնէ ու կը հսկէ քու վրադ զուրգուրալով  
երկնքէն , այսուհետեւ քու պահապան հրեշտակդ : Մխի-  
թարուէ՛ , մխիթարուէ՛ դու ալ : Դէ՛ս մայր ունիս , քոյր ու-  
նիս , եղբայր ունիս , սիրտ ունիս սիրելու համար . եւ  
չքոյրդ ալ որ կորուսիր , քոյրդ որ այնքան սիրեցիր ու կը  
սիրես , զայն ալ պիտի տեսնես նորէն ու պիտի սիրես ,  
անանցանելի անմահ սիրով , հողիներու անապական աշ-  
խարհին մէջ . . . Մխիթարուէ՛ :

Քոյր  
ՕՏԵԱՆ

Առ մեծապատիւ  
Տօքթօս Սիրմոն Էֆէնտի Սեղրոսեան

Վ Ե Ր Ձ Ի Ն Հ Ա Ռ Ա Չ Ա Ն Ք

Խոնաւն առօտին  
Եւ ցօղն երկընքին  
Կը ցօղէ իմ վրայ ,  
Անտառաց վրայ . . .  
Խորհուրդ է պատեր  
Չանտառը համբուն .  
Սեաւ խորհուրդ պատեր ,  
Ձիմ միտս օրն ի բուն  
Ա՛հ , ի՞նչ ընեմ որ  
Իմ սիրտս է թափուր  
Երբ բնութիւն համայն  
Կը պճնի հարսի նման . . .  
. . . . .  
Քան զտարիքս աւելի

Բախտին ձեռքն երկաթի  
Ծանրացաւ , ո՛հ , իմ վրաս  
Ի վերայ սիրելեացս :  
Դուք վայրե՛ր սրբազան  
Դու խորան բնութեան ,  
Յամէն քայլ իմ կեանքիս  
Վկա՛յ եղաք դուք բախտիս :  
Ձի ձեր ծոց ես հեղի  
Այս տաս ամ աւելի ,  
Կսկիծներս ու արտառք  
Որ խառնէք ի ձեր սուղ  
Այլ ձեր սուղ վաղ կ'անցնի  
Ապա սիւզ դարնայնի  
Կը բերէ ձեզ նորէն

Ձեք խիղին ու զուարթ թացցէ զվայրն ուր հանդէի . . .  
դէ՛մ : Ա՛հ շիթն որ տերեւէդ  
Իսկ մարդուն յոր խեթիւ Երկընքի ցօղին հետ  
Նայեցաւ երկինք , տիւ Կը կաթէ ի դետին՝  
Չ'աջորդեր գիշերին , Սըփոեալ զօս տերեւին ,  
Եւ գարուն՝ աշուհին : Ես՝ զայն շիթ կը խնդրեմ  
Իբր ի վայր սնջըրդի Բարեկամ աչքերէն ,  
Կը դնայ նա յաշխարհի , Երբ փակվի գերեզման  
Որպէս մարդ մոլորած Անբերրի՛ կեանքիս վրան :  
Ի բախդդ սնտառաց Եւ ընդհատ հառաչանք  
Մտայոյզ թափառի , Ձոր մայրիկն հերարձակ  
Յամէն դի դարնըվի , Կ'արձակէ ի լոռութեան .  
Առ խարխա՛փ մինչեւ որ Խոր եւ մութ գիշերուան .  
Ձարնէ իր վերջին օր . . . Եւ տանեացն հայրենի  
Եւ , ափսո՛ս , ո՞վ գիտէ Արձագանդ սիրելի  
Յետ մահուն ալ դուցէ Որ դեռ չա՛տ տարիներ  
Բարեկամ եւ ոչ մի Ձիմ անունն զհետ կրկնէր . . . :

Գ. Ս. ՕՏԵԱՆ



2013

5985-5987

«Ազգային գրադարան»



NL0023470

«Ազգային գրադարան»



NL0023469

«Ազգային գրադարան»



NL0023468



